ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1554-42

ՊԱՐՈՆ

ՄԻՔԱՅԷԼԻ ԲԷՍՏԷՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՌԱՐԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԻՑ

1003
10418

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская библиотека
7/II-1922
Հ. ՅԱՆԷՎ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՍ

1882

2004

703-Гр
610

ԲԱՌԱՐԱՆ

Անուանց զանազան ախտից, դեղորեից, բուսոց, հանքաց, հեղանիւթ ոգեաց, օդային, ցամաքային, և ջրային կենդանեաց ոմանց, և ուրեք ուրեք անուանց անդամոց, նշանակեալ 'ի լատին, յիտալական, 'ի գաղղիական, յանգղիական, 'ի յունական, յարաբացւոց, 'ի պարսկական, 'ի տաճկական, և 'ի հայ բարբառ, հանդերձ բացայայտութեամբ նոցին։

Ա.

Աբա. բառ իտալական. տես Աբիս։

Աբբէթիթուս քանիս։ Ի բառ լատինական. զոր իտալացիք՝ աբբէթիթօ քանինս, կամ ֆամէ քանինա անուանեն. և յոյնք՝ պուլիմիա. և տաճիկք՝ էյնիէան, կամ ըստ ուսակաց՝ ութ իշատաը. և արաբացիք՝ էքիալ կամ տալա իլ պաթն. կամ նէ:ֆս իլ դէլբ. և պարսկացիք՝ բուկուս՝ կամ բիւս, կամ ժիրէթ, և կմ շաքլիւլ. իսկ ըստ մեզ՝ ընքաղց։ Ի տեսակ ինն ախտի, որպէս ոք ըստ գայ յայր զքաղց անյագուրդ։

Աբիս. տես արիուամ։

Աբեա, լս։ ջինկիալէ, իտ։ սանկլիէ. գաղ։ եապան տոմուզու, աՁ։ խնգիր ՁԷպէլի, արբ։ գէաղն եապանի, տր։ սիազուս կամ քարուս, յն։ և ըստ մեզ՝ վարազ կմ կինՁ, և կամ խոզ վայրենի։ Ի տեսակ մի քառոտանի

կենդանուց՝ ըստ ձևոյ և ըստ մեծութեան նման հատարակ խոզն. որոյ վասն և կոչեցաւ անուն նորա. այլ սուն նորա առաւել կարծը է և խորտաբերտ. գոյնն մեթին կաթմիր, կամ թուխ. մորթն կարծր է յոյժ, ընդ որ գնասակ հրացանայ ոչ միսն՝ եթէ ոչ հարցի ի մտոց. ատամունքն սմրակուռ՝ սրածայր՝ սուռաւոր և երկայն՝ իբր մի և կէս ատնաչափ, որ և են գլխաւոր զէնք նորա: Բնաւք է յոյժ զայրագին. և բազում վնաս հատուցանէ բնակչաց երկրին, պատառելով զանասունս նոցա, երբեմն նաև զմարդիկ՝ յորժամ գտանին յանտառս: Մին սորա՝ եթէ չիցէ ծերացեալ, առաւել ախորժաճաշակ է քան զընտաներեաց: Ատամունքն լսեալ ի փոշի մանրամասն՝ լինին դեղ կշտացուցուն, մասնասխուան սրիտն թթանղաց, և հոսման հիւթոց գաղղիականի, զի է ձգող բնութեամբ: Զաքին՝ ի 10 կշիռ ցորենոյ մինչև 320: Ճարպ սորա օգտաւէտ է ընդդէմ ջղացաւութեան, ոսկրացաւութեան, երակացաւութեան, յօդուածացաւութեան, ուռաւութեան, ձեռնաւութեան, և թոշուութեան միջոց և ջղաց, օծեալ սովամ զամատացեալ մման մարմնոյ, և ասէալ շփեալ առ հրով, զի ճարպն այն ընդմանկիցէ ի ծակտիս մարթոյ, որով և փարատի, այլև զմիջուն պատճառեալ ի հարուածոյ՝ բուժէ: Իսկ ատեն ըստ ոմանց եգեալ ի վերայ խոզոյ, այսինքն սրուաձայն՝ ապաքինէ:

Աբեռիկնա, լս: աբերիմոն, խս: աչքն, ատ: և թմեզ բացողական: Աբի ամենակերպ բացողական և թափանցիկ գեղոյթեից, որք միանգամայն արմակին և լուծանին զնչպանս մարմնոյ, ի գուբս վանելով ի միջանց ճանապարհէ, ևն. որպիսի են՝ ամենանուրբ խարտանն երկաթոյ, գոյացութիւնն գիւհոյ, արքանս տուփկիքաթս, ևն:

Աբիսամ, լս: աբրիս կամ շեբէռս, խս: էբէլօս կամ սեբինոն. յն: աշ կամ սեբրոն, գլ: սեբլիճ՝ սեղգ: գեբիքս կամ գեբեբս, արբ: գեռեբվեն, պր: գեբեվեզ, ատ: և ըստ մեզ՝ նեխուբ կամ կարուս: Ի բոյս յաղգէ խաբարտից ծանօթ ամենեցուն. որոյ արմատն օգտէ ընդդէմ վիրաց թոքոց, և փարատէ զվիրաբգելութիւն և զվիրանանութիւն, ևս ցրուէ զտոքունս՝ որ ի կուրծս. զի է թեթիւ և միջոցուցիչ բնութեամբ. վասն որոյ կարգի ի դասս հիմնոյ բացողական արմատոց: Ի նոցա և այլ տեսակ կոչեցեալ ի ատամնացուց՝ աբիսամ կոչանիցին, որ սովորաբար բուսանի ի Հարմանաստ տեղս. ըստ որոյ և խաբարտիցք՝ աբրիս բաղուսիկ կոչին. որոյ սերմն փոշիա-

ցուցեալ և արբուցեալ. լինի դեղ ջրգողուէ, և վբախ-
ուսութեամբ. զի է խիթիչ և մրգեցուցիչ բնութեամբ։ Զամին ի 20
ցորենոյ մինչև 360 յաւուրսն, խառն ընդ շաքարի, և կամ
ընդ այլ յարմարաւոր դեղորեկից։

Աբիս կամ աբէս, լս։ աբա կամ աբէ, իս։ ասկէր,
գալ։ մեղիսսա, յն։ առը, տձ։ զէնպուռ կամ նաՀլ և
կամ տասպուռ, արբ։ և ըստ մեղ՝ մեղու։ Ի միջատ-
թեաւորս և խայթոցաւորս, ըստ մեծութեան ոչինչ աւելի
քան զմեծ Ճանճ. ունի զբերան երկտասիմաւոր և զպա-
տիճ միանգամայն. բերանովն հաւաքէ զնիւթ մոմոյ, և
զատամանն ծծէ զնիւթ մեղրոյ ի քաղցրահոտ ծաղկանց։
Բնութիւնք ժրաջան, մաքրասէր և Ճարտարարուեստ։ Բա-
զումք հաստատեն՝ թէ տեսէ սա մինչև ցեօթեն տարի զոր
ըմբռնեալ արկանէն լիւղ ձիթապտղոյ, կամ չորացու-
ցեալ յարեւս. ըստեն ի փոշի մանրատաղ, և լցեն դեղ
ընդդէմ հերաթափութեան, զոյգն ինչ օծելով կամ ցանե-
լով ահեթ զոյնս։

Աբսրէսիա կամ բարալիսիա, իս։ մեռապուս ոէբէն-
թինուս, լս։ ֆիելեռ, կամ ֆալեռ, արբ։ ինիլեռ, պլ։
և ըստ մեղ՝ անգամուռնութեան, կամ անգամոգսուութեան.
զորմէ տես հա. եր. 217։ տես և բարալիսիա։

Աբսոթեմս, լս, և յն։ բսոսթեմս, իս։ չիսան, տձ։
տիւմիլ, արբ։ չէթիմ կամ պլնաւէռ, պլ։ և ֆ մեղ՝
խաղաւարտ, կամ պալար չարաւալից, որ տանէ պատա-
հել անձանց վիՃակելոց խոնաւուսս բնութեամբ։

Աբսոտաքնիթիքս։ Ի անուն ընդհանուր նշանակիչ
դեղորեկից, որք խափանեն զհոսումն արտասուաց յա-
ջացն. որպիսի են ջուրք ջրախոտի, արջասան, թուցիան,
հուիքուտճիան, և՝։

Աբսինկամաթիսսօնթաս. է անուն հատարակ նշանակիչ
ամենայն փանչացուցիչ, և սարսեցուցիչ դեղորեկից, որ-
պիսի են էուփիսսիոմ, և՝։

Աբսինսեմաթիսն. է անուն ընդհանուր նշանակիչ
ամենայն տեսակ դեղորեկից, որք առնեն զարբուտս և
զթուքս, և արտաչանեն արտաքս ի բերանոյ. յայսմ
կարգի են մնդիկն, Ճինեփուռն և՝։

Ագուս, լս։ սաքգուս, իս։ իսոռ կամ նեռ, յն։
օ, գաղղիական։ վուսթրը, անգղ։ մոյ, արբ։ տոյ, պլ։
սու, տձ։ և ըստ մեղ՝ ջուր։ Ի ռեթեթ քան զՀոյ, շար-
ժուն, ըղձ, միտամտ, և թափանցիկ, և բնութիւնս ան-
ուշ, առնեցուցիչ, զովացուցիչ, միանգամայն և խիթիչ.
քանզի եթէ տրուիցի քանի մի չիթ ցուրտ ջուր յերեսս

կամ 'ի կուրծս առն զրկելոյ 'ի զդայոյթեցց, անգէն վաղ-
վաղակի զդաստացուցանէ զնա, ուր ոչինչ այլ արտաքին
խեթան կարօղ է ցուցանել զայսպիսի զարմանալի ներ-
գործութիւն։

Ագուա աշխատութիւն, իսկ։ ագուա սքանչելագործութեան,
լս։ Է ջուր ինչ անսորժահամ, բարկ, անհոտ, և շատա-
գոյն, միանգամայն և դեղ ազդու ընդդէմ ցաւոց սատ-
մոքի, փսխման, փորահարութիւն, խեթից, փքախտութեան,
միզարգելութեան, երիկամնաժեռուտեան, հարբուխային թո-
քաժեռուտեան, սպասկանուռ արեան, և անտից մորթոյ։
Արդ՝ ջուրս այս շահաւետ է յոյժ՝ որպէս ասացաք, և
չափաւորապէս արբեալ՝ այսմիջոց 'ի կէս լնպրայէ մինչև
ցշրս յաւուրն՝ լինի և դեղ զովացուցչէ, և լուծիչ քա-
նանց գոյացելոց յերիկամնէն մորգիան։ Իսկ չափա-
զանցն՝ առեալ զուրախութեան, և զյորդարատ հոգուն մի-
զի։ Եւ 'ի մասնաւորի 'ի բուժել զվէրս քաղցկեզայինս,
և զնոյնպէս, լուսանարով։

Ագուա բիւս ընդուխտա, լս։ աբգուա տի քաթռա-
մէ, իսկ։ գաթռան սուչու, ամ՝։ և ըստ մեզ՝ ջուր գաղի
խշոյ։ Օգտաւէտագոյն է 'ի գիպուխծս ցաւոց երակաց,
ջրդողութեան, փքախտութեան, և կէլինձիկ անուանեալ ախ-
տի, մաքրէ և զարիւն, ցրուէ զվնասաւորեր հիւթս խառ-
նեալս յարեան, և ասպարիսէ զսխտս արգանդի։ Չափն
'ի յերկու ունկեայ մինչև ցշրս յաւուրն։ Օրինակ կաղ-
մելոյ զջուրս զայս։ Աբրկ զդաղի խէժն յանօթ ապակեայ
ըստ կշռոյ երկու, լտեր, յերեսք բինեալ ցուրտ ջրոյ։ ըզ-
կնի 48 ժամուց՝ հէղ զգուշութիւն զհեղուսին յայլ ապա-
կի անօթ, այնպէս զի մի՛ խառնեսցի մուրն ընդ պայծառ
հեղանիւթոյ։

Ագուա էբանիքա, կամ ագուա կաղիլօկօ սուլիթու-
ռանեա, լս։ աբգուա էբանիքա, կամ աբգուա կաղիլօկօ
սուլիթուռանեա, իսկ։ է ջուր ինչ քաղցրահամ, և անսորժա-
հոտ։ միանգամայն և դեղ ընդդէմ հարբուխային թո-
քաժեռուտեան, անտից մորթոյ, թոշնից մինդեղոյ և անգկի։
Չափն 'ի չորս ունկեայ մինչև ցվեց յաւուրն։

Ագուա թէռմաքսիմէնանեա, լս։ աբգուա թէռմաս-
սիմէնանեա, իսկ։ է հեղանիւթ ինչ անհոտ և դառնա-
համ։ միանգամայն և դեղ ջրդողութեան, նուազուցանէ ամ-
սական տարտուց կանանց, անսարսրժութեան, ցնցման սատ-
մոքի, և այլ սոցին նման ախտից, որոց նախնական պատ-
ճառն դառանիցի լինել սակաւութիւն ջրայ։ զի է խեթիչ բը-
նութեամբ։ Չափն 'ի մի լտերէ մինչև յեսքեք յաւուրն,

Ագուա լաուռօ չէռասի. տէս լաուռօ չէռասզի։

Ագուա լուսմնօզա ֆալէօբիօ, լա։ Ջուրս այս ունի զարմանալի ներգործութիւնս ի բուժել զայտոյցս եղէփանդականս, որք ի վերս երևին եթէ ի կոկորդս, և եթէ ի ծնդական անդամս։ Նոյնպէս և ապալբինե զքաղցկերն, եթէ ի կիր արկանիցի ի միասին ընդ երկու կամ երեք մսոն ջրոյ աբապէօզալի։

Ագուա մասցիալէ, կամ ագուա աբուքաուպօնաթիա օբսիտուլի ֆիէռռի, լա։ աքդուա մասցիալէ ալ սիա, կամ աքդուա ալ օսսի քաուպօնաթօ օսսիտուլօ ալ ֆիէռռօ, լա։ չէլլք սույա, տճ։ Ի Ջուր հանքային, բղխեալ ի լերանց ամուրց, որ է յատակ, փոքր մի թթուահամ, և սեղմիչ. միանգամայն և դեղ ախտից մորթոյ, տկարութեան Ջրոյց և միանանց, Ջրգողութեաց, Ջրային դժուարամատուցից, ախտից արգանդի, ցաւոց յօդուածոց, թանչացաւութեաց, նուազութեան ամսական պարտուց կանանց, հնագոյն փորհարութեաց, տկարաւորաց, և ընդեբաց, սերմնակաթութեան, և լուծման արգանդի կանանց, յորում դիպուածի փոխանակ տեռատեսական արեան հոսի հիւթ սպիտակ հարեալ ի գոյն դեղին, և այլ սոցին նման ախտից, որոց նախնական պատճառն գտանիցի լինել թուլուն. զի է խթիչ և զովացուցիչ բնութ։ Զամին ի կէս լնպրայէ մինչև ցվեց, զոր օրէն է խառնել ընդ նոյնաբանակ հասարակ Ջրոյ, և տալ ըմպել ախտակրին ի միջոցի 24 ժամուց։ Սակայն ի ձեռն պէսպէս մարմնոց և բաղադրութեաց մարթ է կազմել զՋուրս արուեստական։ Ա՛Յլ զի մի Ջուրս այս վասն դիւրաշնչութեան շաղեացն կորուսցէ զկազ, այսինքն զսկիզբն ածխային՝ զպաբուենակաղն յինքեանս, պարտ է քաջ խրել զանօթ նոքին, և չջնուն պահել յայլում անօթի՝ որ ի ներսն ցուրտ Ջրով։

Ագուա մինեթա բիբէռիթիսա, լա։ աքդուա տի մինեթա բիբէռիթիսէ։ լա։ ինկիլիզ նանէսենին սույու, տճ։ և բան մեզ՝ Ջուր անանխոյ անդղոյ. որ է դեղ յոյժ օգտակար ի դիպուածս ախտից և ցաւոց սատմքսի, Ջրային փսխողութեաց, և Ջրային կամ չոր սեղդից, և այլ սմին նման ախտից պատճառելոց ի տկարարէ. զի է թեթևաւոպէս խթիչ բնութ։ Զամին ի չորս սրամ, յաւելցով ի նոյն երեք ունկի Ջուր հասարակ, և առեալ լինի ըմպելիս այս ի միջոցի 24 ժամուց։ ' Ի սոյն կարգս դասի և Ջուրն հասարակ անանխոյ։

Ագուա մոռուզուա, լա։ աքդուա սթիթիքա տի էֆ-

մեռի, իսկ։ Ի Ջուր ինչ բաղադրական, կաղմեալ ի վեց տեսակ նիւթոց։ և է բնութիւն սեղմիչ, որով արգելու ըզ հոսումն արեան ի ռնգայն՝ օձեալ մատամբ զնախին. բուժէ և զձեղքեալ նեարդս և երակս, միայն եթէ ի գործ արկանիցի ձեռամբ խոհեմ վերաբուժի։ Նշխարեն և օգտակար է ի դիպուածս փսխման արեան, արիւնային փորհարուութեան, յորդառատ հոսման դաշտանի, և թքման արեան։ Զամին ի կէս տրամէ մինչև ցերկու յաւուրսն խառն ընդ Ջրոյ բօլիկօնսի։

Ագուա նաբէկէ. տես ագուա ֆիլօռ առուանթիօռում։

Ագուա չինամօմի, լս։ աբգուա տի չինամօմօ, կամ տի քանէլլա, իսկ։ Թատչին սուլու, ատ։ մոյ իկ կուֆիլ, աբր. և ըստ մեզ՝ Ջուր կինամոնի։ Ունի սա գերակայ իմն օգտաւէտութեամբ ընդդէմ վշտաց և անանդորրութեան խանդագոյի, արգելակաւորութեամբ միզի, ջղային տենդից, հոսման դաշտանի, Թանչից, և փորհարուութեան, և այլ սոցին նման ախտից, որոց նախկին պատճառքն գտանիցին լինեալ տկարութիւնք. որովհետև է խեղիչ բնութեամբ։ Զամին ի մի տրամէ մինչև ցi6 յաւուրն, խառն ընդ հասարակ Ջրոյ, և ընդ այլեայլ զօրացուցիչ և խեղիչ դեղոցրեցից։

Ագուա պաքքառում էուինբէռի, լս։ ագուա տի պաքքէ տի Ինինբէռօ, իսկ։ առաջն սուլու, ատ։ Ի Ջուր գիհոյ՝ եբուզեալ ի ձեռն ցքահան գործեաց. օգտակար է ընդդէմ Ջրգիտութեաց, ընդարձակութեան, և հարբեցոց առեալոց ի Թուրքէ. զի է խեղիչ, և միզացուցիչ բնութեամբ։ Զամին ի կէս ունկոյ մինչև ցչորս յաւուրն, խառն ընդ այլ յարմարաւոր դեղոցրեցից։

Ագուա քալչիա, լս։ աբգուա տի քալչէ, իսկ։ քիրէձ սուլու, ատ։ մոյ իլ կիր, աբր։ և ըստ մեզ՝ Ջուր կրի։ Օգտաւէտագոյն է ի դիպուածս Ջղացաւութեան, ախտի ցնցականի, փորհարուութեան, հեծկլտանաց, ձգումանն, փսխման, արիւն թքման, քառամարձիէ անուանեալ ախտի, երիկամնաձէտաւութեան, ախտի միամիտոյ, ցաւոց յօդուածոց, և ոսնաւուութեան. զի է ձգող և ընկլուզիչ բնութեամբ։ Զամին ի 48 տրամէ մինչև ցերկու լիտր յաւուրն՝ խառն ընդ հասարակ Ջրոյ, կամ կաթիլն։ Նշխարեն ապաքինէ նաև զվէրս աբօռպուութեանսն և ապառոպայինս, և խղնայթեցնիս՝ լուանալով անեթ զայնս։

Ագուա քանֆօռաթա, լս։ աբգուա քանֆօռաթա, իսկ։ քաֆիրի սուլու, ատ։ և ըստ մեզ՝ Ջուր քաֆրոյ.

զոր մարթ է ՝ի կիր առնուլ ՝ի դիպուածս ջղային տենդից, գալարման ջղաց, մանանական կաթուածոց, ցնորման, կատաղութեան, ցաւոց արգանդի, քառախաղնիա աւնուսնեալ ախտի, հեծկլտանաց, բարախման սրտի, և փոխման մտքի առ ՝ի թուլանալոյ ՝ի տկարութենէ. զի է խթիչ բնութեան: Զարմն ՝ի վեց ունկեալ մինչև 3ՁԿ յաւուրն՝ խառն ընդ հասարակ ջրոյ:

Ագուա օֆթհալմիքա, լս և իս: է կաստատդոն ջուր ինչ բաղադրական. յոյժ մանաւորապէս սորա գործուանէութեան ՝ի դիպուածս բազմատեսակ ախտից աչաց. զի է սրբիչ, մաքրիչ, զովացուցիչ, կակղացուցիչ, և ցամաքեցուցիչ բնութեան:

Ագուա ֆիլո աուռանցիօռում, կամ ագուա նաֆիէ, լս: աքգուա տի ֆիլօռի տի աուռանչիօ, կամ աքգուա տի նաֆիէ, կամ լանֆիա, իս: չիչէք սուլու, տՀ: մշ իլ զահր, արբ: և ըստ մեզ՝ ծաղկի ջուր. որ է անուշահոտ, թափանցիկ, և փոքր մի ՀԷրմահամ. միանգամայն և դեղ տկարութեան ջղաց, և սրտի, և յիշողութեան, և նուազման որսի՝ առ ՝ի թուլանալոյ ՝ի տկարութենէ. զի է խթիչ, և զօրացուցիչ բնութեան: Զարմն ՝ի 16 տարեկ մինչև 37Ն՝ խառն ընդ այլ յարմարաւոր հեղանիւթոց:

Ագուա ֆիօռթիս, լս: աքգուա ֆիօռթէ, կամ օսսի սէրթիֆօնիքօ տի լուիթօ, իս: մշ իլ հայլ, արբ: թիզ ապլ, սլր: գէզապ, տՀ. և ըստ մեզ՝ ծանապաջուր, կամ այրիչ ջուր, և կամ արքայաջուր: Ի բաղադրուի ինչ կազմեալ ՝ի աչխատ նիթռիքօէ, և ՝ի հասարակ ջրոյ. աչխատ նիթռիքօն յինչ չափ և իցէ, պարտի լինել երրորդ մասն ջրոյն. իբր զի եթէ աչխատ նիթռիքօն իցէ տասն տրամ, ջուրն պարտի լինել երեսուն տրամ: Եւ ՝ի գործածուեն պարտ է պահել զչափ քանակութեան, որում սովոր ենք ՝ի վար արկանել զաչխատ նիթռիքօ, որպէս և ներգործուելն նման է ներգործութեան նորա:

Ագուիլա, լս և իս: նիսր, կամ էնուկ, կամ ռախամ, արբ: գառնիալ, կամ գառաղուշ, տՀ: խեթէ հուռշ, կամ տապլ, և կամ ռախիմ, սլր: և ըստ մեզ՝ արծիւ: Ի թռչուն զօրաւոր և մեծագոյն՝ գիշատոյ, և բարձրաթռուիչ, որոյ ապաւառն լինի դեղ բորոտութեան, և քոսոտութեան:

Ագուիլէֆիա, լս: ագուիլինա, իս: անքօլի, գղ: քօլբնիպայն, անգղ: Ի բոյս բաղմամիաղ. որոյ ցօղունն է երկայն իբր մի և կէս սանտաչափ, նուրբ, կարծր, թաւամազ, և կարմրագոյն. տերև նորա է բոլորակաձև, երկայ-

նականեմ, և եղերահերձ, նման ըստ իմիք տերեւոյ խոշոր ծիծեռնմասոյ։ Ծառկին գեղեցկատեսիլ, երկիմերթեան, և կարմրերանգ. պտուղն թաղանթաւոր, գնտակաձեւ, և բազմատերմն։ Իսկ արմատն ոսպատակ, թելաւոր, և քաղցրահամ։ Բուսանի յաճախ յեւրոպիա՝ յանտառս, և ՝ի բուրաստանս. լի է իւղով և ցնդական ոգւով. միանգամայն և գեղ դալկան, խցանաց վերդի և փայծէղան, զի է թուլացուցիչ, քրտնեցուցիչ, և բացողական բընութեան։

Ազգոռ, իտ։ այսու անուամբ իմանի՝ ազգ ինչ մանրիկ պալարոյ ՝ի վեր երևելոյ յայտս և ՝ի գլուխս, մանաւանդ տղայոց։

Աէուլթոռիս։ Բառիւս այսու նշանակին երկու տարբեր բաղկին՝ յօդեալք ընդ Թիկանց։

Աքիմա. տես ազմա։

Աղենուս, լտ։ ազնս կամ չիւքօ, իտ։ ծնօս կամ զայտուռի, ֆն։ մերքեպ, կամ էշէք, և կամ չեմէնտեր, տՃ։ խուտար, արբ։ խաբ, սրբ։ և բան մեզ՝ էշ կամ յաւանակ։ Ի կենդանի զուական, երկայնավիզ, և երկայնունկն, որոյ բաբքն բերտ է և տրտուտմ, որպէս և ձայնն անհեթեթ։ Կեան իբր ՝ի բաղուստ առաւել քան զամս քսան, և գտանին յաւէտ յասիա, յարաբիայ, և յեգիպտոս։ Կանթն այսր կենդանւոյ՝ զոր լատինք լաք ազնենուս կոչեն, է յատակ, թեթեւ, դիւրամարս, սուղ, ջարար, զօրացուցիչ, զուարացուցիչ, և մարբիչ արեան. յայն սակս ասէաղ ՝ի վար արկանի ՝ի բժշկութեան մերարդելութեան, թոքաբեռութեան, յօդուածացաւութեան, խոցուածոց վերդի և թոքոց, որք սոսկոր են գալ զինի կշռացաւութեան, և ցաւոց աչաց. բայց օրէն է ՝ի գործ արկանել զայն սակաւ քանակութեամբ, և որքան մարթի իցէ՝ սպրտ է ըմպել բնական ջերմութեամբ. այսինքն զկնի կթելոյ. կէս սիմիէռէ վասն չափահասի բաւական է, զոր պարտ է բաժանել յերիս կամ ՝ի չորս մասուանս յաւուրն։ Ջմեղ նորա ոմանք շահաւէտ համարին ընդդէմ անդամազօսութեան, ցաւոց յօդուածոց, և բորոտութեան։ Ջքաղցրն լսեալ ՝ի փոչի մանրատաղ՝ առնին դեղ հոսման արեան։ Իսկ զերծունգն ՝ի գործ ածեն ՝ի գեղ տկարութեան ջղայ և ուղղոյ, և անդամալուծութեան։

Աղենուս. տես ազնուս։

Աղմա, կամ ազիմա, և կամ տիսքնէա, իտ։ կէօյիւս հիլլեթի կամ թքնէֆիկ, տՃ։ լաՀտ, կամ թէվաՀիարի նէֆիէս, կամ զրոբ իլ սուտ, արբ։ տէրտի սինէ, սրբ։

և ըստ մեզ՝ Հիւարդելութեան, կամ դժուարաշնչուն. տես հտ. ա. երես 183։

Աէս, կամ էս, կամ քուբուում, և կամ վէնուս, լտ։ ռամկ, իտ։ պաքրա. տՀ։ նահաս, արբ։ միս, պր։ և ը մեզ՝ պրինձ։ Է ազգ ինչ անմաքուր հրահալելոյ, ծաՆօթ ամենեցուն։ յորմէ յօրինին ազգի ազգի անօթք։ Բնութ է արջասպային, և կիզիչ. զբոյր դիմեանն՝ ի վար արկանեն ը օրինակի բիեՀեռա ինՀէՀնալէՀ առ՝ ի սպառելոյ զմամանեալ մասուանս վերայ։ Ի սմանէ կազմեն և ոգի ինչ ազգու, որ լինի դեղ հիստէրիոպիա անուանեալ անտի, նստանայ, և լուսնոտութեան, զի է միզացուցիչ, քրտնեցուցիչ, և ատակիչ ՀՀեաց։ Զսոին՝ ի վեց շՀէ մինչև յ12։ Զայս ազգ հրահալելոյ եՀեթ ձուլեսցեն ընդ անագի, լինի ձայնեալ նիւթ զանգակի և հրացանի. եՀեթ ընդ կագռնեան հոլոյ, կամ ընդ գաղամենար յորջորջեալ քարի՝ լինի արոյր. և եՀեթ ընդ կապարի՝ լինի թուՀ։

Աէրուկիս կամ էրուկիս, կամ վիռխտ էրիս, լտ։ վեռտէ ռամկ, կամ էրուկս, և կամ ծիմար, իտ։ ՀՀենկիաս, կամ ՀՀենկեան, տՀ։ կէնզատ, արբ։ է, ըստ մեզ՝ Ժանկատ, կամ Ժանգատ։ Ինիւթ ինչ կանայ՝ թափանցիկ և թիՀնաւոր, արտահանեալ՝ ի կարմիր պղնձոյ՝ լուծեալ մաՀելոյ՝ ի գինի, զոր ուրեք ուրեք՝ ի կիր արկանեն արտաքուստ առ՝ ի ծախել զմամոլեալ մասուանս վերայ։ Եւ եՀեթ կերիցէ ոք՝ ի սմանէ ըստ պատահման, պտտՀառէ զտտպուն և զկՀուութեան վերին ծայրեն սատմոքսի, զՀայթքուսին, զասատիկ ցաւ, և զբորբոքուսին ստամոքսի և ստորին որովայնի, զցնցուսին մկանանց, և ջղաց, զուՀգին ցաւ գլխոյ, զբզզուսին ականջաց, զպապակուսին, զՀեծկլտանաք, զուշգռնացուցեալ, զցուրտ քրտան, զքաղցկեղ ստամոքսի և ստորին որովայնի, և վերջապէս զմահ։ Բայց դիտեալ արժան է, զի եՀեթ նախ քան զանցսանելն կէս ժամու նպաստամատոյց լեցի՝ ի ձեռն կարևորագոյն դեղորէից, որպիսի են՝ օսպի քարպօնատ տի բօթասսա կամ տի սստա, կիՀ օլիս տի ռիչինս, կամ իբէքաքուանա և այլ ամենայն կերպ հիւՀեթք իւղայինք, յայնժամ մարթի է յուսալ՝ ի փրկութեան։

ԱէրօՀիպիա, լտ, և իտ։ և ըստ մեզ՝ օդավախութեան։ Է ազգ ինչ մանաՀախութեան, որով ոք երկնչի յօդոյ։

Աթանասիա, իտ։ է դեղ ինչ քնաբեր, և օգտակար արգանդացաւութեան։ Դարձեալ, է խոտ ինչ, որ և կոչի՝ թանասէՀթօ, տես և անդ։

Ալթենուանցիա, լտ։ ուռեֆիաչիէնթէ, իտ։ Է ա-նուն հասարակ նշանակիչ ամենայն դեղօրեցց, որք անօա-բեն և նրբացուցանեն զարիւնն և զհիւթն մարմնոյ։ որ-պիսի են պարտանան, սասսաֆրաս չէօրչնա, սալ վ-լաթիկ են։

Ալթացիօ։ բառ իւս այսու ըստ անդամանշնաց իմա-նի՝ վերջին ողն պարանոցին մեջտ 'ի թիկունս։ Սա կոչի 'ի տաճկաց՝ տարազ։

Ալեռօֆիա։ անուանմբա նշանակին՝ անտածուութի։ Է անհնարին հիւծուութի՝ առ 'ի չգոյէ տածողութն։ կամ սննդեան։ տես թիղիքէցցա նէռվօրա։

Ալծոնիա։ է բառ նորոց, որ սառուդաբանի՝ ակարուն, կամ թուլուն։ կոչի և ըստ նոցա ատէնամիա, կամ սա-թէնիա և կամ տեբրիմենթ։

Ալուտա, կամ կալէռիթաս, և կամ քասսիթա, լտ։ լօռօբա կամ ալշտօբա, իտ։ չայիր գուշու, տճ։ և ըստ մեզ՝ արտուա։ Է թռչուն փոքրիկ, սրաթռիչ, և զուարթ ձաձայն, որոյ միս կարծր է և դժուարամարս, այլ սիրա նորա և արիւն են դեղք վքախտութեան, խթեց որովայնի, երիկամնաժեւտութեան, և միզարգելութեան։ լուծանէ նաև զքար եթէ գայցի ընդ անցս միզի։ Բայց յարատաեալ արժան է առ քանի ինչ ամիսս։

Ալէս ֆիառմաբօ։ տես անթիսօթուում։

Ալթէա, կամ պիսմալլա, կամ իբիսքուս, լտ։ ալ-թէա, իտ։ կիսմով, դող։ մարշմելլօ, անգլ։ արաէնին, յն։ հաթէմ չիչէի, կամ կիւլ հաթէմ, տճ։ զանր խաթմի, կամ վէռա աֆռիտա, արբ։ և ըստ մեզ՝ տուղտ։ Է բոյս յայգէ մոլոշի, որոյ ցօղունն է երկայն իբր երեք և կէս տանարամի, ուղիղ, թաւամաղ, և մէջն դատարկ։ Տերևն նման է տերևոյ թթենւոյ, բայց փոքրիկ և կարծր քան զնա։ Ծաղիկն լայնաբաց, տատիրական, մածուցիկ, և կպը-չուն։ այլ չունի մանաւորը ինչ հոտ։ տեսանեմք նման ծաղկանց մեկոնի։ գուշով սպիտակ։ բայց յոմանս տեղս լինի և մանգոյն, ծիրանագոյն, դեղնագոյն, և խայտաբ-ղէտ։ Պտուղն փոքրիկ, և տատիրականաձև, նման ը խիզ մոլոշի։ Խակ արմատն երկայն, սառաբ, սպիտակ, կարծր, թեւաւոր, և մածուցիկ, միանգամայն և դեղ ախտից կրծոց, հաղից, փոսացաութեան, և միզարգելութեան՝ առ-թելոց յուժգնութեան։ զի է թուրացուցիչ, և կակղացու-ցիչ բնութեաբ։ Զամին 'ի վեց արամէ մինչև ցութ յաւուրն՝ խառն ընդ մի լիտր ջրոյ։ Այս բոյս բուսանի յամենայն

ուրեք. և ի դաւառս ինչ ի ռամկական բարբառս մեր անուանի ՌնՇկաբրնի։

Ալիմենթում, լտ, նուիթիմենթօ, կամ ալիմենթօ, իտ։ սէսրէյիլ, տՇ։ և ըստ մեզ անունդ, որ է փոխարկումն կերակրոց և ջրոց ի դրայցութիւն։ Արդ՝ սա է մին ի գլխաւոր երրեակ կարողութեց ընութեան կենդանի. այսինքն սնունդական, աճողական, և ծնողական։ Բայց յերից ասսի գլխաւոր կարողութեց պարգևեցան ընութեան այլ և քառեակ կարողութիւք երկրորդականք, առ ի կատարելապէս պահպանումն ընութեան. որք են ձգողականք, ըմբռնողականք, մարսողականք, և արտաքսողականք։ Առաջին կարողութիւնն ձգին կերակուրքն ի մասունս։ Երկրորդականաւն ըմբռնին ըստ պիտոյից, իսկ երրորդականաւն հալին՝ որոնին՝ և քաքցային։ Հուսկ յետոյ չորրորդականաւն հաւաքեալ նիւթքն զտեալ ի կարևորագոյն և յընտրագոյն մասանց՝ աւելորդքն մերժին արտաքս, և կարևորագոյնքն փոխին ի կամՇնորակ հիւթ ինչ՝ մասաց կոչեցեալ, և ի նուրբ ցնդելի ոգիս, որք սպրդեալ ընդ ծակախս մարմնոյն տարածին և սնուցանեն զայն։ Իսկ մասացն զոր լասինայիք կոչին՝ քիլուս, մտեալ յերակս և խառնեալ ընդ արեան փոխի առ սակաւ սակաւ յարիւն, և արիւնն հետ գՇեռեալ ի մարմնին, և ի կենսական ոգի, որ է պահպանիչ կենաց և պատճառ շարժմանց մարմնոյ. Ալլ գիտել արժան է ասէն, զի վերոյիշեալ քառեակ կարողութիւն ընդունին զզօրութիւս իւրեանց ի ջրից տարեբաց անտի, հուրն ջերմ և չոր հաղորդէ զներգործութիւն իւր ձգողականին, հողն՝ ըմբռնողականին, օդն՝ մարսողականին, և ջուրն՝ արտաքսողականին։

Ալիս. տես ալլուսս։

Ալանթօխան. այսու անուամբ խմանի՝ մին յաղագս կամ ի թաղանթից, յորում պատեալ է սաղին յարդանդի բազում կենդանեաց։

Ալշարիա. տես երեսիմում։

Ալլուսս, լտ։ ալիս, իտ։ տիլ կամ այլ, գՇղ։ կարգի, անդղ։ աքօտոն, յն։ սարմնասաք, տՇ։ թօմ կիմ սում, և կամ ֆում, արբ։ սիր, սր։ և ը մեզ՝ խրատոր։ Ի տունկ ինչ ծանօթ սմինեցուն. որոյ ընութիւն է խմիչ, գրգռիչ, և ՇՇեհալած. և չափաւորապէս կերեալ դիւրապատրաստ զՇոսումն մեզի, զօրացուցանէ զակարութիւն սատմքսի, և դիւրաւ տայ մարսել ըզկերակուրն. և ապաքինէ զՇրդողուն, ջանաց փայ-

ծեղան, և զոռենդ։ Իսկ չափազանցն՝ ինաս է գլխոյ. խանգարէ զոռեսութիւն աչաց. զայրացուցանէ զմաղձն, և վրդովէ զստամոքսն։

Ալուամ. տես ալուամն։

Ալծեռէ, լտ։ ապպռիվիատռէ, և կամ ակկիաչիառէ, իտ։ սօղումաք, տօնումաք, տՃ։ և ըստ մեզ՝ ստռիլ կամ պաղիլ. որ յաՃախ պատահի 'ի կողմանս հիւսիսոյ. և նոյն խստուն ցրտուն յոլով անգամ հարկանէ զծնօտս և զունգունս մարդկան. զոր եթէ ոչ աՃապարեալ փութով դարմանեսցեն, 'ի քաղցկեղ փոխարկեալ անկանին ծայրք ընչաց՝ և ցցուեալ տեղիք ծնօտից։ Ալլ դարման այսր ինաստու դիւրին է. զի առեալ փոքր ինչ ձիւն կամ ցուրտ ջուր՝ ուժգին ՃմՃեսցի 'ի վերայ սառուցեալ տեղւոյն, մինչև ջերմասցի, և 'ի միջոցի սակաւ ժամուց անդրէն հաստատի. իսկ ընդ հակառակն՝ եթէ լուասցի կամ դիցի 'ի վերայ նորա ջերմ և ոգեղից ֆիմենթօ, անդէն առ նմին ձգեն յինքեանս զքաղցկեղ։

Ալումն, կամ օքսի սուլֆաս, օքսիստուլում ալուումինա էթ բօթասսա, լտ։ ալուամ կամ օսի սօլֆաթօ, օսսիստուլօ տ' ալուումինա, իտ։ սգիբդիռիս կամ ստիպսի, կամ ալմի, յն։ շապ, տՃ։ շէպ, արբ։ պոգ կամ զեմէհ, պրս։ և ըստ մեզ՝ պաղլեզ։ Ի ազգ ինչ հանքային թթուաձ համաղի. որ սովորաբար գտանի 'ի գաղղիա, յանգղիա, և յիդալիա. բայց գտանի և արուեստականն, որ յոգնատեսակ է յոյժ ըստ պէտպիսութեանն նիւթոց և յեղանակ. կէ կազմուէն. զոր յօրինեն յայլ և այլ տեղիս եւրոպիոյ. ընտիր համարի՝ եթէ ի յեռ սառնատեսակ ջրէն ական վանուոյ. յորմէ կազմեն դեղ 'ի ներքուստ առ 'ի յարգելուլ զհոսումն արեան, և 'ի փարատել զհարբուխային սխտաս արդանդի, և զնէթս պատՃառեալս 'ի թիւնից կապարի. զի է սեղմիչ և լուծիչ բնութեաբ։ Ճամն յերկու ցորենոյ մինչև 320 երկու կամ երեք անգամ յաւուրն՝ խառն ընդ բաւականաչափ ջրոյ։ Նոյնպէս և օգտակար է ուլնացաւութեանն, և յորդառատ հոսման լորձանաց, եթէ խառնեալ ընդ ջրոյ վարդի կամ սամպուքօի ողողեսցի ուրն. մաքրի նաև զդիրոս ատամանց. և ապառեալ ծախէ զմսամոլեալ մասունս վերայ, եթէ կիզեալ զայն և ՃՃիւնացուցեալ արկանիցի 'ի վերայ նոցա։ Պաղլեզն վարի և 'ի զանազան ներկս, և է մի 'ի գլխաւոր նիւթոց անսի։

Ալէ կամ ալէս. յայս անուն կոչեցեալ 'ի գերմանացւոց՝ է զոր գաղղիացիք անուանեն էլան, և յոյնք՝ ալքի. իսկ տաՃիկք՝ ոլն, կամ կիւր։ Ի տեսակ մի վայրե-

նի քառատանուց՝ ի չափ մեծ եղջերուի. որոյ գլուխն սուսերաբար է նման երիվարի. մորթն և ականջքն՝ իշոյ. աչքն կայծակնացայտ. շրթունքն մեծ և թանձր. ատամունքն միջակ. մորուսն երկայն յոյժ, և կարծր. եղջիւրքն բազմաճիւղք՝ զրբէն եղջերաց այծեմման. բայց մեծ են յոյժ, մինչև կշռել 12 լիսր և առաւել. փորն մեծ ըստ կովու, միսն համեղ, սրունքն երկայն և նուրբ. ոտքն սեաւ և կէզպակաբաշխ ըստ եղանց. եղնդունքք կարծր և սպիտակ. իսկ ձեռն փոքրիկ: Սա թէթեւաարշաւ է և արագընթաց. ընդ գետս լողալով անցանէ: Գիտեն հաստատակօրէն յեւրոպիա, և յաւէտ յերկիրն պառուսոյ և շվեսայ: Եղնդունքք այսր քառատանուց՝ զոր լատինք ունկուլա աշէս կոչեն, դեղ են ազգու ընդդէմ դժնդակ սխտին լուսնատութեան կամ վերնոտուն, և այլոց սմին նման նուաղեցուցիչ սխտից. միայն թէ կրկնելի է այդ գոնե մինչև ցերկու ամիս: Չնոյն գործունէութեան ունին նաև ականջքն:

Ալպում կուբքում, կամ ալպում քանիս, և կամ չինօքաօրաս, լտ: մեռա տիս. շիեն պլանշ, գղղ: գոս աքիլա սուպռու, յն: գէօրկին աքթէբրի, ռմ: խառապլանեթ իկ գէլը, արբ: և ըստ մեզ ատուգաբանի՝ սպիտակ ագրն չան: Օգտակար է սա ի գիպուռածս փոզացաւութիւն, զոր օրէն է լսել ի փուշ մանրամաղ, և փչել եղեգամբ ի ներքս ուքանն. երբեմն մարթի է և ի վար արկանել ի թանձրաթանս. օգտէ և կշտացաւութեան և խթանաց որովայնի: Չափն ի 20 ցորենոյ մինչև ց 80 խառն ընդ հաստատակ ջրոյ:

Ալվի ֆլուբատս, կամ ալվի սօլուցիօ, լտ: ֆլուսսօ տի վէնեթռէ, կամ սգուաքքէնառէ, կամ սմնսսա տի քօրբօ, իտ: տես ի բառն՝ սխտաէա:

Ալքալի, կամ արուէ տի գամեթնս, իտ: կոչի և ըստ նորոց՝ քառպօնաթօ տի սօտա: գալիանաշը, կամ գալիկեթ քիլի, ռմ: շապկաֆուր, արբ, իշխար, սպ: և ի մեզ՝ կալաբար, կամ կալէքար: Ի տեսակ ենչ աղի, զոր արտադրեն քիմիական արուեստիս յայրեցեալ մոխրոյ սոստ սնուանեալ բուսոյ. յորմէ կազմեն դեղ ընդդէմ խայթուածոց իժից, և այլ թիւնաւոր օձից: Չափն ի 10 ցորենոյ մինչև ց12 յատուն խառն ընդ արգանակին ամսպուքօվ: Ի սմանէ կազմեն և ազգի ազգի դեղոցայս. որպիսի են ալքալի վալենիկէ ֆլուօռէ. որ է դեղ միզացուցիչ և քրանեցուցիչ, կամ քառպօնաթօ տի ամոնիակ. քօ են:

Ալքէքէնճի, կամ Ֆիւռալիս ալքէքէնճի, լս։ ալքէքէնճի, իս։ քսիալօս կամ ալս, յն։ Ֆիշնեռ չիչէի, ռճ։ և բան մեզ սուուրարանի՝ լսողութեանդակի։ Է բոյս ինչ բաղմացօղուն և կարմրերանգ, որ յաճախ բուսանի ի ցանկապատս և ի սուուերամած տեղիս իբր մի և կէս ոտնաչափ բարձրութիւն։ Տերևն նման է տերևոյ օսլանում անուանեալ խոտոյ, բայց մեծ քան զայն։ Ծաղիկն լաստերառձև կամ անուռաձև, կարմրերանգ և ասիսանաբեր։ Պտուղն գնտակաձև մեծութիւն ի չափ հասարակ ընկուզոյ, կանաչակերպև։ այլ ի հասանիլն փոխի ի գոյն կարմիր։ Մէջն հիւթալից, և տոպահամ, միանգամայն և գեղմիզարգելութեան, ջրգողութեան, և երիկամնաժեռուեան առնելոց յուժգնութեան։ զի է թուլացուցիչ, զովացուցիչ և միզաբեր բնութիւն։ Զարմն յերկու տրամ մինչև ցվեց յաւուրն խառն ընդ հասարակ ջրոյ։

Ալքիմիլլա վուկարիա, լս։ ալքիմիլլա քօմունէ, իս։ կոչի և բիւսի տի լէօնէ։ բիւ տը լիօն, գղղ։ լէսիս մինչ դրլ, անգղ։ բուս, կամ լէօն, յն։ է բան մեզ՝ սատալնիչ։ Է տունկ նուրբ, բազմաճիւղ, թաւամազ և գառնահամ, որ հասարակօրէն բուսանի ի ջրաբրի և ի խոնաւեան տեղիս կոր, վահանաձև, մազուտ, և երկայնականիթ բան նմանութեան մազոյ։ Ծաղիկն մանր, աստղաձև, և բացագոյն դեղին, որ ի վեր երևի ի վերայ հինգ դերձ քառեակ առէչիք։ բերկ սերմանս մանունս, բոլոքակս, և դեղնագոյնս։ Իակ արմատն երկայն իբր մատնաչափ, ստուար, թեքալից և սեաւ։ Լի է իւղով։ այլ նուազ ալիս։ ունի մանաւանդ գործունէութիւն ի խափանել զյորդաւատ հոսումն միզոյ։ քրանց՝ և արեան։ զի է սեղմիչ և գոյզն ինչ դիգռիչ բնութիւն։ Զարմն մի ունկի խառն ընդ մի լիտր ջրոյ։

Ալքօհոլ, լս։ ալքոհոլ, իս։ տես սրիւթիօ տի վինս։

Ալգէ, լս։ և իս։ աղէս, գղղ։ և անգղ։ ալօի, յն։ սապա սավար, արբ։ սարը սապա, ռճ։ և բան մեզ՝ հալուէ։ Է շատագոյն և ամենադառն հիւթ ինչ։ զոր արտադրեն ի տերևս և ի ցօղնոց երիք տնկոյ ամերիկոյ, հեբրայիոյ հնդկայնոյ, և ափրիկոյ։ որ լինի սպիտակաձաղիկ, երկայնապտուղ, տարարաստերնի, և ստուարատակ, և այն հիւթ ունի զաղուտ տեսակս։ յորս լաւագոյնն այն է, որ լինի մաքուր, փայլուն, թեթև, դեղնագոյն, և դիւրափխրելի։ յորմէ յօրինեսք դեղ տարբեր տատանքսի, նուազութեն ամսական պարտուց կանանց,

դալկան, և կալուածոց թանչից մուտքեալոց յուժգնուն. զի է լուծիչ և թուլացուցիչ բնութ. ստամոքի նուա զոր-դունս և զՀնոն որովայնի։ Զարմն ի 5 ցորենոյ մինչև ց15 խառն ընդ այլ յարմարաւոր դեղոցդ։ Եւ եթէ փոշիս ցուցեալ ցանիցի ի վերայ վերաց, մաքրէ, և երբեմն փա-ռաւէ զնոսին։

Ածաղօրաւ, կամ մէջրիրաւ աղաւօրաւ, լտ։ ածծէ-ռուօրա կամ լածծէրուօրա, խտ։ աղբուօրեն, գղղ։ նիկբօլի-թէն մէջրը, անգղ։ հալբՀ, ատ։ է բան մեզ աղՀ. է տեսակ մի զղերոյ ի չամ հնդկային ընկուզոյ, կարմրե-բանգ, հիւմալից, և քաղցրահամ, միանգամայն և զուսա-ցուցիչ և զուարճացուցիչ բնութ։

Ածիկօս. բան անդացուցիչնոյ նշանակի երանն այն, որ չուտնի ընդ իւր շնչերակ, օրպէս զայլ երակս։

Ակահիբաւ, կամ պոլէնիուս բուսկանս, և կամ ֆիուն-կուս լատինս. լտ։ ակահիբօ, խտ։ ակահիբ, գղղ։ էկէ-ռիբ, անգղ։ ակահիբօ, յն։ կառկօն, ատ։ աղարիբուն, արբ։ է բան մեզ տարաղ։ Է սնկանման նիւթ ինչ արբ-տագրեալ առ բնութք հնագոյն կաղնեաց, և մայրից, մա-նաւանդ լատիչ անուանեալ ծառոյն, որ է սպիտակ, թեթեւ, գիւրաբեկելի, հոտաւէտ, և փոքր մի քաղցրա-համ, ունի և թեթև կամ ջնջս ուռղոսմիբս և նուրբս։ Ի նիւթոյ սասի կազմին գեղ վասն մաքրելոյ գկուրծս, լու-ծելոյ զնացանս լերդի և փայծեղան, և միանգամայն փա-ռաւելոյ զշրդոցութիւն. և ի մասնաւորի ի ստամոքել զՀնոն և զորդունս որովայնի, և յանեօրել զլեանձրանս ծուլթիս տոգունից. զի է լուծիչ և միզացուցիչ բնու-թեամբ։ Զարմն ի էնս տրամէ մինչև ցմի և էնս խառն ընդ այլ յարմարաւոր դեղոցդիցդ։ վարի և արտաքուստ ի յարդեալ գյորդառատ հոտուն արեան։

Ակնուս քասթուս կամ վիճէքս ակնուս քասթուս, լտ։ ալպէռս տէլ բէբէ, խտ։ ակնիւս քասթիւս, գղղ։ էկյսդգրի, անգղ։ լիս կամ ակօ, յն։ խմիէր, արբ։ Է ծառ փոքրիկ, գեղեցիկ տեսլեամբ, հոտաւէտ, և գորշակեղև, ունի ոստս յոգնաթիւս, նուրբս, կրկնածոյս, և գժուա-րաբեկս։ Ցերեկք սորա կարգաւ բուսանին առ միմեանքք՝ հանդոյն տերևոց կանեփոյ. և են երկայն, ուղղորդ, սրա-ծայր, և աղուամանուտս։ Ծաղիկն կարմրագոյն, և տասա-համ։ Իսկ սերմն որ գտանի ի ծաղկի անդ, է բոլորչի, գորշագոյն, տասաւոր, տասաՀամ, և հոմեմայնին, զօրէն պղպեղի։ Բուսանի յաՀարս ի թուրքաստան. որոյ ծա-ղիկն, տերևն, և սերմն ունին զգործունէութիւն ի բանալ

զմանրադոյն ծակտիս երակաց, և ի դիւրաշարժ յօրինել զարտաքնչութիւն մարմնոյ։ Դարնիկք ի կիր արկանէին ատսն ի սէգապէս գեղոբաց, նաև ի գրգռել զսրտին, զը մէն, և զդաչտանս կանանց. բայց զարդիս ոչ հաճարն այնքան ի յարգի։

Ակռնսեթա, կամ ուվա աչէռատա, լտ։ ակռէսեթ, խտ։ ակռուռխտա, և կամ աքիս, կամ օմիքաս, յն։ վէռաժիս, դղ։ գէռաս, կամ հօսուռմ, արբ։ կուռէ, կամ գէնէչ տու, և կամ գէնեչու, պր։ և ըստ մեզ ազոխ։ Ի տհաս պտուղ որեցոյ, որ ի հասանելն լինի խաղող. զբուրեթիւ սորա է սեղմիչ և զովացուցիչ, որով բարեխառնէ զկծուռութիւն մաղձի, արգելու զվարհարութիւն, և շինչուցանէ զը ջերմութիւն արեան։

Ակռիմոնիա, լտ և խտ։ էկռիմոնան, դղ։ քրմմնն եկ րիմոնի, անգղ։ աքս, յն։ օշուն օթու կամ էկեր օթու, տՃ։ Ի խոտ գլանաձև, կարծր, Ճիւղալից, թաւիշաւոր, և փոքր մի քաղցրահամ, որոյ տերևն է երկայն և եզերա հեռՃ։ Դաղելին ստիտակ, ձուաձև, և հինգ թերթեան. բերէ և պտուղս երկայնաձև և մեթին կարմիրս, յորս են սերմունք։ Իսկ արմատն երկայն, ստուար և սեաւ։ Բուսանի յեզերս Ճանապարհաց և ադարակաց, որոյ տերևն եփեալ ի ջուր և արբուցեալ՝ գեղ է հոսանն որովայնի, և այլ հիւմեոց պատՃառելոց ի թուլութեի. զի է սեղմիչ և խթիչ բնութեի։ Զաքն ի վեց արամ մինչև ցուեթ խառն ընդ կէս լիտր ջրոյ։

Ակռս տի ջէռռս, խտ։ աղաՃ գաղուն էքշլսի, տՃ։ Ի ըմպելի ինչ բաղադրական, կազմեալ ի չորս ունկի հաստաՃոյ կիսրոնի, ի մի լիտր մաքուր շաքարէ, և ի բաւականաւոր ջրոյ, որ շինչուցանէ զտաղ տենդից։ բարեխառնէ զվզիոլուն սեաւ մաղձի, հորդէ Ճանապարհ միզի. և գիմակալէ փտախտից, զի է զովացուցիչ և թուլացուցիչ բնութ։ Զաքն ի մի ունկէս մինչև ցերկու խառն ընդ հոսարակ ջրոյ։

Ակռէռսեթում, կամ աքիլլէա ՃՃէռսեթում, լտ։ էռուբաթՃօսիս տի մէսուէ, խտ։ եիսաս, յն։ աշիլլէ վիսքէօզ, դղ։ մսպին, անգղ։ Ի խոտ, որոյ տերևքն են երկայն և գաւնանՃամ, որք խիտ առ խիտ սփռեն զերեսաքդ գետնի. և ի միջոց տերևոց ելանէ ցօղուն փոքրիկ, որ ի ծայրսն բերէ ծերմանագոյն ծաղիկ լայնաբաց, և յոյժ հոտաւէտ. զնիկ ծաղկանց յայսորդէ սիՃնակ երկայնաձև և թաղանթաւոր, յորում են սերմանք մանրիկք։ Բուսանի ի լերինս և ի մարգագետինս, մանաւանդ ի կողմանս եւրո-

պիոյ, որոյ տերևն եփեալ ՝ի Ջուր և արբուցեալ՝ դեղ է Ջղային գժու

Ֆարմաչիթեմ, իս։ Ֆարմաքօն, յն։ Ի հող ինչ սեաւ, մածուցիկ որպէս զկուպր յաձախեալ ի հանքս քարանց. բնութիւն է ջերմ. Ճոխագոյն է ծծմբային մասամբ և աղիւ. միանգամայն և աւելի սատակիչ Ճնճաց և որդանց որովայնի, օգտակ նաև ընդդէմ ախտի հերձաթափութեան, ասէպ ներկելով սուսամ զհերս և զյօնս։

Ամֆիսպեհան, կամ ամֆիբէֆալօս, լտ։ Ի տեսակ մի փոքրիկ օձի, երկայնութեամբ նորա սովորաբար չէ ինչ աւելի քան մի և կէս ոտնաչափ, գոյնն սպիտակ և շողշողուն, ունելով ի վերայ նիշս, և գիծս կարմրեղանգս, այսոր սատար, և թանձր, տուսն փոքրիկ, և սրածայր, թոյնն գէնդակ, և մահաբեր. և է կատաղի յոյժ. խայթէ զարաչարս զամենայն որ ինչ ընդ առաջ ելանէ նմա, թէ մարդ իցէ, և թէ անասուն։ Այս օձ առատ է թրուչական աղիւ և իւղով, որոյ միս, լեարդ, և սիրտ՝ ի կիր արկանի ըստ օրինակի խժի, որ ընկի գէն ոգեղ ընդդէմ խայթեցածոց թիւնաւոր օձից, և տապալեթէ հիւանդս. բանայ և զանցս քրտանց, և գիւրաբաշխ յօրինէ զտուրեւառուութիւն ընչոյ. և ապաքինէ զերձաբաժեռութիւն։ Այս օձ գտանի անխտիր ընդ ամենայն տեղս ի կղզին անուանեալ Լէմնոս։

Ամեթեսթա կամ ամեթեսթուս, լտ. և իտ։ մեթիզ, յն։ Ճնպէլլեգուն, արբ։ և ըստ մեզ՝ սուսամ կամ մեղեսիկ, և կմ՝ ամեթեսս։ Ի ազնուագոյն ամն ինչ կարծր, գեղեցկատեսիլ, և թափանցիկ. որոց ոմանք են կարմիր և վարդագոյն, և կէսք ի գոյն ծաղկանց գեղձի, ոմանք մանուշակագոյն, և ոմանք սպիտակ իբրև զանգամանդ, և շողշողուն։ Ջօրութիւնք սոցա ձգող, սեղմիչ, և սեթափիչ, որով արգելուն զհոսումն որովայնի, և ծծեն զթեթու հիւանդս ստամոքսի, և միանգամայն դիմակալեն արբեցութիւն։

Ամիլուս, լտ։ ամիսս, իտ։ մավլի, յն։ նշատտա, ՀՀ։ նշատտ, սր։ նիլէ, արբ։ և ըստ մեզ՝ նիլեսկ կամ օպալ, որ է բնութիւն կակղացուցիչ և յոյժ պատշաճողական գեղ ի դիպուածս ամենայն տեսակ այտուցից. քաղցրացուցանել և զարիւն ի խժայնի թեթև հիւանդոց, և ապաքինել զցաւս ականջաց. միանգամայն և կակղէ զկուրծս. զի և առատ իւղով. և գոյացական աղիւ։ Այս նիւթ ոչ այլ ինչ է բայց եթէ նրբագոյն և սպիտակագոյն ծուծն թերջեալ և նեղեալ ցորենոյ։

Ամիկտալուս ամարուս, կամ ամարա, լտ։ մանտօրլա ամառա, իտ։ ՀՀ՝ պատէմ, ՀՀ։ լէսմ մոռ։ և ըստ մեզ՝

նուէր դառն։ Ի ազգ ինչ նշոյ, որոյ մէջն դառն է իբրև զկորիզ դեղձի. հուչակաւոր է ի մասին օգտաւէտութեանէ ի գիպուածս տկարութեան ստամոքսի, և ցաւոց որովայնի. Թէպէտ սա մարդկան օգտակար է, այլ ՃՃեաց, և ձաղուց ազուիսուց մեհաթեր է։ Ի պտղոյ ասսի արտահանեն իւղ ինչ գառնահամ, զոր լասինք կոչեն օլէուտ ամիկասի ամարէ. յորմէ գործեն գեղ ազդողական ընդդէմ ցաւոց ականջաց, զի է մեղմիչ։ Ծառ նորա բուսանի յամենայն ուրեք. նա յաւէտ յերկիրս վիճակեալս ջերմագին օդոց։ Տերեւք նորա երկայնաձև և սրաձայր, և դառնահամ։ Իսկ ծաղիկն նման է ծաղկանց գեղձենւոց։

Ամենաթուս կամ ասպէսթուս, և կամ ասպէսթէս լաբրիս, լտ։ ամենաթէս, իտ։ ամենս կամ միանս, և կիմ զվէնիմի, յն։ Ի քար կիմ նիւթ ինչ հանքային ասիատակ, և յոկեալ զորին ալումին բլումումում վերուսի. զոր ի ծեծելն՝ լինի իբր բամբակ ընդունակ մանելոյ, և ոստայնելոյ, յորմէ գոտանի և ի տեղիս տեղիս կուսէ գործեալ։ Նաև պատմուճան ամբողջ. զոր ի կամին լուանալ՝ արկանեն ի հուր, որ բառնայ զամենայն աղտն, և զկտաւն թողու լիւրուամ պայծառութեամբ։ Սա ըստ ոմանց նախնեաց հեղինակաց՝ ունի և զօրութիւն մաքրողական, և դեղեալ փական. բայց կարծիքս այս չէ այնքան հաւանական։

Ամիսս. տես Ամիսուամ։

Ամի, կամ ամիէս, լտ։ ամօս, յն։ Ի սերմն ինչ փոքրիկ իբրև ի չափ աւազոյ. որոյ համ և հոտ նման է զոսպայի. օգտաւէտ է ընդդէմ ցաւոց գլխոյ, և արգանդի, և տկարութեան ստամոքսի և աղեաց. զի է խթիչ բնութիւն։ Եւս գիտնալիք թուոնից։ Ցուռնի նորա բարձր է և ոստախիտ։ Տերեւն նման է տերեւոյ սամթի։ Ծաղիկն փոքրիկ և սպիտակ։ Իսկ արմատն ստուար և փոքր մի կարծր, սովորաբար գտանի ի դաղղիա, և ի կրետէ։ Հասին ի 5 ցորենոյ մինչև 920։

Ամոնիաքում կումի. տես կումմի ամոնիաքում։

Ամիսոսէլինում. տես Թասլ։

Ամուքա, լտ։ ֆէէչիա տի օլի, կամ մորքիա, լտ։ խանուկի, յն։ Հաղորդ Թօռնթուսու, տճ։ ըստ մեզ մրուք կիմ գիրտ իւղոյ, որ ի պարզելն իւղոյ ելնանէ ի յատակս անօթոյն. բնութիւն է կակղացուցիչ, և միանգամայն աղաքինէ զցաւս գլխոյ, եթէ ջերմացուցեալ արկանիցի ի վերայ ճակատուն։

Ամպարա չինէրիթա. տես Ամպարում կրիզկում։

Ամպարէ կամ ամպերէս , լս : է Ծառ. Երկայն, և ստուար , յաճախեալ ի հնդկաստան : Ցերեկ Նորա բան եղեալ նման են տերևոց ընկուզոյ : Ծաղկին փոքրիկ է , և սպիտակ , զոր Ճմելով մատամբ՝ արձակէ զհոտ ամպարի , որպէս և տերեկ նորա . Նմին երի կոչի Ծառ ամպարի : Իսկ պտուղն ստուար ի չափ հասարակ ընկուզոյ . Նաև քան զհասանելն է կանաչագոյն , իսկ յետ հասանելոյն փոխարկի ի գոյն դեղին . Մէջ Նորա կարծր , ճաճառուտ , և տասպաՀամ , շրջապատեալ նուրբ ջրոք. ուստի ապիւ կամ քացախիւ թացեալ թողուն առ ժամս նակ մի ի բարեխառնել զառապուրեն նորա , որ լինի դեղ տկարութեան ստամքսի , որ և զկերակուրն տայ դիւրաՄարսելոյ , այլ յաճախակերութեան գրգռէ զմտացն :

Ամպարում կրիզէում , կամ ամպրա կրիչէա , և կամ ամպարա չինէերիցիա , լս : ամպրա , կամ ամպրա օտօրօղա , իտ : անվար , յն : ամպէր , տՃ : խմղիմ կամ հիւա , կամ գուՄր , կամ գեառահ , կամ էլէնՃուՃ , արբ : տարատու կամ բաՃպոլ , և կամ մէՃոեէլ պր : և ըստ մեզ՝ ամպար , կամ բան ոմանց բուրիեն : Ի նիւթ ենչ աղնուագիտն , ջրբ , թեՄեթև , ազօտ , գորշագոյն , քաղցրահոտ , և կարծր որպէս զքնքուշ քար . ի սկզբանն է գանգաղտամած , և ապա ստ սակաւ սակաւ սկսգանայ , բայց բազում անգամ խառնեն ի բուն ամպարն զայլ մածուցիկ նիւթ ենչ՝ որ եկեալ ի ծովէ . Նմին երի հաղիւ երբեք գտանի սա մաքուր և աղնիւ . որոյ այնիւ և ընտրագոյնն է սպիտակախառն գեղն , և թեՄեթև յոյժ , ուռեալով նրբաբաղոյն նիշտ , և երակս , որք սիրեալ կան ընդ բոլան դակ զանգուած Նորա . զոր ստէպ ի գործ ածեն ի ծխանելիս հանդերձ բաղադրութիւն այլոց : Հռչակաւոր է ի մասին օգտաւէտութեան ի դիպուածս տկարութեան սրտի , ուղղոյ , ստամքսի , և զգայական երակաց . այլև է դեղ ընդդէմ թմբնից : Զամին ի կէս ցորենոյ մինչև ցչորս : Բաղումք ի նախնի գերախուչակ հեղինակաց կամեցեալ հեռացեալ զքուն , և զՀչգրիա զոյացութեան այսր ամպարի , յայլ և այլ կարծիս անկան , և ասպա ուրեմն ծանեան թէ ոչ էր այնպէս որպէս կարծէին , այլ մեզ և մամ , որպէս տեսցի ի ստորագրութեանս սորա : Քանզի յաշխարհն հնդկաց առ ափն ծովու են մեծամեծ և բարմաստեան ծառք ի ծովն կոյս խոնարհեալ , յորս անհամար յոլովութեամբ մեղուաց գործեն մեզս և մամ , և լուծեալ ի ծովեայ սրեգական մեղն և մամն ի մասին ի վերուստ անտի հոսին ի ծովն . զոր ոմանք ահագնեն ձկունք ովկիա-

նոսի, և երբեմն անմիջապէս 'ի բերանս նոցա հոսի. զկնի քանի ինչ աւուրց ոչ կարացեալ մարսել զմոմն, ժայթքէն արտաքս. և ահա այն է ամպարն պատուական, որ այնչափ 'ի յարդի է յապրիկէ, և ընդ համբէն ասիա, մինչև կշռով ոսկւոյ վաճառեալ զայն։ Գիտել արժան է, զի զայս երբեմն հնարիւք կազմին, և դիւրագին վաճառեն, որ է գլխաւորն անպիտան. վասն որոյ մեծի զգուշութեամբ պէտք են առ 'ի զնեալ զսորա Ճշդիրատպոյն։

ԱմպէՀի. տես Միրօպալանի։

Ամպիս, լս։ է ազգ ինչ կապաՀիւթեան, որ դասանի յեղերս Ծովուց հնդկաց, բուրք հոտ անոյշ և հաճոյական, իբրև զՀոտ թաքամահաքա անուանեալ ռեանոյ. դուռնով է դեղին, և բնութեամբ կակղացուցիչ, զօրացուցիչ, և քաղցրացուցիչ, զոր ջերմացուցեալ 'ի հուր, և եդեալ 'ի վերայ ցուրտ այտուցից՝ փութանակի ցրուէ կամ հատուցանէ։ Նոյնպէս օգտաւէտ է ընդդէմ բորոտութեան։

Ամպրա. տես Ամպարում կրկղէում։

Ամպրա կրէզիս. տես Ամպարում կրկղէում։

Ամպրա չեՀերնա. տես քարապէ։

Ամպրա օսօրօզա. տես Ամպրա։

Ամպրօզիա, կամ քսենիա հիբբօքրաթիա, կամ արեգէՀմիզիա մենբրէնօզ, և կամ հէբրա վենօզա, լս։ ամպրօզիա, իտ։ վլօմա կամ ֆիէօս, յն։ Ի բոյս բաղմաՃիւղ, և քաղցրահոտ, յաՃախեալ 'ի բուրաստանս և 'ի դաշտագեղ վայրս իբր ոտնաչափ մի բարձրութեամբ։ Տերևք նորա սպիտակ են, և ցաւատեալ ըստ նմանութեան տերևոց օշնդրի։ Ծաղկին մանրիկ, փնջաւոր, լաչտաձև, և դեղնագոյն։ Խակ արմատն երկայն, նուրբ, և փայտային։ Այս բոյս համով է դառն և ջերմահամ. օգտաւէտ է ընդդէմ տկարութեան սրտի, և ուղղոյ, անսրտի և զՀանձրամածութեան տողոտնոյ, արգելու զՀոտումն արեան, և ցրուէ զվատութագոյն հիւթս խառնեալս՝ յարեան։

Ամոմում, լս։ ամոմօ, իտ։ ամոմ, գղ։ պէտգէրտ սգօնփարսլի. անգղ։ ամոմէ, տՃ։ կոչի և յամանց համամս։ Ի պտուղ անկանեմ, որոյ ձև և գոյն ունի նմանութեամբ ընդ սպիտակ խաղողոյ. տոպաՀամ է և հոտաւէտ յոյժ. և 'ի միջի ուռնի կորիզս քառանկիւնաձևս, և ծիրանագոյնս։ Ծառ սորա փոքրիկ է և սակաւամաՃիւղ, յաՃախեալ 'ի համատարած աշխարհն հնդկաց, մանաւանդ 'ի հարաւային կողմանս։ Փայտ նորա կարմրագոյն է և հոտաւէտ։ Տերևն երկայն և խիտ։ Ծաղկին սպիտակ և

տուպահամ։ Խակ պտուղն խիտ առ խիտ զետեղեալ յողկոյզ իւր կախի զուտոց ծառոյն։ Զոր չորացուցեալ լինի զեղ օդտակար ընդդէմ թունից, քամոյ, տկարութեան ստամաքի, և նուազութեան ամենակն պտղոյց կանանց։ Քանզի լի է թռչակն աղիւ և իւղով, և բնութիւն նոքիւք։ Զամին ի 5 ցորենոյ մինչև ց30։ Զորս է տեսակ ինչ կոչեցեալ ի բարբառ լատինացւոց՝ Ամեմում ֆիլասում, որ է սեաւ և փոքրիկ քան զայն ի բերն ի չափ պտղոյ գիհայ։ Ամլ բաց ի սոցանէ՝ են և այլ երկու տեսակ այսոցիկ պտղոց։ մինն կոչի ի բարբառ լատ, ամամում բլենի, որ է կարմիրանդ և սուաւ ի չափ կեռասի։ Խակ միւսն՝ կնճռալից է՝ մեծուքի ի չափ հնգկայնի պղպեղի, տուպահամ, և համեմայնին, ուսի և զնռնագլուխ հերձուածս։ Երեքին սոքա նոյնպէս առատ դտանին ի կողմանս հրնդկաց։ բայց ոչ են լարմաթ ի դեղոբրայս։

Անանթրա. տես Անաս։

Անանթրուն կամ նանթրան, լտ։ լանթրան, սրբ։ Ի ազգինչ հանքային աղի, յաճախեալ ի վերին եգիպտոս հուպ ի նեղոս գետ յարեմտեան կողմն նր. բուրբ զհոտ զաղիր, գոյն նորա ալիտակ է և մաքուր և թափանցիկ։ Զսա նախնին հեղինակք դասեցին ի կարգս բացողականաց, որք փոխանակ սալնիթռօսի ի կիր արկանէին, և ոմանք ի դասս մաքրողականաց։ Զօրութիւն նորա ի մանանաւորն է սրբել զապականութիւն արեան, և ապաքինել զքաղցկեզս։ Ամլ արհեստաւորք ի գործ ածեն ի զանազան գործս։

Անակալիս առվենտա, լտ։ անակալը, իտ։ Ի խոտ ինչ բաղմատեսակ, յորս երևելի քան զամենեսին է անա-կալիս մտա. ցօղունք նորա խիտ առ խիտ սփռեալ են զերեսաքն գետնի։ Տերևքն փոքրիկ, բոլորակաձև, և դասն միանգամայն և տափակ, յորմէ կազմին դեղ սիմնդանատուն, և լուանոտութիւն։ Դաղիկքն ելանեն առ անթռոյք տերևոցն, և են կարմրերանգ, և երկանայկանի։ Պտուղն փոքրիկ, գնատակաձև, թաղանթոյին, և բազմակորիզ։ Խակ արմատն սպիտակ և թեղալից։ միանգամայն և օգտէ ընդդէմ խածուածոց կատաղի շանց, և հնագոյն վիրաց։ զի է գրգռիչ բնութիւն։ Զամին 20 ցորեան չորս անգամ յաւուրն։

Անակալիս ոգուանթիքա. տես ալէքքաստնակա։

Անանձիրս և կամ աքբան, լտ։ է ծառ փոքրիկ, նրբաբոստ, և կանաչակերպ, յաճախեալ յերկիրս Ջերմադինս։ Փայտ նորա կարծր է և գեղեն։ Տերևքն երկայն,

և փոքր մի պարարտ, զոր Ճմլեալ ՝ի սանդի տրձակին ըղ-
հոտ այնչափ սաստիկ, և թափանցիկ, մինչև առթեն
զքաւ գլխոյ : Ծառիկն գեղին ՝ի ձև ծաղկանց Ճենկեսթաի :
Իսկ մինչ զվերթան ծաղկանց ՝ի բաց թօթափեն, ՝ի վեր
երևի պտուղն նման ըստ սմենայնի թարմ լուբայի հան-
դերձ արտաքին պատենիւն, զոր ՝ի բաց հանեալ, զմի-
ջինն ՝ի կիր արկանեն ՝ի դեղարայս, որ է ժայռքեցու-
ցիչ, և լուծողական : Ջնոյն բնութիւն ունին նաև տերևք
սորա :

Անանաս, լտ. և իտ : է պտուղ մեծ հնդկային, որոյ
բոյս ունի նմանութիւն ընդ ընտանի կանդառի : Տերևք նը-
բա կարմրերանգ են և ցցուեալ ըստ նմանութեան տերևոց
արմաւենւոյ : Իսկ ծաղիկն ծիրանագոյն է և մի թերթեան
՝ի ձև ձագատի : Եւ են սորա երեք տեսակք. առաջինն
կոչի՝ անանաս աքուլէաթուս ֆրուքթու օվաթօ, որ
քան զամենեսին մեծ է և հոտաւէտ, բայց անհամ և
կարծրաթեալ : Երկրորդն յորջորջի՝ անանաս աքուլէա-
թուս ֆրուքթու բրիմիտաթօ, որ սակաւ մի փոքր է քան
զառաջինն. այլ քաղցր է և ախորժելի. և ունի թելս կիմ
ջիղս խիստս և կարծրս մինչև հերձանել և զլնտերս : Իսկ
երրորդն անուանին՝ անանաս նեն աքուլէաթուս բլիթթա
սիէթուս, որ փոքրիկ է քան զերկոսին. բայց չունի մինչ
այնպիսի կարծրաթելս. և Ճաշակ նորա քաղցրութիւն զան-
ցանէ քան զայլոց տեսակաց : Այս տեսակ պտղոյ գոանին
մեայն ՝ի դաւառն կոչեցեալ տաքա յարևելեան հնդիկս,
յորմէ բնակիչք երկրին գործեն գինի պատուական, և
գեղ ազդողական ընդդէմ միզարգելութեան, և նուազուն
սանական պարտուց կանանց. բառնայ և զզուանս սառ-
մոքաց, որով և արգելու զժայռքացումն :

Անաս, լտ : անիթթա կամ անաթթա, իտ : քանառ,
դաղ : նիթթա կամ նէօ կամ բաբիա, յն : էօրտէկ, տՀ:
իվվէս կամ խուտերի, արբ : միւկայ կամ սիւրխաալ և
կամ կիւբէ, պր : և ըստ մեզ՝ բադ : Ի թեաւոր և ջրասէր
կենդանի քաջածանօթ յամենայն ուսիւք, որոյ կրկին է
տեսակ, վայրենի, և ընտանի. վայրենին կարէ թռչել,
համեղ է և գիւրամարս : Իսկ ընտանին որ ոչ կարէ թռը-
չել, առաւել համեղ է սակս առաւելութեան Ճարպոյն որ
՝ի նմա. բայց դժուարամարսելի է, մանաւանդ տկարա-
կամք ստամոքաց : Լեարդ սորա և ստամոքս՝ ունի զգրգ-
ռունեղութիւն ՝ի յարգելուլ զհոսումն լերդի, և ՝ի փա-
բառել զյաւս կրծոց :

Անասարքա, լտ. և իտ : զորմէ տես Հատ. ա. երես 159 :

Անաբարտս. է սրտուղ ինչ 'ի չափ մեծութեն փոքրիկ շաղանակի, կամ ստուար բակլայի, այլ երկայնաձև. որ բերէ ընմանուն սրտի թռչնոյ, վասն որոյ և կոչեցաւ անաբարտս, որ է բառ յունական. և ծագի 'ի բառէս քարտիս, որ է սիրտ: Գոյն նորա է սեաւ, և շղշորուն, և շուրջ գնովաւ պատեալ կայ կեղև ինչ նուրբ և կարծր, գրեթէ ըստ կեղևոյ մերումս բակլայի. բայց ինստաբեր է, զոր 'ի բաց հանեալ, զմիջնին 'ի կիր արկանեմք 'ի դեղորայս, որ է զօրաւոր սրտի, ուղղոյ, և ստամոքսի, օգտակար է նաև ընդդէմ տենդից. յոլովք և սովոր են 'ի հնդկաստան կաղմել ազգ մի քաղցրաւենեաց, քանիցելոնէ տի անաբարտս կոչեցեալ յիտալացւոց: Ծառս նորա դասանի յաշխարհն հնդկաց, որոյ տերևքն են բոլորշի. իսկ պտուղքն երկու երկու զեռեղեալք առ միմեանս յողկոյզս՝ կախեն զոստոց ծառոյն:

Անէթում կամ անէթում, լտ. անեթեթ, իտ. անեթի բիւանեթ, գրդ. բարաթեանս հեթէնն. կամ անիթեան, յն. տարաղօթեու կամ տուրաղօթեու, և կամ տուրաքօթեու, ազգ. շիպուլ, կամ սեպեթ, կամ շէպեթ, և կամ շէյպէ, արբ. և ըստ մեզ՝ սամիթ: Ի պարարտ, փափուկ, անուշահոտ և քաղցրահամ բոյս ինչ, յաղագէ խաւարտից, ըստ ձևոյ, և ըստ տերևոյ նման վարդի սամիթի, (այն է բեղեանս): Ծաղկին եղանէ 'ի գագաթան, և 'ի վերայ ոստոց, որք ձևանան 'ի ձև հովանոցի, և են դեղնագոյն, հենգեթերեթեան, զորէն վարդի. զկնի ծաղկանց արտադրէ պտուղ փոքրիկ, և իւրաքանչիւր հատ պտղոյ ունի երկու երկու սերմունս ձուաձևս, տափարակս, և տոպահատս: Իսկ արմատն կարծր է և սեւագոյն, շրջապատեալ բազում նրբաթելովք: Բուսանի սա 'ի բուրաստանս: Թէպէտ առատ է խոտով և ապիւ, սակայն գլխովին անպտղաստն է 'ի դեղորայս. որոյ սերմն և եթէ 'ի դործ ածի 'ի դեղորայս, որ է փարտաղէ քամւոյ, և հեծկլտանոց. և գրգռիչ կամեին, և միզի, և զօրացուցիչ ստամոքսի, այլ և արգելու զքսխուսն. զի է խթիչ բնութեաբ: Զաղմն 'ի 28 ցորենոյ մինչև 'ի մի տրամ:

Անէթեթ. տես Անէթեթում:

Անէմոնէ, լտ. և իտ. անէմոս, յն. նիւանան չիչէլի, կամ կելնոնէկի չիչէլի, ազգ. ըստ մեզ՝ հարանուկ կամ հողմածաղիկ: Ի տեսակ մի կաղաքաւոյ. որոյ տերևքն են բոլորակաձև, փափուկ, եղերաշերտ, և երկայնականք՝ նման ըստ իմիք մորչի, և 'ի միջոյ տերևոց եղանեն ցօղունք. որք 'ի ծայրսն բերեն չքնաղատեսիլ ծաղկա լայ-

նաբացս. որոց ոմանք են կարմիր կամ ծիրանագոյն, ո-մանք սպիտակ, ոմանք մանուշակագոյն, և ոմանք յայլ և այլ գոյն գեղեցիկ. ղնին ծաղկանց յաջորդէ պտուղն երկայնաձև, և բաղմահատ: Իսկ արմատն խորտաբերտ և թեքաղեց. լինի սա յաճախ ի բուսատանս, ի գաշտս, և ի լերինս. լի է խղով և ապիւ և բնութիւնս օգտակար է ընդդէմ վիրաց աչաց, և ուղղոյ:

Անթաղիում, կամ անթաղէ, և կամ թուսուլուս մարմնուս, լս: Ի փոքրիկ խեցեմորթի ծովային երկայն իբր մի և կէս մատնաչափ ուղիղ, և սպիտակ հարեալ ի գոյն կանաչ, գոնեի ի յատակս ծովուց, նուազ է թաչական ապիս, նոյնպէս և խղով, և բնութիւնքն լուծիչ, և չորացուցիչ:

Անթեղիչէ, հակոլորտ: Ըստ անդամանենոց ցուցա-նի նեբքին շրջապատն արտաքին ականջաց, որոյ հակառակն է արտաքին շրջապատն կոչեցեալ էլիչէ, այսինքն ոլորտ:

Անթէչեթա կամ անթաչեթա, լս: Ի անուն հատարակ գեղորիից, որք գիմակալ են թթոու ախոց, և մաքրին զտատմբն ի կծու հիւթոց, և ի գրոց:

Անթիաբօրլէատիա, կամ անթիաբօրլէթիքա: Ասա երկու բառքն մի եղեալ են. քանզի անթիր է բառ յն, և նշանակէ գիմակալ. իսկ աբօրլէատիա նոյնպէս բառ յունական՝ թարգմանի անդամագօսուն կամ կաթուածք: Ուստի ասեն Անթիաբօրլէատիա, ասի ընդհանուր գեղորիից, որք գիմակալն ախոյ անդամագօսութիւն, կամ կաթուածոց, որպէս են ագուա մէրլիսէ, կամ սրիրիթուս սուքչնուս, ևն ևն:

Անթիսոթուում, լս: ըստ մեզ՝ անգեղա կամ գեղեցափէ անուն ընդհանուր ամենայն տեսակ գեղորիից, որք գիմակալ են վնասակար զօրութեանց թիւնոց:

Անթիմենիում կամ սթիպիում, լս: անթիմենիս, իտ: տէմիր պօզան կամ ռասուրք թաշը, տՀ: բուհութիչ, որք: սէսամէկ կամ բասսուրթ և կամ սիւրբ սիւղթէ, ալր: ըստ մեզ՝ յունաբար, կամ ծարիր կամ ծարոյր: Ի հանք ինչ բաղկացեալ ի ծծմբոյ և ի սնդկէ. լինի զանգուածով մեծ, և ծանր, երանգաւ սեւաւ և փայլուն, բնութիւնք քրտնաբեր, և ժայթքեցուցիչ, որ յաճախակի ի գործ ածի ի գեղորայս հանդերձ բաղադրութիւն այլոց: Զամին ի 12 ցղուենոյ մինչև ցՅՕ. իսկ եթէ ոչ բարեխառնեսցի, վնասակար է կենաց: Սովորաբար գտանի ի գաղղիա, ի սակսոնիա, և յանգղիա:

Անթիմենիս Ճիաչենթնս, կամ վեսթս անթիմենիս, իսս։ պուռզանմէշ էՖոմիմն, ոՀ։ և ըստ մեղ՝ անգոյր սառուցեալ, զոր եթէ փոչի արարեալ կամ ի գինի արկեալ ի գործ արկանիցես, լինի դեղ ի մեն զորաւոր և սատակի փսխեցուցիչ։ Զայն ի մի ցորենոյ մինչև ցերիս կամ ցվեց։

Անթիմենիս տեսիՖորէնթիբս թէռմոսիսս տի անթիմենիս քենբսԹասուս, իսս։ տէմիր պլոզան թէսրէշիրի, ոՀ։ ըստ մեղ՝ անգոյր քրտնաբեր, զոր ի գործ ածեմք ի քրտնաբեր և ի յարեան մաքրիչ դեղոբայս, որ և բարեխառնէ զարիւնն, և փարատէ զանընդմիջական տենդն և զախտս մարմնոյ։ Զայն ի տասն ցորենոյ մինչև ցքսան։ Ամլ զնուռթի սորա տես ի Գէռամէս մինէալէ։

Անթիրրինում կամ նարթէս, կամ օս լէՀնիս վուլկս, կամ ջնուօչէՖալօս, լս։ ակիկնս կիՖ քէՖալի, յն։ Ի ազգ ինչ խոտոց, որոյ ցօղունն է երկայն իբր մի և կէս ռանաչափ, և ուղղալից։ տերևքն նման են տերևոց մանուշակի, ծաղիկն՝ եղեգան։ իսկ պտուղն՝ շանագբէխոյ։ բերէ և սերմունս մանունս։ Ունի սա յաձախ յագարակս, և ի յաւազուտ վայրս։ օգտաւէտ է ընդդէմ թունլուեն երանոց և հոսման աչաց։ Սորա է տեսակ ինչ կոչեցեալ ի բարբառ լատինացւոց՝ անարրինում կամ լիբենիս սիրէՀսթրիս, որ լինի միացողուն, փոքրատերև, կարմրածաղիկ։ այլ ըստ բնութեան և ըստ նէրգործութեան նման նմա։

ԱնթէՀէմիս։ տես քՀամամէլում։

Անթհօրաս, կամ աքենիթում սալուԹիՖէրում, կամ նարէլլուս մեխս, կամ անթիթՀօրաս ՖլօրԹ լուԹէս աքենիթի, լս։ Ի բոյս ինչ վայրի և տեսական յազգէ Աքենիթում կոչեցեալ բուսոյ։ ցօղունն սորա է երկայն իբր մի և կէս ռանաչափ, բազմանկիւնի, և փոքր մի թաւամազ։ Ցերկրքն յոգնաթիւ, բոլորակաձև, և դառնահամ, որք կարգաւ շարայարին առ միմեանս ըստ նմանութեան տերևոց քՀնաջլեսս անուանեալ բուսոյ։ Ծաղիկն դժգոյն դեղին, վերամարմ, և տասնակՀոտ։ պտուղն գնտակաձև և թաղանթային, սերմն սեաւ, անկիւնաւոր և կնճռալից, իսկ արմատն բոլորշի, փոքրիկ, թխագոյն, թեքալից, և դառնահամ։ Այս բոյս յաձախեալ յայլ ազգեան լերինս, լի է իւղով և ցնդական աղիւ։ Սորա արմատ վասն բուռն զորութեան իւրոյ մեծի զարուԹիւն թիւնոյ աքենիթում անուանեալ բուսոյ։ և դիմակալէ խա-

ծուռածոց կատարել չանց, և այլոց թիւնաւոր դեղոց. բժշկել նաև զՏիւանդութիւնս պատճառեալս ի մեղատրէր հիւթոց. այլև օգտակ ընդդէմ ժանտախտի և փքոտուն: Զնոյն գործուածոցն ունին նաև սորա տերևքն:

Ալեթրիսքուս, կամ քէրօՖիլլում սիրվէսթրէ. կամ չէրօՖօլլում սիրվէսթրէ, կամ սրիում սիրվէսթրէ, և կամ ստատքուս սեբիարիուս, լս: Ի բոյս ունչ, որոյ ցօղունն է երկայն իբր երկու ռանաչափ. կամ փոքր ինչ աւելի, բազմատոհմեան, ուղիղ, մեծին կանաչ, և թաւամազ: Տերևք նորա նման են տերևաց չէրօՖիլլոի կամ մելանիդոյ. ծաղիկն ելանէ ի գագաթսն, և է հինգթերթեան և սպիտակ, բերէ և սերմունս մանուսն, և երկայնս: Իսկ արմատն կարճ, սպիտակ, և համեմատին ։ Լինի սա յաշխարհ ի ցանկապատս տեղիս. Ճոխագոյն է իւղով. և ցիդական աղիս:

Անիզում, լս: անիչէ, խս: է անիս, գղլ: էնիս, անգղ: էնիսոն կամ եանսոն, արբ: զէնսան, պր: և ըստ մեզ անիսան: Ի բոյս երկայն իբր երեք ռանաչափ, բազմաճիւղ. բոլորակաձև, թաւամազ, մեջն դատարկ, յաշխարհաալ ի գաղղիս, ի կրետէ. և ի մալգա: Տերևք սորա են երկայն հերձուտ, փոքր մի սպիտակ և հոտաւէտ: Ծաղիկն ըստ իրաց ինչ նման է ծաղկան բիմբինելլայի: Իսկ սերմն կամ ունդն է նոյն իսկ անիսոնն, որ չորացուցեալ ի կիր արկանեն ի կերակուրս, նաև ի գեղոցայս. որ է ցրուիչ քամւոյ, փարատիչ ցաւոց կրծոյ և փորոտեաց, և զօրատու ստամքսի և սրտի, զի է խթիչ բնութիւն: Չափն ի կէս սրամի մինչև ցմի: Զնոյն գործուածոցն ունին նաև սորա իւղն:

Անիզում ինոկիում. տես Ծինձի:

Անիզում քինէ, կամ անիզում քինէզէ, և կամ սէմին պատրան, լս: անիչէ սեթէլլաթօ, խս: անիսաչին, գղլ: չին անիսանս. կամ էբլաղ անիսանս, տճ: Ի ապրինչ անիսանի, որ բուսանի ի մէջ ատաղձև իրիք պատանի կոչեցեալոյ լատինական բարբառով Ֆառուքթուս սեթէլլաթուս, ձևով և մեծութեամբ նման է կորիզի քօլօգալուինթիսայի. Իսկ հոտով և համով անիսանի, զոր չինացիք, և հոլանտացիք ի կիր արկանեն ի տալ զՅուս օշարակի. բայց մէջ ի գործ ածելոյ զսա վասն փարատելոյ զնիթա, և ամենայնիւ զանազանելոյ զանազան կերակրոյ, զի է խթիչ բնութ: Չափն ի 20 ցորենոյ մինչև 50: Ծաս սորա սովորաբար բուսանի ի չին ընդ ամենայն տեղիս. բարձրութիւնն է միջական, իսկ բունն ստուար, ոստա-

լեց, գորշագոյն, և քաղցրահոտ, բայց ոչ 'ի կիր արկանի 'ի գեղջրայս, եթէ ոչ 'ի պէտս չինուածեան սեղանոց։

Ակիզում քինեզ. տես 'ի վերոյ։

Ակիմբրա, տես Ակաս։

Ակիլ, կամ ակնիլ. կամ քօաբիրա, կամ անանիլ. կամ ինտիկօ, կամ ինտիքում, կամ կալի, և կամ հէրպա բօ-զմամարինի ֆիալեի, լս։ Էնտէկօ կամ ինտագ, իս։ չի-վիտ, տՃ։ Նիլէ, արբ։ լեղակարոյս՝ ըստ մեզ։ Ի բոյս՝ յաՃախեալ յարևելեան և յարևմտեան հնդկիս, և յե-գիպտոս՝ երկայն իբր երկու ոտնաչափ, և հիւթալից։ Հաճն նորա դառն է միանգամայն կիծու։ Ցերեկ նորա բո-լորակաձև են և սառուայ՝ ըստ նմանութեան տերևոց սառ-ուտի։ և ըստ կանաչութեան գունոյն նմանի անկոյ ռօզմարինայի։ Իսկ Ծաղկեն նման է Ծաղկան ոլոռան՝ ը-ձևոյն և ըստ գունոյն։ Այս բոյս օգտաւէտ է ընդդէմ նեխեալ և փտեալ վերոց, եթէ փոշացուցեալ ցանիցի 'ի վերայ նոցա, նոյնպէս և ընդդէմ ցաւոց գլխոյ։ 'Ի բուսոյ սասի արտահանեն հիւթ կապտագոյն, յորմէ կազմեն չրջազանգուածս պէսպէս ձևով, և առաքեն Յայլեայլ տեղս, որ այն ինքն է լեղակ։

Բհէլլանարիուս, լա։ Ֆէլանտուս, իտ։ Ֆէլանտռ կամ սեկիւ. սէ մառէ, գղղ։ Է բոյս ինչ վայրի. որոյ են երկու տեսակք. առաջին տեսանն կոչի՝ շիբուեթարիա ա-գուսթիքա գուսօրունտամ, կամ ֆինոքքիս ագուսթիքս, որոյ ցօղունն է երկայն իբրև երեք ասնաչափ, լայն, գեղ նապոյն, մէջն գոսարկ իբրև զնոսրսվան։ Տերևք նորա են մեծ, լայն, և հեռնոտ։ Ծաղիկքն սպիտակ, հինգ-թերթեան, Ճառագայթաձև, որք ի վեր երևին ի ծայրս ոստոց, յետ ծաղկանց արտադրէ սերմն ի ձև ձուոյ, այլ ի չափ սեխասնի. իսկ արմատն թեկուզ։ Այս բոյս տ-վորաբար ի վեր երևի ի ջրարբի տեղս, և է գեղ շահա-ւէտ ընդդէմ աքօռպուլթօ անուանեալ սխտի, թռքա-ժեռութեն, փորհարութեն, հնադարձն փսխման, թանչից։ Իսկ երկրորդն կոչի՝ բհէլլանարիուս՝ ալբենուս ուսմրէլ-լա բուրբուռաստէնս, կիմ մուռթեթէլլնա, և կամ տատու-քուս մենթանուս, որ գտանի ի բարձրաբերժ լերինս, որոյ տերևքն են հերձոտ նման ըստ խիզ տերևոց սուեպ-գնոյ։ Ծաղիկ նորա ծիրանագոյն է և Ճառագայթաձև. և բերէ սերմն նման վերնոյն։ Իսկ արմատն երկայն, ըս-

տուաք յոյժ, սեաւ, և թեւալից • այլ բան հանոյ, և թ հոտոյ է նման այնմ բուսոյ, որ լասենիներն կոչի՝ մեռան Լի է սա ալիւ և իւղով • օգտաւէտ է ի դեղուածս կա- լաւածոց դաշտանի կանանց, մաքրէ զարիւն, անօսրկ ըլ- թանձրամածութեան ազդունից, բանայ զանցս միզի, և լու- ծանէ զքար գոյացեալ յերիկամունս մարդոյ • այլև դի- մակալէ ամենակերպ թունից, և փարատէ զքաղա, զի է քրանաբեր, բացողական և թուլացուցիչ բնութ։ Զամին 'ի չորս տարեմ մինչև ցվեց խառն ընդ մի լաւ ջրոյ։ Իսկ չափ սերմանց տարեմի լինել 'ի մի տարեմ մինչև ցն կամ ցՁ յաւուրն։

ՐՀԷԼԱՒ • տես սուսկիւ։

ՐՀԷՆԿԲՈՒԲԱՒ, կամ ռուսկիւբաւ, կամ էրիթՀա- քուա, և կամ բուԹիչլաւ, լս։ Ի տեսակ ինչ Թռչնոյ 'ի ձև կկուի, որոյ միս օգտակար է ընդդէմ վերնատուէ, զի տաքաւ է իւղով և ցնդական ալիւ։

ՐՀԷՆԿԲ, կամ կրամէն ըՀլանչէուում անկուսցիօքն ֆիզ- լիս, և կամ ըՀլեուում մուրիսուում, լս։ Ի խոտս ինչ յաղդէ սեղոյ • որոյ ցօղունն բաւձրանայ յերկրէ երբ երկու ոտնա- չափ, արձակելով զՀնոյս նուբրս, և կարձս, և իւրա- քանչիւր հատ ՀՀեղոյ ունի երբեակ կամ քառեակ տերևս երկայնս, տուռաբս, և մեթն կանաչս։ Բերէ և հասկս 'ի ծայրս ՀՀեղոյ նման բան խիզ որման, և 'ի վերայ նոցա ծաղկիք, իւրաքանչիւր ծաղկանց ունելով զերբանց ա- ռէչս կարմրերանգս, և ոմանք սպիտակագոյնս։ Իսկ մինչ զՀերեթս ծաղկանց 'ի բաց Թօթափին, 'ի վեր երևին ցո- ղունսձև հատք կարմրերանգ։ Այս խոտս ըուսանի ստէպ յագարակս, 'ի քարուտս, և յեղեղս Ճանապարհաց։ Լի է ի ալիւղ, բայց նուազ ալիւ, և բնութեամբ սեղմիչ, և չորա- ցուցիչ, միանգամայն և արգելիչ արեան հոսելոյ 'ի մի- զարանէ, օգտակար է նաև ընդդէմ փորհարուութեան։

ՐՀԷՆԿԲՕԲԹԷՀԱՒՈՒ, լս։ Ի տեսակ ինչ ջրասէր Թռչնոյ 'ի չափ ձկնկլի, որոյ նման և կերպարանաբ • փեռուբք նորա մնագոյն են, կուսցն փոքր մի կոր, և պարանոցն երկայն• սովորական որս նորա է ձուկն • տաքաւ է իւղով, և ցնդական ալիւ, և բնութեամբ բացողական, միանգամայն և դեղ ազդոգական ընդդէմ անդամալուծութեան։ Ճարպ սորա նոյնպէս օգտակար է ընդդէմ տկարութեան ջրոց, զի է զօրաւոր։

ՐՀԷԹՀԷԽԱ, լս։ ԷԹիբա, կամ ԷԹիզկա կամ Թիզկ- քէցցա, խս։ վերէմ, կամ ինՀՀ մանաղ, ՀՀ։ տերեսի շուշ, կամ ամաս, պր։ սիլ, կամ խատապա, կամ հիմ-

մայիսքքք, որբ։ բան մեզ՝ ախտ կամ տենդ Ծիւրական. է տենդ ինչ ունակացեալ, որ առ սակաւ սակաւ Ծիւրէ զմարմին, զորմէ լիագոյն սասցի, հա. ռ. գլ. Ժ. երես. 162։

Բհիլեթուս, կամ բէսէտաս ափֆիլնիս մենաբէլիէնսիում, լս։ Ի բոյս բաղմացօղուն, և Ճիւղալից, որ բարձրանայ յերկրէ երբ մի ոտնաչափ։ Ցերեւք նորա են երկայն երբ չորս բթաչափ, հերձոտ, խիտ, և փափուկ։ Ծաղիկքն բաղմանթերթ և պալարագոյն։ որք ի վեր երևին ի Ծայրս երկայնաձիգ Ճիւղոց, հանդերձ սպիտակափայլ առէջիւք. զնին ծաղկանց յաջորդէ սերմնափակ երկայն երբ մի և կէս բթաչափ, եռանկիւնի, գլանաձև, մաշկային, և դարտնագոյն, և ի մէջի պարունակէ զսեաւ և զբորբշն սերմունս։ Իսկ արմատն ստուար, փայտային, սպիտակ, և սակաւանթել, և բնութիւն բացողական, մեզմսէս լուծիչ, զորացուցիչ։ Այս բոյս ի վեր երևի յամսեան սպրիլի, և ի մայիսի, և սեպտեմբեր։

Բհիթօլոքքա, կամ սօլանում մակնում վէռՃինիանում ռուպրում, լս։ Ի բոյս՝ որ ունի զՃիւղս բաղումս, ստուարս, բոլորշս, կարծրս, և կարմրերանգս, և բարձրանայ յերկրէ երբ հինգ կամ վեց ոտնաչափ։ Ցերեւք նորա են մեծ, ջղալից, յոլովաւ, և ժաւգոյն կարմիր՝ զորէն ջնարաղորոյ։ Ծաղիկն փոքրիկ, ոսկեզորէն, գունանթափ, և բաղմանթերթ բան նմանուն թէ վարդ։ որք փնթին ի վերայ ցօղնոց։ Այս արտադրէ թմիագոյն կարմիր սերմնափակս, կամ հատասպտուղս սեաւս։ Իսկ արմատն երկայն երբև մի ոտնաչափ, և ստուար երբև զարունս հասարակ մարդոյ, սպիտակ, և տաւական։ Սովորաբար բուսանի սա ի բուրաստանս փարիզու։

Բհիլիրա կրէչս. տես թիլիա։

Բհիլլեթիա. տես լինկուա էրվիլնս։

Բհիլլերեա, կամ չիբրուս, լս։ Ի ծառ ինչ մարդաչափ բարձրանթէ, և բաղմոստեան, որոյ տերևն է երկայն բան նմանուն տերևոյ ձիթենւոյ, բայց ստուարագոյնքան զայն։ Ծաղիկքն սպիտակ են և քառահերձ, որք ելանեն առ անթեղոյ տերևոց։ Արտադրէն հատասպտուղս ոսկեզորէն, որք բերին զձև մրտոյ. համ նոցա բան մանսին քաղցր, և բան մասին դառն, ունին և զկորիզս մանուսնս։ Այս ծառ սովորաբար բուսանի ի պարտէզս. լի է խոզով, բայց նուազ գոյացական աղբս, որոյ եթէ տերևքն, և եթէ հատասպտուղքն են բնութիւն զորացուցիչ, և սեղմիչ. օգտակար են ընդդէմ ուռնացաւութեան, և վի-

բաց բերանով առթելոց ի ջերմութիւն լերդի։ Նոյնպէս և ծաղկին լինի գեղ. ազդու ընդդէմ ցաւոց գլխոյ, մանաւանդ յորժամ խառնի ընդ քացախոյ, և դիցի ի վերայ ճակատոյ։

Բհիլլօն, լս։ Ի բոյս ինչ ի սեռէ այնմ խոտոյ, որ տաճկերէն կոչի՝ եապան ֆէսլիկէնի. որոյ երկու տեսակք են. առաջին տեսակն կոչի՝ բհիլլօն թէսմիքուլաթում, կամ մեղրուրիալա ֆրուքթիքօզա նիքանա թէսմիքուլաթա, որ բուսանի ի լերինս, և ի քարուտս. ցօղունք նորա են երկայն իբր մի և կէս ռուտչալի, փայտային, ճիւղալից, և շրջապատեալ բազում սպիտակ թելովք։ Տերև նորա է երկայն, բոլորշի, թանձր, ջղային, փափուկ, սպիտակ, և ալուսմազուտ։ Ծաղիկն գունեղագոյն, և բազմահաւէ։ Պտուղն ունի զձև ամորձեաց, ունի և կորիզ բոլորակաձև, երկնագոյն, և դառնահամ։ Իսկ արմատն մանր, փայտային, և թելաւոր. և բնութիւն բացողական, և լուծողական։ Իսկ երկրորդ տեսակն կոչի՝ բհիլլօն սրիքաթում՝ որ փոքր է քան զնա, և բերէ ծաղիկ ի վերայ հասկի, այլ ըստ բնութեան, և ըստ ներգործութեան նման նմա։

Բհիլլա, կամ բհիլլիտա, և կամ ֆիուքա, լս։ Ի ձուկն ինչ ծովային փոքր մի նման ծովային խողի. որոյ գլուխն է ստուար, ընչացքն երկայն, և սրածայր, առատուներն մեծ, որովայնն թեփալից, մին համեղ, և դիւրամարս, և բնութիւն միզաբեր, և մաքրիչ արեան։ Գտանի սա մանաւանդ ի մամուռապատ վտակս, և ի գետս։

Բհիսաղա. տես սղաֆօ։

Բհիսթաչիա. տես բիսթաչիա։

Բհլօմիս, կամ վերսաբերում սիլլէսթրէ սլթէրում, կամ սալիկա ֆրուքթիքօզա լուլեէա սանիֆօլիա, լս։ Ի բոյս բազմայօղուն, փայտային, և ճիւղալից, յորոյ վերայ պատեալ կայ նիւթ ինչ սպիտակ նման նուրբ բամբակի։ Տերև նորա ունի զձև տերևոյ՝ որ տաճկերէն կոչի՝ ակիշ օնու. բայց առաւել մեծ, և առաւել թաւիշաւոր. քան զայն։ Ծաղիկն երանգ ի դաղաթան, դեղնագոյն, հեբձոտ, որկորաձև, կամ ստուգաձև, ապա ի վերս երեւին քառեակ սերմունք երկայնաձևք։ Իսկ արմատն երկայն, կարծր, և շրջապատեալ նուրբ թելովք։ Բուսանի սա ի ջուր և յաւազուտ տեղս. լի է իւղով, բայց նուազ ազիւ. և բնութիւն մաքրիչ, ջրացուցիչ, և սեղմիչ, օգտակար է ի դիսպեպսիա թանչից և հոսման արեան։

Բհրենեսխա, լս։ Ֆիրենեսխա, կամ ֆիրենեթիսէ, խս։

տէլիք, կամ տիվանէլիք. տՃ։ Ճուենիւն, կամ սէրսամ, աբբ։ և ըստ մեզ՝ մատաթափուելի, կամ խելացնորուելի, է. ախտ ինչ՝ որ արկանէ զմտրդ ի մոլեգնութիւն։

Բ՚հօբաս, լս։ գէտի պալքը, տՃ։ և ըստ մեզ թարգ՝ մանագրի՝ կատուաձուկն։ Է. ձկնիկ ինչ, որ ունի զմտրթ խելցեղէն, այլ մեծութիւն և ձևով մարմնոյն նման է կատուի. գոյն նորա է գեղին, և ոմանց կարմիր, ուներով ի վերայ զկարմիր, և զսեաւ բիծս, և սատաս, իսկ միսն փափուկ, և. համեղ։ Սովորաբար գտանի սա ի խորս ծովու, մանաւանդ ի կողմանս բռօվենցայի։ Զսորա խելցին՝ որ է կարծր զանգուածով, ի վար արկանեն ի գիպուածս միզարգելութեան. լուծանէ և զքար՝ եթէ գացի ընդ անցս միզի։

Բ՚հօքաս, կամ վիթուլուս մարինուս, լս։ վիթէլը մաւնիս, իտ։ ուենիզ տանասը, տՃ։ և ըստ մեզ՝ որթ ծովային։ Է. կենդանի երկակենցաղ չորքոտանի, յատաքնեալ ի հնդիկս. ձևով մարմնոյն և մեծութիւն ի չափ հասարակ որթոց, որոյ վասն և կոչեցաւ յանուն նորա. գլուխ նորա փոքրիկ է և կարճ. հերքն սեաւ, կամ գորշադոյն. աչքն վայրուն, և բաղմերանգ. բերանն յանկաւոր, որպէս և որովայն նորա. ատամունքն սրածայր. լեզուն երկՃղի, պարանոցն երկայն. մորթն թաւ և սեաւ. միսն փափուկ ասլեղայնն, և Ճարպալից. ուրկն ազաւուտ. իսկ ձայնն նման է ձայնից տղայոց, դիւրակիրթ է և մարդընտել, և առ կոչելիս իւր լոպի, առ որս ձեռն ընդդէմ ձգեն՝ հաչէ. ուտէ զձկունս, զխոտս, և զմիս. ի կաղկաւել զկերակուրս, շողոմէ, զորս եռանդագին մանամանօք խնդրէ, և յետ ցյագուրդ վայելելոյ՝ շամշեալ վաղաշէ։ Սորա Ճարպ է. ջերմ բնութիւն, և ի վար արկանեն ընդդէմ կաղուածոց դաշտանի կանանց, և միանգամայն ցրուէ զվատթարս հիւթս և զդոլորշիս արգանդի, եթէ ջերմացուցեալ օծցի ի սաստիկ կոլմն պղտոյց։ Իսկ հերքն օգտակար են յօդուածացաւութեան։

Բ՚հօքէնս. տես բօքքուս մարինուս։

Բ՚հօքսինուս սգուամսսուս, լս։ Է. ձուկն ինչ փոքրիկ երբև կէս ոտնաչափ, և լայն երբեք մատնաչափ, յատաքնեալ ի գետս և ի վտակս. գլուխ նորա է սաստար, աչքն մեծ, թեփք մարմնոյն դեղին, և ոմանք երկնագոյն, սուսան կարմիր երբև զվարդ. իսկ միսն փափուկ և ախորժահամ, միանգամայն և դեղ բացողական։

Բ՚նէուսմաթօչէ։ Անուանքս նշանակի ախտ ինչ փոշ-

տանկուլթնե գոյացեալ ի վրայ, որ և տափ նաև կոչիցի վէնիզօղս։

Բնէումանթօսի, լս։ Ասու անուանմբ նշանակի վրա-յուն, որ է այսուհետև ինչ սատմբսի գոյացեալ ի վրայ։

Բնէումանթօսի ուլթէրինա, լս։ Ի այսուհետի արգան-դին, գոյացեալ ի վրայ։

Բնիհիթիս, լս։ Ի ազգ ինչ մանչուցիկ և խոշային հո-ղոյ, որ հպեալ ի լեզու՝ մանչնու և կոխի ի վայր. զբ-ուլթի նորա է ձգօղ, և սեղմիչ. յայն տեղս օգտակար է ընդդէմ հոտման սրեան։

Բուէրբէրիս։ Ասու անուանմբ ցուցանի՝ ժամանակ ծննդեան, կամ երկունք։ Դարձեալ նշանակի գաղտանք ծննդականի։

Բուլթօռիուս, կամ ելբհիթիս, լս։ բուլցօղաս, իս։ Ի զաղտահոս կենդանի ինչ նման սաթիսի, բայց մեծ քան զայն. սլարանոց նորա է վերա, օրովայնն լայն, և սեաւ, հերք մորթոյն կարճ և գեղին, կամ սեաւ, սրունքն կարճ, իսկ ձեան երկայն յոյժ, սաստաւ, և սեաւ. կերա-կրի ձկամբք, գորտովք, և զեռնովք, որք գտանին յե-զերս գետոց, և ծովուց։ Մին սորա բնութիւնք է մեղմասէս լուծիչ։

Բուլբա, լս։ բօլբա, իս։ լոբ էթ, տՀ։ ռուպ, որք։ և ըստ մեզ թամբ, կամ միս. նշանակէ զանոսկր, և զան-Հարսկ միաս, և սրգաց. զորօրինակ բօլբա սի քասսիա, այսինքն թամբն կասիայն, կամ բօլբա սի թամարինդ սի, ևն։

ԲուլէՀիամ կամ մէնեՀա բուլէՀուամ, լս։ բուլէՀ-Հիօ, իս։ ֆիբրիլլաքիան, տՀ։ և ըստ մեզ բեռեկուհի։ Ի բոյս ինչ՝ որոյ հլկին ի տեսակ. առաջին տեսակն կոչի ի բարբառ լատին՝ բուլէՀիամ վուլկանթուս. ցօղունք սորա են երկայն երբ մի ոտնաչափ, քառակուսի, և թա-ւիշաւոր, ոտանք են վերամբարձ, և ոտանք կոր, կամ օձապատայտ, իւրաքանչիւր ցօղուն ունելով զերբանց մանր-լամեալս ի վերայ։ Տերեւք նորա են բոլորշի ըստ նմանուն տերեւոց մանրօրանայի, բայց առաւել սեաւ և յոյկեալք քան զայն։ Ծաղիկքն մանր, շղթայաձև, երկնագոյն, կամ ծիրանագոյն, որք կարգաւ փիթեն ի վերայ ցօղ-նոց. բերէ և սերմունս յոգնանթիւս։ Իսկ արմատն հա-տու, և թեղալից։ Բուսանի սա ի վայրս գիՀայնս. և սկսանի ծաղկիլ յամսեան յուլիսի, կամ օգոստոսի։ Լի է իւղով և ցնդական աղիս. օգտաւէտագոյն է ի գի-պաւածս ցաւոց կրծոց, խեղից, և կշտացաւուն, անօսրկ

և զԼԵանձրամածութեան տողունից, արգելու զխմտուն, զօրացուցանել զակարութեան ուղղոյ. փարատել զդաւս գՐՒՔ խոյ, զՀաղս, և զրգռել զդաշտաստս կանանց, և միանգամայն բուժել զվերս նորին, զի է խեթիչ բնութեաբ: Զայսն ունիկ մի ընդ մի լեարս Ջրոյ: Իսկ երկրորդ տեսսակն կոչի՝ բուլՔՇիում անկուսթիֆօլիում կամ բուլՔՇիում ՀԷՐՔՎՇՈՒՄ. որոյ ցօղունն է բոլորակ, վոտ, և կարմրեբանդ. տերևք սորա երկայնաձև են և խիտ՝ նման ըստ խիզ տերևոց այնմ խոտոյ, որ խաալերէն ՀՇԵՆԹԻՆօտիա կոչի. այլ ըստ բնութեան, և ըստ ներգործութեան նման ա. ռաջնոյն:

Բուբմ, լտ: բօբմենէ, խտ: Ֆիլիմեն, յն: Ֆիրշէ, արբ: շիշ, պր: ագՇՇեր, տՇ: և ըստ մեՀ Թոքք: Է երկամաՀեայ զանգուած ինչ սանդարին՝ խողովակաձից, բազմաՃակ, երակաձից, ՀՇՇերակաւոր, և ի արեամբ և օդով. Ճգեալ յայՀ, և յաՀեան՝ զսրան զուսպ ունի. և ի հինգ բլթակս բաժանի. որք Ճառայեն տուրեւառութեան Հնոյց, ձայնի և խօսից: Այլն այս անդամ շրջապատաւ զսրան յամենայն կողմանց, և խակաբուն ցրտութիւն իւրով բարեխառնել զՀերմութեան նորին, և միանգամայն մատակարարել զնուազեալ կարեւոր ամենայն կենդանական ոգեաց, և է ընդունարան սեպհական մաղասի և մաքրարան ի ներքս ընկալեալ օդոց:

Բուբմենարիուս, կամ բառմէլիա բուբմենաչէա, լտ: բուբմենաուխ, խտ: փիբմենէռ տ՝ առպռ, գրզ: ՀԻԷՐ օՀու, տՇ: խաՀրէ կէ Ֆիրշ, արբ: և ըստ մեՀ Թոքախոտ, յաՃախեալ յեւրոպա յանտառս և ի Հովանաւորս տեղիս, և բարձրանայ յերկրէ ծիրանագոյն և Թաւիշաւոր ստեղամբ մի ոտնաչափ և Լեռ. արձակելով յարմատոյ զրաղում տերևս երկայնաձևս, լայնս, սրածայրս, ջղալիցս, բծաւորս, և ատուտանզուտս. բանայ Ճաղկիս ի գագաթան, որք են ոտնիք ծիրանագոյն, և ոտնիք մանուշակագոյն. և են հերձոտ՝ ձագաւաձև, և երկայնականեռ. բերկ և սերմունս բոլորակաձև՝ և մանուտս, ուՆի արմատ սպիտակ, ՀԱՀաղալից, և խիստ ոյն: Զտերև սորա՝ որ է խեթիչ և զօրացուցիչ բնութեաբ, ի կիր արկանեն ընդդէմ ախտից Թոքոց, ՀՇՇային և ցնցական Հաղից, և փորՀարութեան. սովորաբար խաչու կազմեալ ի վար արկանի ըստ օրինակի լիբՔՇԷի, կամ Թէի:

ԲուբամՀօռիս. այսու անուամբ խմանի՝ խէԹ կամ ցաուն զարկողական, զոր զդայ ոք ի բորբոքիլ արեամն և յուժգին բաբախմանէ ՀՇՇերակայ, և այլոց մարկէրէն և Ջրային մասանց:

Բուլուս, լտ։ բօլսօ, իտ։ նաթթ, կամ նապղ, սրբ։ նապղ, տճ։ և ըստ մեզ զարկ բաղկին։ Ընունս այս ընծայի յատկապէս զարկի ընդերակաց, որում նշանակի՝ բաղխուումն կամ հարկանումն։ Հասարակօրէն զնեալ սրման է զարկ երակին յաւարտս բաղկաց, ընդ որ անցանեն և շառաւիղական գնդք ընդերակաց, որ և արդարև է իշման և պետ այլ ամենայն երակաց։ Բժշկապէտքն աւանդեն զարամատարիկ կանոնս, և զարամաղան տեսակս թռուց զարամատարիկ բաղկին. բայց մեք շատանեալք դասել յառաջնիսդդ զգիլասուրադոյնս և զոլուաւանագոյնսն։ Կոչեն կոչի ֆիռթեէ, այսինքն զօրեղ, և իւր հաստատն՝ որ է տկար, կոչի յիսալացուց՝ ուէպօլէ։ ի։ ֆռէգուէնթեէ, այսինքն սաէպ սաէպ, և ներհակ սմին է՝ թռատի. այսինքն յամր կամ յուշիկ։ ղ. կռանաէ, այսինքն մեծ, և փիքքօլ, այսինքն փոքրիկ։ ղ. տուռօ, այսինքն կարծր, և մոլլէ, այսինքն կակուղ կամ թոյլ։ Ե. էկուռլէ, և ինէկուռլէ, այսինքն հաւասար կամ միաբերպ, և անհաւասար, կամ զարտուղեալ։ Ղ. ըրէնօ, և վօթօ, այսինքն լի, և դատարկ։ Է. ինթէռմիթթէնթէ, այսինքն միջահատ կամ տարի։ Է. ինթէռմիթթէնթէ, այսինքն միջահատ կամ ընդհատ։ Ը. լանկուիսօ, այսինքն՝ թոյլ կամ նուազ։ Թ. մուռօ, այսինքն մնանման։ Ժ. քաբրիցցանթէ, այսինքն՝ այծէնման։ Ժա. քանթռանթօ, այսինքն կարկամ կամ գելեալ։ Ժբ. օնուօղ, այսինքն ալէծման։ Ժգ. սկբռօթօ, այսինքն երկպատիկ կամ կրկնամբ։ Ժդ. վէռմիքօլառէ, այսինքն զեռնական։ Ժե. ֆիռմիքօլանթէ, այսինքն մրջմնաքայլ կամ մրջմնեռաց։ Ժզ. քանվուլսիվօ, այսինքն ցնցական։ Ժէ. մենիմօ կամ էսիլէ, այսինքն գոյզն ինչ և նուրբ։ Բայց գիտել սրման է աստէն, եթէ յառաջ քան զվճռադատեալ զորպիսեալ զարկի բաղկին ուրուք ախտաժեալ, հարկ է քանզ ճանաչել զհանգամանս նորին բնութեան ի վիճակի քաջառողջ կենդանութեան. որովհետև բարմատարիկ եղանակաւ զանազանին յայլ և այլ ենթակայս, և ի մի և ի նոյն ենթակայսն, այսինքն ի մի և ի նոյն անձն, ըստ նկատման հասակի, կարմուածոյ բնութեան, և պարագայիցն յորս գտանին. ուստի ի հաստատիկ և ընդհանրապէս խօսելով, զանազանութեան որ ի սաէպ սաէպ զարկման բաղկին, է առաւել նկատելի, և ուշադրելի։ Զարկ բաղկին ի մանկունս է յոյժ արագութեամբ քան ի չափահասս, իսկ ի ծերս կարի յամր և դանդաղ քան զերկոսին։ Այլ գիտելի է, զի զնին կերակրոցն, և զնին շարժման, և ի պարագայս ջերմութեան խրատման և վերոմման որ և իցէ կրից՝ այս

սրընթացութեամբ, և արագութեամբ միշտ առ միշտ մեծացեալ, և երևելաբար զանազանեալ և վերսկսեալ ի բնական ընթացեալն։ Հաստատակամ օրէն խօսեալով, ի չափահասս և ի քաջառողջս ի վեհակի անդորրութեամբ ոգւոյ և մարմնոյ, և յառաջ քան զնեռակուսին զարկ բաղկին բաղեալ ի 60 անգամէ մինչև 370 առ վայրկենին։ Ի մանկունս պատահմամբ վերջինչեալ պարագայից հարկանէ ի 80է մինչև 390 կամ 395 անգամ։ Իսկ ի ծերս ի 50 անգամէ մինչև 360 նոյն պէս ըստ վերոյգրեալ պարագայից ժամանակի։ Ընդ այսոցիկ գիտել արժան է, եթէ գոն բաղումք չափահասք, յորս զարկ բաղկին բաղեալ մինչև 370 և 390 անգամ, երբեմն ևս առաւել, կամ նուազ, և ընդ հակառակն՝ ի նոցին հաստակակից չափահասս հարկանէ երբեմն 355 անգամ ի վեհակի առաղջութեան, և կատարեալ բարեխառնումն. սմին իրի դժուարութիւն մեծ ըստ առաջ ելանէ ի միանգամ և եթե տեսանելն զոք՝ զանազանել և ճշգրիտ որոշմամբ ճանաչել զղնարդն տենդի և այլ խօթուածոց, այսինքն թէ արդեօք գուցէ՝ տենդ կամ խօթուածն թէ ոչ. որովհետև ոչ ի սահմանս սահմանեալ ընթանալոյ և եթե զարկի բաղկին կախեալ են պարագայք գոյութեան տենդոյ և այլ խօթուածոց։ Արդ՝ առ ի ասել՝ եթէ զարկ բաղկին ուրեք երբէք հարկանէ յաճախակի, պարտ է միշտ՝ զի բաղխեսցի միով մասամբ երրորդ մասին առաւելագոյն քան զոր հարկանէ ի բնական վեհակի, այսինքն եթէ ի վեհակի առողջութեան բաղխէր 60, ի վեհակի խօթուածն կամ տենդի պարտ է հարկանել մինչև 90 կամ 100։ Իսկ եթէ ի նոյն անձին բաղխէ զարկ բաղկին 150 կամ 165 ի միջոցի միոյ րոպէի, այդ է յետին աստիճան սրընթացութեան, և գուշակ է միշտ վատնդի, զի աւելի է ջերմութենին, և բորբոքութեան արեան։ Բարոյք համարիմ սատին զեկուցանել, եթէ առ ի առաւել ապահով ընելոյ ի վրիպակաց յայտմ մասին, օգտաւետագոյն ևս է յաճախակի փորձառութեան ի վերայ անձին իւրոյ, կամ ի վերայ բարեկամոյ և ծանօթից. և այդ օրինակաւ բարբոքք կրթեալ հատու ընեալ աստիճանի արագութեան և յամրութեան զարկի բաղկին ի վեհակի կատարեալ առողջութեան, և համարձակ վճռադատեալ որոշել զղնարդն խօթուածեանց և անոյշ. և բարբոքք ևս է յայդմ փորձառութեան ունել ի ձեռին զղարկախոյզն կամ դժամացոյցն, յոր նկատելով մարթ է ի միս առնուլ, եթէ քանիցս անգամ բաղխէ զարկ բաղկին յընթացս միոյ վայրկենի։ Զարկ զրեալ կոչի, որ ունի զշարժումն ուժգին, մինչև դիմադրել ընկնիլ մատանց. եթէ իցէ համա-

հշնա յամենայն երակս՝ է նշան բարի, ապա թէ ոչ՝ վնասաւոր : Իսկ սակաւ կամ անզօրն է այն որ բաղխէ թոյլ և յամր : Դարձեալ, զարկն ուժեղ եթէ խցէ միջոցնակ՝ նշան է քաջալերութեան : Զարկն մեծ ընդարձակի և ամփոփի սաստիկ, զի լի է արեամբ, որ է նշան բարեգոյն, և հակառակն սմին է փոքրիկ : Զարկն կարճր լի է թանձր արեամբ, որոյ հարկանումն լինի խիստ և չոր, օրէն է եբրակ հատանել, կամ թուլացուցիչ և զովացուցիչ դեղոյս մատուցանել : Իսկ լայնն զարկն և խոնաւն ունի զաղխումն թեթև և խոր, այլ միակերպ կամ հաւասար ընթացեալ զարկն ունի զհարկանումն միշտ մի ի նոյն օրինակ : Իսկ զարտաւորեալն և անհաւասարն՝ ունի զաղխումն յոյժ բազմակերպ : Զարկն լի՝ սաստիկ ընդարձակի, և դիւրաւ ամփոփի, և է նշան անվնաս : Իսկ դատարկն՝ է օգտալից : Զարկ միջահատ և ընդհատ նշան է անառողջութեան որսի և վնասաստար : Զարկ թոյլ կամ նուազ, է նշան վատառողջութեան : Զարկ մինանման, որ առ սակաւ սակաւ ընդարձակի, և անդէն ամփոփի՝ գուշակ է պակասութեան արեան : Աւելնման զարկն է այն, որ բաղխէ թրթռմամբ, կամ ոստնու իբրև զայծ, և գուշակէ զսկարութեան որսի, և է վնասակար : Կարկամ կամ գեղեալ զարկն է այն, որ հարկանէ կծկմամբ կամ դալարմամբ, որ է նշան անդամագոսութեան : Աւէծաման զարկն է այն որ բաղխէ տարուբերմամբ կամ ծածանմամբ՝ ըստ օրինակի դուզնամանեայ, և ախորժական ալեաց դեռոց վտակեալոց՝ ի բարեխառն եղանակի. ցուցանէ զհոսումն արեան ընդ ռնդունս, և է նշան բարի : Երկտարեալ զարկն է այն, որ հարկանէ զուգաթիւ և կրկին անգամ ընդարձակի և միանգամ ամփոփի, է նշան բարի, և ցուցանէ զարմատաթել քանչին ախտի կամ անդի : Զեռնական կամ սողնական զարկն է այն, որ բաղխէ սաստիկ հելով հանդոյն ոգեան, որ է գուշակ սակաւուն արեան, և վատթար : Մրջնաբայլ կամ մրջնեռաց զարկն է այն, որ հարկանէ սակաւ զգալի, գուշակ է մեծաւորաց մահուան : Աւյլ եթէ բաղխէ ցնցմամբ կամ դողդոջմամբ, է նշան յոռեգոյն և մահաբեր : Իսկ եթէ զարկն հարկանէ դոյզն ինչ և նուազ այնքան՝ մինչև հաղիւ զգալ մատանցդ, նշան է հոգէվարութեան :

Բուլլիս, լս : բօլլէրէ, իտ : սուֆֆուֆի, կամ զօսպար, սրբ : Թոզ, ասմ : կէրեթ, կամ նէֆֆամ, ալր : և բատ մեղ փուշի : Անուանս այս առ բժիշկս նշանակէ զամենակերպ նիւթս՝ եթէ սանկոց, եթէ բուսոց, եթէ հանքաց, և ե-

թեմ մեռաղաց, եմ, զրոս նրբապես փոշի արարեալ, և խառնեալ ընդ իրեարս ի վար անկանեն ի զանազան դեղոցայս։

Բուլվիս անթէրիէբթիքուս, լս։ Փոշիս այս օգտաւէտ է ի դիպուածս լուսնոտութեան, տկարութեամբ սրտի, և ուղղոյ, որ այսպէս բաղադրի։ Առ լատիքս բէօնիա, բատիքս տրիթամոնի սպի. սէմինիս բէօնիա, վնաքիս դուէրքինս, կրանի ումանս, ուռնիքորնս, ավօրիս, ունկիա տ՝ աչքն, յիւրաքանչիւրոցն մէն մի ունկի, առ և մի և կէս ունկի՝ մարկարիթարում, և նոյնաքանակ լաբիս հիսչենիթհօրում, և նոյնչափ՝ քորալլի ռուսրի բրէբարատօրում, այլև երկու արամ՝ ֆիլորում պէթոնիքա, և նոյնաքանակ լիլիում քօնվալլում, և յաւել ի վերայ մի և կէս պբրուբս՝ ամպրա կրիղնա, և վեց կշիռ ցորեան՝ մօքի օրիէրթալս, լսանա զամենայն բարիոք ի մէջ միոյ անկանի։ Յետ այնորիկ արկ զիրշիս զայս ի մէջ ապակի յանօթոյ միոյ, և քաջ խցեա ապակի խփովք չափն ի գործ արկանելոյ է ի 20 կշիռ ցորենոյ մինչև ց35։

Բուլվիս ասասրպէնս վէտէլիս. տես բօլվերէ ասասրպէնթէ տէլ վէտէլիս։

Բուլվիս արմիքուլարիս մօրպուս. տես բօլվերէ արթէրիքա տի բարաչէլսս։

Բուլվիս բուրկամօրիուս. տես բօլվերէ բուրկամթիսլս։

Բուլվիս էրիլէրթիքուս մաուքիօնիս. տես բօլվերէ էրիլէթիքս տէլ մարքէզէ։

Բուլվիս կուէթէնա ըիվերիս. տես բօլվերէ կուէթէնա տի ըիվերիս։

Բուլվիս հաննօվերիանա. տես բօլվերէ հաննօվերիանա ուղալէ։

Բուլվիս քանթհիանուս. տես բօլվերէ քանցիանա տէլ լս քանթհէսսա քէնթէ։

Բուլվիս քաքհէքթիքուս. տես բօլվերէ տի քուէրքի։

Բուլվիս քօնթրաէրմէս. տես բօլվերէ քօնթրավէրմի։

Բուլվիսիթօթ. տես բուսքուս։

Բուլվիլիում, լս։ բուՀիլիս, կամ բիրցիքս, իսս, և ըստ մեզ պտղունց մի։ Ի չափ բժշկական, որով նշանակի քանակութեամբ զոր մարթի ոք ունել կամ բառնալ ծայրիւք երից մատանց, զի և իցէ խոտոտիս, կամ զայլ իրս ամին նմանս, որոյ նշանակ փոխանակ միոյ ամբողջ բառի գրի. pug։

Բուձիկիս. տես 'ի վերոյ։

Բուժեալ, լս։ բեխեթրա բօմիչ, խս։ բուժեալ կամ սիւնկէր թաչը, տձ։ և ըստ մեզ՝ տտուդաբանի սանդաբար։ Ի քաջ ինչ ծանոտակէն, գիւբաբեկ, գորշագոյն, կամ սպիտակ, եւանէ սա 'ի խորս հրաբուղխ լերանց, մանաւանդ 'ի ծովեզերս բեկեալ յալեաց սպիտակ ծոմուն բանուեալ՝ հարաւային և արևմտեան հողմոյ, համով ըստ մասին աղի, և ըստ մասին տտիպ. զորութիւն նորա է սրբիչ և հրացուցիչ հնագոյն վերաց. լինի մաքրիչ և աչաց, և ատամանց։ Վարի և 'ի պէտս կօշկարարաց, և այլ արհեստաւորաց 'ի տալ զգոյն մաքրոց։

Բունթէրուօր. տես սմիրնա քուսբիտաթուս։

Բունիքա կրանաթուտ. տես բօմում կրանաթուտ։

Բունիքն։ Ի կէս ոգեղէն ընտելի ինչ անդղանցուց՝ յօրինեալ յոգեացն զոր կոչէն՝ առաք կամ ռում, եդեալ 'ի ջուր ջերմ, կամ 'ի չայ. և շաբաթ, և քամածն լեմնի, որ լինի գեղ շահաւէտ 'ի դիպուածս տկարուն ստամաքսի, և ընդերաց. այլ և առաւելու զառնելուն ջղացն առանց զայրացուցանելոյ։ Ցրմսկեալ տասի 'ի չորս ժամ միանգամ առնուն փոխանակ սրձոյ, բաժակ մի առ իւրաքանչիւր նուազ։

Բուսմուլա, կամ բօսմուլա, լս։ բէմեէքքիէ, խս։ հասալ։ տձ։ հասալէ. սրբ։ միբիսիժէ, պր։ և ըստ մեզ՝ կեղաք, կամ խաղաւարաք. են կարմիր, և սեաւ բիծք, որք 'ի վեր երևին 'ի մարմնս անտաղեալոց հանդերձ մահաբեր տենդիւ։

Բուսմուլէ, կամ բուսմուլարուտ վաեուօլէ, լս։ վաեօլ, խս։ չիչէք հասասալղը, տձ։ միւռէաստեր, կամ կիսր, սրբ։ հվեչէս, յն։ չիրէք, պր։ ըստ մեզ պիսակ, կամ ծաղիկ։ Ի ախտ ինչ վասանգաւոր, որ ածէ 'ի վերայ մարմնոց մանկանց շարաւանից պաղարս, հանդերձ անբնդհատ տենդիւ։

Բուսիկլա լաուրուս։ տես քհամէ տաբհնէ։

Բուսանեղա. այսու անուամբ ՝ անդամազնեաց ցուցանին՝ երակք և շնչերակք առանկանց։

Բուրբուրա, լս։ բօրբօրա, կամ օսմռօ, խս։ խաքէթէ կամ խաքեուրէթ պէօռէի, տձ։ թէթեուռ, կամ վէհաս, սրբ։ տատրեէժէ, կամ տատվէժէ, պր։ և ըստ մեզ՝ կոնքիզոս, կամ ծոմս ծիրանի։ Ի խխունջ ինչ ծովային 'ի սեռէ խեցեմարմնի. որոյ կառուցն է երկայն, և դոգաւոր. լեզուն նորա է երկայն, սրածայր, և կարծր. ունի

'ի կոկորդ իւր սպիտակ երակ ինչ՝ որ լի է կարմրերանգ և շողշողուն հիւթով, որով ներկին 'ի գոյն գեղեցիկ ծիրանի։ Խեցի սորա է խորտաքորտ, և ոմանք սասպատաձև, արտաքուստ գեղին, իսկ 'ի ներքուստ սպիտակ, զոր լուսեալ 'ի սանդ, լինի դեղ սղղում ընդդէմ վատթարագոյն և թթու հիւթոց մարմնոյ, և միանգամայն չորացուցեալ փարատէ զնետգոյն վերս, մաքրէ նաև զդիրսն աստամանց։ Իսկ զմիսն որ է կարծր, և դժուարամարսելի, 'ի վար արկանեն 'ի գաղարեցուցանել զնոսումն որովայնի։

Բուրբուրիսուս. տես լաքքա։

Բուրկանթէ. տես բուրկանցիա։

Բուրկանս. տես քառսիա։

Բուրկանցիա, լա։ բուրկա, կամ բուրկանթէ, իտ։ շերպէթ, ամ։ չէպէ, արբ։ Է անուն ընդհանուր նշանակիչ ամենակերպ լուծողական, և մաքրողական դեղոց։ Բայց մեծի ճարտարութեամբ և խոհականութեամբ պէտք են 'ի գործածութիւն օգտաւէտ դեղոցն։ Նախ՝ նկատեալ արժան է 'ի հանգամանս կազմուածոց և խառնուածոց անխտակրին։ եթէ ուռնիցի զուժանթափուն, կամ զնիհարուն կրծոց, կամ իցէ բնութիւն որդնալից, յայնժամ հարկ 'ի վերայ կայ ձեռն 'ի գործ մատչիլ 'ի կիրառուն լուծողականաց։ Նոյնպէս ուշի ուշով զնոսին արժան է, զի եթէ հիւսաբեր աւելորդք և դիրքք կերակրոց սահեալ իցեն 'ի սամանքսի դէպ յաղիսն, կամ անկիրթոր ինչ մնացեալ 'ի ջերմախոյց՝ բաժանեալ յարենէ, և ապականեալ, որք սովոր են հաստարակորէն համահաւասիլ յաղիսն, յորոց մարթի է պատճառիլ յոլով անգամ ցաւոց, կամ խեթեց, և նեղուածեց սրտի, և երբեմն ևս սիտ վերնոսութեամբ, յայսպիսի դիպուածս պարտ և պատշաճ է դիմել 'ի լուծողականս, զորս ուրոյն ուրոյն տեսցես 'ի տեղիս իւրեանց։ և մարթի է ամենայն ումեք նկատմամբ 'ի պարագայս բնութեան 'ի վար արկանել, եթէ 'ի վիճակի առողջութեան, և եթէ 'ի վիճակի վատառողջութեան։ բայց կարելոր համարիմ ասասէն դիտել, զի 'ի վիճակի առողջութեան, և առանց մեծի հարկաւորութեան չէ օրէն բնաւ յաւուրս շնիկ աստեղն 'ի վար արկանել զլուծողական, և ոչ զիսխողականս։ քանզի ըստ հիպոկրատեսի, և ըստ գալենոսի՝ յոյժ հիւսասաբեր լինի, որովհետև յայսոսիկ աւուրս օգն լինի ջերմ, և չոր, և բնութիւն կենդանական զգածեալ տկարութիւն 'ի մասին ներքին զորութեան։ ուստի

և ընդունելութիւն լուծողական դեղերիից առաւել և ակա-
բանայ, և նիւթերի։

Բսէուռաս աքաչիա, կամ արաբօր սիլիգուօղա վերին-
նէնսպա սբինօղա։ Ի ծառ մեծ, որոյ ոստք երկայն են և
գեղեցկազարդ։ Տերևք սորա երկայնաձև են և պայծառ
կանաչ. որք երկու երկու շարին առ միմեանս։ Ծաղիկն
սպիտակ, երկայնաձև, և աղուամազուտ։ Հոտ նորա
քաղցր է և սխորժական. զորութիւն նորա թուլացուցիչ,
բացօղ, և մեղմապէս լուծիչ. զկնի ծաղկանց յաջորդէ
պտուղն ինչ տափարակ, յորում լի են սերմունք երի-
կամանաձևք։ Իսկ արմատն օգտակար է ընդդէմ ցաւոց
կրծոց։

Բսէուռաս քօրալլուում, լտ։ քօրալլօ ֆիալս, իտ։ եա-
լանձը մերձան, տճ։ և ըստ մեզ՝ բուսա կեղծ։ Ի բոյս
ինչ ծովային, թեթև, ծակոտկէն, կարծր, գիւրաբեկ,
գոյշագոյն, և մէջն դատարկ, ուռնելով ի վերայ սպրն-
դանման քսա և ոստս բաղումս՝ զօրէն բստոյ. յորմէ
կազմին դեղ ի մաքրել, և ի կազդուրել զստամոքսս
մարդոյ։

Բսէթթաքուս, լտ։ բարբակալօ, իտ։ տուտուս գու-
շու, տճ։ տիւրեէհ, արբ։ Թուլթ, կամ միւկեահ քէտան
և կամ միւրիւնքի էէօյա, պրս։ և ըստ մեզ՝ Թուլթակ։
Ի Թուչուն ինչ շքեղ, ձևով մարմնոյ և մեծութիւն ի չափ
հասարակ կաչաղակի. գոյն նէ պայծառ կանաչ, գլուխն
ստուար, լեզուն ընդարձակ, և գիւրագարձ. իսկ տուտն
երկայն և գեղեցիկ, թաթք ստոյգ ճիրանաւոր, ձայնն
յոյժ հիանալի. քանզի փոփոխէ զայն որպէս և կամի, և
յոյժ գիւրաբա նմանեցուցանէ ձայնից կենդանեաց զորս
լսէ. ուստի բազմիցս ուսեալ զուսանս բարբառս մարդոյ՝
խօսել զարմանալի կերպիւ. մինչ զն ընդ ոչ տեսանելն
դնա, լսողքն զայն բարբառ՝ կարծէն զնա մարդ։ Լուսէ
զցորեան, զպտուղ, և զշաքար։ Իսկ միս նորա կարծր,
բայց համեղ, զոր եփեալ ի ջուր և բանեալ, բժշկէ ըղ-
վերնոտութիւն։ Բակոր սորա փոշիացուցեալ և արբու-
ցեալ, մինի դեղ շահաւէտ ընդդէմ սակարութեան ջրոց, և
ախտի ցնցականի. չափն ի 20 ցորենոյ մինչև 30 խառն
ընդ հասարակ ջրոյ. բայց յարաւելէ արժան է զքանի
ինչ շաբաթս։ Այս Թուչուն գտանի ի զանազան տե-
ղիս, որպէս ի հնդկաստան ի Ճեռվա, ի մալաբար, և
յափրիկէ։

Բսէլլուում կամ բրանեմակօ բսէլլուում, լտ։ բսիլիօ,
կամ բսիլլօ, և կամ սիլիօ, իտ։ գառնը եառնքք, տճ։

և ըստ մեզ՝ լուսախառն։ Ի խոտ, որոյ երկեակ են տեսակք. առաջին տեսակն կոչի՝ բարբառ նոցա բսկլլուսմ բբլմուսմ. որոյ ցողունն է բոլորակ անհարթ, փայտային և կարմրեալն. և բարձրանայ յերկրէ իբր մի ոտնաչափ տերևք սորա են երկայնաձիգ, խիտ, սրածայր, թաւշաշաւոր, ջղային, և շուրջանակի սղոցաձև. ստամնուս բեալք։ Հասկ սորա է կարճ, որ ելանէ՝ ի գագաթան, յորոյ վերայ դեռեղեալ կայ փոքրիկ ծաղիկ ինչ դուռնաթափ, և քառահերձ. յետ ծաղկանց յայշորդէ պտուղն թաղանթային, և երկայնականթ, իսկ սերմունք նորա, որք լինին՝ ի պտղի անդ՝ են երկայնաձև, յղկեալ, և սեաւ՝ ըստ նմանութեան լուսոյ, որոյ վասն կոչեցաւ յանուն նորա։ Իսկ երկրորդն կոչի՝ բսկլլուսմ վուլկարէ, որ փոքր է քան զայն. տերևք նորա ելանեն՝ ի վերայ ճիւղոց իբր երկու երկու առ միմեանս, որք բերին զնմանուն տերևոց զոպպայի, ծաղկին փոքրիկ՝ որպէս և հատապտուղ նորա. բերէ և սերմունս զորէն նորա։ Իսկ արմատն սպիտակ, և շրջապատեալ մանրաթելովք։ Երկրքին սոքա բուսանին յագարակս, յայգեստանս, և յամայի վայրս։ Լինեն ցեղական ապիւ և խաղալ նայնպէս և մանուցիկ հիւթովք, և՝ ի սերմանց նոցա գործեն գեղ ազդողական ընդդէմ ախտից կրծոց, հաղից և նուրբ ախտից, յորժամ ախտակիրքն արիւնահատն թքանեն. օգտեն և ընդդէմ փորհարութեան, և սերմնակաթուութեան, զի է խթիչ բնութեան։ Կոյնպէս և ոչ սակաւ՝ ի վար արկանեն արտաքուստ վասն ուռուցից, և ձեղքուածոց մրթոց։

Բսկլլիս. տես բսկլլուսմ։

Բսօսաս. այսու անուամբ ըստ անդամանենաց նշանակին՝ երկու միանունք ազգեր։

Բրէմիթս. անուամբս այս ըստ անդամանենաց խմանի՝ կծկումն ինչ թաղանթից ազեաց, կամ՝ կծկումն ստամծանուցն։

Բրէցցէմօլօ. տես բէթրօսէլինում։

Բրէքօռախում. բառիս այս ըստ անդամանենաց ցուցանի՝ քսանն սրտի։

Բրիսուլա վերիս, կամ վերպասքում բրաթէնսէ օսուսաթում, կամ հերպա բարալխս, լս։ Խոտ ինչ, որոյ տերևքն են երկայնաձիգ, լայն, խորտարբոս, և կնճռապատ, որք սփռին զերեսօք գետնի, և՝ ի միջոց տերևոց՝ ի վեր երևի ցողուն ինչ երկայն իբր թզաչափ, բոլորակ, թաւշալից, և ծնրաւոր, որ՝ ի ծայրն բերէ դեղնագոյն ծաղիկ ինչ հոտաւէտ. յետ ծաղկանց արտադրէ պտուղ

ինչ ձուաձև, ունելով ի միջն սերմանս սեաւս, մանուռնս, և բոլորշիս։ Իսկ արմատն սառաւոր, Թեփալից, կարմրեբանգ, և Թեքաւոր։ Հատով և բան մասին դառն, և բան մասին սուխ։ Այս խոտս սովորաբար բուսանի յայգաբակս, և ի գաշտավայրս։ լի է իւղով և ցնդական աղիւ։ շոհաւէտ է ի գիսոլուածս սկսորութեան ջլոց, և զգայական երակաց։ օգտակար է նաև ընդդէմ հարբշիսոյ, որ ի վար արկանի եթէ արտաքուստ, և եթէ ի ներքուստ։

Բրուկնա։ տես բրունում։

Բրունեալա։ տես քօնսօլնտա մանձիսրի։

Բրունում կամ բուռնուս տօմէսթիքսա, լտ։ բրուներ, կամ բրուկնա, խս։ բուխն, գղղ։ տամսգինա, յն։ էրիկ, տՀ։ իՀՀանգ, կամ խարիկ, և կամ պէռուռա, տրբ։ գէՀիՀ, կամ խալիա, կամ մինան, կամ մինէ, կամ նէկու, կամ նիքլ, և կամ ֆիլլա։ ալբ։ և բան մեղ՝ ջոր, կամ դամն, և կամ սալբ։ Ի միրգ բաղմատեսակ, քաջՀամեսթ յամենայն ուսիքն։ յորոց սաւաւել ազիւն Եղանէ ի դամասկոս, զորոյ զՀամեհաման ոչ ուրեք է գտանել, մինչև ի պարգև առաքեն մեծամեծ իշխանաց։ որ ընի և գեղ օգտակար տենդից, և փոսախուսեան, զի է Թուլացուցիչ, լուծիչ, և զովացուցիչ բնութեան։ Ձափն ի ջրս տրամ մինչև 96։

Բրունում սիկէսթրբ։ կամ սրինուս, և կամ վերՀիլլ։ լտ։ բրօնս սալվանիքս։ խս։ բուխնեէլնի, գղղ։ ջալը Թիքենի, տՀ։ Ի Թուփ կամ փոքրիկ ծառ ինչ փշալից՝ որոյ կեղեն է գորշագոյն, կամ ծիրանագոյն և դառնահամ, միանգամայն և գեղ միջահատական տենդից։ Տերևք սորա նման են տերևոց շլարենոյ, բայց կարՃը քան զայն։ Ծաղիկն եղանէ ի վերայ ոստոցն ընդ տերևովք, և է մանր, սպիտակ, քնքուշ, և հինգթերթեան։ զնին ծաղկանց յաշերդէ պտուղն բոլորշի, և սառաւոր ի չափ խաղողոյ, գոյն նորա Թուխ կամ երկնագոյն, ուռնեալ ի միջն Թամբ կամ հիւթ կանաչագոյն, և տարաՀամ, միանգամայն և գեղ ազդողական ընդդէմ Թունից, հոտման արեան, և հնագոյն փորհարութեան։ արգելու նաև զԺայթքումն, զի է խեթիչ բնութիւն։ զնոյն գործուներուն ունին նաև սորա փայտն, և տերևքն։ չափն ի 20 ցորենոյ մինչև 960։ Իսկ արմատն փայտային, սեաւ, և տարածողական։ Այս Թուփ բուսանի ի գաշտավայրս, և ի ցանկապատ տեղիս։ լի է իւղով և գոյացական աղիւ։

Բրունեօ սալվանիքսօ։ տես ի վերոյ։

Բրօբօլի. տես՝ ի Նեբբոյ բրօբօլու:

Բրօբօլիս, լս: բրօբօլի, կամ բեկիօլա, իս: բիրեկ պօ-լու, կամ կիրապօլու, տձ: ինպէր, արբ: մուսխա, պր: և ըստ մեզ՝ ականամամ, կամ ակնամամ: Ի Նիւթ ինչ կաղ-մրերանդ կամ դեղին, և մածուցիկ. որով մեղուք խցա-նեն ղծակոխս փեթակի. բնութեամբ է մեղմապէս լուծիչ, մաքրեցուցիչ, և անօգուտիչ. հունչակաւոր է՝ ի դիպուածս հեղգոյն հաղից, և նորոգ ընկալեալ վերաց. ամրապնդ-դեալ հաստատեալ նաև զմնջեալ և զլոսեալ մասունս ոս-կեաց:

Բրօսթաթէ. բառիս այս ըստ անդամաղենաց իմանի՝ երկու մասանքն առնի անդամոց:

Բօբէլս, լս: կարէթեթա կամ կարէթեթօ, իս: այապ սպիէզիզի, տձ: Ընդուանրապ այս նշանակի մասն, և Ջիլ ինչ, որ գասանի՝ ի ստորոտ թամբի սրունիցդ կիցդ ընդ կրնի կան:

Բօբուլակօ, կամ թուսիլակօ ալեէդուա, կամ քէլի-տօնիա բաղուսթրիա, կամ էբիմէտուս, և կամ ֆաբ-ֆիուտիուս, լս: Ի խոտս, որոյ տերևքն ունին զձև փոք-բիկ ծիծեռնախոտոյ, բայց քառասպտիկ մեծ քան զնա, և եղերք նորա սղոցաձև ատամնաւորեալք, և ի միջոյ տե-ղեաց ելանէ ցօղուն ինչ բաղբակ, ճիւղալից և մի սոնա-չափ երկայնութեամբ, որ և շրջապատեալ զարդարի դեղնա-գոյն և բազմաթերթի ծաղկամբք. յետ ծաղկանց արտադ-րէ զպտուղն. և իւրաքանչիւր հատ պտղոյ ունի բաղում սերմանս կարդեալս՝ ի ձև ատամեղ: Ունի արմատ ատուար, սպիտակ և թեղաւոր: Այս խոտ բուսանի՝ ի Լճային և ի Ճահնային տեղիս. ունի բնութեամբ զովացուցիչ և մաք-րողական արեան:

Բօբուլուս, կամ օբուլուս, լս: բիօբբօ, կամ բիօք-բա և կամ օբբիօ, իս: գաւազ աղանդր, կամ թօղ աղա-նդր, տձ: կառապ, կամ ապատ, և կամ ապուտ, արբ: սիբիսար, կամ տիուտալ, պր: Եւ ըստ մեզ՝ կաղամախ: Ի Ծառ ինչ չքեղ, և ոստախիտ. որոյ երկեակ է տեսակ. առաջին տեսակն կոչի՝ ի բարբառ լատինացւոց՝ բօբու-լուս ալպա, կամ ֆաբֆարուս անթիպուօրում. որոյ բուսնն է երկայն, ուղիղ, սպիտակ, ստուար, թեղեև, և գիւրաւ ճեղքելի: Կեղև սորա է յղկեալ, սպիտակ և հարթ. զոր՝ ի վար արկանեն՝ ի դեղորայս, որ է փարա-տիչ շնաթիքա անուանեալ յօդուածացաւութեան: Տե-ղիք սորա են երկայնականթ, լայն, անկիւնաւոր. հեր-ձոտ յոյժ, և ձևացեալ իբրև զլծաթ բացեալ ձեռին մար-

դոյ • գոյն նոցա ՝ ի վերին երեսս սպիտակ , իսկ ՝ ի ներքոյ մութագոյն , և լի աղուամաղուք : Պտուղն երկայնաձև , յորմէ հանեն զնուս : Իսկ արմատն տարածողական : Իսկ երկրորդ տեսակն կոչի բօբուլուս նիկրա , որ և է իբրև գնիսքնենթաց ծառս բարձրագոյն , և ոստաւոր , բայց փայտն է կարծր և ջլային , որ գԺուաբաւ կարէ ՀՆոյքէլ : Տերևն երկայնաձև , տրածայր , ստուար , կանաչախառն գեղին , մածուցիկ , և հոտաւէտ • զոր ՝ ի գործ ածեն ՝ ի դեղ Ժանտախտի , Թանչացաւութեան և յօդուածացաւութեան • զի է խթիչ բնութիւն : Պտուղն ողկուզորէն երկայնաձև , Թաղանթոյնն , և կանաչագոյն , որ ՝ ի հասանիլն ինքնին բացեալ լինի ՇՄՀՉ , և յայնժամ երևին ՝ ի նմա սերմունք փոքրիկ : Իսկ արմատ նորա ձգի ՝ ի խորս երկրի : Ընձիւղ կամ պտուկ այսր ծառոյ լինի սպիղանի վերայ , և ցաւոց Թանչից , զոր և ՝ ի վար արկանեն ՝ ի բաղադրութեան այնմ սպիղանւոյ , որ խաղալիին ունկվենթօ բօբուլուսնէ կոչի : Երկոքին սոքա բուսանին ՝ ի խոնաւուտս և ՝ ի ջրաբեր տեղս :

Բօբօնէ • սուս մէջ :

ԲօթամանՀԷթն , կամ ՇՆԵԹՄԱՆ մաեօր լանԹիՇՇԼՈ մուլիկարս , լս : Ի տունկ ինչ ՀՆոյնն , որ արձակէ յաՀանս զսօրունս երկայնաձիգս , բոլորակս , և ՀՇՀՀՈՀՀՈՀՀՈ լինի նրբատերև ոստէս զանգ , և ոմանք ներՀակաբար բայնատերև իբրև զՀՀՈՀՀՈՀՀ • բերէ ծառիկս կարմիրանգս , և քառաեակ ԹերԹեանս • ապա կարմրագոյն սերմունս երկայնաձև , ստուարս , տրածայրս , և սպիտակահիւմս , որք շարին քառեակ քառեակ առ միմեանս : Իսկ արմատն ստուար , բոլորակ , ոստաւոր , և սպիտակ , որ ձգի ՝ ի խորս երկրի : Այս բոյս նուազ է աղիս և իւրով , և բնութիւն զովացուցիչ , Թանձրացուցիչ , և սեղմիչ • օգտաւէտ է և կարի պատշաՀաւորագոյն ՝ ի դիպուածս փորՀարուԹեան , և հոսման արեան : Կանիկք ՝ ի գործ ածէին զայս ՝ ի սպեսպէս դեղորայս , նաև յառաջացուցանել զՀերս գլխոյ • իսկ այժմ սակաւ ՝ ի կիր առնուն յեւրոպիա :

Բօթասսա : խս : Աղ ինչ հանեալ ՝ ի մոխրոյ բուսաքանաց :

Բօթանենթիլլա , կամ արՀենթինա , և կամ անսէրինա , լս : բօթանենթիլ ռամանենթ , գղղ : Ի գաղարի ինչ , որ սովորաբար բուսանի ՝ ի դաշտամայրս , և յեղերս ՃանապարՀաց , արձակելով յարմատոյ զրաղում տերևս նմանս տերևոց ակրիմենիա կոչեցեալ խոտոյ , և ՝ ի միջոյ տերևոց ելանեն փոքրիկ ցօղունք • որք ՝ ի ծայրս բերին ՀՀՀՀՀՀ

ծաղկա լայնաբացս, և հինգթերթեանն՝ ըստ նմանութեան ծաղկանց հինգատերեւեանի, ունելով ՝ի միջի առէջս բաղումս զնին ծաղկանց յաջորդեն պատուոյ բոլորշիք, իւրաքանչիւր պտղոց ունելով զերեանց սերմանս փոքրիկս։ Իսկ արմատն անհոտ, երկայն, և նուրբ, միանդամայն և դեղ փորհարութեան։ Այս դաղարի բնութիւն է մաքրողական, զովացուցիչ, և սեղմիչ։ օգտակար է ընդդէմ փորհարութեան, հոտման արեան, և միզարգելութեան։ միանդամայն և գրգռէ զքարիկս միզարանի, և մեզմէ զցաւս ատամանց։ չափն կեղևոյ արմատոյն ՝ի կէս ուրամէ մինչև ցմի, երկու կամ երեք անգամ յաւուրն։

Բօթերիում, կամ սբենա հերչն մինօր, և կամ թրակաքանթհա ալեհբա, լս։ Ի փոքրիկ ծառ. ինչ փշալից՝ նման թփոյ այնմիկ որ խաղերէն կոչի արակաքանթէ. որոյ ոստքն են երկայն իբր մի ոտնաչափ, ընդարձակ, թիւրատհակ, մանրիս, և սպիտակ։ Տերևք սորա են մանրիկ, բոլորաձև, սպիտակ, և լի աղուտամղութ, որք ելանեն երկու երկու առ միմեանս։ Ծաղիկն ընդդէմ և սպիտակ, ունելով ՝ի միջի առէջս ինչ փողաձև. զնին ծաղկանց յաջորդէ պտուղն ինչ խորշխորշանի, յորում պարունակին սերմունք երկայնաձևք։ Իսկ արմատն երկայն, ոստաղլոց, մածուցիչ, արաքրուստ սեաւ, իսկ ՝ի ներքուստս սպիտակ և մեկալից, որ լինի դեղ ազգու ընդդէմ վիրաց, զի է փարատիչ, և միաւորիչ։

Բօթիս կամ բօցիս. տես պէվանտաս։

Բօենթիանա, կամ ֆիլեթէբա բավենինուս, կամ քրիսեթա բավենինա սիմենսիում, և կամ աքաչիա օրպիս ամերիքանի ալեհբա ֆիլօբ բուլքերրիսմ, լս։ Ի փոքրիկ ծառ ինչ վայրի յաճախեալ անխտիր ընդ ամենայն տեղս յաշարհին ամերիկոյ, և ՝ի բուրաստանս Եւրոպիոյ, որ բարձրանայ յերկրէ իբր վեց կամ եօթն ոտնաչափ. որոյ կեղևն հարթ է և ծերանագոյն, և ՝ի վերայ ունի փուշս ճանկաձևս։ հատկ նորա երկայնականթ, և ծիրանախառն կարմիր, յորոյ վերայ զեռեղեալ կայ գեղեցիկ և փնջաւոր ծաղիկ ինչ ծերանագոյն բերէ պտուղ տարփարակաձև, կարծր, և սպիտակ, բաշխեալ և պատեալ երիւք նրբակեղև պատենիւք։ Իսկ կորիզն կարմրագոյն, և բոլորակաձև։

Բօլբա. տես բուլբա։

Բօլբաչիս, կամ՝ անձէս, յն։ պալորը, տձ։ սաք. կամ սիմենանթրիկլն, արբ։ բուժ, կամ լինկ, սր։ Ի՝ ըստ մեզ թամբ սրունից. է մտեղ մսան, որ կայ ՝ի յետոյս սրունից։

Բօլէմենիում, կամ վալէրիանա կրնքա, կամ վալէ-
բիանա էրուէլա, լս։ Ի բոյս ինչ խժային, և դառնա-
համ, որոյ տերևք են մշտականաչ, ջղալիք, երկայն իբր
մատնաչափ. և ի միջոյ տերևոց ելանէ ցօղուն ինչ եր-
կայն իբր երկու ոտնաչափ, ստուար մատնաչափ, թաւի-
շաւոր, դարձեալ դոյն, և մէջն դատարկ։ Ծաղկին ելանէ
ի գագաթան, և է հինգթերթեան, հոտաւէտ, երկնա-
գոյն, և փայլուն, և ի տեղս տեղս նաև սպիտակ, կամ
կարմրագոյն. զնին ծաղկանց արտաքրէ հատատպտուղ
փոքրիկ, և խորշխորշանի. յորում լի են մանրիկ սեր-
մունք սեաք, և երկայնաձև. իսկ արմատն թելալից և
սպիտակ։ Այս բոյս լի է իւղով և գոյացական աղիւ, և
զօրութիւն մարդիս, և սրբիչ վերաց։

Բօլիբուս կամ աղնուտս մարբնուս, լս։ բօլիբօ, իտ։
ղղիթաբօտ, ատ։ և ըստ մեզ պղղիպոտ։ Ի ձուէն ինչ ծո-
վային նմանեալ ըստ իմիք կաղամար ձկան. զի ուռնի զոտս
ուռի երկայնաձիւտ, ստուարս կարծրս, և շղնաձիւռս,
յորոց ջրս առաջինքն ելցեն նմա յրմբանեալ ղաքաղօր
կենդանիս, և հեղձուցանեալ. իսկ յետինքն ի գնալ և ի
լուսել ի ջուրս, որոյ վասն և յոյնք յորջորջեն՝ օքտա-
բօտիայ, որ առ մեզ ստուգաբանի ութոտնեայ։ Սա հե-
ղոյ յիւրմէ գշիւթ մթին կարմիր իբրև ղմերանահոտ։ Իսկ
միս նորա սպնդային է և գժուարատմարսելի, այլ օգտա-
կար աղեաց։

Բօլիբօ. տես բօլիբուս։ Դարձեալ՝ է միս ինչ ածե-
ցեալ ի ներքս անդ ի ունգունս։

Բօլիբօտիում գուէռնինում, լս։ բօլիբօտիօ, իտ։ բօ-
լիբօտ, գղղ։ պէտվարիչ, ատ։ և ըստ մեզ պղղպտոգ։ Ի
ապտ ինչ բուսոյ ածեցեալ իբր ի բաղումն ի վերայ հնա-
գոյն կաղնւոյ. վասն որոյ կոչի և ի բարբառ լատինաց-
ւոց՝ բօլիբօտիում գուէրքինում, որ ի մեզ ստուգաբանի
պղղիպոտ կաղնւոյ։ Ցերև սորա ըստ իմիք նման է տերևոյ
Ֆիկէլի։ Պտուղն գնասկաձև է և թաղանթեային, ունե-
լով ի մէջն սերմունս մանուռնս։ Իսկ արմատն երկայն իբր
մատնաչափ, ստուար, դիւրաբեկ, թելալից, պալարա-
ւոր, նմանագոյն, քաղցրահամ և համեմային։ Այս բոյս
բնութիւն է թուլացուցիչ, բացողական, և մաքրողական
արեան, որով բանայ դիցանս լերգի, և փայծէնան, և
փարատէ զշարաւալից խոյլս պարանոցի, և զսխան սեռա-
նեալ սքօտպուլթօ. եւ օգտէ հնագոյն հարբղնոյ։ Զամին
ուտի տրամ ընդ մի և կէս լիտ ջրոյ։

Բօլիբօտիօ. տես բօլիբօտիում։

ԲօլեթիլքՀում, կամ Թիլքօմանէա, և կամ Թիլքօ-մանէա մաս, լս։ բօլեթիլքօ, իս։ Ի խոտ մշտադալար, յաճախեալ յապատաժու�ս, և ՚ի խոնարհուտս. որոյ ցօղունն է բոլորակ, կարճ, բեկանուտ, և սեաւ։ Տերեւք նորա են փոքրիկ, բոլորշի, փափուկ, և երկայնակնեղ, և շուրջանակի սղոցաձև առատմասուտրեալք, և ՚ի վերայ ունի փոշիս նուրբս։ Պտուղն բոլորակ, ունելով ՚ի միջի սերմունս մանունս։ Իսկ արմատն նրբաթել, և սեաւ։ Սա բնութեամբ է բացողական և մաքրողական արեան, շատ հաւէտ է ընդդէմ ցաւոց կրծոց և փայծէղան. քանայ և ղդաշտանս կանանց։

Բօլեթիլքօ. տես բօլեթիլքՀում։

Բօլեկալա, կամ ֆլօս ամպարվալիս, լս։ Ի խոտ որոյ ցօղունք են փոքրիկ, կարճ, ուղիղ, պարարտ, կանաչախառն կարմիր։ Տերեւք նորա են փոքրիկ, և բոլորակաձև, որք խիտ առ խիտ սփռեն զերեսօք գետնի։ Ծաղիկն մանր և երկնագոյն. բայց յոմանս տեղս լինի և մանուշակագոյն, ծիրանագոյն, և սպիտակագոյն. յետ ծաղկանց յաջորդէ պտուղն տափարակաձև, պատեալ հնգեակ թերթիւք, և ՚ի միջի ունի սերմունս երկայնաձևս։ Իսկ արմատն փայտային, մանր, և դառնահամ։ Այս բոյս սովորաբար բուսանի ՚ի խոտաւէտ տեղս, և սկսանի ծաղկիլ յամսեանն մայիսի. լի է խաղով, բայց նուազ ազիս, և բնութեամբ մեղմապես լուծիչ, և մաքրողական արեան, որով և առատացուցանէ զկաթն կանանց։

Բօլեկալա վերՀնիանա, լս. և.ս, իս։ կամ բօլեկալա սեՀնեկա։ բօլեկալա, ղղ։ Ի հաշակաւոր սրմատ ինչ փայտային, ստուար խրև զՀնոյն մատն մարգոյ, ոստալից, դժուարաբեկ, և ստուարակեղև. արտաքուստ գորշագոյն, իսկ ՚ի ներքուստ սպիտակ. համով է տաքպ, և դառն, միանգամայն և ջերմահամ, կամ համեմային։ Այս արմատ՝ եթէ արժան իցէ հաւատալոյ ամերիկացոց՝ գերազանցեալ զօրութեամբ զամենայն բժշկական բուսովք, համարեալ առ նոսա իբր դեղեալ ընդդէմ խածուածոց օձից և կարծաց։ Բայց մեք ասեալ ՚ի կիր արկանեմք զսա ՚ի դիպուածս թոքաՀատութեան, կրծացաւութեան, խեթից լանջամաշկի և թոքոց, բորբոքման, և Հնադոյն սխալց կրծոց։ Նոյնպէս յաճախ ՚ի վար արկանեմք զսա ՚ի բրժշկութեան ծիւրական կամ նուրբ սխալց պատճառելոց յերկարատև խօՀուութեանց։ Զայս արմատս ես բազմօրինակ գրեմ տալ հիւանդաց։ Զոյրօրինակ, յերկու և կէս լիտր

հասարակ ջրոյ՝ սրկանի չորս ունկի յարմատոյ ասսան ընդ միջոց 12 ժամուց։ Զայն և մեայ երկու լիտր։ և երբեմն յաւելեալ լինի ի վերայ տրամ մի՝ կամմս ամմենիաքա, և մի ունկի՝ օսոմէլէ չիլլեթիքօ։ Յինիքուլիսնէ ասսան յերկուս ժամս միանգամ՝ ասուս սիտասէէ։ Երկու ունկի առ իւրաքանչիւր նուագ։ Եւ ը ամանոյ հեղնեալաց ուրնի և զգործունէութեան առ ի փարատել զչիգոլոլն, զմիջամասական տենդ և զերդացաւուն, նաև զարիւնախառն թեքուն, որ սովոր է գալ զհին կշռացաւուն թոքաժէտուն։ Այս արմատ յաշխոյ գասանի յամերիկայ, ի հնդկաստան, և ի քանասա։ Բնութիւն է թուլացուցիչ և միզաբեր։ Բոյս այսր արմատոյ է ուղղ, գաղարագոյն, և ճիւղալից։ Տերևն ձուաձև, և սրածայր։ Ծաղիկն հասկաւոր, և սպիտակ։ բայց յամենս տեղս լինի և ծիրանագոյն։ Պատ. մի թէ ի յայլբեմեռն անուանեալ լերինն գասանի բոյս ինչ կարի նման բօլիկալա վիրմինիանակ, բայց սուորին է զորութիւն քան զայն։

Բօլիկօնաթուս, և կամ սիմինդրում սալամենիս, լատ։ սիմինդրա տի սալամենէ, կամ սիմինդրա տի ասենթամարիա, իտ։ մէհիւբ սիւլէիմանի։ կամ մէհիւբ մէյրէմ, տՃ։ խայլիմի սիւլէիման, արբ։ Եւ ըստ մեզ ասուագաբանի՝ կինք սաղմանի։ Ի խոտ ինչ, որոյ ցօղունն է բոլորշի, կոր, յոլկեալ և երկայն իբր երկու ականաչափ։ Տերևք սորա են լայն երկայն, և փարեալ զմիմեանսիք՝ ըստ նմանութեան տերևոց կաղամբի։ Ծաղիկն սպիտակ, հերձոտ, և թեքեալ։ Զկինն թօմանիլոյ ծաղկանց ի վերս երևին հատասպ սուագքն փոքրիկ իբրև ի չափ սիսաւն, և իւրաքանչիւր հատ պտղոյ ունի երբեակ սերմունս նման վշնի։ Խակ արմատն երկայն, ասուաւ իբր մատանչափ, թեքալից, պաղարաւոր, և սպիտակ, և բնութիւն սեղմիչ և սնուցիչ։ զոր լսեալ ի փոշի մանրամանոյ, լինի կերակուր մարդկան ի ժամանակս սովու։ Նաև գեղ օգտաւէտ ի գեղուածս ֆիլուօրթ սիանքօ յորոշիչալ սխտի։ Խակ զպատուղն, որ է ծայրեքեցուցիչ, և լուծողական բնութիւն, ի վար արկանէին նախնիք ի սէսպէնս գեղոցս։ բայց յայսոսիկ դարս գրեթէ գլխոսին է անգործածելի։

Բօլիկօնում, կամ սիմինդրա, լատ։ քօռանիմուօրա, իտ։ Ի խոտ ինչ երկայն իբր մի և և կէս ականաչափ։ որոյ տերևքն են ձուաձև, և մանր։ Ծաղիկն սպիտակ, և մանր, յեռ ծաղկանց եալնէ պատեան ինչ շագանակագոյն, ունելով ի միջի սերմունս ասուարս։ Խակ արմատն ասուաւ, կարծր, և թեքաւոր, և բնութիւն յոյժ սեղմիչ.

զոր առ Նախնիս ի կիր արկանէին ի դիպուածս փոշհաբութեան և հոսման թանչից. բայց այժմ անպիտանան համարի։

Բօլհում մենթանում, լս։ Ի բոյս, որոյ յօդուածն է երկնագոյն և երկայն իբր կէս ոտնաչափ։ Տերևն փոքրիկ, երկայն, և շուրջանակի սղոցաձև ատամնաւորեալ։ Ծաղիկն մանր, արկղաձև ոսկեգոյն, և հերձոտ, որ ելանէ ի գագաթան հանդերձ բողբոջն սերմամբ։ Լինի սա ի բարձրաբերձ լերինս, յաղտաղտին, և ի Ջերմագին տեղիս։ Բնութիւն է բացողական, և միզաբեր. ըստ ոմանց Նախնի հեղինակաց ունի զզօրութիւն բուժել զդալարդն, զցաւս գլխոյ, և զիաձուածս օձից։

Բօլմենարիա. տես բուլմենարիա։

Բօլմենէ. տես բուլմե։

Բօլսս. տես բուլսուս։

Բօլվերէ. տես բուլվիս։ Դարձեալ, այսու անուամբ իմանի ևս վառօթ։

Բօլվերէ ասսօրպէնթէ տէլ վէտէլիս, իտ։ Բուլվիս սպասօրպէնս վէտէլիի, լս։ Ի փոշի ինչ բաղադրական, օգտաւէտ ի դիպուածս գԺնեայ սենդից, և բորբոքման խախացոյցի, կամ սուսմբսի. արգելու և զԺայթքելն, և գրգռէ զքիրան. որ այսպէս բաղադրի։ Առ քսան և չորս կշիռ ցորեան՝ անթիմոնիս սիպիտրէթիքս, և նոյնչափ՝ կարմիր բուսան փոշիացեալ, երկոտասան ցորեան՝ վէթրիսօս տի մարթէ, 2կ ցորեան՝ օքքի տի քանիրս, և նոյնաքանակ՝ չինապրս նանթիսս. առ երկու ցորեան՝ էսթրանթոս տ՝ օրիս, այլ և 24 ցորեան՝ քանքէ բրէբարանթէ։ Զամին ի չորս կշիռ ցորենոյ մինչև ցյ2, երկու անդամ յաւուրն։

Բօլվերէ արմէնիքաս տի բարաչէլաս, իտ։ բուլվիս արմենիքուսարիս մոնտուս, լս։ Փոշիս այս ունի մանաւորզօրութիւն ի մաքրել զորովայնն, և ի փարատել զցաւս յօդուածոց, մանաւանդ զշանթիքաս անուանեալ յօդուածոցասն, որ այսպէս յորինի։ Առ սքամոնիա ցօլիֆորիա, երմօտանթիկի, թեռպիթօ, սէննա, ցուբքէրս ֆիէնս, յիւբաանչիւրոյն մէն մի ունկի. զամենայն բարիոք ծեծեա. արկ ի մէջ միոյ ապակեայ անօթոյ. չամին ի 20 ցորենոյ մինչև ցճ։

Բօլվերէ բուրկամիվա, իտ։ բուլվիս բուրկամիրուս, լս։ Հերպէթ սուֆիուֆ, ատ։ Փոշիս այս օգտաւէտ է ի դիպուածս հարբոլոյ, և ի ջուածոց մանաւանդ առեալ ի թանձր հիւթոց. մաքրէ մեզմապէս քերելով, և ի

դուբա վանելով զաղտեղութեան տեսանքով, և տեսորին որա-
վայնի։ Բաղադրեալ ի կէս տրամ՝ Եարաթա սրմանոյ լը-
ցեալ։ Եւ զայս պարտ է առնուլ գաղջ ջրով ի պահ ա-
ռաւօտու։ Ի ծամուտ։

Բօլվերէ էրիչէթիքա տէլ մարքէղ, իսա։ բուլիա է-
բիչէթիքուս մարքիոնիա, լա։ Փոշիս այս ունի զմանա-
ւոր իւն գործունէութեան տիտի մանկանց, գողդոլման
տրտի, և լուծման որովայնի։ մանաւանդ յերամայս ի
բոլորոնիկ ատամանց նոցին, և ևս ի գիսուսածս Ճնիւոր
անդիրց, որ այսպէս յորինի։ Ա՛ռ չորս տրամ՝ բատիչէ
տի բէօնիա. վիպիօ գուերչինօ տիրօրիս բաբաթեօ. ունի-
կա տ՝ ալչէ, սրօտիս. քօրնօ տի չէրվօ քրուտս. քօրալի
ռօսի, քօրալի պիանի. մարկարիտա բրէբարաթեօ. յիւ-
բաքանչիւրոցն մէն մի տրամ. զամենայն լուսա՛ ի փոշ
մանրատաղ իբր զալիւր, յոր յաւել 20 հատ՝ ֆիկլի տ՝
օռ.օ. զոր պարտ է առնուլ երկու անդամ յաւուրն, ըստ
չափու 40 ցորենոց։

Բօլվերէ տի կուԹէԹա բիվէրիս, իսա։ բուլիա տէ կու-
ԹէԹա բիվէրիս, լա։ Փոշիս այս է դեղ պատաշաճողական
պտուտից գլխոյ և տխոտի ցնցականի ի վերայ եկեղց ման-
կանց, ֆիջուանոց անդամագօսութեան, լուսնոտութեան, և
այլ ամենայն տխոտի ջղաց. որ այս կերալ կազմի։ Ա՛ռ բա-
տիչն տի բէօնիա. սէմի տի բէօնիա. բատիչէ տի տիթ-
թամօ պիանքօ. վիպքիս գուէրչինօ, յիւրաքանչիւրոցն
կէս կէս ունի. սա՛ և երկու տրամ՝ սէմի տ՝ տիթբերլիչէ-
երեք տրամ՝ քրանիս ուսանես. մի և կէս տրամ՝ քօրալի
ռօսի. և նոյնչափ՝ Ճիչէնեի բրէփարաթի. այլև երեք
տրամ՝ ունկա տ՝ ալչէ. և մի տրամ ֆիկլի տ՝ օռ.օ։ Զա-
մենայն լուսա՛ ի նուրբ փոշի, և արկ ի մէջ միոյ տապա-
կեայ սնոմոյ. չափն ի գործ արկանելոյ է ի 10 կշիռ
ցորենոյ, մինչև ց30 միանգամ յաւուրն։

Բօլվերէ Հաննովերիանա ուռոյէ, իսա։ բուլիա Հաննո-
վերիանա ուռալիս, լա։ Կարմրերանգ փոշիս այս օգտաւէտ
է ընդդէմ տկարուն տրտի, և ամենայեալ ցաւոց գլխոյ,
և նեցուկ է. որ այսպէս յորինի։ Ա՛ռ կէս ունկի կէնէ-
պրօ նամիսօ, և նոյնչափ՝ շաքար մանրուր. վեց շիմ իւղ
կինամոնի, և չորս հատ՝ ֆիկլիս տ՝ օռ.օ։ Զայս ամենայն
լուսա՛ ի նուրբ փոշի. չափն ի կ ցորենոյ մինչև ց20։

Բօլվերէ տի տօվերէ. տես Հատ. ա. գլ. ա. երես 25։

Բօլվերէ քանցիանա, կամ տի քանԹիսաս տի քէնԹ,
իսա։ բուլիա քանԹիանուս, լա։ Փոշիս այս շահաւէտ է

'ի գիպուանցս գՀենեայ և Հրատասպ սենդիլց, Ծաղկանց, վարդախտից, փորՀարութեՀ, Ժանտախտի, բծաւոր ջերմախտից, կշտացաւութեՀց, և ամենակերպ թաղկացման և նուազման սրտի, ևս թունից օձից և մեկոց, որ այս օրինակ բաղադրի: Առ չորս ունկի ոսոց սեաւ մասն ծռվալին խեցգետնոյ, յիսատասնոց կոչի՝ բուՀեՀ նեՀէ ասէ՝ բիւտի ասէ՝ քանքաւի մարենի. մի ունկի՝ օք.քի տի քանքաւ. և նոյնչափ մարկարիեՀ. կէս ունկի՝ քՀենեթրա եՀեվա. մի ունկի՝ քօրալլի ոսոսի. կէս ունկի՝ սէրբեՀենեթարիա վիրՀենիանա. երեք տրամ՝ սկեցսարօրիենեթալէ. առ և 80 կշիռ ցորեան՝ ասսի տի քուսօռ տի էերվօ. և 40 ցորեան քրօքօ օրիենեթալէ: Զայսոսիկ ամենայն լուսեա 'ի նրբադոյն փոշի. չափն 'ի 20 ցորենոյ մինչև 360:

ԲօլՀերէ քՀենեռա լա թեսսէ քՀենվուլաա: Փոշիս այս օգտաւէտ է ընդդէմ սիսոտ ցնցականի, լուսնոտութեՀ, գՀենեայ և ցնցական հալից, և հարբղխոյ եՀելոյ 'ի ջիղս, որ այսպէս բաղադրի: Առ երեք կշիռ ցորեան՝ փոշիացուցեալ արմատն սէկլլա ոսենսի, և քսան ցորեան՝ ելիգուիրիցիս փոշիացուցեալ, այլև տրամ մի շաքար: Բաժանեա ասսի երկոտասան մասունս. և տացին երկու կամ երեք հատք յաւուրն:

ԲօլՀերէ քՀենեռա վէռմի, կամ վէռմիֆուկա, իտ: բուլլիս անեթի վէռմիս, լտ: Փոշիս այս բաղադրեալ յատկապէս 'ի ստամոքէ ղՀՁիս և զորդուածս որովայնի, և միանգամայն օգտաւէտ ընդդէմ ՁՀիաւոր սենդիլց, այսպէս յօրինի: Առ կէս ունկի՝ ամենանուրբ խարտաշ երկաթոյ կամ պողպատի. և երկու տրամ՝ էեթիօքէ մինէրալէ: ԲաՀանեա ասսի վեցեակ մասունս. մէն մի առցի ընդ առաւօտս 'ի ծոմուստ, այլև մէն մի ընդ երեկս, խառն ընդ մեղու կամ ընդ փոքր ինչ թիւրակէսի:

Բօմա ասսմի. սեւ բօմում ասսմի:

Բօմաթա, իտ: Է անուն ընդհանուր, որում նշանակին իւղք անուշահոտք, կազմեալ 'ի զանազան նիւթոց, և 'ի Ձարպոյ կենդանեաց:

Բօմ ֆօլլբա, կամ նիլ, կամ նիֆիլի ալպում, կամ քարբուիթէ, և կամ պուլլա քարամիթէս, լտ: բօմֆիվէռէ, իտ: Է ցնդական մասն պղՀեղոյ, մաՀեալ 'ի ներքսակողմէ անօթոյն՝ յոր հալն պղինձն խառն ընդ ՁիաՀլա. մինա կոչեցեալ քարի: ԶօրութեՀ նորա մաքրող, և ցամաքեցուցիչ վերաց, եՀեՀ փոշիացուցեալ ցանկոյն, կամ սպեգանի կազմեալ դեցի 'ի վերայ նոցա. փարատէ և ըզսերմնակաՀութեՀն, յաՁախակի գրեթէ առնելով ընդ մի-

զանց Հանապարէն։ Օգտաւէտ է նաև ընդդէմ երկաբատաև տենդից, զի է ուժգին ժայթքեցուցիչ, չափն ի 10 ցորենոյ մինչև ցՅՕ։

Բօմում սատամի, կամ բօմս սատամի, կամ բօմում սատիրում, կամ մարբս սատամի, և կամ մարբս սատիրիս, լս։ Եւ ըստ մեզ խնձոր ագամայ։ Է տեսակ ինչ պտղոյ յաղգէ լիմանի. որոյ կեղևն է սուաղ, խորտաբերս, և գեղեցագոյն, և բաղմահեղբուած. մէջ նորա ըստ մասին նման է կիսարնի, և ըստ մասին լիմանի, այլ անհամ. զոր ի վար արկանեն ի գեղոցայս, որ է փարատիչ երիկամնաց ժեռուլեն, միզարգելութեն, միջահատական և հանապազ զօրեայ տենդից. ապաքինէ նաև զախտն սքօնսպուլեօ։ Ծառս սորա սովորաբար բուսանի ի բուրաստանս, և յեր-կիրս ջերմագինս։

Բօմում կրանաթում, կամ բանիքս կրանաթում, կամ մարբում կրանաթում. և կամ մարբս բանիքս, լս։ մէջակրանս, իս։ կանիսատ, գղղ։ յրօնուխատ, յն, ուօման, արբ։ Նաբաալ, արբ։ Եւ ըստ մեզ՝ նուռն։ Է պտուղ գնոտակակերպ նարինջաւոր մեծութեամբ. շուրջ զրոյով պատեալ կայ կեղև. ներս կարծր կարմրախատուն գեղեն, զոր ջրաացուցեալ վարեն ի սէրս սեաս ներկի. վարի ևս ի բժշկական գեղոցայս, որ է սեղմիչ բնութեամբ, որով օգտէ հնագոյն փորհարութեն, և թանչից. այլ ի մէջն անգ պտղոյն՝ ունի բաղմաթիւ հատս թանմարկիս, գեղեցկաշարս, և թաղանթապատս. գոյն նոցա ոմանց կարմիր են, և ոմանց սպիտակ. խակ համն անուշակ, միանգամայն և գեղ օգտակար զօրացուցիչ նուաղելոց, և զովացուցիչ սրտի. և իբրաքանչիւր հատից ունելով զնրբանց սերմն ի միջի, որ է երկայնաձև, միանգամայն և սեղմիչ բնութեամբ։ Ծառս սորա է միջահասակ, քնքուշ, և լայնատարած, որ տաւաւել տարածի ի լայնութիւն քան ի բարձրութիւն. որոյ ոստքն են կարճ եռանկիւնի, և փշալից։ Տերևքն փոքրիկ, և երկայնաձև ըստ նմանութեան տերևոց մասենոյ։ Ծաղիկն հինգթերթեան, քնքուշ, կարմրերանգ, և խոտոչաւոր, ունելով ի վերայ առէջս ի գոյն գեղեցիկ գեղին, զոր լասինք պալաուսթիում կոչեն, որ է բնութեամբ սեղմիչ. ունի զգրծուձեռուն ի փարատել զվարհարուն, և ի խափանել զյորդառատ հոսումն թանչից կամ աբեան։

Բօմում նառանցիում. տես տուարանցիում։

Բօմում սբինօզում. տես սթրամոնիում։

Բօմում ամօրիս, կամ սօլանում վիբօփեռանքում, և

կամ տուռնա մարտ, լս։ բօմի տուռ. , խս։ ֆռէնկ բաթ-լիՃանը, ՃՏ։ Ի տունկ յաՃախեալ ամենայն ուրեք ՝ի պարտէզս , և ՝ի բուրաստանս, որոյ տերեւքն հատուս են և թաւիշաւոր։ Իսկ պտուղն բոլորշի , և թթու , յորմէ ստեպ կազմին կերակուր , որ է օգտակար ընդդէմ անպտղութեան ։

Բօմ տի տատմ . տես բօմնում տատմի։

Բօմ տի թերրա . տես սօլանում բուպէրօզում։

Բօմ բօՃնա . տես մարպիտոնիա ։

Բօմթէմա . տես բուսթուլա։

Բօռքա , խս։ Ըստ մեզ՝ քաղախաղնոր , է հեղեղուկ ինչ բարդրեալ ՝ի ջրոյ , և ՝ի քաղախոյ , որով ողողեալ զկոկորդն՝ օգտաւէտ լինի անտակ ուլան ։

Բօտակրա։ Ա յս անուն ՝ի յուՃնաց առեալ առ լատինս, նշանակէ ոսկաառութիւն . զոր խտալք անուանեն՝ կօթթա ա բիէտի , և արաբք՝ վէՃաիլ միւլիք , իսկ թուրքք՝ նիկրիզ . զորմէ լիս լին տեսցես հտ , ՃՏ . գլ . իե . երես 263։

Էսթրամեթոս տի էլլէպօռօ նէռօ, իս։ քառա չէօբլէմէ խիւլասսը, ասէ։ ըստ մեզ գոյացական մասն սեաւ եղերոյսն։ Ի յարգի է այս առ բժիշկս յամենայն դարս սկսեալ՝ ի հիփոկրատեայ մինչև ցայս վայր. մաքրէ հղորապէս զշիւթս մաղձի, և թուլացուցանէ զախտս. օգտաւէտ է ընդդէմ բորոտութեաց, ոլբիւնի, ջղգողութեաց, լուսնոտութեաց, ախոնդանոտութեան, և այլ վիսպակաց ուղղոյն. աստակէ և զորդունս և գՀՃՃիս որոյնի, և բուժէ զախտն երեսանդական, և զմոնդնուն և զքաղցկեղ։ Եւ նեթէ՝ ի վար արկանիցեմք չափաւորապէս, խառն ընդ քաղցրացուցեալ մեղկի, լինի դեղ յոյժ պատշաճոզական հնացեալ ախտից մորթոց, որոց ոչ գոյ յոյս ապաքինութեան։ Զամն՝ ի 10 ցորենոյ մինչև ց50 խառն ընդ այլ յարմարաւուր դեղորբից։

Էսթրամեթոս տի չիքուեթա, իս։ պաղարբան խիւլասսը, ասէ։ ըստ մեզ՝ գոյացական մասն մոլախնդոյ, որ է բնութեամբ ազգու թմբրեցուցիչ, և աքանչելի, ոչ թարանն

ցէ՝ ի նրբաթել ծակոտկէնս երակաց, լուծէլով զիցանս մարմնոյ. օգտաւէտագոյն է՝ ի դիպուածս կարծրալինդ ուռուցիկ, և խօլեցկանոյ արգանդի. փարատէ և ըզքաղցկեղ, և զվէրս չարաչարիցս, այլև բուժէ զհնաց ուժգինս, և զնոցացաւս, և զարտուցս խուլականս. բայց պարտ է սկիզբն առնել սակաւաքանակ չափու, զրօրինակ՝ ի կէս կշռոյ ցորենոյ մինչև ցմի, և ապա առ սակաւ սակաւ ատիճանաւ առաւելուլ զչափն մինչև ցմի, կամ ցմի և կէս տրամ յաւուրն։

Լանթրանթիս տի բասարպառս, իտ։ ռանկէնոտ խիւլասաս, տՃ. և ըստ մեզ՝ գոյացական մասն խաշնդեղի, որոյ բնութիւնն մեղմապէս լուծողական, զօրատու ստամոքսի, ընդերաց, և մարսողական զօրութեան, և միանգամայն փարատէ զախտս լերդի։ Չափն՝ ի 20 ցորենոյ մինչև ց30։

Լանթրանթիս տի քինս քինս, իտ։ քրնս քրնս խիւլասաս, տՃ։ ըստ մեզ՝ գոյացական մասն քինայի։ Յոյժ հռչակաւոր է՝ ի դիպուածս տկարութեան ջղաց, և ստամոքսի, ծիւրական ախտի, միջնահատական, եռօրեայ, քառօրեայ, և եօթնօրեայ տենդից, մանաւանդ բէռնիչիօգա անուանեալ տենդի. օգտէ նաև ընդդէմ երկաբատաև խօթութեանց, խոնաւ ընչարգելութեան, անգամալուծութեան, լուսնոտութեան, և հոսման արեան։ Չափն՝ ի կէս տրամէ մինչև ցերկու, կամ ցերեք, և կամ ցչորս, զոր յաՃախ՝ ի կիր արկանեմք՝ ի հաստադեղս, և՝ ի մաՃունս։

Լանթրանթիս տի մարթէ արէրթի, կամ մաՃխանէդիս աբէրթիսկս, իտ։ Եւ ըստ մեզ՝ գոյացական մասն երկաթոյ, յոյժ շահաւէտագոյն է ընդդէմ երկարատաև խօթութեանց, սպիտակ տենդի, գաղկան, տխամ ախոնգանոց, նուազութեան ամենական պարտուց կանանց, և ամենակերպ խցանաց մարմնոյ։ Չափն՝ ի կէս տրամէ մինչև ցմի ամբողջ։

Լաուրա կամ էգուլա մինօր, կամ բիթիուսա, կամ բիէնա, և կամ թիթիհմանուա ֆօլիս բինի, լտ։ Էսուլա, կամ էգուլա, իտ։ Ի բոյս ինչ կանթնա բուղիս, յաղագէ թիթիմանլիսի, որոյ ցողունն է Ճիւղալից, և երկայն իբր մի ոտնաչափ։ Տերև նորա ունի զձև տերևոյ սարոյի։ Ծաղիկն փոքրիկ, և դալարագոյն։ Խակ արմատն մանր, և կարմրագոյն, զորոյ կեղևն անջատալ՝ ի վար արկանեն՝ ի գեղորայս, որ է ուժգին լուծողական, և փարատէ՝ քնափուութեան, մտաթափուութ, և այլոց այսպիսի ախտից։

Էսսէնցիա, լս։ Էսսէնցա, իս։ զանգլէ, սհմ։ ը մեջ՝ գոյացութեն կամ էուեն։ է հեղուկ ինչ, հանեալ թորմամբ յինչ և իցէ նիւթոց։

Էսսէնցա սենթենթէռիքա տի լէմոռեն, իս։ Գոյացութիւն այս յոյժ օգտաւէտ ՝ի դիպուածս Ջղային ախտից արգանդի, նուազութեն սմանական պարտուց կանանց, և խթից ՝ի վերայ եկելոց արգանդի կանանց մերձ ՝ի դաշտանն։ Զայս եթէ կամիս կազմել, առ կէս ունկի՝ քառասնեան։ և երկու տրամ՝ սասաֆրէթիտա, և կէս տրամ՝ օլիս վոլաթիլէ տի սասիֆիս. և նոյնչափ օլիս տի ռուեթայլև օլիս տի սուչ չիս. առ և տասն ունկի՝ ալքոհոլ։ Զայս ամենայն խառնեա՝ ՝ի միմեանս, և հան ՝ի սմանէ ղնրբագոյն, և զոգեղէն մասն ցքահան գործեաս։ յետոյ յաւել՝ ՝ի նա մի տրամ՝ քանֆիբրա։ և երկու տրամ՝ քարաջնեաթեռ օլէօզ տի ամենեկաքա, զոր և Թոզցես մեալ այնպէս իբր զաւուրս չորս. ապա քամեա զայն խիտ կտաւով յանեթ ապակի։ Զամին ՝ի 20 շեթէ մինչև 30 խառն ընդ շաքարի։

Էսսէնցա շիլլեթիքա տի քէուբ, իս։ Գոյացութիւնս այս յոյժ շահաւէտ է ՝ի դիպուածս հնչարգելութեն, և ջղգողութեն. որ այսպէս լրբրնի։ Առ կէս ունկի՝ քարաջնեաթեռ տի բօնասաա. և մի լիտր՝ ուչեթեռ շիլլեթիքա. և եդիեա զայս բաղադրութեն այնչափ՝ մինչև սպառեալ կիսոյ մասին նորա, կամ լաւ ևս՝ այնչափ պարտ եփիլ մինչև թանձրասցի զորէն մեզու, յոր յաւել՝ վեց ունկի՝ ալքոհոլ. և Թոզցես մեալ այնպէս աւուրս ենչ. և յետ այր քամեա ՝ի նուրբ և ՝ի խիտ կտաւոյ, և սուբ ախտակրին ՝ի 40 շեթէ մինչև 50 աւուրն։

Էսսէնցա քառմինաթիվա տի վէտէլիուս, իտալ։ Գոյացութիւն կամ ոգիս այս յոյժ օգտակար է սասմբսի, և արգանդի. զի սովաս կազդուրի թուլուեն սասմբսին, և սորին որովայնին։ Ունի և օգտուն մեծ ՝ի բարեկարգել զգործողութեն արգանդի, ՝ի յորդել զդաշտանս կանանց, և ՝ի հեբքել զփուբս ընդեբսց, որ այսպէս բաղադրի։ Առ մի ունկի՝ ծէքսօսաբիս. և մի կէս տրամ՝ կարոֆիանի. և նոյնչափ պաբքէ տի լաուրի. և մի տրամ՝ մաչիս. և երկու տրամ՝ սբօրյգ տի սրանչիա. առ և քարլենս, քարամ սրօմանիքաբ, կալանկա, քամեմիլա, աՆաչի, քարվի, յիւբաքանչիւրոցն երկու երկու տրամ՝ այլև մի և կէս լիտր՝ սբիրիթօ տի չէսարաթօ. և հինգ տրամ՝ սբիրիթօ տի նիֆրօ։ Զայս ամենայն զ՚ի ՝ի թրջոց իբր աւուրս երկոտասան։ Յետ այնորիկ քամեա զայն

խոտ կտաւով յանձնեմ ինչ ապակի։ Ձամն 'ի կէս տրամ մինչև ցմի ամրողջ։

Էսօսմեօսի. գէմիկ շիշն, տՀ։ Ընուամբս այս բան վերաբերեալ իմանի՝ այսուց ինչ ասկերաց։

Էվաքուվամէնեթօ, կամ էվաքուվացիօնէ, իտ։ գուվէթի տաքիկ, արբ։ Նու բան մեզ՝ արատաթորուն, կամ ծորուն հիւմեթոց, և կամ թորուն կզկղանաց. որ է մին 'ի քառասակ կարողութեանց բնութեան, որով ընկալեալ և մարսեալ կերակուրքն՝ թորեալ արտաքս ձգին ՀանՀատ պարհաւ երատանի։

Էսէմա. անուամբս այս նշանակի՝ այսուց ինչ ջալի, և կակուղ։

Էսէմա սարքա. բառիւս այս իմանի ուռոյց ինչ փոքր մի պնդագոյն։

Էսէռա. տես հէսէռա։

Էրուվվան, կամ ռիչենուս ամերիքանուս մինոր, լտ։ Ի մանրասերմն տունկ ինչ ամերիքեան. որոյ տերևն շահաւէտ է ընդդէմ ջրգողութեան, և անդամալուծութեան։

Էրէթռիա թէռռա, լտ։ Ի կաս ինչ պարարտ նման կնքեալ կաւոյ. որոյ կրկին է տեսակ. սպիտակ, և գորշագոյն. սպիտակն առատաւէ ազնիւ է, զոր 'ի վար արկանեն 'ի գեղորայս, որ է արգելիչ արեան հոսելոյ յորովայնէ։ Սա գտանի միայն 'ի էգէթռիա գաւառն, յորմէ կալաւ և զանուն։

Էրիթհռիանուս, կամ ռուպէլլիս, լտ։ պատպիս, իտ։ Ի ձուկն ինչ ծովային երկայն, և ատուար իբր մատանաչափ, արտաքուստ կարմիր, իսկ 'ի ներքուստ սպիտակ. գլուխ նորա է թանձր, ընչացքն կարՀ և սրածայր, բերանն մեծ, որկորն փոքրիկ, ատամունքն միջակ, աչքն մեծ, և փայլուն. թեւիք մարթոյն կարծր, և սայրասուր, միսն փափուկ, համեղ, և գիւրամարսելի։ Սա լի է իւղով և ցնդական աղիւ. օգտաւէտագոյն է ընդդէմ փորհարութեան, տկարութեան ջղաց, և զգայական երակաց, զի է գրգռիչ բնութեան։

ԷրինՀէօ. տես էրինՀիում քամբէսթռէէ։

ԷրինՀիում քամբէսթռէէ, կամ խանիկուս գուիսքուսատամ, լտ։ էռինՀէ քամբէսթռէէ կամ էռինՀէօ, իտ։ դէնկէր, կամ կանդար, և կամ գօռատանէթ, տՀ։ Ի բոյս յաՀանեալ յաւազուտս, յագարակս, և յեղեբս գետոց. որոյ ցօղունն է բոլորանաՀէ, դարձնագոյն, երկայն իբր երկու ռանաչափ, մէջն սպիտակ և հիւթալից.

տերև սորա է լայն, հերձոտ, կարծր, և փշալից. և ի գագաթան արձակէ գնդակ ինչ փոքրիկ, քառակեմերթեան, փշալից, և սայրատուր, յորոյ վերայ եղանէ ծաղիկն սպիտակ, և հինգեթերթեան. արտադրէ սերմունս մանուռս. և ձուռաձև: Իսկ արմատն լայն յոյժ և ըստուար իբր բթաչափ, սպիտակ, և քաղցրահամ: Սա լի է իւղով, և գոյացական աղիս. և զօրութիւն խմիչ, բացողական, և մեզաբեր. օգտաւէտ է ընդդէմ Ջրգողութեան, իսյանաց արգանդի, փայծէղանն, լերդի, և երիկամանց, որով և ապաքինէ զերոքսին նուրբ ախտս, և ծիւրեալ մաշէ զքարն եթէ գոյցէ ի անցս միզի: Հաւն ի 2 տրամ մինչև ցչորս յաւուրն խառն ընդ մի լիտր Ջրոյ:

Էրմիսմուտ, կամ քլէօմէօեթեավիլ, լտ: ալլիսրիա, իտ: Ի տունկ, որոյ ցօղունն բարձրանայ յերկրէ իբր երկու ոտնաչափ, և է կարմրերանգ, Ճիւղալից, և մացուտ: Տերևք նորա նման են տերևոց մանանխոյ: Գագաթն փոքրիկ, և քառակեմերթեան, որ ձևանայ ի ձև խաչի. պտուղն պատենաձև, թամբալիր, բոլորշի, և ուղիղ. և ի միջի պարունակէ զսերմունս մանուռս, և սատակաՀամ ի խորշս խորշս մաշկատեսակս: Իսկ արմատն փայտային, սպիտակ, ստուար իբր մատնաչափ, և տարաՀամ: Սա բուսանի ի քարուտս, և յամայի վայրս. ունի մանանաւոր գործունէութիւն ի բուժել զՋրգողութիւն, յաՆսարել զմանանբրամածութիւն տոզունից, ի գրգռել զմէզն զՇուքս և զարձունս, և ի դիւրահեշտ յօրինել զառուրևառութիւն ընչից: Իսկ սերմն սորա նոյնպէս օգտաւէտ է ընդդէմ Ջրգողութեան, ընչարգելութեան, աքօռպութեաւ, և երիկամնաՀաւեստութեան. զի է խմիչ և մեզեցուցիչ բնութեամբ: Հաւն ի կէս ունկեալ մինչև ցմի խառն մի լիտր Ջրոյ:

Էրմօտաթեթիլօ. տես հեռմոտաքեթիլուս:

Էրմնիա. տես հէգնիա:

Էրմնիօքաս, իտ: տէպպէ, տՃ: Ֆէեթիք: արբ: Եւ ըստ մեզ՝ փոշանակ, կամ ազեթաֆ:

Էրուկս. տես Ակրուկս:

Էրուքա, կամ ռուքա, լտ: ռուքէթթա, իտ: գիրգիչ, կամ գիրգին, կամ կերկիր, և կամ ՃէրՃիռ, արբ: Խոտ ինչ կծուահամ, յորմէ կազմին զաղցան. որոյ կերկինն է տեսակ, սպիտակատերև և կանաչատերև. սպիտակատերևն որ առատ բուսանի յագարակ, առաւել ընտիր է սակս առաւելագոյն կծուոյն որ ի նմա: Երկրորդին սորա ի գործ ածին նաև ի գեղոցայս, որք անօսրին ըՀ-

թանձրամածութեան տողունից, մաքրէն զարիւն, և գիմա-
կալէն սքօռպուԹօվ։

Էրպա. տես հէրպա։

Էրվում, լտ։ ռուպիկլնա, իտ։ սիեահ գէշէնէ. կամ
գառապուռչակ, ռաՀ։ և ըստ մեզ՝ վայրի ոլոռն։ Բոյս
յաՀախեալ յամենայն ուրեք. որոյ ցօղուն է երկայն
իբր երեք ռանաչափ, ՃիւղաՀից, և լայնածաւալ։ Տերևք
նորա երկու բաւանեան ըստ նմանութեան տերևոց ոսպան։
Ծաղիկն փոքրիկ, և ծիրանագոյն, որք ի վեր երևին ի
ծայրս ՃիւղաՀից հանդերձ եղջերաձև առէչիւք։ Յետ ծաղ-
կանց արտագրէ պտու�ան փոքրիկ, ունելով ի միջի սերմն
մանրիկ, բոլորշն։ Լի է սա իւղով, բայց նուազ գոյացա-
կան ազնիւ, և բնութեաբ բացողական, քաղցրացուցիչ, և
մաքրողական արեան։

ԷբսԹրաքԹում. տես էսԹրաԹօ։

ԷբօբրօԹիքա։ Ա.յսու անուամբ իմանի այն տեսակ
լուծողականաց, որ գրգռէ զդիրսս որովայնի, և լուծա-
նէ թեթևապէս սեփական բնութեան, բայց առանց իրիք
ներգործութեան. յայսմ կարգի են՝ արգանակն պարար-
տագոյն մսեղինաց, ձէՀեն ձիթենեաց, իւղն նշոյ. և ն։

Թ

Թաէնիա, կամ թէնիէ, իտ։ նամաղ պուռնու, ռաՀ։
Ա.յսու անուամբ իմանի ազգ ինչ հարթաձև փափուկ և
սպիտակ որդան, որ սովորաբար գոյանայ ի փոր կենդ-
դանւոյ. որոյ երկայնութիւն է իբր եօԹն կամ 12 ռանա-
չափ. իսկ լայնութիւն գրչաչափ. գլուխ նորա գեստեղեալ
կայ ի ծայր ստան, և սիրէ յոյժ զգիՃռութիւն կենդանւոյ.
ուստի բաղում անգամ կուռի սա ի փորոտիս մարդոյ՝
և ծծէ զգիՃռութիւն այնչափ անյագ, մինչև պատՃառէ ի
մարդն զանենդ սաստիկ, զկիրի որովայնի, և ստամոքսի,
զնիհարութիւն, զԹաչկութիւն, զպատրաստ գլխոյ, զցնցումն
մկանանց, զնուազումն սրտի, և զուշադնացութիւն։ Դար-
ձեալ, անուամբս ցուցանի և տեսակ ինչ ձկան ծովայ-
նոյ, որ է երկայն գրեթէ ի չափ հասարակ օձի. գլուխ
նորա կարծր է և ոսկրաւոր. աչքն մեծ և բոլորշի, և
արագաշարժ. դոյն մարԹոյն սպիտակ իբր զարծաթ.

իսկ միան փափուկ և տիսրժահամ, հանդոյն մոյ պողկ պտոմ։

Թիալբա, կամ մուս Թէռուէնուս, լս։ Թալբէ իտ։ դէստոպէկ, տճ։ խիւլթ, սրբ։ դէսրմուշ, սպ։ և ըստ մէջ՝ խլորդ։ Ի տեսակ մի քաղուստան կենդանւոյ ի չամի միան, որ սովորաբար բնակի ընդ երկրաւ. գլուխ նորա տափարակ է ըստ դորտոյ. ունի աչս յոյժ մանուշս, և ղայն փակեալս. վասն որոյ կոչի և կոյր. բայց յորժամ եղանէ յերեսս երկրի, գոյլն ինչ բացեալ լինի, որով և տեսանէ. սուն կարճ, ստուար, սեաւ, և շողշողուն. պարանոցն կարճ, որպէս և սրունք նորա. Թիկունքն լայն. մորթն կարծր, հանդոյն խաղալոյ՝ առ բազում իրս պիտանի. առաջին ոտքն են կարճ, լայն, և ճիրանաւորս, որով փորէ զհող, և առնէ ինքեան Ճանապարհ։ Այս կենդանի լի է իւղով և ցնդական ազիւ, որոյ մարմինն՝ հանդերձ ոսիւք ամենայնցուցեալ և արբուցեալ, լինի դեղ ազգու ընդդէմ բորոտութեան, հաբբեալ, և շնչեալ Թիքա անուանեալ յօդուածացաւութեան, չամին ի 10 ցորենոյ մինչև ց30։ Նոյնպէս ապաքինէ նաև զկոլոդենին, զնոլայթն, զսոդքն, և զայլ սոցին նման դժնեայ վերս, եթէ ըմպելով, և եթէ ի վերայ ցանելով և եթէ։ Իսկ ըստ սիրան ի վար արկանելն ի դեղ փոշանակութեան. այլ որպէս մարմինն և սիրան, նոյնպէս և լեարդ սորին՝ լինի դեղ ընդդէմ ցաւոց և խթից արգանդի՝ առնելոց յապականութեան հիւթոց, և գոլորշեաց. չամին ի գործ արկանելոյ ի 20 ցորենոյ մինչև ց60՝ խառն ընդ գինւոյ, կամ գաղջ ջրով։

Թիամէթէս, լս։ Ցուռնի, որոյ ցօղունն է ուղղալից, երկայն իբր երեք ոտնաչափ, ստուար ի չափ բթամատին մարգոյ, ասլիտակ և ճիւղալից։ Ցերեք նորա նման են տերևոց Թանաչէթուսի, բայց սակաւ մի երկայն և սրաձայր քան զայն, և է պայծառ կանաչ, և շուրջանակի ալոցաձև ատամնաւորեալ։ Ծաղիկքն գեղեցիկ ոսկեգոյն, զաղաչոտ, ստուար, բոլորշի, և ճառագայթաձև. որք փուչնչս փունչս փեթեթն ի գագաթան, հանդերձ երկայնաձիգ առէջևք. ապա բերէ սերմն երկայն, եռանկիւնաձև, և սեաւ։ Իսկ արմատն նուրբ, փափուկ, և թեղալից։ Սա բուսանի ի բուրաստանս, և ի տարարա տեղս. լի է իւղով և ցնդական ազիւ. որոյ տերևն (ըստ ասանց նախնի հեղինակաց) հռացուցեալ և արբուցեալ՝ դեղ է ցաւոց և տկարութեան ստամբքի, որ և լուծանէ զնցանս արգանդի. դրդռեալ զդաշտանս կանանց. այլև

բժշկել զանձդ, զ ջրգողութեն, զերկարատև խօթութեն, և զցնցու�մկանանց։

Թամարինաուս, լա։ Թամարինոս, իտ։ Թամր հինոմ, կամ սուապար, և կամ ֆէֆիֆէլէ, արբ։ խուպեն, պր։ Եւ ըստ մեզ Թարգմանագրի՝ արմատ հնդկաց։ է պտուղ սեաւ. երկայն ի չափ հասարակ եղջեր. Թամրոյց, Թանձր, և Թթու գրեթէ որպէս ղեմոն. ուռի և զկորիզս կարմրեանգս, և ատարարակ, և զ շիլոյս անպիտանս, և կարծրս, մինչև հերձանել և զնոսանս ծաւալոյն. զոր զանգեալ կազմեն ի ձև անուշ. և առաքեն ի զանազան կողմանս, որ է դեղ մեղմապէս լուծողական, Թուլացուցիչ, և զովացուցիչ. և միանգամայն օգտաւէտ է ի դիպուածս փոսախտութեն, մաղասայն տենդոյ, ստամոքսական ջերմախտից, և ատրնամիքէ անուանեալ տենդի, և ի տեղս տեղս նաև ի կիր ալիանեն ընդդէմ փորհաւրութեն, և զայրացեալ Թանչից, չափն ի չորս արամէ մինչև յուն, խառն ը այլ յարմարագոյն դեղոցն։ Ծառս սորա զոր լաանիք կոչեն՝ պղամ բուրիլէ, կամ սիրի. գուցա առասպիրա, մեծ է քան զհասարակ ընկուզենի մեր։ Փայտն կարծր է, և ուղիղ։ Կեղևն Թանձր, ցաւատեալ, և մեծին կանաչ։ Տերևքն խիտ, լայն, պայծառ կանաչ, երկայնականեթ, և գոյն ինչ Թաւիշաւոր։ Ծաղիկքն եւ ութեթեներեան, անհոտ, կարմրանիչ, և երկայնականեթ, որք փուչքս փուչքս ի վեր երևին ի ծայրս ոստոց՝ հանդերձ քրքմագոյն առէլիւք։ Այս ծառ բուսանի ի զանազան տեղս, որպէս ի հնդկաստան, յամրիկէ, և յամերիկա. այլ է հասարակ ընդ ամենայն տեղս։ Կոչի և յանուն պտղոյն գբոիբհէնիքս։

Թամարիսքուս, կամ առպօռ նատալենէնսիս, լա։ Թամարիսքօ, կամ Թամարիշիօ, և կամ Թամէրիչէ, իտ։ Թամառիսք, դզ։ ըլէն ալաՀը, ամ՝ և ըստ մեզ՝ մոշայ։ Է Թուփ յաճախեալ յերկիրս ջերմագունս ի յեգիպտ գեռոց, և ի խնաւուսա վայրս։ Կեղև նորա է յղկեալ, կարմիր ի ներքուստ, իսկ արտաքուստ մոխրագոյն և անհարթ, միանգամայն և գեղ դալկան, ախորդ լերդի և մորեցոց։ Փայտն նման է փայտից նոճի, զոր ի վար արկանեն ի պէտս շինուածոց։ Տերևն փոքրիկ, սուր, պարարտ, և գեղնախառն կանաչ։ Ծաղիկն մանր, ալիտակ և հինգթերեթեան։ Իսկ պտուղն բոլորչի, կարծրանիւթ, և Թաւամազ, զոր ի գործ ածեն ի ներկս սեաւս, նաև ի դեղորայս, որ է լուծիչ խցանաց որգանոցի, փայծէղան, և միջընդերաց, և միանգամայն փարատէ զլուսնո-

տուԹիս, գտնենգա և զնսՀՈՒԹիս պատՀառեալս ՚ի մաղձային հիւԹոց։ Ջնոյն գործունէուԹիւն ունին սորա նաև սերմն, տերևն և փայտն։

ԹամանաՀ, լտ։ Բոյս անտառային, որ արձակէ զբաղումս բարունակս նուրբս. զամենայնիս զոր գտանէ պատատի։ Տերևք նորա են մեծ, սրտաձև, պայծառ կանաչ, խժահամ, և երկայնականԹ։ Ծաղիկն փոքրիկ վեցանկիւնի, և գեղեցիկ, որ ողկուզորէն փԹԹի առ կանԹիս տերևոյն։ Պտուղն բոլորշի, և մԹին կարմիր, ունելով ՚ի միջի սերմունս մանուանս. իսկ արմատն մեծ, բոլորշի, սեաւ, պալարաւոր, և տոպահամ, յորմէ կազմեն գեղ ընդդէմ միզարգելուԹիւն և ջրգողուԹիւն։

ԹամամԹա, կամ սօրխոռ, լտ։ Զուկն ինչ ամերիկեան, որ ՚ի գլուխս իւր ունի ինչ նման գլխարկի կամ վահանի, ունի ևս երկուս մաղս կարծրս և երկայնաձիգս, որք զորէն մարուաց կախեալ կան յերկուց կողմանց առ ծնօտիւք. աչք նորա գեղեցիկ, այլ յոյժ փոքրիկ գրեԹէ ՚ի չափ սերմանն մեկնոնի. երկայնուԹիւն նորա ՚ի գլխոյ մինչև ցծայր ձեռայն է իբրև մի և կէս քիլ։ Թեւիք մորԹոյն մանր և երկայնաձև. իսկ միսն համեղ, և դիւրամարսելի, միանգամայն և օգտակար գեղ ընդդէմ միզարգելուԹիւն։

ԹամնաչէԹում վուլկարէ, լտ։ ԹամնաչէԹօ, իտ։ ԹամնեԹղի, գաղղ։ Ի բոյս հոտաւէտ, դառնահամ, և համեմային, որ յաճախ բուսանի յեւրոպիա յագարակս, և յարտորայս իբր երկու ոտնաչափ բարձրուԹիւն, որոյ տերևն, ծաղիկն և սերմն են գեղք օգտակարք ընդդէմ ջղային գԺուարամարսուԹիւն, արգանդային ջրգողուԹիւն, միջահատական տենդի, և ակարուԹիւն ջլոց. զի է խԹիչ բնուԹ։ և ՀՀՀՀՀՀՀՀՀ։ Զարմն ՚ի վեց տրամի մինչև ցուԹի խառն ընդ մի լիտր ջրոյ։

Թասսօ, իտ։ Թաքսուս պաքքաԹ, լտ։ տան տիւ լիսն, գաղղ։ և բոտ մեղ՝ գեղձ։ Ի մշտադալար ծառ ինչ եւրոպիոյ. որոյ տերևն նման է տերևոյ եղևին ծառոյ։ անկոտ է և դառնահամ, և չափազանցն մահաբեր. յորմէ կազմեմք գեղ ազդու ընդդէմ բորբոքզգայական ԹուԹեց, փոզաչաւուԹիւն, կշտացաւուԹիւն, և բորբոքման կրծոց, զի է ԹուլացուցիչՀ, և ցրտացուցիչՀ բնուԹիւն։ Զարմն ՚ի վեց ցորենոյ մինչև ց30, վեց անգամ յաւուրն։ Ծաղիկն սպիտակ և եղերսեղերձ։ Պտուղն գնտակաձև, փափուկ, կարմիրանգ, և հիւԹալից։

ԹարանԹուլա, կամ ֆալանկուում արուլում, լտ։

թառանթօլա կամ թառանթէլլա, իտ. օվա էօրիմ-ձէլ, տձ. Ի տեսակ մի թռչնաւոր սարդի իբրև ի չափ գիտարոյ, գոյն նորա գորշ, ունելով ի վերայ սպիտակ, սեաւ, և կանաչ բիծս, և քիչուշ մազս. զգլուխն ունի ի կուրծս, յորոյ վերայ են աչք ուրթ թռուով, չորս մեծ, իսկ չորս փոքրիկ. ունի և նոյնպան ոտս յօդաւորս, և շղթայփիւռս ըստ պղտիպտի. յորոց առաջինքն կարճ են քան զետինս. իսկ ի բերանն ունի երկու ատամունս մանուռնս, և սեաւս, և սայրասուրս: Լինի սա ի բոլոր խաւլիս. այլ թիւռալիր և միասակար քան զամենեսին է՝ որ լինի ի թառանթօ կոչեցեալ քաղաքն ի փուլիա, յորմէ կալաւ և զանուն. վասն որոյ հաւելաքն ի նմանէ առնին զպէսպէս մոլեգին շարժմունս, զի ոմանք գոչեն, հաստչեն, և կականին, և ոմանք մտաթափին, տրամին, և լռեն, իսկ ոմանք հրձուին, ծիծաղին, և կաքաւեն: Պատճառէ ի հարեալն և զպիտրութեն սատմբսի, զդողդողումն, զդժուարաշնչութեն, զբորբոքումն, զգլխացաւութեն, զսրտացաւութեն, զտաղպագին տենդ, զքնարուել, զպտոյտ գլխոյ, զնուազութեն տեսութեն, զդալուկն, զյօդուածացաւութեն, զդալարումն ջղաց, և մկանանց, զցուրտ քիրան, և զմաղձ ժայթքեցուցանեն. և եթէ ոչ դարմանեսցի, ի սուղ ժամանակի զուարն ի կենաց: Իսկ սովորական դարման, և գեղ ապաքինութեան նոցա՝ են էուրթիւնն եղբոյրսի, գաւաթն մարդոյ, և ամենատեսակ ցնդական աղքն. զոր օրինակ ասն իբրի. եղջիւրն եղջերուի, են, այլ մանաւանդ նուազարանք, զի ի ձայն նուազարանաց կաքաւեալ ը երկար քրանին, և զուարթանան, որով և ապաքինին: Սորա է տեսակ ինչ կոչեցեալ ի բարբառ արաբացւոց շէպէտ կամ բաթայիլ. զոր պարսիկք անուանեն՝ զուռնտա, իսկ տաճիկք՝ պիլ. որ լինի չարաթոյն քան զամենայն ազգս թռչնաւոր սարդից, որ ի խայթել իւրում թէ ոչ առժամայն, սակայն փուռթով և անվրէպ սպանանէ: Բայց բնակիչք երկրին ունին և զդեղթափ սորա. որ է աղքն իշոյ. զոր եթէ նախ քան զանցանելն քառորդ ժամու դիցեն ի վերայ խայթուածոց, բժշկին ի թռչնոյ անտի: Ա՛յս տեսակ մահաբեր սարդի՝ յաճախ գտանի ի վերին Եգիպտոս, ի քարուտս, և ի խոնաւուտս, որ գրեթէ ամենայն իրօք նման է վերնոյն, բայց ունի զգոյն սեաւ:

Թարասասաբ. տես էշոնթօսուտ թառաքասքում:

Թարթարուկա, տես թէսթուռնօ:

թարթարում, լս։ թառաթառս, իս։ տօրթոու, կամ տուրդի, և կամ չէրսայ առտիչէսի, տմ։ գլուխ, կմ կիւստուխ, կամ տիւրսի, արբ։ գիւնձայ, կամ գիւնձարէ, կամ ձէղոէր, կամ սէվլաթ։ և կամ տիւրթ, պր։ և ըստ մեզ՝ տորտ։ Է գոյացական մասն կամ լաւ և՝ մրուր գինւոյ, որ 'ի մէջն չընչաղատն անօթոյ գինւոյ պլնդանայ, և կարծրանայ։ Եւ են սորա երկու տեսակք. սպիտակ, և կարմիր։ սպիտակն որ առատ եթանէ 'ի բօջնիա, և 'ի գերմանիա, առաւել ընտրադոյն համարեալ է, է, զի է բիւրեղանման, և կարի տատպահամ, զոր արշնատաւորք 'ի վար արկանեն 'ի զանազան գործս, որպէս և մեք 'ի դեղորայս։ որ է փարատիչ խցանոց, և միզարգելութեան։ Զարմն 'ի կէս տրամէ մինչև ցՅ։

թարթարում էմէթիքում, կամ թարթարում սեթիպիսթեռում, լս։ թարթարս էմէթիքս, կամ թարթարս սեթիպիսթեռս, և կամ սսիթիռաթառաձեռ տի սենթիմենթիս է տի բօթաստա, իս։ տորթոու քուստուրուձու, տմ։ և ըստ մեզ՝ տորտ որձացուցիչ։ Է սպիտակ փոշի ինչ անհոտ, և տատպահամ, բաղադրեալ 'ի յուռնաքարէ կամ յանթիմոնէ, և 'ի տորտոյ։ Կրկին է ներգործութիւն սորա. զի եթէ ոք արբցէ 'ի տմանէ երկու կամ երեք, և կամ չորս ցորենաչափ, յետ քանի ինչ վայրկենի որձացուցանէ և լուծէ աստակաւէս. իսկ եթէ առցի սակաւաքանակ, (զորօրինակ 'ի կէս կշիռ ցորենոյ մինչև ցմի տրիողջ) յայնժամ լինի դեղ դրգռիչ, ընկլուզիչ, և մեզմասէս լուծիչ։ Եւ զայս դեղ որձացուցիչ նախաւանդեալ չափով կարես 'ի կիր արկանել ամենայն չափահաս արանց, և կանանց 'ի հարկաւորութեան ժամանակի. և տհասեցն կիսոյ մասն, իսկ մանկանց՝ երկրմենից չորրորդ մասն, այլև երախայից՝ վեցերորդ մասն բաւէ։ Գիտելի արժան է ասասէն, եթէ զայս դեղ որձացուցիչ ոչ միայն 'ի վար արկանելոյն առ 'ի մտքրել զստամոքսն յաւելորդաց, 'ի դրսէ, 'ի թանձրամած տաղուանէ, և 'ի սուբ մաղձից, այլև միանգամայն առ 'ի ցնցել, 'ի սեղմփեցուցանել, 'ի ըզգաստացուցանել զզրմէն կենտական և զեմբրեալ մարմինն, և 'ի զուարճացուցանել զսիրտն, և առ 'ի անքոյթ, և բացարձակ ճանապարհ յարդարել շնչանաց արեանն։ 'Ի գործ ածեմ ես յոլով անգամ զայս դեղ՝ իբր որձացուցիչ 'ի դիպուածս ստամոքսական կամ մաղձային տենդի, նա յաւէտ յարժամ 'ի վեր երեւին նոցանք ստամքաս, և փսխումն 'ի սկզբան անդ ախտս. և չէ օրէն դանդաղկոտութիւն, կամ ղանցատութիւն անցուցանել զժամանակ. ապա թէ ոչ՝ խառնեալ ախտաբեր հիւթին ընդ ա-

բեան, և տարծաեալ ընդ բովանդակ մարմինն՝ վերնպակս մեծ գործէ։ Նոյնպէս և օգտաւէտ է ի գիպուածս բազմակերպ տենդից, և Ջերմ ախտից։ Երբեմն ևս ի կիր ածեսցեմ զոսկ՝ ի գնալուածս լեռնեն և չափազանց ագահութեան զարկի բաղկի, ի հոմանեաս արեան, ի ցաւս գլխոյ, յախտս լերդի, և յարբու

ժամ պարտ է լինել ստիպաւոքանակ. այսինքն՝ ի քսան կշիռ ցորենոյ մինչև ցկ40 յաւուրն։

Թարթուփօ. տես Թուպերա։

Թարուօլօ։ այսու անուամբ խմանի՝ քաղցկեղն առնայ ցի անդամոց։

Թաքթուս, լտ։ Թաթթօ, կամ Թօքքօ, իտ։ դուռ, Թի լամիսկ, արբ։ ըստ մեզ՝ շշաւիւլիք. կամ շշաւական կարողութիւն։ Այսու անուամբ նշանակին ջիղք առ հասարակ սիրեալք և ճապաղեալք ընդ բռնանգակ մարմնոյն. մինչև ուր ոչ գտանին ջիղք, անդ և ոչ շշաւիւլիք. յորս կատարի զորութիւն շշաւիղական մինչնորդուն մոց և մարթոց։

Թաքքամաքքա, կամ Թէքքումաքէա, լտ։ Ի խէժ յաճախեալ՝ ի հնդիկս կանաչախառն գեղին, գիւրաւառ, ախորժահոտ, և գառնահամ. յորմէ կազմին սպիտանի ազգողական ընդդէմ ինձիթմէ պէնի անուանեալ վերաց, և կարծրապինդ այսուցիչ։

Թէ. տես զբառն Թէհ։

Թէնէզմօ, իտ։ նիք, ՠՃ։ ԹօՀլ, արբ։ և ըստ մեզ՝ խիթք սրբանին։

Թէնէրումէ. տես քարթիլակօ։

Թէնիկ. տես Թաէնիա։

Թէնտօ, լտ։ Թէնտիսկ, իտ։ ըստ մեզ՝ ձգանք, որ է սպիտակ մասն ենչ՝ ի ծայր մկանանց։ Ադ՝ ձգանքս այս խրեալ կայ յսակր, կամ յայլ ինչ պնդակազմ մասունս առ՝ ի ձգել զնոսա՝ ի մկանն կողմն, կամ՝ ի սկիզբն մկանանց, որով ուժգին և բուռն գործէ զչարժումն, որպէս սի են այնք մասունքք, որք լարատեսակ երևին՝ ի բազուկս և՝ ի ձեռս։

Թէռմոսիտօ պիանքօ տի պիսմուԹօ. տես Զբսի ալպուտ։

Թէսաքրինուտ, լտ։ Ծառ. փոքրիկ, յաճախեալ յերկերս ջերմագինս. որոյ կեղև սպիտակ է և նուրբ։ Ունաք նորա երկու երկու բուսանին առ միմեանս։ Տերևքն երկայն, բոլորակ, ծամածուռ, ատամնաձև, և գառնահամ. գոյն նոցա՝ ի վերին երեսս սպիտակ, իսկ՝ ի ներքոյ մթին կանաչ. ծաղիկն սպիտակ, և որկորաձև։ Սորա տերևք ունին զգործունէութիւն՝ ի բուժել զախտս փայծեղան, և՝ ի մեղմել զչարութիւն թունից։

ԹէսԹուՃՃինէ. տես ԹէսԹուտօ։

ԹէսԹուտօ, լտ։ ԹէսԹուՃՃինէ, կամ Թարթարուկա, իտ։ շիլանա, կամ քինօլա, յն։ զահլեփէ, կամ է-

թեում, կամ թահռա, կամ պէնթիթատաք, կամ սիլ-
լէհիթա, և կամ ռաքը, արբ։ դէշվ, կամ դէշտիւք, կամ
լաքբիշտ, կամ խուշուք բիշտ, կամ չիւլլիէլ, կամ պա-
խա, կամ սէնկի բիշտ, կամ սէնկի բստա, և կամ տի-
քանէ, պր։ թեստպաղա, կամ գասպլուսմպաղա, տՀ։ և ըստ
մեզ՝ կրնայ, կամ կրայ։ Ի կենդանի յամրաշարժ, որոյ
մարմին փակի՝ ի դաշտաձև պահպանակ կարծրակուռ, ԸՆ
որ երբեմն արտաքս ելանէ, և երբեմն՝ ի ներքս ամփոփի։
գլուխ նորա նման է օձի, կամ գորտան։ աչքն փոքրիկ,
շրթունքն նուրբ, և եղերք նոցա սղոցաձև ատամնաւոր-
բեալք։ ունի երկու ատամունս, չորս ոտս, և ձեռ կարճ։
Մին սորա եփեալ՝ ի ջուր, և արբուցեալ, դեղ է օգտա-
կար՝ ի դեղուածս ախտից կրծոց, թոքաժեռուելոյ, և
ապրկանուելոյ արեան։ Արիւն սորա ջրայցուցեալ և փո-
շիացուցեալ, ընկի դեղ ազգու ընդդէմ ուրկուելոյ, ան-
գամալուծուելոյ, լուանտուելոյ, և բորոտուելոյ։ Չափն
՝ի գործ արկանելոյ է՝ ի 20 ցորենոյ մինչև 30։ Բայց յա-
ռաջելիք արժան է քանի մի ամիս։ իսկ ձու սորա ունի
զմանանաւոր գործունէութիւն՝ ի դեղուածս սառուցի, մանա-
ւանդ ամրձեաց, զոր մարթ է՝ ի կիր առնուլ եթէ՝ ի
ներքուստ կլանելով, և եթէ արտաքուստ օծելով։ Եւ են
սորա երբեակ տեսակ, այսինքն ցամաքային, ծովային, և
լճային։

Թէսսուլեթօ չէլլուլարէ։ Ասսու անուամբ ըստ անդա-
մագնեաց ցուցանին թելք խորշային, կամ անդամային
հիւսուածոց, գոյացեալ՝ ի բաղմագան թելից, որք հա-
զորգին ընդ իրեարս։ այսու մեսամբ շրջապատին ամե-
նայն գլխաւոր մասունք մարմնոյ, և ամենայն մանրաթել
երակքն, յորոց գոյանան այսոքիկ վերոյիշեալ գլխաւոր
մասունք։

Թէրէպէնթիհինա, լտ։ Թեռէմենթինա, կամ Թէռէ-
պենթինա, իտ։ Թիրմենթին, տՀ։ եբիլպուլեթում, կամ
սակուլպուլեթում հատպլը խատիա արիպէնասիպ, պր։
և ըստ մեզ՝ խէժ բեռեկնոյ։ Ի հեղուկ Թանձր, խոյայ-
լին, փայլուն, ատտրի կպչուն, Թափանցիկ, և դիւրա-
վառ, որ՝ ի հուր մերձեցուցեալ ուժգին բորբոքի։ Եւ է
սորա երկու տեսակ. առաջին տեսակն կոչի՝ ի բարբառ
լատինացուցոց՝ Թերէբենթինա վենեթիանա, որ է սուսնայ-
լին, Թափանցիկ, սպիտակ, ատտակահոտ, և ատտաՀամ,
որ սովորաբար բղխէ՝ ի բռնոյ բեռեկնոյ։ Իսկ միւս տե-
սակն կոչի՝ Թրէմենթինա տի շիօ. որ է մածուցիկ, սա-
կաւահոտ, և փոքր մի ատտաՀամ. գոյն նորա երբեմն

գեղին է, և երբեմն սպիտակ երբև զոյակի։ Երկոքին սոքա առատ են իւղով, և ցնդական ոգիս, և բնութեամբ թուլացուցիչ, և միզաբեր, որով ապաքինեն զսերմնաթափութիւն, զերիկամնաձգտութիւն, և զվիզդողութիւն։ Զայն ի կէս տրամէ մինչև ցմի։ Այլև մանրեն զվէրս շարաւալիս։

Թերիաքա, տես Թէերիաքա։

Թերիաքա անտրոմաքի. տես Թէերիաքա անտրոմաքի։

Թերիաքա տիաթէսսերօն. տես Թէերիաքա տիաթէսսերօն։

Թերրա, լս։ իլիս, յն։ Թուրապ, կամ ափէռ, կամ տալեթ, և կամ գայս, սրբ։ խաբ, կամ Թէհք, պլ։ Թօրաք, տՀ։ և ըստ մեզ՝ հող։

Թերրա բաթնէ, լս։ Ի հող ինչ պարարտ. թխախառն գեղին, և անհամ ըստ նմանութեան կնքեալ կաւոյ. բնութեամբ է սեղմիչ, որով և արգելու զհոսումն արեան, և զսիրտարութիւն, և միանգամայն քաղցրացուցանէ զԹուութիւն հիւթոց, չափն ի 8 ցորենոյ մինչև ցմի տրամ։

Թերրա եաբենիքա, տես Թերրա քաթէքՀում։

Թերրա լէմնիա. տես Թերրա սեղիլլաթա։

Թերրա մերիթա. կամ քուբքումա օֆիֆիչինարում, և կամ քուբքումա լուՀնկա. լս։ քուբքումա կամ Թուբքումակլիս, խս։ զերեչաս, տՀ։ զերտեկ չէօբ, պլ։ ուբքուսսանն կամ գուբաս, և կամ վերս, սրբ։ և ըստ մեզ՝ քրքում հնդկայն։ Ի արմատ գեղնագոյն փոքրիկ, որոյ ձև նման է կոճապղպեղի, այլ կարծր քան զայն։ Սովորաբար բուսանի ի բաղում տեղիս արևելեան հնդկաստանի։ Ընտիր համարի եթէ իցէ Թանձրանիւթ, ծանր, և մսքուր, միանգամայն և ատտիկ գեղնագոյն իբր քրքմատեսակ. զոր և վարեն ի պէտս գեղին ներկի. Նաև ի գեղոցայս, որ է գրգռիչ և միզաբեր բնութեամբ, որով գրգռէ զմէզն, և զդաշտանն կանանց։ Եւ ըստ մանոյ՝ փարատէ և զդալուկն, զլացանս լերդի, և փայծեղան։ Այլև բուժէ զվիզդողութիւն, զտենդ մինչահատական։ Չափն ի կէս տրամէ մինչև ցերկու խառն ընդ մի լիտր ջրոյ։

Թերրա սեղիլլաթա, կամ Թէռռա լէմնիա, լս։ Թիլնիմանիում, սրբ։ խաքիմանիում, պլ։ և ըստ մեզ Թարգմանագրի կաւ կնքեալ, կաւ պարարտ նման ճաբապոյ, մինչև յատատունս մածանիլ ի ծաղքեն՝ առանց ինչ ունելոյ աւաղ. բայց և գիւրաթափելի է և անհամ, որ ըստ ասելոյ ոմանց՝ գոսանի միայն յիլիմիա կոչին. այլ Նիքքօլա Լէմ ասէ՝ Թէ գոսանի և ի գերմանիա, և ի

պլօխա գաւառն. գոյն նորա է դեղին, բայց լինի և սպիտակ, և սպիտակ և կարմիր. բնութիւն է սեղմիչ և գիացուցիչ. որով յինքն քարչէ զտոմիս խոնաւուն ստամոքսի. ուստի և վասն այսր յատկուն սնդացուցանել զորովայնն և արգելու զարդուառատ հոսումն արեան. այլև բան ոմանց՝ ա-պաքինել զսերմնահեղութիւն, զվիրհարութիւն, և զՇիթօր սպանչի կոչեցեալ տիսան կանանց, և մեղմ զդժնէուութիւն թուտից: Չափն ի 10 ցորենոյ մինչև 40:

Թէբրա քաՀէբուտ բրէքարաՀուտ, կամ աքաչխա քաՀքուէ, լա: աքաչչխա, կամ Թէբրա քաՀէՀքու բրէքարաՀԹօ, իա: դէՀատ հինարի, ՀՀ: դէՀվէՀ, պր: գիաՀ, աբբ: Ի հող, կամ կաւ ինչ բաղադրական, կազմեալ ի բաղնատեսակ նիւթոց. բնութիւն է սեղմիչ, որով արգելու զարդուումն օրովայնի, զվիսխումն և զՀքանումն արեան, և զգաղջահոսութիւն ընդդ և բերանոց. այլև օգտէ ընդդէմ վիրպակաց ձայնի, զոր պարտ է ուտել ի բերանն, և ի լուծանելն կանանէ. չափն մի տրամ ամբողջ: Կոչի յիտալացւոց նաև Թէռռա եարծնիբար:

Թէբրա ՀիօլաՀԹա տի ԹառԹառօ, կամ օսխաչէԹաՀԹ տի բօՀասաա, իա: սիրքէ Թուզա, ՀՀ: Ի սպիտակ և սրագաՀակ աղ ինչ կՀոզական, կազմեալ ի բարկ քացանոյ, և ի աղ տի ՀարԹարօք: Ցոյժ մասնաւոր է առ բա գործունէուն ի դիպուածս խցանաց միջնընդերաց, միզարգելութեան, ջրգողութեան, գարշան, սխտնգանտուութ, յօդուածացաւութեան, Թանչից, մոլեգնութեան, և այլ սոցին նման տեսից առՀելոց ի գրգռութեանէ և ի զորութեանէ բնութենն. զի է Թուլացուցիչ, և միզաբեր: Չափն ի 40 ցորենոյ մինչև ցերեք տրամ՝ ի մէջ բան և չորս ժամուց: Ա յլ և ցրուէ զուռոյցս ամորձեաց՝ օծանելով նեՀեթ զայն:

Թիղիքէչցա տանս էՀԹիղնա:

Թիղիքէչցա նէՀէվօզա տանս հտ. ա. երես 168:

ԹիԹի հիմարուս, լա: ԹիԹիմակլիս, կամ ԹիմակլիՀ, և կամ ԹիԹիմարօ, իա: սրիսս, կամ սիսաս, յն: սիսաՀլիչէն, ՀՀ: եէՀԹու, կամ չէվիսի, աբբ: սուսրէնԹ, կամ չէբուէմ, պր: Ի տունկ ինչ բաղնատեսակ. յորս երևելի են երեք տեսակք. առաջինն կոչի ԹիԹի հիմարուս հիլիօսբօրուս, որ յաՀմախ բուսանի յեւրոպիս, արձակելով ի միոյ տրամաց զբաղում շառաւիղս կաՀնալիս, զոր ի հատանելն ուրեք՝ ծորեցուցանեն զկաթն: Բերէ տերևս վոքրիկս, բոլորակս. կարմրախառն կանաչս և կաՀնալիս: Երկրորդն կոչի ԹիԹի հիմարուս չիբարուս. որոյ տերևն չէ ինչ տարբեր ի տերևոյ վերնոյն: Ծաղիկն

կարմիրանագ, և բոժոժաձև. պտուղն եռանկիւնի և ոժգոյն գեղին: Բերէ և սերմունս բոլորշիս: Ունի արմատս երկայն, ստուար, և բազմաթել: Իսկ երրորդն անուանի՝ Թիթեղհմայուս բալուստրիս, որ քան զամենեսին երկայն է և կարմրագոյն: Տերևն մթին կանաչ, երկայն, և յոլովաբաշխ: Ծաղիկն գեղին, մանր, և փնջաւոր: Պտուղն եռանկիւնաձև, և պաղպաղաւոր: Իսկ սերմն բոլորշի, և սպիտակաթամբ: Երբեմն սոքա արձակեն զհոտս զաղիրս յաւուրս ջերմութեան ամառան. և ի հատանելն բրեցուցանեն զկաթն փաղաղիչ, զորս դիւրագիտք ի կիր առնուն փոխանակ խարանագեղոյ: Կաղմեն և ի տերևոց սոցին զհոտս ժայթքեցուցիչս, և լուծիչս. ուր և աւանդեն՝ եթէ է յոյժ օգտակար ընդդէմ ջրգողուեց. չամին ի գործ արկանելոյ է ի 12 ցորենոյ մինչև 32 և:

Թիվիլա էուռօբէա, լտ: Թիլիս, իտ: Թիյլեէօլ քօմէօն, գրզ: աթիլսն կամ ֆիլամուբ, յն: օհլամուբ, տճ: սիրզ ֆիֆ, արբ: Ի ծառ մեծ, և շքեղ, ոստալից, և լայնատարած, որոյ կեղևն գիւրածալ, գիւրակոր, արտաքուստ թուխ, իսկ ի ներքուստ սպիտակ հարեալ ի գոյն գեղին. միանգամայն և գեղ շահաւէտ ընդդէմ խցանաց արգելոցն, և կաղուածոց դաշտանի կանանց: Փայտն սպիտակ, և դիւրատաշ, զոր սահեպ ի վար արկանեն ի պէտս շինուածոց: Տերևքն լայն, բոլորշի, ծայրատուր, թաւիշաւոր, շողշողուն, և շուրջանակի ատոցաձև ատամաւորեալք. գոյն նոցա ի վերին երեսս կանաչ և փայլուն, իսկ ի ներքոյ փոքր ինչ սպիտակ: Ծաղիկն եղանակ առ կանթիռ տերևոյ, և է մանր, փնջաւոր, հինգթերթեան, և ազնուահոտ. միանգամայն և՝ գեղ ազդու ընդդէմ սակրուեթեն ջաց, երկարատև խօթուեթեց, ցաւոց գլխոյ, անդամալուծութեան, ախտի ցնցականի. զի է մեղմացուցիչ, և խթիչ բնութեամբ: Իսկ պտուղն բոլորշի, ստուար, կարծր, և թաւիշաւոր, ունելով ի միջի սերմունս քաղցրահամս: Այս ծառ յաճախս բուսանի յեւրոպիա, յանատոլս, և ի բուրասանս: Լի է ցնցականի ազիւ և իւղով: Չամին ծաղկան մի տրամ ընդ ութ ունի ջրոյ:

Թիմանեթեթ, յն: խորօթիզնա վէնեթօզա, իտ: Ի ախտ ինչ փքագողուեն, կամ փքալից ջրգողուեթեն: Ջրամէ տես հա. ա, գլ. ժը. երես 222:

Թիմբանուամ, լտ: Թիմբանս տեղ՝ օրիգբիս, իտ: գուլաք բերաէսի, տճ: բատ մեզ՝ Թմբուկ ունկան: Ի ներքին մասի ինչ ունկան, որ է գլխաւոր գործարան լսելոյ:

Թինենուրա, իտ։ Ի անուն ընդհանուր՝ որով նշանակի՝ գոյն հանքային նիւթոց կամ բուսոց՝ ելուզեալ որ-տաքս ի ձեռն ոգեաց, կամ գինւոյ, և կամ յն և իցէ հեղուկաց, որ ըստ տաՀկաց ասի ռուհ, և ըստ մեզ՝ ոգի բժշկական։ Իսկ ըստ լատինացւոց՝ Թինքթուռա,

Թինենուրա լիսսիվիալէ տի վօլէռ., իտ։ Ի ոգի ինչ բաղադրական շահաւետագոյն ի գիպուածս անհնարին հիւծուելնէ, խցանաց մատնաց, գիժուարամիզութեան, և սերմնակալութենէ։ Զայս ելեալ կամիս յօրինել, առ վեց ունկի՝ Ճէնցիանա, և երկու ունկի՝ աքօռցօ տի առանչիա, և տասն և հինգ ունկի՝ տալուսմ տի ֆիէչիա, այլև ութսուն ունկի՝ ջուր եռացեալ։ Զայս ամենայն արկ յանօթ ապակեայ իբր աւուրս երկուս, յետ քամելոյ՝ յաւելՀ ի նոյն երկու ունկի՝ ալքօօլ։ Ի հեղուկէ տասի տուր ըմպել հիւանդին երկու կամ երեք անգամ յաւուրն՝ զկշիռ մէոյ տրամոյ։

Թինենուրա մառեթէ տի լուտովիք. տես ֆիէռռօ, կամ քէհալիպս։

Թինենուրա մառցիալէ. տես ֆիէռռօ։

Թինենուրա նէրվիսս Թօնիքա տէլլա ֆարմաքօբէա տի պէրլիսս, իտ։ Ի ոգի ինչ բաղադրական, օգտաւէտագոյն ի գիպուածս տկարութենէ տատմաքսի, և տիսի ջղաց, որ ոչ այսպէս կազմի։ Ա՛ռ մի և կէս ունկի՝ վալէրիանա, և նոյնչափ՝ մէնեթա բիպէրիթա. և մի ունկի՝ քասիօռօ. և կէս ունկի՝ քրօքօ։ Զամենեսին զսուտ պարտ է լսել, և արկանել յապակի անօթ, կամ ի շիշ. յաւելլով ի նոյն երեք լիտր՝ ալքօօլ, և մի տրամ էսանիցիա տի մէնեթա։ Ցեռ հինգ աւուրց, քամեա զայն կտաւով յայլ շիշ։ Զամին ի 20 շեթէ մինչև ց30։

Թինենուրա նէրվիսս Թօնիքա տի պէսթուբէհէի, իտ։ սինիրլէրթ գուվէթ ռուհու, տՃ։ ըստ մեզ՝ ոգի զորաստու ջաց։ Ոգիս այս է յոյժ ազգու, և գործունեայ ի գիպուածս տկարութենէ ջաց, տխտնդանոտութենէ, տխտի ցնցականի, և երկարատև խօնութենէց։ Զամին ի 20 շեթէ մինչև ց30 խառն ընդ սր և իցէ հեղանիւթոց։ Զայս կազմեն ի խարտաշոյ երկանոյ, ի ուչիսս մուրիանիքօէ, ի էթէռէ սուլֆիօրիքօէ, և ի ալքօօլէ։

Թինենուրա սաքռա, իտ։ Ի ոգի ինչ դառնագին, օգտաւէտ ի գիպուածս ջղային գիժուարամարսութենէ, դողդոջման և տկարութենէ տատմաքսի։ Զամին մի դրդալ սեղանոյ յաւուրն ի պահ առաւօտուն։ Զայս ելեալ կամիս յօրինել, առ ունկի մի՝ ալօէ, և մի «չամ՝ բէրբէ տէլլա

Ճիանենիքա, կամ քարտամոմ, և Նոյնչափ ցէնցէրս։ Զայս ամենայն փոշեացուցեալ արկ յանօթ ապակի կամ ի շիշ. և հեղ ի վերայ ութ ունկի՝ վենս տի սպանիս. այսինքն գինի սպանիս։ Զկնի ութ աւուրց քառեւն զայն խիտ կտաւով յայլ շիշ։

Թինեթուրա սեօմամեիքա, իտ։ միտէվի ռուհ, ամ՝։ ՝ մեզ՝ ոգի սատանաային. որ է դեղ ազդողական՝ ի դիպուածս տկարութեան սատանքսի, Ջղային դժուարամարսութեան, եռաբեայ՝ և քառաբեայ տենդից, վբախտութեան, և երկարատև հիւանդութեց։ Զարմն մի դրդալ քաղցրաւենուց յաւուրն՝ ի ծոմուտա։ Ի կաղմել զայս ոգի, առ ունկի մի՝ քաղամ առօմամեիքս, և Նոյնչափ ՃԷնցիանա, քինաբենա, քօռեթէքս տուրանցիօրում, սօմիլեա տի ՃԷնեթուրէա միտօրի, սէմի տի քարտոսանեթս, յիւրաքանչիւրոցն երկու ունկի. այլև ունկի մի լիմամեուռա տի ֆիէռռօ։ Զայս ամենայն լռսեալ արկ յանօթ ապակի, յաւելլով՝ ի նոյն երկոտասան լիտր սպիտակ գինի։ Եւ յետ թողլոյ զայն աւուրս երիս, օրէն է քամել յայլ անօթ ապակի։

Թինեթուրա վօլամեիլէ տի կուաեաքօ. տես Թինեթուրա տի վօլամեիլէ տի կուաեաքօ։

Թինեթուրա տի բասպարարօ ինկլէզէ, իտ։ ռամէնտա ռուհռու, ամ՝։ բատ մեզ՝ ոգի խաչնդեղ։ Որ է դեղ ազդու ընդդէմ տկարաւեն սատանքսի, և ստորին որովայնի, և փորհարաւեն, միանգամայն նպաստիչ մարսողական զօրաւեն, և հալածիչ վբոց։ Զարմն՝ ի ջրոս տրամ մինչև յուեթ խառն ընդ հեղանիւթոյ։ Եւ կերպն՝ ի յօրինել զայս ոգի։ Ընկալ երեք ունկի՝ բասպաւպառօ, և կէս ունկի՝ սէմիբարտամոմ։ Զայս երկու նիւթս լռսեալ արկ յանօթ ապակի, յոր յաւել երեք լիտր և մի ունկի ալքօօլ. և թող այնպէս իբր աւուրս ութ, և յետ այնր օրէն է քամել խիտ կտաւով յայլ անօթ ապակի։

Թինեթուրա տի դուասսիա. տես լինուտ դուասսիա։

Թինեթուրա տի վօլամեիլէ տի կուաեաքօ, կամ լաւեա վօլամեիլէ տի կուաեաքօ, իտ։ բէղտանկէր զամն ռուհռու, ամ՝։ Ըստ մեզ՝ ոգի որ փայտի, բաղադրեալ՝ ի մի ունկի՝ կուաեաքօ ռեռնոյ, և՝ ի վեց ունկի՝ սբիրիթօ վօլամեիլէ արօմամեիքս տէլ սիլվիօէ, որ լինի դեղ ազդողական ընդդէմ յօդուածացաւուեց, խեթից երիկամանց, միզարդելուեն, և խօթուեեան ինչ սատանքսի. զն է խեթիչ և գրգռիչ բնուեթ։ Զարմն՝ ի մի տրամ մինչև ցերկու, խառն ընդ մի սկա՛տակ սրՃոյ կամեին։ Կոչի և ըստ նոսոց՝ ալքօօլ ամենիամեօ քօն կուաեաքօ։

Թինթուրա տի տաֆիֆիս, իտ։ Լինէթ ռուհու, տՀ։ Ըստ մեզ՝ ոգի լուծողական. որ է դեղ մեղմապէս լուծիչ. զոր կարելի՝ է կիր արկանել համարձակ լիւբաքանչիւր սեռս, այսինքն տարց և կանանց յմ և իցէ հասակի է. դեղոց, և զնարդ ևս իցէ խառնուածոց վերձակելոց. չարին ի մի ունկոյ մինչև ցերեկ ի ծոմուստ։ Կերպն ի շինել. զայս հեշտաբմպելի ոգի, սոռ ունկի մի՝ սէնա, և շիարբ. բա, և քորիանտոլի, և քրէմօր տի Թարթարօ, լիւբաքանչիւրոյն կէս ունկի։ Զայս ամենայն լուսաալ արկյա. նօթ ապակի, յաւելով ի նոյն երկու լնոյ՝ օղի, և վեց ունկի՝ շաքար. և յետ ուրթ կամ տասն աւուրց օրէն է քամել կասուում։

Թինթուրա տի քանթառիտաթօ. տես քանթառէլլէ։

Թինթուրա տի ֆէռռօ, իտ։ չէլիք ռուհու, տՀ։ և ըստ մեզ՝ ոգի երկաթոյ, որ կազմի ի խարտաշոյ երկաթոյ, և ի հիւեղոյ սերկիլիի, զորոյ զլաստակս բաղադրութիւն Թոդեալ ի հմուռելի դեղագործացն, յայտ առնեմ զներգործութիւնսդս։ Օգտաւէտագոյն է ի դիպուածս վերնատուրեն, և ախտի ցնցականի ի վերայ եկելոյ մանկանց, և տկարութեն ստամոքսի, Ջղաց, միջնդեղրաց, և ընդհանրապէս ընդդէմ ամենայն ախտից առեթեղոյ ի թուլութեն. զի է խիստ բնութիւն։ Չափն ի 20 չեռէ մինչև 960, կամ 980. տես և Ասչխաեռ կամ քշալիպս։

Թինթուրա տի ֆիլիՀՀինէ, իտ։ Ի ոգի ինչ բաղադրական, կազմեալ ի մի տրամ՝ ֆիլիՀՀինէ տի լէնս բեղնեոզէ, ի կէս ունկի՝ ստասֆիէթիտա խիժոյ. և ի տասն ունկի՝ ոգւոյ գինւոյ։ Շահաւէտ է ի դիպուածս փքախտուն, ախտի ցնցականի ի վերայ եկելոյ մանկանց ի վերընթէրնդմանէ ստասմանց, և ախտից արգանդի։ Չափն ի 15 չեռէ մինչև 930 խառն ընդ Ջրոյն ծաղկի, կամ վարդի։ Զայս ոգի յիսաալացուց առ մեզ Թարգմանագրեմք՝ ոգի ձանձախարիթոյ, այսինքն խուրմի։

Թինթուրա ֆէէթիտա, կամ ալքօօլէ ասստֆէթիտա, Թոյ, իտ։ Ի ոգի ինչ զաղաշոտ. զորոյ զորուԹեն մարԹիս սեռանել ի ասստֆէթիտա։ Չափն ի 10 չեռէ մինչև 960 յաւուրն։

Թինթուրա կամ ԹէՀնքա, լտ։ Ի ձուկն ինչ քաղցր ջրոյ. որոյ երկայնութիւնն է իբր ոտնաչափ, և սուսար բաղկաչափ. մորթ նորա մԹին դեղին և խժային. միսն սպիտակ, փտրուկ, և համեղ։ Սա ունի զմանաւոր գործունէուն ի դիպուածս խստուածոց կատաղի ջանց, և թիւնաւոր դեղոնոց, կապելով և էնթ զայն ի վերաւորեալ մասունս

մարմնոյ. այլև ապաքինէ զդաղուհին և զտենդ, եթէ խո-
րոմեալ դիցի կամ կասիցի ի վերայ զարկի բաղնին. և ի
տեղիս տեղիս ի կիր առնուն նաև ի բժշկուն քաղցկեղի,
ելնոցց, այտուցից, ցաւոց գլխոյ, և պորտոյ: Ի գլխոյ
այսր ձկան եւանէ քար ինչ փոքրիկ, զորմէ ասեն թէ լու-
ծանէ զմիզարգելութիւն, և խորտակէ զքար եթէ դոցի
ընդ անցս նորա:

Թիսանա, կամ Թիզանա, իսս: Է ըմպելի ինչ կաղ-
մեալ ի բուսոց, կամ յայլ նիւթոց եփելոց ջրով:

ԹՀալեէթրում, կամ բիկանում, և կամ ռուԹա բա-
թէնսիս, լս: Բոյս Ճիւզալից, որոյ ցօղունն բարձրացեալ
յերիրկէ հասանէ ի չափ մարդոյ, և է կարծր, եռանկիւ-
նաձև, և դարձնագոյն, և ուրեք ուրեք ծիրանագոյն,
կամ կանաչագոյն: Ցերև սոյա է երկայն, լայն, պայծառ
կանաչ, և փայլուն: Ծաղկին եւանէ ի գագաթան հան-
գերձ դարձնագոյն առէչիւք, և է փոքրիկ հինգթերթեան
ի ձև վարդի: Յետ ծաղկանց արտադրէ զպտուղն եւան-
կիւնաձև, ունելով ի միջի զերկայնաձև և զդեղնագոյն
սերմունս ի խորչս խորչս մանկատեսակս: Իսկ արմատն
լայն, օձապտոյտ, դեղնագոյն, տարածողական, և դառ-
նահամ: Սա բուսանի յամենայն ուրեք ի մարդագետինս,
և ի խոնաւուտս. լի է ցնդական ազիւ և իւղով. օ գտա-
կար է ընդդէմ Թունից, այտուցից, և վիրաց. բանայ և
զանցս միզի, զդրդռէ զաւազս, և զքարս միզարանի: Իսկ
սերմն նոյնպէս շահաւէտ է ընդդէմ հոսման արեան,
Թանչից: Զարմն ի կէս տրամի մինչև ցմի ամիսղ:

ԹՀէա, կամ Թսիա, լս: Թէ, իս: Թէ, դղղ: Չայ,
տՃ: Է բոյս Թփաչափ բարձրութիւն նման ըստ իմիք մբռ-
ռնեաց, որոյ տերևքն են փոքրիկ, երկայնաձև, սրածայր,
և կանաչագոյն. այլ ի հնեանսն փոխին ի սեաւ. Ծա-
ղիկքն սպիտակ, և հինգթերթեան, որ փունջս փունջս
փեթթին ի ծայրս Ճիւղոց, հանդերձ առէչիւք. զնոսի
ծաղկանց յաջորդէ պտուղն փոքրիկ ի չափ կաղնոյ, ու-
նելով ի միջի սերմունս մանուանս կնճռաւորս, և գորշ-
գոյնս: Իսկ արմատն երկայն խրթև տասն մատնաչափ, ոս-
տալից, և դառնահամ: Ա յս բոյս ի վեր երևին անխարտ
ընդ ամենայն տեղիս յաշխարհին չինայ և Ճիաբօնացւոց,
որոյ նման չիք այլ ուրեք: Յամին երիցս Ժողովին զնոչա-
կաւոր տերև նորա, որ այն ինքն է չայ. նախ՝ ի մարտի
յորժամ մանր են, և. քնքուշ: Երկրորդ անգամ քաղեն
յապրիլի, որ կարի մեծ են քան զայնս: Իսկ զերրորդն
քաղեն ի մայիսի և յունիսի, որք են տարին քան զայլ

երկոսին։ Արդ՝ զսերեալս զայսոսիկ նախ խուն ինչ տամկա-
ցուցանեն եռացեալ ջրով, և յետոյ չորացուցեալ յա-
բեռս, և կամ ըստ ոմանց՝ խարտկեալ, զնոն ի կապա-
բեայ տուփս, և առաքեն ի վաճառս, զոր ստեպ ըմպեն
եւրոպացիք, և ամենայն ազգք անդ բնակեալք, և նո-
վաս մեծարեն և զՀԼբս, զոր զայս օրինակ առնեն. որ-
կանեն կէս տրամ ի տերեւոց անտի յանօթ յախճապա-
կեայ, յաւելցով ի նոյն վեց ունկի ջուր եռացեալ, և
այնպէս թողուն զանօթն ամփոփակ երբէք քառորդ ժամ
մի, և ապա ըմպեն խառն ընդ շաքարի, որ լինի և դեղ
օգտակար ընդդէմ փքոց, ցաւոց որովայնի, և միզարգե-
լութեան. զի է գրգռիչ և միզաբեր բնութեամբ։ Բայց յաճա-
խակի ի կիր առնուլն առեալ զգրգռելութեան ջղաց. յայս
սակս եւրոպացիք խառնեն ի նմա և կաթն, կամ ուրա-
առ ի բարեխառնել զվնասակար որակութեան նորա։

Թէհերենիապին, կամ մինսխառաքսան, կամ թէռնիա-
պին, կամ տրասոմիէլ, և կամ տեռեմիէլ, լս։ մանանա
լեգուիտաս, իտ։ Թրանսամին, սր։ Ի հիւսի Թանձրամած,
խժային, սպիտակ, և քաղցրահամ, իբրեալ ի վերայ տե-
ղեաց ծառոց, կամ բուսոց եղելոց ի կոզմանս պարսից, և
հայաստանեայց։ Բժիշկք եւրոպոյ անծանօթ գոլով հա-
մարին զսա գոյ նոյն ք մանանային, բայց ընդ հակառակն
է. քանզի սա ունի զմանաւոր ազդուութիս ի զովացու-
ցանել զներքին ջերմութիս, ի մեղմապէս լուծել զկա-
լուածս որովայնի, և ի փարատել զգալուկն, և զցաւս
կրծոց։

Թէհերիաքա, լս, և իտ։ Թրեակ, ոռ։ Թիրէաք, կիմ
Թիրաք, սրբ։ Ճանաստաու, սր։ և ըստ մեղ Թիւրակէս,
կամ Թիրակէս։ Ի սեաւ և Թանձրամած դեղ ինչ բա-
զադրական, կազմեալ ի բաղմատեսակ նիւթոց, որ է
բնութեամբ գրգռիչ, սեղմիչ, խաղաղիչ, և սրդեռհարած.
յայն սակս ստեպ ի կիր արկանի յաւելեալ ի յարբիկէ ի
բժշկութեան փարհարութեան, խանդաբման գործողաւն մար-
սողութեան, նոկուութեան ստամոքսի, արիւնախառն լուծ-
ման որովայնի, շնչարգելութեան, բաբախման սրտի, և ցա-
ւոց ստամոքսի և ստորին որովայնի։ Ձափն ի 20 ցորենոյ
մինչև 360 երկու անդամ յաւուրն։ Դիմակալէ նաև
թունից, և ՃՃեայ, և հարուածոց սարգիչ, միզուաց, և
կարՃաց, օգնելով և եթ զայն ի վերացեալ մեռուն
մարմնոյ։ Ընտիր և ազնիւն այսր թիւրակէսի կազմի ի վե-
նկակի քաղաք՝ քան այլուր։

Թէհերիաքա անարտամքի, լս, և իտ։ Ի տեսակ ինչ

թիւրակէսի, որ բնութիւն նոյնպէս գրգռիչ է և խաղաղիչ, զոր ի վար արկանէն ի դիսպուածս ձգումսն, և դող գողման ջղաց, նողկութիւն ստամոքսի, և լուծմսն որովայնի։ Զայն ի կէս արամէ մինչև ցմի։

Թ.Հերիաքս տի տիեսիբօն, լս։ Ի բաղադրուն կազմեալ ի փոշեաց արմատոց ճենցիանային, ի սերմանց դաբնոյ, ի զմանոյ, և յարիսաս լօքիս անուանեալ տնկոյ, խառնեալ ընդ յատակ մեղրի. որ ունի զնոյն զօրութիւն թիւրակէսի։

Թ.Հիմաղլուս, լս։ Ի աղգ ինչ կարմրախայտ ձկան, որոյ հոտնման է ծոթրենի. իսկ միսն պաղարտ, փափուկ, և համեղ յոյժ, տրժանի ուրբայական սեղանոյ։ ԶՀաղալ սորա ի գործ ածեն ի գեղ առագաստից, ասեաց բժից մարթոց, և շնչման ականջաց։

Թ.Հիմուս վուլկարիս, լս։ Թիմն, իսս։ Թէն, գղդգեբիկ, կամ զաթրին, ասէ։ և ըստ մեզ՝ ծոթրին, կամ զոսպոյ։ Բոյս յաձախեալ յամենայն ուրբք, այլ առաւել յաձախս յերբոպիս, մանաւանդ ի կրետէ, որոյ յօդունն բանձրանայ յերկրի իբր ոսնաչափ։ Ճիւղք նորա վտիտ են և սպիտակ։ Տերևքն մանր, խիտ, սպիտակ, սաստակահոտ, և տոպաշամ։ Ծաղկին փոքրիկ, որկորաձև, և հոտաւէտ, որք փունջս փունջս վիթթին ի գագաթսն, և ի վերայ ճիւղոյ, հանդերձ առէիւք, և իւրաքանչիւր ծաղկի արտաքրէ քառեակ սերմունս ունուն, և բոլորշիս։ Այս բոյս առատ է գոյացական ապիւ և իւղով։ օգտէ տկարութիւն ստամոքսի, և ուղղոյ. փարատէ ղիրախտութիւն, գիմակաւէ թունից, և ինասակար գոլորշեաց։ գրգռէ զդաշտանս կանանց, և մանգամայն արտահանէ զմեռեալ զաւակն յարգանդէ. զի է խիթիչ բնութեաբ։ Զայն ի կէս արամէ մինչ ցերկու, խառն ընդ 16 ունկի ջրոյ։

Թ.Հիսսէլ լինուս, լս։ Բոյս յաղդէ քրակորսի. որոյ տերև նման է տերևոյ սսէպղինի, և է հիւթալից, գառնահամ, միանգամայն և տոխպ։ Ծաղիկք նորա են սպիտակ, հինգթերթեան, և մինչաւոր, որք ի վեր երևին ի գագաթսն։ Բերէ և սերմունս ձուաձև, և տոփարաւոր։ Իսկ արմատն սուաղ, երկայն, և սպիտակ։ Այս բուսաներ յեգիպտս լՀաց և գեռոց՝ իբր երեք կամ չորս ոսնաչափ բարձրութեաբ։ Ի է իւղով և ցնդական ապիւ, և բնութեաբ գրգռիչ, և միզաբեր. որով գրգռէ զմէզն և զդաշտանս կանանց, առատացուցանէ զմուքս և զլորձունս, և ապաքինէ զցաւս ասամանց ծաղբամբ կամ արբամբ։

Թ·հուենուս, կմ՝ Թշիենուս, և կամ բէլամիս, լս՝ Թօնես, իս՝ բաղանուս, կամ Թուենիս, տմ՝ և ըստ մեզ՝ դոն՝ Ի ձուկն ինչ ծովային, որպ երկայնութեան և ուրեմն սանդաչափ, իսկ լայնութեան երկու սանդաչափ, ընչացքն երկայն և սուր, ձեռն լայն ի ձև կիսալուսնոյ, որոյսյոն մեծ, և սպիտակ, թեպէ մարմնոյն լայն, խիտ, միակուռ, և խիտ, իսկ միսն փափուկ, և համեղ· յորմէ և սովոր են աղբ համեմել առ ի տեսել, որ լինի դեղ օգտակար ընդդէմ Թուենից, և խածուածոց կատաղի շանց։

Թ·հուս, կամ օլիպանուս՝ լս՝ ինչէնուս, կամ օլիպանս, իս՝ լիվանի, յն՝ գիւնլիւկ, տմ՝ լիպան տագր, արբանան, գաղ՝ և ըստ մեզ՝ խուենկ, կամ լիբանուս՝ Ի դեղ նախաուն սպիտակ խէժ ինչ գիւրաբեկ, պարարտ, և անուշահոտ, որ բղխի ի բնոյ բաղմատեսակ տերևատիպս իրիք ծառոյ եղէոյ ի կողմանս արաբիայ, որ կոչի ի բարբառս լատինացւոց՝ տուգտս Թէուրիֆէռուս։ Ազնիւ համարի, եթէ իցէ սպիտակ, մաքուր, գիւրաբեկ, անուշահոտ, և գառնահամ, յորմէ գործեն դեղ աղդու ընդդէմ կշտացաւութեան, միզարդելութեան, սերմնակալութեան, և ցաւոց կրծոց· զի է խիթիչ բնութեան։ Զայն ի մի տրամէ մինչև ցերկու։ Նոյնպէս շահաւէտ է այսուցիչ և նեխեալ վերայ, այլ և ամրասնդեալ հաստատել զմնջեալ մասուն ոսկեբաց, սպեղանի կազմելով, և գնելով ի վերայ վշտայեալ մասանց մարմնոյ։

Թ·ուեթիա, կմ՝ սբօտիուս՝ լս՝ Թուշիա, կամ քօլեռիս, իս՝ Թուենեա, տմ՝ և ըստ մեզ՝ աղպար, կմ՝ շուփայ։ Ի մեղջ հալեալ հրաշալեղեաց, որ է սպիտացուցիչ վերաց Թանչից, և փարատիչ բաղմակերպ տխրից աչաց, զորմէ տեսցես ի բառն Թուենիա քօմբօսիեմա բրէբարաթա։ Սովորաբար ի յարդի համարի ի հեղինակաց՝ գերմանն ի գերմանեա, և ի զվիցցէր· բայց Թուի Թէ՝ և գառնայն յաղէքսանդրիայ մարթէ ունել զզուգահաւասար ազնուութիւն ընդ վերոյիշելոյն։ Մեջ և իցէ աղպարս այս պարտ է լինել ստուար, չոր, կարծր, Թուխ, յոլկեալ, Թեպիտիչ և դժուարաբեկ։ Եւ Նախնիս կոչի և սբօտիում կրաբօլում։

Թ·ուեթիա քօմբօսիեմա բրէբարաթա, լս՝ Թուշիա քօմբօսեմա բրէբարաթա, իս՝ Ի աղպար ինչ բաղադրեան, օգտաւէտ ի դեղուոցս տխրից աչաց, և բառնայ զմառնէթի, և լուսավայլէ զանսուութիւնն, և ի յարսանեկիր արկանելն ծիւրեալ մարէ զչլութիւն և զրիծն աչաց·

բայց գիտել օրէն է, զի ի գիպուածս ցաւոց աչաց ապաւել արժան է մինչև ցլուսին եօթեն աւուրց, և ապա ձեռնամուխ լինել ի կիրառութիւն այսր դեղոյ։ Օրինակ բաղադրելոյ զայս դեղ։ Առ յիսուն տրամ՝ զազնիւ թութիա, և գիր զայն երկաթեայ անօթով ի վերայ բորբոքեալ կայծակունց, մինչև հրացեալ ապիտակացի իբր գձիւն. ապա ժողովեա զայն մեզմով, և լուսեա ի մանրամաղ փոշի։ Եւ յետ այնր առ երեք տրամ ի փոշւոյ անտի, զանգեան ընդ ոգւոյ գինւոյ, և թող այնպէս զաւուրս ինչ մինչև ներծին ցամաքեսցի։ Յետ այնորիկ պարտ է վերստին զանգել զայն կանացի կաթամբ։ Եւ յետ չորանալոյ՝ օրէն է անդրէն լուսել ի մանրամաղ փոշի. և յետ այնր յաւել ի նոյն մի տրամ՝ քէրլուսօնիում փոշիացուցեալ, և տասն և հինգ կշռեա ցորեան՝ փոշիացուցեալ ապիտակ պղպեղ, և կէս տրամ՝ լուսեալ մարգարիտ, և երեք տրամ՝ շաքար վանի։ Զայս ամենայն պարտ է լուսել ի վերայ ողորկ մարմարիոնի, կամ յանկանի, և անցուցանել ընդ բարակ մաղ, կամ ընդ խիտ կաւաւ։ Իսկ ի կամիլդ առնուլ ի կիր՝ առ. կէս կամ մի ցորենաչափ ի սմանէ՝ արկ զգուշութիւն ի մէջ ցաւագեալ աչաց՝ երեկու անգամ յաւուրն։

Թուպէր, լս։ Թարթուֆօ, խս։ Թարֆի, գղղ. եէր էշմասը, կամ ասմուզ էշմասը, ամ։ գէմին, որբ։ և բուս մեզ՝ գեանախնձոր։ Է տուն անարմատ, անցօղուն, և անտերև, որ սովորաբար Թագեալ կայ ընդ երկրաւ, կմ ի խոտս երկրի. ուստի առաւել ի հերկելն զանգատանս գտանի յաձախ. որոց ոմանք ամենեցեալ լինին իբրև ըզֆոբրիկ սեխ, իսկ ոմանք են իբրև զնինձոր։ Ոմանք են սեաւ, իսկ ոմանք ապիտակ. ունին բան մեծի մասին ըզկեղևս նուբբա, և խորաբերս։ Մէջ ներսանց մասիր է և. ախորժահամ, և բնութ սնուցիչ, և զբաացուցիչ սաստիքսի, զորս բաղմորինակ հանդերձեալ ուտեն ի ձմերայնի։ Ալ բաց ի սոցանէ՝ են և այլ երեք տեսակք գեանախնձորոյ սեպհական նահանգացն գերմանեոց, և խաւնոյ, զորմէ բնակիչք տեղեացն հաստատեն՝ թէ որսական շունք գտանեն զայնս յորով անգամ. զոր իբրև տեսանեն խոզարածք, իսկ և իսկ յաչիշտակին ի բերանսդ նոցա. քանզի այնք գեանախնձորք կարի ի յարգի են առ եւրոպացիս, և Թանկագին. նմին իրի միայն ի սեպանս մեծամեծաց գտանին. գոյացութիւնք նոցա Թէպէտ Թուխ են, և ամնդայնն, այլ յոյժ համեղ, և գիւրամարս, որք և լինին գեղ օգտակար ընդդէմ տակաւութեան ջղաց, և նուազուցեալ սաղմի։

Թուպէրքօյօ տի գուէրչիա, իտ։ կլանս գուէռչինա, լտ։ Ի պատուղն գուէրքուս անուանեալ ծառոյն. տես անդ։

Թուսսիլլակօ, կամ ֆիաֆիաա, կամ ֆիլուս անդէ-բաֆռէմ, լտ։ Թուսսիլաձիւէ, կամ ֆիաֆիաօ, և կամ ունկիա քաւալլինա, իտ։ փա ա՛նը, կամ Թիւսիլաժ. գղղ։ քուլթնֆիւմ կամ ֆիլոֆիւմ, անգղ։ սալան փէն-չէսի, կամ ֆիաֆիաօ, տձ։ հաշիշէթիւլ հայլ, կամ հա-շէշէթիւլ սուայլ, արբ։ ֆէնձէկիւն, պր։ Բոյս բաղմա-յօդուն բուսեալ ի ծովամենայս, և ի գետեղերս իբր մի ոսնաչափ բարձրութ։ Տերևք նորա են երկայնաձև, լայն, անկիւնաւոր, և բոլորակաձև։ Ծաղկին ճառագայթաձև, բոլորշի, և դեղին հարեալ ի գոյն կարմիր, ունելով ի միջի սերմունս մանուռնս, և սաստիկաձևս։ Իսկ արմատն մանր, երկայնաձև, օձանմոյս, և սպիտակ։ Սո-վորաբար սկսանի ծաղկիլ ի սկիզբն փետրվարի, և տևէ մինչև յունիս։ Լի է իւղով, և գոյացական աղև. որոյ տերևք լինին գեղք տղղոց ընդդէմ հաղից, հարբեալոյ, և ցաւոց բորբոքման կրծոց, և մաշայարական տիսոի տա-թելոյ յուժգնութիւնէ. զի է Թուլացուցիչ բնութ. ի կէս ունկուց մինչև ցմի, նաև ընդ մի լիար ջրոյ։

Թուսսիլաձիւէ. տես Թուսսիլլակօ։

Թուսսիա. տես Թուսսէ։

Թուսսէ. տես Թուսսէ։

Թուսքէթէհում, կամ Թուսպիթէհ, լտ։ Թուսպիթօ կամ Թուսպիթթօ, իտ։ Թուսպուտ, տձ։ Բոյս երկայն իբր վեց կամ եօթն ոսնաչափ, փայտային, և ոստաւոր, որ ուր և բուսանի պատատի շուրջ գետեր. Եղեալքն։ Տերև սրա ունի նմանութիւն ընդ տերևոյ տղղոյ, բայց մեծ և թաւեալաւոր քան զայն։ Ծաղկին սպիտակ, միթերեան, և զանգակաձև։ Պտուղն պղպեղաձև, թաղանթային, և սեւա որ է սերմն նորա։ Իսկ արմատն ստուար իբր մատնաչափ, փայտային, բաղմոստեան, ոչնանալից, մա-ծուցիկ, թուխ, դառնահամ, միանգամայն և տաղտակա-լի. օգտաւէտ է ի դիպուածս Չրգողութեան, և քնափու-թեան. ստատկէ և զձգիս որովայնի, լուծէ հզօրապէս քա-ղելով, և անհնարին խիթս տանելով, որով և քաջէաղ հանէ արտաքս զչիձուկս մարմնոյ։ Բայց բազում ան-գամ պատճառէ զցաւս որովայնի, զփսաղաղումն, և ըզ-բորբոքումն ստամքսի, և ստորին որովայնի, և երբեմն ևս զմահ. սմին իրի ոչ է օրէն ի կիր առնուլ զայն միայ-նակ, եթէ ոչ բաղադրութեամբ այլոց դեղոցն։

Թուսպիթի մինէրալէ, կամ բրիչիթիմեթօ ֆիալը, իտ։

բանդէհիրի քէնանի։ տՀ։ Է դեղ ինչ բաղադրական, կազմեալ ի մեղկէ, և ի յիւղոյ արջասպի, որ է բնութիւն գրգռիչ և լուծողական. օգտաւէտ է ի գիպոուածս բոլորտուռն, վիրաց հնացեալց, ժանտասիսի, ախտի ելևմանդական, և ջղաղոսութեան՝ յորում ասասիՀանի սասասկուն և գԺեկուն ևս իցէ։ Զափն ի 1 ցորենոյ մինչև 3 խաուն ընդ 10 ցորեան շաքարի։ Կոչի և ըստ նորոց՝ օսաի սօլՁիա թօ թէռմօսպսիսլօ սի մէգաքուռիս։

ԹՐՈՒՊԻԹՈ. տե՛ս ԹռուրբէթՀում։

ԹՐՈՒՊՈՒՌ, լս։ Թօռաս, իս։ սրսրՁ գուշու, տՀ։ և ըստ մեՁ՝ տորդիկ. Թռչուն երկչոտ, որ է ստուար քան զարտուտ, և փոքր քան զաղաւնի. այլ դոյն նորա այլևայլ է, այսինքն կարտաղոյն, սեաւ, և սպիտակ. որոյ միս օգտակար է վերնտուութեան, և անդամալուծութեան։

ԹՐՈՒՑԻ. տե՛ս ԹռուՁիկ։

ԹՐԱԿԱՔԱՆԹՀՈՒՄ, կամ ԹրակաքանթՀա կուսմի, և կամ տուակաքանթՀում, լս։ ստականթէ, կամ կսմնս տրականթէ, կամ սաաականթի, իս։ կօմ սաուական, գՁղ։ գիթռուէ կամ Թիթիռուէ, տՀ։ գէսկրէ, աբբ։ Է խէԺ ինչ սպիտակ, մաքուր, մանրաբեկոր, և ընդունակ որդան, յորմէ կազմեն գեղ ազգու ընդդէմ հաղից աաԹելոց ի տոիպ հիւԹոց, ցաւոց կրծոց, փորհարուութեան, ուլնացաուութեան, Թոքացաուութեան, միզարգելութեան, բորբոքման փամիչոյ և երիկամանց։ Ծառ սորա է Թփաուեսակ, և փշալից, յաՁախեալ ի կրեսէ, և ի բերիս, որոյ տերևքն մանր են և երկայնաձև, որք երկու երկու բաւանին ի վերայ միոյ կանԹի։ Ծաղիկն ելանէ ի գագաթան, և ի վերայ հիւղոց, և է ընդայնն, և ողկոյզքէն նման ը խմիք ծաղկան կենիստայի։ Բերէ և պատեան խոռոչաւոր, յորում լի են սերմունք մանրիկք, և երկանաձևք։ Իսկ արմատն երկայն, ստուար մատնաՁաւք, սպիտակ, և փայտային։ Սա առ լատինս կոչի և սասիռակալուս Թռաակաքանթա։

ԹՐԷՄԷՆԹԻՆԱ. տե՛ս Թէրէմէնթինա։

ԹՐԻԱՔԱ. տե՛ս Թէրիաքա։

ԹՐԻԹԻՔՈՒՄ, կամ Ֆիռումէնթում, կամ կրանում, լս։ Ֆիռումէնթօ, կամ Թրիթիկօ, կամ կրանս, իս։ ստաբ, յն։ պօղոսայ, տՀ։ հէնԹա, կամ էմս, աբբ։ և ը մեՁ՝ ցորեան։ Է ազգ ինչ սրմտեաց՝ բաՁածանօԹ յամենայն ուռեքէ։ յորմէ յօրինեն զալիւր ի նիւթ զանգուածոյ հացի, որ է բնութիւն սնուցիչ, մարսեցուցիչ, կակղացուցիչ և զօրացուցիչ։

Թրիպուլուս, կամ Թռիպուլուս Թեռռէսթռիս, լտ։ Թրիսոլօր, իտ։ տէմիր թիքէնի, տճ։ հասէք, կամ վէթ-պա, արբ։ չիլուբիճ, պր։ բոյս բաղմացօղուն և փշալից, բուսեալ առ երեսօք երկրի, շուրջանակի տիռէլով գնդիզալից, և զթաւիշաւոր ցօղունս։ Տերեւք սորա մանր են, և թաւիշաւոր։ Ծաղիկն եւսակ առ կանթիւ տեւեն, և է սպիտակ, երկայնականեթ և հինգ թերթեան։ Իսկ պտուղն կարծր, չորս կամ հինգ բեկորք ի մի փշալից պատեան, նուրբ մաշկօք անջատեալ ի միմեանց, և ի-բաքանչիւր հատ բեկորն կամ պտղոյ ունի մէն մի կորիզ, որ է սերմն նորա։ Սա բուսանի ի վայրս ջերմագինս, որոյ պտուղ կամ բեկոր ընուեթ է միզաբեր, և սեղմիչ որովայնի։ չափն ի 20 ցորենոյ մինչև ցկ։

Թրիպուլուս ագուանթիքուս, կամ պուռթօմոզ տա-մաքրաթիս, լտ։ Թրիպուլօր աքգուանթիքօ։ կամ քօռնիօ-լա, և կամ քասթակնա ա՝ աքգուա, իտ։ կէօղ գէստա-նէպէ, տճ։ և ըստ մեզ շաղանակ լճայնն։ Բոյս երկայն, բաղմացօղուն, սեկալից, և թելաւոր, բուսեալ ի մէջ լճաց, և սփռեալ դերեսօք նոցա, տերեւք նորա են ջրա-լից, եղերահերձ, և երկայնականեթ՝ նման ըստ իմիք տե-ռեաց կաղամախի։ Ծաղիկն մանր, բոլորշի, կարծր, և սպիտակ։ Իսկ պտուղն փոքր շագանակաձև, քառանկիւ-նի, թաղանթայնն, գորշագոյն, և սրածայր։ Մէջն կարծր, սրատաձև, սպիտակ, նրբակերպ, շագանակահամ, միան-դամայն և դեղ օգտակար ընդդէմ հոսման արեան, փոր-հարուութեան, և ուլնացաւութեն։ զի է սեղմիչ, և սնուցիչ։

Թրիսթիթիա, լտ։ Էրօքօնտրիա, իտ։ աֆիքաան, կիֆ սէվտա, տճ։ խաֆիքաատտ, արբ։ կէս-ֆաէնոտլ, պր։ և ըստ մեզ նշանակէ զամսն ամսոնգանաց, կամ զամսուն դանուտութեն։

Թրիքօշէֆալն։ Անուամբ այս ցուցանի տեսակ ինչ նուրբ, քիքուշ, և սպիտակ ՃՃԼՅ՝ գոյացեալ ի շիէքօ անուանեալ աղիս կենդանւոյ, որոյ երկայնութեթն է իբր բթաչափ, կամ փոքր ինչ աւելի։ Կոչի և ըստ ոմանց՝ թէնիա սբիսիլը, կամ ֆուսէռամնօր քօռիսէթօլա։

Թրիֆիոլիում ֆիոլրինում, կամ մէնիանթէս թրի-ֆիօլիաթա, լտ։ Թրիֆիոլի ֆիոլրին, կամ մէնիանթօ, իտ։ եօնճա, տճ։ զերեսասէ էվլակ, կամ պէռսիմ, արբ։ և ըստ մեզ առուոյտ, կամ առաւոյտ։ Խոտ բու-սեալ յաւարակս, և ի գաշտավայրս, որոյ ցօղունն է երկայն իբր կէս ասնաչափ, բոլորակաձև, թաւիշաւոր,

և օձապտոյտ։ Տերևք սորա բոլորշի են և երկայնաձև, որք երեք երեք բուսանին ի վերայ միոյ կանթի։ Ծաղիկն դեղտակաձև, գանգուր, փնջաւոր, ծերանագոյն և քաղցրահամ. պտուղն փոքրիկ, և արկղաձև։ Իսկ արմատն երկայն, փայտային, և ստուար երբև զՀկոյթ մտան մարդոյ։ Սա սովորաբար սկսանի ծաղկիլ յամեանն ապրիլի կամ մայիսի. օգտաւէտ է ի դիպուածս յօդուածացաւութեան. շնչարգելութեան, ապտանուէ արեան, խցանաց մարմնոյ, դալկան, և աբօռպութեան. չարին ի մի տրամի մինչև ցմի և կէս։ Կաղմին ի սմանէ նաև շարաւ, որ կոչի ի բարբառ խաղացուց՝ սիրօրբօ տի մէնանթօ։ Սորա է տեսակ ինչ կոչեցեալ ի բարբառ լատինացւոց՝ Թրիֆոլիում բալուսթրէ, կամ մէնեանթէհս Թրիֆոլիաթա. ըստ Թուբրոյ՝ կէօլ եօնճասը, կամ պադաք եօնճասը, և ըստ մեզ՝ առաւոյտ ճանճային, որ է դառն քան զնապտիթացն, և լինի դեղ շահաւէտ ընդդէմ խցանաց, սիտի մարթոց, և աբօռպութեան։ Չարին մի ունկի ընդ մի լիար Ջրոյ. ի սմանէ նաև յաճախ տան ի կերդ դրաստուց։ Իսկ արմատն ընկի ի կէրակուր մարդկան ի ժամանակս սովու։

Թրուութիա, կամ Թրուէթա, և կամ Ֆարիս, լտ։ Թռօմա, իտ։ ալա պալըզը, տճ։ և ըստ մեզ՝ կարմրախայտ, ձուկն ինչ յաճախեալ ի գետս, մանաւանդ ի յտպառաժուս, և ի յականակիտ վտակս, որոյ ձև նման է սէրմնեկ սեռաւեալ ձկան, բայց չքեղ քան զայն. Թեփ մարթոյն փոքրիկ, ունի և ի վերայ կարմրեանգ բիծս, կամ արասս գեղեցիկս, յորմէ կալաւ և զանուն։ Միս նորա կարի ստիտակ է, և համեղ յոյժ, արժանի կայսերական սեղանոյ, և մի միայն ունի փուշ. լի է ցնդական ալիւ և խոզով. միանամայն և դեղ օգտակար ի լուծումն ջրոյ, կապելով ի վերայ կարկամեալ անդամոյն։ Իսկ ճարան՝ որ է մեղմապէս լուծիչ և քաղցրացուցիչ ընութեան, լինի դեղ ընդդէմ խանգարման պորոյ, կալուածոց տեսաստուն, և ամենակերպ վիրաց։

Թրօշիչն, իտ։ Թրոքիչն, լտ։ գուբա, տճ։ Է անուն ընդհանուր, որով նշանակին դեղք բաղադրեալք ի զանազան փոշեաց խառնելոց գոյն ինչ հիւթովք, ի կաղմել զղանգուածս սլինդս, զոր և ձևացուցանեն ըստ նմանութեան ճախարակի։

Թռամինէեռ, լտ։ Թռչուն փոքրիկ, քաղցրաձայն, և սրաթռիչ, բնակի յաճախ ի ելինս, և յանտառս, մե-

ծուութ՝ ի չափ Ճպռանն։ Փետուրքն ոսկեգոյն են և շող-
շողուն, լեզուն մեծ, Թաթք սակաւ Ճիրանաւոր. իսկ ի
գլուխն, և ի պարանոցն ունի աղուամազս քնքուշս և
երփնեբանգս. ունի զմիս փափուկ, և հաճեղ, միանգա-
մայն և օգտակար դեղ ընդդէմ լուսնոտութեան և անդա-
մալուծութեան։

Թռնիքս. բան անդամազնեաց ասի զշարժմանէ ինչ
միանաց ձգտելոց կամ կծկելոց։ Ասի և ը բժշկաց զգե-
ղոց զօրացուցչաց միանաց, և մանրամեկելոց մարմնոյ։

Թռնսիլէ, լտ։ կլանտուլա տեղէ ֆաուչի, իտ։ բա-
ռիւս այս ը անգամանեանց եմանի՝ մման ինչ զեռեղեալ
՝ի մուտս հաղագին։

Թռոսէ, իտ։ Թռուսիս, լտ։ էքսիւբիւբ, տճ։ սրհեր,
կամ սիկենճ, արբ։ սուռիֆ, պր։ բան մեկ հաղ։ տես
հտ. ւն. երես 243։

Թռոսէ նէռվօքա. տես հտ. ւն. երես 249։

Թռոսէ սեռմանքալէ. տես հտ. ւն. երես 247։

Թռոսէ սինեթոմանեթքա. տես հտ. ւն. երես 250։

Թռոքմենեթիկա էռէքեթա, կամ հիբեթաքիկուտ, լտ։
բոյս բաղմացօղուն, կարմրեբանգ, Թաւիշաւոր, և տա-
ռածոզական, բուսեալ յաւազուտ և ՝ի խոնաւուտս տե-
ղիս, որոյ տերեւք եօթն եօթն բուսանին ՝ի վերայ միոյ
կանեթի, և են երկայն, և եղերաՀերձ, և ձեւացեալք էր-
բև զՊտաթ բացեալ ձեւոն մարգոյ։ Ծաղիկն գեղին և
հինգթերեթեան։ Բերէ և սերմունս նուրբս, և սպիտակս։
Իսկ արմատն ստուար իբր բեթաչափ, ծնրաւոր, խորտա-
բորտ, պաբարաւոր, և Թելալից, արտաքուստ գեղին,
իսկ ՝ի ներքուստ կարմիր, միանգամայն և գեղ աքսոպու-
Թօվ, տկարաւն աղեաց, և ընտրաց. Նախնի հեղինակքն
ասեալ ՝ի կիր արկանէին զսա ՝ի դիպուածս հնագոյն փոր-
հարութեան, արիւնախառն արտաքսաղութեան, հոսման
Թանչից, և սպիտակ հոսման հիւթոց՝ փոխանակ տեւա-
ռեսական արեան, և շարաւահոս վերաց, և միջահատա-
կան տենդից. զի և Թուլացուցիչ և սեղմիչ բնութիւն։
Չափն ՝ի 20 ցորենոյ մինչև 30, զոր պարտ է եփել մի
լիտր ջրով, յաւելլով ՝ի նոյն մի կամ երկու ունկի շա-
բասն հաղարջի, և առեալ լինի ըմպելիս այս ՝ի միջոցի
քսան և չորս ժամուց։

Թռօրնօսոչ. տես քօռանա տեղ սոչէ։

Ի

Իբէռեթէռմօսիսօ սի ծինքօ. տէս ծինքում։
Իբէրիքօ. տէս հիբէրիքում։

Իբէքաքուանհա, կամ սբէքաքուանհա, կամ հիքօու-քանհա, կամ պէկուգուէլլա, կամ քակօուհկա, կամ պէլլեքքուլօ, կամ պէքուլօ, և կամ պլրուսիլիէնսիս, կմ բսկքօթհգիա էմէթիքա, լս։ Իբէքաքուանա, կամ ռա-տիչէ տէլ պլռաղիլէ, իտ։ գայվէիիՃի ալՃն քէօքիւ, կմ ալՃն քէօքիւ գուստուրուՃու, տՃ։ ընքլ տահապ մԺռաշ, աբբ։ և ըստ մեզ՝ թարգմանագրի՝ որԺացուցիչ արմատ ոսկւոյ։ Ի հռչակաւորս և գեղգովելի արմատ ինչ ստուար գրեթէ հաւասար նուրբ գրչի, ամրողջ, թեք-եալ, ծամանուռ, կնՃռատպատ, ներբաթել, ռեանալից, տաղտկահոտ, տաղտահամ միանգամայն և դառն։ Գա-ռեակ է սորա տեսակ. առաջին տեսակն կոչի՝ ի բարբառ իտալացւոց՝ իբէքաքուանա պռուռա. որ քան զամենեսին ազնիւ է և յոյժ գործուածեալ. գոյն նորա է թուխ կամ լաւ ևա՝ մանրագոյն։ Բաղմազան է գործուածեալութիւն սորա. զի եթէ ոք արբցէ յայսմանէ 16. կամ 20. կամ 24, և կամ 32 ցորենաչափ, յետ քառորդ ժամու ժայթ-քեցուցանէ զկնՃու և զսուր մաղձա և ըստ մաղձա ստամոքսի, և լուծէ զնեասաբեր հիւթս փորոտեալ, որով և կաղ-դուրի թուլանին ստամոքսի, սՃապի և արծարծի ախոր-ժակն. բարեկարգի գործուածոցն տարին որովայնին, և միանգամայն փարաւեալ զվորհարութիւն, զարիւնահատն որովայնալուծուն. զհոսումն թանչից, զանՃդ միջահա-տական երկօրեայ, եռօրեայ, և քառօրեայ, այլև ապա-քինէ զնշատաւալ զՃզային ներաթիտս. որ և չուն ամա-նեանն զնասակար ինչ օրակուն. յայն սակս և ի զայրա-գին խօթուն մարթ է ի կիր առնուել զայն անվտանգ՝ վերոգրեալ չափու։ Եւ եթէ առցի ըստ չափու վեց ցո-րենոյ՝ երիցս անգամ յաւուրն, բուժէ զարբեհատն որովայնալուծութիւն և զհոսումն թանչից, մանաւանդ յորժամ խառնի ընդ մի սրամ խաչնդեղն։ Իսկ եթէ առ-ցի ասսի ի կէս կամ յերեք քառորդ ժամ միանգամ մի և կէս կշիռ ցորենոյ առ իւրաքանչիւր նուագ, արգելու զյորդառատ հոսումն դաշտանի, մանաւանդ յորժամ խառնի ընդ փոքր ինչ շաքարի։ Ամլ եթէ առցի ասսի

բան չափս չորից ցորենոյ խառն ընդ փոքր ինչ վանա-
շաքարի, և բաժանեսցի ի վերջասան հաւասարաչափ
մասունս, և տացի մէն մի մասն չորս անգամ յաւուրն,
խափանել զնքումն արեան, և զչարս ստամոքսային, այլև
գիւրաշարժ յորմէնէ զնչաւառութիւս, և կազդուրէ զախոն-
դանոտութիւս, և զնչարգելութիւս։ Երբեմն և ի գործ
ածէն բժիշկք անդրեոյ, և գաղղեոյ զայս արմատս ի գե-
պուածս փէտպրէ բուէբրէռիալէ անուանեալ տենդի,
գալման, մոլեգնութեան, և վէրվուլը կոչեցեալ ախտի։
Եւ չիք դեղ քան զսոյն գիրաշանց, երբ խնդրի բառնալ
զոկարութիւնն և զնուլութիւնն ստամոքսի, ստորին որ-
վայնի, և մանրաթելից ընդերացն, որով և փարատի անմ-
վրեալ արիւնախառն լուծումն որովայնի և փորհարուն։
Եւ զայս արմատ՝ վերոհիշեալ չափով կարես ի վար ար-
կանել ի վերայ չափահաս արանց և կանանց ի պետա-
ութիւն ժամանակի, և տհասեցն՝ կիսոյ մասն, իսկ մասն
կանց երկեմնից՝ չորրորդ մասն բաւէ։ Հնդնպէս և օգ-
տաւէտ է ի գիպուածս ախտի ցնցականի ի վերայ եկե-
լոյ մանկանց, այլ և ի գուրս մղէ զծաղկին, և զնա-
զաւարտս, որք յառաջն գաղելոյ և թագուցեալ էին ի
ներքս։ Բոյս սորա ի միոյ կողմանէ սողալ, և ի միւս
կողմանէ վերամարդ։ Տերևքն երկայն են և սրածայր՝
նման բան իսիք տերևոց կուռինչ անուանեալ որմնաթու-
սոյ։ զոր չորացուցեալ ի կիր արկանեն ի դեղ փորհա-
բութիւն, ցաւոց ստամոքսի, խցանաց, և նուազութեան
ամենայն պարտուց կանանց։ Ծաղկին հինգթերթեան,
գնտակաձև, և սպիտակ։ Իսկ պտուղն բոլորակ, մե-
ծութեամբ ի չափ վարդի կեռասի, մթին կարմիր, և հիւ-
թալից, ունի և կորիզս ոսպնաձև, կարծրս, և դեղ-
նագոյնս։ Երկրորդ տեսակն է դէզմագոյն, կոչեցեալ ի
նոցանէ իբէքաքուանքա Ղալլա, սակաւ ինչ ստորին է
զօրութիւն քան զսոյն։ Երրորդ տեսակն յոյժ թոյլ, որ
թէպէտ կարի ստուար է, այլ չուտի զայն զօրութիւն և
ներգործութիւն, զոր ունի նախայիշատակեալ թանգոյն
արմատն ոսկւոյ։ Նմին իրի սորա ինքնաբնենն ևեթ ի
գործ արկանեմ, որ լինի ի ջուրս ջերմ երեք սրամ՝ յաւ-
մասոյ անտի, ընդ միջոց երկուսասան ժամուց։ Զոմի և
մնայ երկու ունցի, և առցի երեք անգամ յաւուրն։
որ զօրացուցանէ զստամոքսն, սրդելու զհոտութիւն թան-
չից, և նպաստամատոյց լինի առողջութիւն։ Իսկ չորրորդ
տեսակն՝ զոր անուանեն իբէքաքուանա պիանքա, թեթև
է զօրութեամբ քան զերեսին, և է սպիտակ գունով, և

քաղաք համով. զոր բժշկեք սպանիացւոց և փորդուքալաց յաձախ ի կիր արկանեն ի գրեխս ի գէղ փորձարութեանն և թանչից ի վերայ եկելոց յոլի կանանց, և մանկանց։ Ջնոյն բնաւի ունի նաև սորա գոյացական մասն, զոր մարթ է ի կիր արկանել յաւելի ցորենոյ մինչև ցքբասն։ Զորեքեին սոքա գտանին ընդ բովանդակ աշխարհն Ամերիկոյ, բայց ոչ ընդ ամենայն տեղս ունին զնոյն ազնուութիւն և զօրութիւն. որք լինին ի Պրասիլիա, ի յոսկեբեր լերինս և յապառաժուտս լաւագոյնք են քան որք բուսանին ի Ճախճախուտս, և ի խոնաւուտս։ Ամենեքեան գիտեալ արժան է, զի արմատքս այսոքիկ ունին կրկին գործունէութիւն, կամ զօրութիւն. այսինքն թուլացուցիչ, և խթիչ, կամ գրգռիչ. եթէ իբրև թուլացուցիչ, կամ որձացուցիչ, պարտ է լինել ի 16 կշիռ ցորենոյ մինչև 32։ Եւ եթէ իբրև խթիչ, օրէն է լինել ի 4։ կշիռ ցորենոյ մինչև ցերկու։

Իբոքոնարիա. տես Թրիսոթիթիա։

Իզոքոս. տես Հիսոսքուս։

Իթիոէպիցիա, կամ մոռպս ռէՀիս, իսն։ մոռպուս ռէՀիուս, կամ ֆէլիս սուֆիքուսիս, լտ։ եռաքան, արբ։ սարբլաք, ամ։ ըստ մեզ՝ գալուկն. տես հտ. ա. գլ. թ. երես 158։

Իլլեաքս։ Անուամբս այս՝ խմանի միսն փամթուքին։

Իլլէէպսա. կամ սեռուամ մինխուամ իլլէէպսա, կամ սէմբէռ վիվուամ թէռեթիուամ. և կամ վէռամիքուլարիս, լտ։ Ցունկ ինչ բազմացօղուն, յապդէ սէմբէր վիվուամի, որոյ տերևն մանր է և հիւթալից, ծաղկին փոքրիկ և գեղջին՝ ըստ նմանութեանն վարդի։ Իսկ արմատն փոքրիկ և մանրաթել։ Սա բուսանի ի քարուտս, և ի վերայ օրմոց, ուՆի մասնաւոր գործունէութիւն ի ժայռքեղջուցանել զմտաՀ, ի փարատել զընդհատ տենդ, զնոյնս պարանոցի, և ըզսքօռպուլեօ անուանեալ ախտն։

Իմբէթիկս, լտ։ էմբէթիՃինէ, կամ վէլանթիքս, իտ։ թէմբէլի, ամ։ գուպա, արբ։ բալա, կամ բէրիվէն, կամ սու, և կամ դէբվէնթ, պր։ և ըստ մեզ՝ ոքբիւն։

Իմբէռամթօրիա օսթռուլթիուամ, կամ սամթռանթիա, և կամ լասէռբիթիուամ Ճէրմանիքում, լտ։ իմբէռամթուիա, իտ։ բասէրՃան, կամ բատիշահօթու, ամ։ խաշիչեալ միլիւք, արբ։ և ըստ մեզ՝ կայսերաբոյս. քանզի որ սովորաբար բուսանի յանտառս իբր երկու ոտնաչափ բարձրութիւն։ Տերևք սորա մեծ են, և երկարաՀերՃ, և իբր

աղոցաբերան. որք երեք երեք երանեն ի վերայ մոյ կանթի։ Ծաղիկքն փթթին ի գագաթան, և են սպիտակ, և հինգթերթեան, որք բերեն զնմանութիւն Հովանոցի։ Պտուղքն փոքրիկ, և քոլոշչի, և իւրաքանչիւր ի պտղոյ ունի զերկեակ սերմունս ձուաձեւս, և սպիտակս։ Իսկ արմատն ստուար, անհարթ, թեփաշէջ, կնճռատպատ, գիժուարաբեկ, թոյս, հիւթալից, և առ փոքր մի դառն. այլ հաճելիացն, և խայթող, որ և զլեզու ծաղքոյն կիզէ. միանգամայն և գեղ ազդու ընդդէմ խթից երկօրեայ տենդից, գիժուարամարսուն և յոգի օդոց, զի է խթիչ բնութեամբ։ Զամին ի 10 ցորենոյ մինչ ց30 խառն ընդ հինգ ունկի ջրոյ։

Ինթէգաքսանթալէ. անուամբս այս՝ խմանին կողական միտուանք։

Ինթէսանթինում, լս։ ինթէսանթինս, կամ էնթրակօնէ, կամ քուրանթէլլս, կամ պուտէլլս, կամ միչէռա. կամ միուռնիա, և կամ ինթէռիօրս, իս։ էրմաս, կամ միահ, և կամ մասարենս, արբ։ Ճիկէրպէնտ, կամ լէվենտ, և կամ բուտէ, պր։ պտղոսաք, ատ։ և ըստ մեզ՝ փորոտիք, կամ աղիք, և կամ ընդերք։

Ինթէսանթինում թէնուէ, լս։ նեզ աղիք հուպ ի պտղան. զորմէ տես ի բառն Օս։

Ինթէսանթինում իրէս, լս։ այսու անուամբ խմանի՝ փանթոյթն, որ է վերջինն ի նուրբ աղիս մարմնոյ։

Ինթէսանթինում տուօաէնուում, լս։ ըստ մեզ՝ առաջնոյն, կամ նախագի, որ է առաջին աղիքն, կամ սկիզբն աղեաց։

Ինթէսանթինում քռասյա, լս։ Ի ստուար աղիքն՝ որ սկսանի ի սեղոմէ անտի, որ կոչի՝ իրնաքա. տես և Օս։

Ինթէսանթինում քօլն, լս։ կէսուէն պտղոսաղ, ատ։ ըստ մեզ՝ հաստաղիք, կամ կոզն։ Ի լայնագոյն և ըստուարագոյն քան զամենայն աղիս։

Ինկօռկամէնթօ. տես օսթուռցիսնէ տէլլ չիռռօ։

Ինճէնս։ Ի անուն միանաց սրունից։

Ինչէնսս. տես թէռս։

Ինչէնսում, լս։ ինչէնտիս, իս։ միտէ հարարէթի, ատ։ ըստ մեզ՝ տասլ ատամրաց տակս անմարսութեան։

Ինսբիսանցիա։ Ի անուն ընդհանուր նշանակիչ ամենակերպ դեղոցրեից, որք առաւել թանձրացուցիչ են՝ քան զջիմէտուում ինքրասանթէէ անուանեալ դեղոցս, որով և խափանին ընդմանալ նոցա ի զանգուածս արեան, և ապականել, որպիսի են քաքաս, իքսիօքոլլա,

սբերմատէթի, կոմնա տրաքականթի, և արապէքա, լիդուլիցիա, սաղասարիլնա, և՜ն։

Ինտակո. }
Ինտիկո. } տես անել։
Ինտիքուա.

Ինքուլարէ, իս։ չիչէկ աշլամասը, տՀ։ ըստ մեզ՝ պատուասանել զալիսանկ. այսինքն զծաղիկ անուանեալ չիանդուլթին տալայոց։

Ինքանթիանէնցա տի օռինա, իս։ սիտիք թուլթամամաքլը, կամ պէլ կէվէքլիղի, տՀ։ ըստ մեզ՝ անժուժութիւն, կամ անժուժկալութիւն միղ. տես հա. ա. դլ. է. երես 128։

Ինֆէրմա. տես մօրպուա։

Ինֆիրմամացիանէ, կամ ինֆիրմամՀիանէ, կամ ինֆիրմամանթա, իս։ հարարէթի չէտիա. կամ թուլթուշմաք, տՀ։ միւհրիբան, կամ ելթիհապ, կամ իլթիհապ, արբ։ թապիիրիմ, կամ թէպիկիրիմ, պր։ և ըստ մեզ՝ բորբոքումն, կամ հրդեհումն. որով նշանակին հասարակ կրկին ի և իցէ տապացուցիչ, կամ բորբոքիչ ախտք, և խօթուլթիք։

Ինֆիրմացիանէ տէի բօլմանի. տես բէրիբանէումանիա։

Ինֆիրմացիանէ տէլլէ վիշէռէ. տես ինֆիրմացիանէ տէլ վէնթրիքօլօ։

Ինֆիրմացիանէ տէլ չէռվէլլօ. տես հա. ա. դլ. է. երես 51։

Ինֆիրմացիանէ տէի ռէնի. տես նէֆրէթիտէ։

Ինֆիրմացիանէ տէի օրրէքքի. տես օֆթիթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլ տիաֆրամմա. տես տիաֆրամաթմաթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլ վէնթրէքքօլօ. տես էնթէրէթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլ ֆէկատօ. տես էբատիթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլ քուլօռէ. տես քաուլիթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլլա բլէուռա. տես բլէուռիթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլլա լարինՀէ. տես լինանքէ։

Ինֆիրմացիանէ տէլլա լինիռա. տես կրօսիթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլլա կօլա. տես չինանքէ։

Ինֆիրմացիանէ տէլլա միլցա. տես սպլէնիթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլլ՝ ուռինա. տես մանթուրիթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլլա վէշիքա. տես չիսթիթիտէ։

Ինֆիրմացիանէ տէլլօ սթոմաքօ. տես կասթուրիթիտէ։

Խնֆիամմացիսնէ տէլլ՝ զբ.քիօ. տես օթթաբլիթիսէ։

Խնֆիաւլիսնէ, իս։ թրջոց, հեղու�կամ արկուում 'ի հեղուկս, յորում արկեալ լինէ, զորօրինակ խէժ, արմատ, տերեւք, կեղևանք ևն, մեայ մինչև ցարտադրիլ ներդործութեցն 'ի հեղանիւթն յայն։

Խպերիս, կամ լէբիսիում հօրթէնսէ, լս։ լէբիսիս սի տիսաքօրիսէ, կամ հէրպա տարչամթիքա, իս։ խոտ բաղմաթիւղ յաղդէ լէբիսիումի, որ սովորաբար բուսանի 'ի բուրաստանս, և 'ի վերայ որմոց՝ իբր մի և կէս ոտնաչափ բարձրութ։ Տերևք նորա խիտ են և եղերահերձ. և իբր սղոցաբերանք։ Ծաղիկքն սպիտակ և քառեակ թերթեան, որք փթթին 'ի ծայրս ճիւղոց։ Պտուղն նիզականման, և խոռոչաւոր, յորում է սերմն մանր, և երկայն նման։ Խակ արմատն երկայն, ստուար, փայտային, և սպիտակ, միանդամայն և դեղ ընդգէմ շիանթիքա անուանեալ յօդուածացաւուն, խցանաց փայծեղան, և նուազութեան գաշտանի. զի է բնութիւն խթիչ, կամ գրգռիչ։

Խպիտա, լս։ շիանթիքա, իս։ ըսքլ նիսա, արբ։ Է ցաւ լինչ ստամոքի՝ որ սովորաբար 'ի վերս երևի 'ի յօդուածս ազդեալն կից ընդ ոսկեր անուանեալ շիս. տես և հտ. ա. երես 256, 263։

Խպուռնա. տես սօբրուէսիսնէ տ՝ օռնիս։

Խսօբ, կամ իզսբօ. տես հիսաօբուս։

Խտարկօկա, լս։ սու չէքիձէ մալիձէլէր, տՀ։ և ըստ մեզ՝ Ջուաքարշ։ Է անուն ընդհանուր նշանակիչ ամենատեսակ գեղոքիցց, որք քարշեալ 'ի գուրս արտահանեն զջուրս կամ զշիճուկս 'ի մարմնոյ, որպիսի են քսմոլ, մուլուս մսեօր։

Խտրանիս. տես մէգբուրիա։

Խտրբիզնա, կամ հիթրբօս, լս։ խտիսաղ, արբ։ սուսրսկաբ, տՀ։ և ըստ մեզ՝ Ջրգողութեան. տես հտ. ա. երես 138։

Խտրբիզնա տէլ բէթթս, իս։ կէրուա սրսկաբ. տՀ։ խտիսաղայն ստար, կամ ստուար, արբ։ և ըստ մեզ՝ Ջրգողութեան կրծոց. տես հտ. ա. երես 148։

Խտրբիզնա տէլլա թէսեթա, իս։ պաչ սրսկաբ, տՀ։ խտիսաղայն ռաս, արբ։ և ըստ մեզ՝ Ջրգողուն գլխոյ, կամ ուղղոյ. տես հտ. ա. երես 151։

Խտրբիզնա սաքբանա. տես հտ. ա. երես 153։

Խտրբէնիաբ. տես խտրբիզնա տէլլա թէսեթա։

Խտրքաբտիա, լս։ Իւրէք սրսկաբ, տՀ։ խտիսաղայն խայլոյ, արբ։ և ըստ մեզ՝ Ջրգողութեան սրտակրանաց։

Իտրոֆիթալիա, լտ։ կէօզ. սրսկասը, տՀ։ Ջրդողութիւն աչաց։

Իտրոֆիօպիա, լտ։ ըստ մեզ՝ Ջրավախութիւն։ Է ախտ ինչ գՀենեայ, որով ոք երկնչի ի Ջրոյ, որ սովորաբար յատաչանաչ ի խածտտմանէ կատաղի շանց, և այլ կենդանեաց։

Իրիս Փլօրէնթինա, լտ։ Իրիսեէ Փիւորէնթինա, կամ ՀիսՀՀիօլ, իտ։ Փիւորէնցա մէնէքչէսի կամ սուսէն, տՀ։ և ըստ մեզ՝ հիրիկ, կամ շուշան բոյս աղուեահոտ, յատՀախեալ յիսաալնա՝ նա յաւէտ ի Փիւորէնցա. որոյ ցօղումն է երկայն իբր երկու ոտնաչափ, ուղիղ, բոլորակ, մոխրագոյն, ծՀրաւոր, և փոչալից։ Տերևք սորա են երկայն, պարարտ, և անկանեմ։ Ծաղիկն սպիտակ, և շքեղ։ Պտուղն երկայնաձև, ունելով ի միջն երկեակ խորշս, յորում լի են սերմունք բոլորակաձևք։ Իսկ արմատն երկայն, ստուար իբր բՀաչափ, սպիտակ, ծանր, մանուշակահոտ, ստպախառն դառն, և դիւրաբեկելի, միանգամայն և դեղ ընդդէմ շնչարգելումն և ախտից կրծոց։ զի է բնութիւն թուլացուցիչ և մեղմասէս լուծիչ, և երբեմն ևս սաստկապէս լուծիչ։ Չափն ի 12 ցորենոյ մինչև 24։ Ի յարմատոյ ստսի կազմեն զշնտակ, զոր զետեղեն ի ներքս խարանի՝ առ ի բաց պահել զայն, և յինքն ձգել զարբաալիր հիւթս մարմնոյ։ Ի տեղիս տեղիս ի վար արկանեն նաև ի տալ զհոտ իւղոց։ Սովորաբար ի յարգի համարի ի հեղինակաց բուսեայն ի Փիւորէնցա, բայց թուի թէ և բուսեալքն յերկիրս մեր աբևելեան մարթին ունել զզուգահաւասար ազնուութիւն վերոյիշելոյն։

ԻքՀԹիՀՀօքօլա, կամ կուլՀԹէն ալքանաք, լտ։ քՀՀ-ղա տի բՀՀէ, իտ։ պալքք թՀուԹիկալը, տՀ։ ռուՀմէ, կամ կուտ, կամ խիռէ, արբ։ և ըստ մեզ՝ սոսինձ ձկան։ Է խՀային գոյացութիւն ինչ, զոր արտահանեն ի մարթոց, և յընդերաց իրիք անսակր և համեղամիս ձկան կոչեցելոց լատինական բարբառով նուօս, կամ էքսօսսիս։ Արդ՝ գոյացումս այս ի սկզբան անդ է դանդաղամսմած և թանձր, և ապա ընդերկար աշխատանօք պնդանայ, և լինի սոսինձ մածուցիկ, և կպչուն, որոյ ընտրագոյնն է սպիտակ, պայծառ, թափանցիկ, և անՀոտ, զոր արՀեստաւորքն ի կիր առնուն ի զանազան գործս, որպէս և մեք ի գաղտնարան։ որ է օգտակար կրծոց, հաղի, և ախտի գաղղեանսի։ զի է կակղացուցիչ, թանձրացուցիչ, և քաղցրացուցիչ։

ԻբՀնեռումն, կամ մուս ֆառաածնիս, և կամ մուս ին-
տիքուս, լա։ Թօքօ տի էՀնիթեթ, կամ թօքօ ա՝ ինտիա,
և թօքօ տի ֆառաածն, իա։ սայիտ սըչանը, և կամ հինտ
ըչանը, ատ։ ֆառալ ֆուաածն։ արբ։ և ըստ մեզ թարգ-
մանագրի՝ մուկն փարաւոնի։ Ի կենդանի քառոտանի
յաՀախեալ առ նեղոսիս, զօրեղ և մեծ ի չափ հասա-
բակ կատուի, մորձն կարծը և խայտաբղէտ։ ընչացքն
սեաւ, և խիտ, որ բերէ զնմանութիւն խոզի, ականջքն
փոքրիկ, և բոլորակ, ատամունքն նման են ատենեկին կա-
տուի, որպէս և լերդու նորա։ սրունքն սեաւ, ատուն
թաւ և վերամբարձ ըստ ազուիսու։ իսկ կերակուր նորա
է օձ, գորտ, խիտունք, մուկն, գեանառուծ, մողէս, և
այլ զանազան զեռուկք։ Ի նենգաւոր բարուք, և մա-
հուչափ թշնամի կոկորդիլոսի, որ ըստ ոմանց մանաւ՝ ի
փոր նորա ուտէ զմորտոխին, և զլեարդն, որով և սպա-
նանէ զնա, և յետոյ ընդ երաստանն արտաքս ելանէ։
Նորա միս՝ որ է քրտնաբեր, և ազդողական բնութիւն՝ լինի
դեղ ընդդէմ խթից որովայնի, խածուածոց կատաղի
ջանց, և թունաւոր կենդանեաց։

Լ.

Լաբաթեհում կամ ռումէքս աքուԹուս, կամ լա-
բաթեհում սքուԹում, կամ օքսի լաբաթեհում, լա։
Լորպիօ, կամ բօսիդէչ, և կամ ռօմիչ, լաբաթօ ա-
քուԹուս, իա։ ալհուն օՀՀու, կամ լաղատա, ատ։ լա-
բաթօս, կամ ալաբասս, յն։ և ըստ մեզ՝ ատէրուկ։ Բոյս
յաՀախեալ՝ ի կորդ, և յամայի վայրս, երկայն երբ մի և
կէս ասնաչափ։ Տերև սորա նման է տերևոց թրենջիլի,
տալ երկայն և տարաՀամ քան զայն, զոր ժողովին հաւ-
սին, և եփեալ ուտեն որպէս զայգայն։ Ծաղիկն ողիս-
զօրէն, գեղնագոյն, վեցԹերԹեան, և բազմաՀէջք։ բեր-
բէ և սերմունս եռանկիւնաձև և շագանակագոյնս։ Իսկ
արմատն երկայն, ատուար մատանաչափ, գեղնագոյն, և
դառնահամ, միանգամայն և թունաբացուցիչ բնութիւն, և
գեղ ընդդէմ աքօձբութիւն, սխտի մորձոց և գալկան։
Չափն՝ ի չորս դրամի մինչև ցուԹ խառն ընդ մի լիտր
ջրոյ։ Նոյնպէս օգտաւէտ է՝ ի դիպուածս որքիւնոյ։ զոր

մարթ է լոսէ՛ի մուշի մանրամասն և խառնել Ը բաւական նաչաւի մածնոյ, Ը փոքր ինչ ջրոյ լեմնի, և ստէպ ստէպ օծանել նոմա՛ ի վերայ վշտագնեալ մասին մարմնոյ :

Լաբիս, լս : բիւնթրա, խս : լնթօս, յն : թաշ, տՀ : գահկաս, կամ գահկառեւ, կամ հաՀաբ, և կամ պէՀ-պէռն, աբբ : սէնկ, կամ սիւանթ, պր : Ի անուն ընդ հանուբ ն և իցէ տեսակի քարանց, որ ի վար արկանի ի գեղոբայս :

Լաբիս տէթիթիս, կամ տէթիթիա լատին, լս : բիւ-թրա ագուիլնս, կամ էթիթի, խս : սէթօս, յն : գաբ-թալ թաշը, տՀ : հաՀաբիլ նիսր, աբբ : և ըստ մեզ՝ աբ-ծուաքար : Ի ազգ ինչ կարծրապինդ նիւթոյ, որ ըստ տեսոց գտանի ի բոյն արծուոյ . որոյ վասն և կոչեցաւ յանուն նորա : Գեղեակ է սոբա տեսակ . առաջինն է մեծ իբր ընկուզաչափ , ձուաձև, և թրխագոյն : Երկ-բորդն՝ փոքր է և սեաւ նման ըստ իսկ մարքասիթ ա-նուանեալ քարի : Երրորդն՝ փոքր է քան զերկոսին, և սեանիչ, և գոյն նորա մթին գեղին՝ ի գոյն բրքմոյ : Իսկ չորրորդն՝ գորշագոյն է և մածուցիկ, որ յաՀախ գտանի յերկիրն գերմանիոյ : Զորեքին սոքա օգտին տոլայաբերից՝ կապելով՝ ի վերայ սրտնոյ . ունի և մասնաւոր գործու-նեութիւն՝ ի փարատել զլուսնոտուն, և զիսորչարուն :

Լաբիս ենիֆէռնուին, լս : բիւնթրա ենիֆէռնալ, օսսի սեքթօնկաօ տի արՀէնթօ ֆիւսս, խս : ՀէՀէնենէմ թաշը, տՀ : հաՀաբիլ ՀէՀէնենէմ, տՀ : և ըստ մեզ թարգմա-նագրի՝ քար դժօխայնի : Ի նիւթ ինչ խստապինդ, և կիր զողական, բարկացեալ յարծաթոյ, և ի ժանտաղոյ, զոր վերաբերիչք յաՀախ՝ ի կիր արկանեն ի ծախել զաւէ-լորդ մասունս մասամբեալ վերայ , ի բանալ զկարծրապինդ ուռոյցս, և զելունդս, և ի փարատել զնոցս երեփան-գանս , և գաղղիական :

Լաբիս կՀօտ, լս : բիւնթրա տի կՀօտ, խս : գոստպար ան-տոն թաշը, տՀ : և ըստ մեզ՝ քար գոստպար անտոնի : Քար բազադրական, կազմեալ ի բազմատեսակ նիւթոց . ընտ-է խեթիչ, և ջրացուցիչ . զոր մարքն է՝ ի կիր առնու՝ ընդ-դէմ դժնեայ պնասակաց , մանաւանդ և որդնեռաց տենդից :

Լաբիս սէրբէնթինիս, լս : բիւնթրա տի սէրբէնթինս , խս : եբանՀնբք թաշը, տՀ : հաՀաբիլ Հայլ, աբբ : և ըստ մեզ թարգմանագրի՝ օձաքար : Ի փոքրիկ, բոլորակ և սեաւ քար ինչ, որ արտադրի՝ ի գլխոյ իրեք օձի կոչեցեալոյ գաղ-ղիական բարբառով սէրբանթօ շափրն, որ լինի դեղ աղ-դու ընդդէմ Հալուածոց կամ խածուածոց կատաղի շանց,

և Թունաւոր զեռնոց՝ կապելով և ելթ զայն ի վերայ վէրաւորեալ մասին մարմնոյ. բայց դիտել արժան է զի ելեթէ անցեալ իցէ ժամանակ բաւում, մինչև խառնեալ Թունկից ընդ արեան, յայնժամ ոչ նեղգործէ զզօրութիւնն։ Վարի և ի բժշկուն ախոին՝ ելանէնքը կոչեցեալ ի Թուրքաց։

Լամթուկա. տես լաքթուքա։

Լամթիրիս, լս։ քամթաբուշիա, կամ քամթաբուշիա կամ քամթաբուցցա, իս։ հաւպլրլիւլիւք, կամ մաշուք, կամ սէմքէա, կամ դաշիարիքա, արբ։ շէսրէմ, կամ շիւարիւմ, կամ մահուպտանէ, և կամ մահուպտանէ, պր։ ապտիսէլաթին, ատ։ կոշլ և ի բարբառ լսուիենացուց կը բանեալ բէՀիւմ մինուս, կամ մսեուս։ Ի պտուղ ինչ բոլորաձև, ստուար, և կեղևատաս՝ ը թիթիխնկլիսիմէՔ նորա է հիւթալից, սպիտակ, և կիզուական. և միանգամայն և դեղ հզօրապէս լուծիչ, և որձացուցիչ, որով և առեթէ զնէթս ապեաց, և ստամքսի. առ բժշկիս արարիոյ, պարսից, և հնդկաց, յայծախ ի կիր արկանի ի բժշկուն ջրդողուն, խելաքեանուեթ, վերնոտուեթ, և սխտի թմբրուն, և յայլ կիրպ կիրպ լուծողական դեղոբայս. բայց առ եւրոպացիս՝ գուն ուրեք։ Ի պտղոյ առտի եղուզանեն նուն ալդ ալ, որով օծանեն զանգանն անդամգոտաց, զի է խիթչ բնութ։ Եւ ուրեք ի կիր արկանի յերիս շիաշախս խառն ընդ շաքարի առ ի սաստակել զՀնձիս, և զորդունս որովայնի։ Բոյս սորա է կանձանլից՝ յաղգէ թիթիխանկլիսի՝ բուսեալ յայգարակս և ի պարտէզս կբր երկու ոտնաչափ բարձրութիւն։ Տերևք սորա երկայն են և յոլկեալ ըստ նմանութեան տերևոց ուռենոյ, զոր լսեալ ի սանդ և ցանեալ ի վերայ մատնելալ վերբայ՝ խակոյն ծիւրեալ մաշէ։ Ծաղկին փոքրիկ, քառեակ թերթեան, բաժակաձև, և դեղնագոյն, որ ի վերբ երևի ի գագաթանն՝ հանգերձ փոքրիկ առէչիւք։ Խակ արմատն բոլորշի, և թեալլից։

Լամրօնէ. տես Քուամրօնիսէս։

Լամիում բուրբուռեում, կամ ուրթիքա մոռթուա, կամ կալէօրսիս, լս։ օռնիթքա Քիէնիտա, իս։ Ի խոտ զաղաՀոտ, որոյ ցօղունն է երկայն, ճիւղալից, և մէջն դատարկ։ Տերևն ունի նմանութեի ընդ տերևոց եղնձոյ, բայց փոքր և փափուկ քան զայն։ Ծաղկին փոքրիկ, որկորաձև, և ծիրանագոյն։ Սերմն ստուար, եռանկիւնաձև, կարմիրանգ, և շողշողուն։ Խակ արմատն մանր, թելալից։ Այս խոտ օգտաւէտ է ընդդէմ փորհարութեան,

խոյլսարանոցի, և ախտին ֆիլուօրէ սպիանքօ կոչեցեալ յիսաւացուց։

Լաուրէօլա. տես քէմիտաբէնէ։

Լաուտանում ընդ խաուում, լտ։ Թինեթուրա թէպաէ-քա, կամ վին տ՝ օրիօ սրօմանթիքօ, և կամ լաուտանօ լէ գուէնս, իտ։ ափիոն ուռնիս, տմ։ և ըստ մեզ՝ ոգի ա-փիոնի։ Է հեղանիւեթ ինչ հոտաւէտ, և ներմուհամ. որ այսպէս բաղադրի։ Առկ զնոյնոր փոշի ափիոնի՝ ըստ կշռոյ երկուց ունկեայց՝ ի լիտր մի սպիտակ գինւոյ, յաւել լով՝ ի նոյն զմի տրամ՝ մեխակ, և զնոյն չափ՝ կինամոն. զնիսի ուռթ սուռլոց՝ քամեա խիտ կոսաւով յայլ անօթ՝ ի պահեսա։ Բնութիւն է գրգռիչ, և թմրեցուցիչ, որով գրգռէ զքունն, մեքզի զցաւս գէմեեայս, արգելու զրունի շարժումն մկանանց և ջլոց, խափանէ զնգդասումն, զիրա-խումն, և զհոտումն արեան։ Չափն՝ ի յերկու շլեէ մինչ չէ ցչորս. այս չափ վասն մնասող մանկանց. իսկ չափա-հասակաց մինչև ցշկ, և փոքր ինչ սաւաւել ըստ պի-տոյութեան։ Ի մէջ մի տրամ այսր հեղանիւեթոյ գասանի ուռթ կշիռ ցորեան ափիոն։ Ի տեղս տեղիս՝ ի վայ տրա-նեն նաև՝ ի բժշկութեան երկօրեայ, և եռօրեայ տենդից, և փոքրաբուլեթ։

Լաուրեա նօսպիլիս, լտ։ լաուրօ ռէգիիս, կամ պլօ-ռա, իտ, տաքինի, յն։ Թէքինէ, տմ։ լուրիէ, գղղ։ Ըզ-զառ, կամ գասռ, և կամ ռէնտ, սրբ։ տէհմէթթ, պր։ և ըստ մեզ՝ գաքնի, կամ սարդենի։ Ծառ՝ յաձախեալ յեւրոպիա, ոտաւոր, գորշակերպ, և ծակտակէն, որոյ ոստքն երկայն են և սուռալ իբր զբազուկ մարդոյ։ Տե-բեան մշտադալար, երկայնաձև, լայն իբրև երկու և կէս մատնաչափ, կարծր, ջղային, մաքուր, կարճանոթ, հիւթալից, և ախորժահոտ, և տաղաստամ։ Ծաղիկն հեղձոտ, միեթերեան, և դեղին, և ի տեղս տեղիս նաև սպիտակ։ Պտուղն փոքրիկ՝ ի չափ կեռասի, բոլորակ, սեաւ, հոտաւէտ. խոշորին, և դառնահամ, ունի և սերմունս երկայնաձևս։ Իսկ արմատն ստուար, և խոր սաքորտ։ Զսորա տերև, որ է ի ցնդական աղիս և խ-ղամ՝ ի կիր արկանեն՝ ի դեղ Թաքիուլեթի ջլոց և ուղղոյ, ջղային գիտաբարձրութեան, և նուազութեան ամենայն պարտուց կանանց և անտուց արգանդի. զի է խթիչ ըստ-նութեան։ Ջնոյն գործունէութիւն ունի և սորա պտուղն. բայց թնուն պտղոյն սաւաւել ներմադին է քան զտերևոցն, ամին իրն ոչ է պատշաճ՝ ներմագին բնութեան վիճակելոց։ Չափն՝ ի կէս տրամէ մինչև ցմի ամրողջ։ Ի պտղոյ ոստի

կասմն և զիւղ ինչ կանաչագոյն, որ է գեղ պատուա-
կան ընդդէմ ցաւոց ջաց, և ոսկերաց՝ օգնելով։

Լաուրօչէրաղուս կամ լաուրի բէՀիաէ, լտ։ լաուռօ
ռէՀիս, իտ։ Ի ծառ մշտադալար, և շքեղատեսիլ, յա-
ճախեալ յեւրոպա ի բուրաստանս, և ի պարտէզս, ո-
րոյ բուն է ուղիղ, ստիստակափայտ, Թխախառն կանա-
չակեղև, և ոստաւոիկ։ Տերևն ջղային, յղկեալ շողշողուն,
և գառնահամ. ունի զհոտ ախորժելի և Թափանցիկ՝
նման ըստ իմիք՝ հոտոյ գառն նշոյ, յորմէ խառնեն չա-
փով ընդ օղիկի ի տալ հոտ ախորժելի։ Ի տերևոյ տա-
տի արտահանեն զՅուր ինչ ստիստակ՝ ի ձեռն ցքահան
գործեալ, զոր անուանեն՝ Աքգուա տի լաուռօչէրիզէ,
որ և ի լատինացւոց՝ Աքուա լաուռօչէրաղուս, որ է
սաստիկ Թիւնաւոր, և ուժգին Թուլացուցիչ բնութիւն։
Սա վասն ուժգին Թուլացուցիչ զօրութեան իւրոյ ելիցս-
նէ զտասպս ջերմկանս բորբոքեալս, որք պատճառին
յայլ և յայլ ջերմեռանոցս ախտից. ապաքինէ նաև զվերս
Թոքոց, և սաստիկ զորդուն և զՀՃիս որովայնի. այլև
բուժէ զքաղցկերդ, զիլգենի, և զախան գաղղիական։
Դարձեալ՝ օգտակար է կշտացաւութեան, դլխացաւութեան,
փոքացաւութեան, յօգուածացաւութեան, վասն թարգոյն հա-
զից, փայծեղնացաւոյ, և ցնորման։ Ծաղկին ողկուզ-
ք՝ հինգ Թերթեան, և անհոտ, ստիստակխառն կարմիր։
Իսկ մինչ զՊերեման ծաղկանց ի բաց ԹօՀափին, ի վեր
երևի ի միջի մասին կարմրերանգ պտուղն ձուաձև, փե-
ՀՃկաւոր, և գիւրաբեկ, ունելով ի միջի կորիզս երկայ-
նաձև և գառնահամս։ Զօրութիւն նոյն է ընդ տերևոյն,
բայց որակութիւն տերևոյն առաւել Թիւնաւոր է և մահա-
բեր քան զսպղոյն։ Զատին ի ցքահանէ երևուեալ Ջրոյ
ի 4 շՀէ մինչև 36 յաւուրն, խառն ընդ փոքր ինչ
Ջրոյ։

ԼաւանէՀուս, լտ։ Զուկն ինչ յազգէ կարմրախայ-
տի, յաճախեալ ի ձորափորս և յայսպառաժուս վտակա-
երկայնութիւն նորա իբր ոտնաչափ, իսկ լայնութիւն ձեռնա-
չափ. Թեփ մարմնոյն ստիստակ, և փայլուն. գլուխն փոք-
րիկ և երկայնաձև. իսկ միսն մածուցիկ, փափուկ, և
համեղ յոյժ, միանգամայն և գեղ ազդու ի դիպուածս
ցաւոց կրծոց, և ախտի Թոքոց։

Լաւենտուլա սրիքա, լտ։ լավանտա, կամ սրիկս նարդ-
սս, իտ։ լավանտ, գղղ։ հիւսամէ՝ քԹու, կամ՝ լավանտա,
և կամ՝ նէրտէն, ամ՝ և բան մէղ՝ նարդոս։ Ի բոյս սաստ-
կահոտ յաճախեալ լիսալիա, ի սպանիա, և ի զվիցցե-

բա, երկայն իբր երեք ոտնաչափ, քառանկիւնաձև, փայտային և կարծր։ Տերեւք սորա երկայնաձև են և սրածայր, ծաղկեւքն փոքրիկ, խոռոչաւոր, ոլոր ոլորաձև, սպիտակ՝ և անուշահոտ, որք շղթայակերպ շարին 'ի վերայ ճիւղոց հանգերձ տատամնաձև և կոտրագոյն հասկաւ։ Իսկ սերմունք նորա՝ որք ընկին 'ի խոռոչս ծաղկանց՝ մանր են և երկայնաձև։ Այս բոյս լի է ցնդական ալեւ, և իւղով. որոյ եթէ ծաղկին, և եթէ հանին են գեղ ազդողական 'ի դիպուածս տախից ջլաց, ջղային տենդի, նուազման սրտի, առնելոց 'ի տիարութեէ ջլաց, և յերկարատև խօթութէ, նոյնպէս և անդամագօսութեէ, յօգուտածացաւութեան և փքախտութեէ. զի է խթիչ բնութեէ։ Զատին 'ի կէս սրամեմինչև ցմի և կէս խառն ընդ երկու լիտր ջրոյ։ 'Ի սմանէ ելուցանեն նաև զիւղ ինչ ալիս և յոյժ քաղցրահոտ. որ սակաւ 'ի կիր արկանի յօծանելս, նաև 'ի քուօսախաս 'ի զուարճութեէ, և 'ի զօրութեէ սրտի։ Զատին 'ի մի շթեէ մինչև ցչորս։ Կոյնպէս և սրասահանեն յայսմանէ զոգի ինչ հոտաւէտ և թարմանչիկ, միանգամայն և գեղ ազդու և դիպուածս վերոգրեալ տախից։ Զատին 'ի 15 շթեէ մինչև ցկ0 կամ ց60, խառն ընդ հաստաբակ ջրոյ։

Լարինքս, լս։ լարինձէ, խս։ հօրօշձա, ոձ։ և ըստ մեզ՝ հաղագս։ Ըստ անդամանմնոց նշանակի գլուխ ընչաւորոցն, որ է գործարան ձայնի։ և ամենայն ազգք ձայնից զայսմանէ գործարանէ կախեն։ Նմին իբրև բացատրել օրէն է թէ որպիսի ինչ է յօրինուած նորին, և թէ յինչ մասանց բաղկանայ, զի լաւագոյն ևս հասու լցի հեռաքնին վերծանօղն հարազատ պատճառաց ձայնի։ Քանզի սատացաք, թէ հաղագն է գլուխ, կամ վերջին մասն ընչափողին, կամ խռչափողին։ ոչ այլ ինչ է բայց եթէ գործարան բաղկացեալ յաճառաց՝ որք բարձեալ բերեն զլեզուակ, և 'ի թարձեթից բոլորեալ միանմանք և ընչք, նախնեարք և յատկապէս կարգեալ յաղագս արտաբերութեէ ձայնի։ Եւ է մարմին պլնդ, խիտ, և պատբարտ, մեծ, և ընդարձակ, ունելով զերկայնութիւն զայնութիւն, և զիսորուի, ուռուցմամբ, կամ արտաքս ցցմամբ՝ մանաւանդ 'ի պարանոցս արտից ցուցեալ. որ է բոլորշի և բոլորակ, սակայն խոտորնաբանութեէ ինչ։ Քանզի յառաջագ կողմանէ ճշգիւ բոլորշի է, այլ 'ի յետուստ կողմանէ՝ ուր 'ի յորկորն կոյս հայի՝ սակաւ առ սակաւ վերեալ 'ի կատարեալ բոլորշի ձեւոյ, և ստանայ զերկայնութիւն ինչ։ 'Ի ներքուստ է ծակ ինչ այսր մարմնոյ, որ ասի ձեղքուած, կամ լեզուակ նորին։ որոյ շաքեղութեէն,

և պիտանութիւնն ամենայն գովեստից է արժանի։ Քանզի այսմ մասին յաւէտ շնորհէալ է գործողութեան հագագիւն, և ի մանէ կերպարանի ձայնն (որ է այսր գործարանի յատուկ գործողութիւն)։ այս է իբր զի օգնի որ ը այն անցանէ՝ Ճնչեալ, և ելուզեալ, սքանչելի իմն արարև պատճառելութեաբ և գործողութեաբ երկբասան մկանացեալ ձայնն արտագրէ։ Ա յլ գիտեալ արժան է, զի ի հագագն զուգընթացեան գլխաւորաբար երկու մասուն՝ որք մեծի ուշադրութեան արժանի են. այս է՝ լեզուակ, և մանկալեզուակ։ Լեզուակն անուանեալ կլինի թեթև, է գոյացութեան հագագին թաղանթային, Ճարպալից, մանուտ, կազմեալ առանձին մսով, և պարէնքինեաւ, որ ի ծայրն ունի զՃնդաքուծած խողովակն՝ զարձող լեզուին, Քանզի զորօրինակ ցանցատեսակն է տեղի տեսութեան, և պարէնքինայն լերգին՝ է արարող արեան, նոյնպէս դնեմք՝ թէ այն թաղանթային, Ճարպալից, մանուտ մարմին՝ օձեալ խճային և իւրային խմաւութեաբ, է յատուկ և հարազատ գործարան արտաբերութեան ձայնի։ Իսկ մանկալեզուակն կոչեցեալ էբիկլոթթիս, մասն ինչ լեզուակին, որ զփոխանորդուն վարէ զնփոյ, կամ զկոփարչի, զդուշութեամբ ի վերայ կայ, և արգելու, զի մի ինչ յուռեալեաց կամ յլմպելեաց ընդ լեզուակն ի հագագ անգր սողոսկեսցէ։ Նմին իբր և դուռն խնամածու, և մարտկոց ասի հագագիւն, որոյ բացմամբն առնուազն զբունչ, և ընչեմք։ Ունի սա և զնբան ի բնութենէ կարգեալ միանուն, որովք երբեմն փակի, և երբեմն բացեալ լինի։

Լարտուս, լտ։ լարաս, կամ կռասաս սթրուԹթս, կամ կռասասուսմ տի բօրբս, իտ։ տօմուզ եաղն, տՃ։ դիրուց կամ Ճարպ խողն։ Ի պարարութիւն խողն զատեալ ի մեջն, և հաղեալ, համեմիչ կերակրոց, և պիտանի ի դեզրոբայս, մանաւանդ յօծանելիս։

Լաք, լտ։ լաթթէ, իտ։ կալայ։ յն։ սիւտ, տՃ։ լէպէն։ կամ լէպէն հալեալ։ կամ սառգ։ կամ սարիֆ, արբ։ շիր։ կամ տէրմաչ, պր։ և լատ մեղ կանթն։ որով նշանակին ամենակերպ զտեալ հիւթք, թէ կենդանեաց, և թէ սեբմանց, ևն, բայց կանթն կենդանեաց՝ որ բնութեան մարդոյս առաւել համեմատ է՝ լինի դեղ օգտաւէտ ուռնառուն, յօդուածայաւուն, անտոից միզարանի, սքօռպութեաի, և ցաւոց կրծոց։ բայց նկատեալ օրէն է, զի մի ապականեսցի կանթն ի ներքս տոմոքսի, որովհետև թթուլացուցիչ է բնութեաբ։

Լաքթուքա, լտ։ լաթթուքա, իտ։ թռխտաքս, յն։

մառուլ, տձ: գէհու, կամ գէպու, կամ գէոք, կամ գիբու, պլ: խաս, սրբ: և ըստ մեզ՝ հաղար, բոյս յայզգէ խաւարտից. որոյ ցօղունն է երկայն և բաղմաճիւղ: Տերևն մեծ, լայն, սպիտակախառն կանաչ, պարարտ, հիւթալից, և բարեհամ. միանգամայն և գեղ ընդգէմ սաստից ջրաց, ստորին որովայնի, սխսնգանոռաուն, և խեթից ապեաց, զի է քնաբեր, խաղաղիչ, խոնաւացուցիչ, և կալբի զուսացուցիչ բնութիւն:

Լաքքա, լտ: լաղգա, կամ կօմմա լաղգա, խտ: ընբ, տձ: Ի խէժ կարծր, մեթին կարմիր, փայլուն, թափանցիկ, դիւրալոյծ, գիւրավառ, և յայրիլն բուրէ զհոտ ա նոյշ. իսկ ի ծառքէն ստացահամ, և ներկէ զարծնոտս կարմիր, յաճախեալ ի բէնկալայ, ի մաղաքար, և ի փեկու, և է սա գործուած թեւաւոր մրջման երիք կամ ճանճի: Վասն զի այն թեւաւոր մրջիւն՝ փոքրիկ և նուրբ կնճռաւ իւրով ծծէ զհիւթս ծառոց, և եղեգանց, և փոխարկէ զայն ի խէժ ճիւթային. և բնակիչք երկրին Ժողովեալ ցսպաձև ձուլեն մասնաչափ թանձրութիւն, և առաքեն ի վաճառ. զոր խառնեալ ընդ կինաբարիսի հնոյսեն զայն կնքամամ. ի տեղիս տեղիս, ի վար արկանեն նաև ի գրգռել զքիրս, ի դաշտանան կանանց, և ի զբացուցանել զնուսեալս ատամանց:

Լէբիտում լաթիֆօլիում, լտ: լէբիսիս, կամ բիբէրիթէ, խտ: եապան էուքաստր, տձ: Ի բոյս յայզգէ կոտեմի. որոյ ցօղունն է երկայն իբր երեք ոտնաչափ, բազմաբակ յոլկեալ, բազմաճիւղ, և ուղղալից: Տերևք նորա են երկայն, լայն, մեթին կանաչ, եղեալքն իբր սղոցաձևքան, և ատստահամ: Ծաղիկն սպիտակ և քառեակեթերեան: Պտուղն փոքրիկ, և խոռոչաւոր: Բերէ և սերմունս մանունս և երկայնաձև: Իսկ արմատն երկայն, ստուար իբր մատնաչափ, օձապտոյտ, սպիտակ, և ատստահամ: Սա բուսանի յանձամ լեռոպա, ի հովանաւոր տեղիս. բնութիւն է խթիչ, որով զզուացանէ սգործողութեան խըժային թաղանթիցն բերանոց, և լորձունաթափ մասնացն որկորոյ: Ըստ ոմանց օգտակար է նաև շիանթիքա անուանեալ յօդուածացաւութեան, ոտքիանց, և բորատեան, և խածուածոց կատաղի շանց. այլև փարատէ զբիծս երեսաց:

Լէբուս, լտ: լէբուէ, խտ: լակօս, յն: խարաղ կամ էռնէպ, և կամ տակրյայ, սրբ: գէօթաէրա, կամ գէօհթէբաչա. կամ հաքկիւշ, և կամ լակօն, պլ: և ըստ մեզ՝ նապաստակ: Ի կենդանեաց քառոտանի, հեղկի, երկչոտ,

թեթեւամտին, սրընթաց, կարճագլուխ. երկայնականք. բոլորակապարանոց, փափկատուն և կարճաձեւ. որպ է. թեթէ ախրան, եթէ լեարդն, և եթէ սրբէնն են գեղք փոքր հարուածեան, միաբագելութեամբ, վերնատուէ, նուազութեամբ ամենայն պարտուց կանանց, և քառօրեայ տենդից։ Ուամենայն զեղն տրա ունի զգործունէութեամբ զիւրոց ցանել զիւրոց ուռեալով, և ի փարատել զկոծիծ ձեռաց զոյսն ինչ օծելով։ Եւ ներքին կողմն սատանքսի այսր կենդանւոյ կախեալ կայ նիւթ ինչ մածուցիկ, զոր լատինք քօաւ կուլուս էրօրիս կոչեն. յորմէ կաղմին զեղ ազգս ընդդէմ թունից, լուծնատուէ, փորհարութեամբ, և նուազութեան ասպի։ Զայն ի կէս տրամէ մինչև ցմի։ Նոյնպէս օգտակար զեղ է և ամոթՁիք նորա. զորոյ պարկն անՁամեալ ի գործ ածին ընդդէմ թուլութեամբ երիկամանց և փամփշտոյ։ Զայն ի 20 ցորենոյ մինչև ցՅՕ։

Լէկօրիցա. տես կլենբրիցա։

Լէնթէ. տես լենս։

Լէնիս. տես լենմ։

Լէնիս ամ ալօէս, տես լենում ալօէս։

Լէնիս ամ գուասպա. տես լենում գուասպա։

Լէնիս մօլուէնսէ. տես լենում մօլուէնսէ։

Լէնիս նէիրիթ բէօ. տես լենում նէբրնիթիքում։

Լէնիս ամ բօսի, տես լենում բՀսոիում։

Լէնիս ամ ֆէուռօ. տես լենում ֆէուռի։

Լենս, լա։ լէնթէ, իս։ ֆաքօս կամ ֆաքի, յն։ մէրՀիմէք, տՁ։ ածՁ, կամ ածէս, կամ ատէս, արբ։ և ըստ մեՁ ասին։ Ի ունդ ինչ ծանօթ ամենեցուն։ յորմէ կաղմեն պէսպէս կերակուրս, որ է մարսեցուցիչ և մեզմապէս լուծիչ ընութեամբ։

Լէուքօռռէա. տես ֆիլասսօ պիանքօ։

Լէուքօռռհէա վէնէռէա. պլէնօռռհՁիա։

Լէպպրա, իս։ լէբրէ, լա. և յն։ Ռիւսամէքք, ոլիուլքք, տՁ։ և ըստ մեՁ ուրկութեամբ, բոր։ Ի սիտ ծանօթ ամենեցուն, տարածեալ ի մարմնս մարմնոյ յատականութեամբ արեանն։

Լէօ, լա։ լէօնէ, կամ լիօնէ, իս։ լէօն, յն։ ասլան, տՁ։ գաՀԹրպ, կամ էստէս, կամ իսուա, կամ լէյա, կամ էՀազանՁիէա, կամ ասլաէմ, կամ ոլքամ. և կամ տարատամ, արբ։ գէվիբ, կամ էբրզէ, կամ շիբ, կամ շիբի ՁէՁեան, կամ շիբի կառուն, և կամ շիբն էերզէ, պր։ և ըստ մեՁ՝ առիՁ։ Գազան ահաւոր և չիկամազ. յարՁանեալ ի ՁԼրմ գաւառս Հարաւային ասիոյ, և յարիրիկէ. յաղ-

թանգամ, և մեծ իբր ութ ոտնաչափ. գլուխ նորա և ք-
բեւս մեծ է և ահագնատեսիլ, զարդաւոր երկայն և թա-
ւահեր բաւիւ. արտաքսնունք կարծր. բերանն լայնաբաց.
ծնօտքն մեծ, և անհարթ, յորս շարեալ կան 14 ատա-
մունք. յորս ջրքն հղօր են և կարի ազդու. ջրքն նուրբ
ըստ շան. իսկ վերջքն փոքրիկ և սրածայր. լեզուն երկայն,
լայն, անհարթ, և գոգաւոր. մարմինն հղօր և համան-
դամայն թեթեւ կաղմուածով. ոչ Ճարպալից, և մեղ-
այլ Ջայլին, և միանուտ. թաթք ոտից Ճիրանաւոր ըստ
կատուոյ, իսկ ոսկերքն այնպէս կուռ մինչ գրեթէ լինի անշ-
ուշ, որ զորութեամբ նորա օգտի ոչ սակաւ: Այս գազան
լի է ցնդական ոգւոյ և իւղով. զորոյ զմիսն բնակիչք երկ-
րին ի գործ ածեն ի գեղոյսայս, ուր և աւանդեն և պրն-
դեն, եթէ է յոյժ զրաստու ջղաց, և ողոյ: Նոյնպէս
զսիրտ նորա փոշիացուցեալ ի կիր արկանեն ի գեղ լուս-
նատուն, և քաւօրեալ տենդից: Զարմն ի 20 ցորենոյ մին-
չև 40: Ջարիւն նորա նոյն օրինակ փոշիացուցեալ ի վար
արկանեն ընդդէմ թունից, զի է քրանաբեր, և խեղ-
բնութիւն: Իսկ Ճարպն ունի զմանաւոր գործունեութիւն ի
զրաց ցուցանել զՀիղս, և ի խոսխանել զշնչիւնս ական-
ջաց: Օգտակար են և ոսկերքն նորա. զորոյ զմիսն անջա-
տեալ, և փոշիացուցեալ ի գործ ածեն ի գեղ ցաւոց ա-
ստամանց և յօգուածոց, և տենդից: Զարմ ի 20 ցորենոյ
մինչև 360:

Լէօբարտուս, կամ բարտուս և կամ բանթէհրա, լս:
Լէօբարտոս, իս: բարս, տՀ: և ըստ մեզ՝ ընձառիւծ: Գա-
զան թեթեւաշարժ, և ամէհի, յաՃախեալ յասիա, և
յափրիկէ. տեսել դիմաց նորա նման է առիւծոյ, կամ
լու ևս կատուի, սակն ընձու. աչքն փոքրիկ, սպիտակ,
կայտառ և յարաշարժ. Ճակատն մեծ և լայն. ականջքն
բոլորշի. լեզուն խորաքորոտ. ատամունքն սրածայր. պա-
բանոցն երկայն, որպէս և մարմին նորա. ազդեալքն մնա-
լիր. սրունքն երկայն. թաթք ոտից Ճիրանաւոր, որոց Ճի-
բանք սրածայր են, և թափանցիկ. իսկ տաւն երկայն:
Լի է իւղով, և ցնդական ոգւոյ, որոյ ամորձիքն անջա-
տեալ ի կիր առկանի ի գեղոյսայս. որ է փարատիչ ախ-
տից արգանդի, և այլոց ախտից կանանց: Զարմն ի 40 ցո-
րենոյ մինչև ցմի տրամ ամբողջ: Իսկ ուղեղն միաբեր է
և սաղմնաձգիչ:

Լէսնեթօտուս թառաբաքուս, լս: Թառատաքս, կս:
Ի բոյս ինչ Եւրոպոյ, որոյ արմատն է անհոտ և սպիտա-
կահիւթ. միանգամայն և գեղ խցանաց որովայնի և այլ

ախտից սաթելոց յուժելութեէ. զի է թուլացուցիչ բնութեամբ։ Զամին 2 ունիի ընդ մի լիսր ջրոյ։

Լիգուսէէ, կամ լիգուիսս, իտ։ լիգուիսուս, լտ։ այսու անուամբ նշանակի զ՝ և իցէ հեղանիւթ. զոր օրինակ դինի, օղի, ոգի, և ն։

Լիգուսէէ անեթիթանվուլսիվս տի թրինդավելլի, իտ։ Հեղուկս այս կազմեալ ի վենեսակի ի դեղարարէն ա-նուանեալ Լուիզի մոթեթա, է յոյժ շահաւէտ ընդդէմ ցնցական ախտից, զանազան խոնից, փորհարուութեէ և։ Զամին մի գրգալ սեղանոյ՝ յորժամ ըմբռնէէ ախտն, և տրուաքոյ այնր շեթ շեթ ըմպելով. տղայոց բաւական է 10 շեթ ընդ առաւօտն կամ ընդ երեկս։

Լիգուսէէ անօտիս մինեբրալէ տեղէ հօֆֆմանն, կամ ալքօոլ էեթէռէս տ՝ օսպիսուչիօռիքս, իտ։ Ալքօհօլ էեթէռէ-ռէում օսիսուլրհոռուիլի կամ ալքօհօլ էեթէհէռէուս բեր է՝ ալչիտ սուլրհոռուիդուէ, լտ։ լոքմանն ռուհու, տձ. ռուհի լոքմանն, արբ։ Ի սպիտակ հեղանիւթեէ ինչ հոտա-ւէտ, թափանցիկ, և ցնդական, բաղադրեալ լիւղոյ սրբ-ջասպի, և՝ ի սաստիկ ոգւոյ. բնութեէ է գրգռիչ, կամ խթիչ, և տարածողական. հռչակաւոր է՝ ի դիպուածս ախտից ջրոց, միզարգելութեէ, ախտնգանտուութեէ, ախ-տից արբանդի, նեարդման սրտի, փոխադրական ջերմախ-տից, ուշաղնացութեէ, անդամալուծուութեէ, և ախտից կրծ ծոց սաթելոց՝ ի թուլութեէ։ Զամին՝ ի 10 շեթ մինչև 360 խաւն ընդ օ և իցէ հեղանիւթոյ։ Ազնիւ համարի՝ եթէ իցէ թարմ, սառնահոտ, ջերմահամ, ցնդական, և դիւ-բարաւ։

Լիգուսէէ տի թէբրաֆիլիսթեա տի թարթարօ. կամ օսպիթարթարաթեա տի բօթասսա լիգուիսս, իտ։ սիրբէ թուզան ռուհու, տձ։ Հեղանիւթեամբ այս օգտաւէտ է՝ ի դիպուածս խցանաց մեսենդրական մասանց, փայծեղան, և լերգի. օգտէ և ջրգողութեէ, միզարգելութեէ, և դալ-կան։ Զամին՝ ի չորս լիսր ջրոյն մի արամ բաւէ։

Լիգուսէէ տի քօռնս տի չեռվօ սուչչինաթեա, կամ օսպիսուչչինաթեա տ՝ ամմենիաքա էմբիրէչէսս, իտ։ գէհ-բիպարլը կեբբ պուշնուզան ռուհու, տձ։ Ի՝ ոգի ինչ բաղադրական՝ կազմեալ յեղջերէ եղջերուի, ի սաթէ, և՝ ի սաստիկ ոգւոյ. որ է գեղ ազգաւ ընդդէմ սկզբանէեթ Ջաց, խիստածոց, և անդամալուծուութեէ հոտոտմամբ, և ըմպելով. զի է խթիչ բնութեամբ։ Զամին՝ ի չորս շեթ մին-չև 910։

Լիէնթէրիա, իտ։ սինտիրամէդ խասլ, տձ։ զանխիր,

արբ։ Է. ազգ. ինչ որովայնալուծութեան, յորում ի՝ջանեն կերակուրք անմարսելք. տես՝ ի հտ. ա՝. ի գլ. ԿԲ։ երես 278։

Լեթարգիրիս տի արձէնեթս։ տես՝ լեթարգիրիուս։

Լեթարգիրիս տի օռս. տես՝ լեթարգիրիուս սուբի։

Լեթարգիրիուս, կամ լեթառգիրիուս, լտ։ լեթարգիլիս, և կամ լեթարգիրիս, իտ։ միւրտսէնկ, ասՀ։ մերթէք, արբ։ և ըստ մեզ՝ քարմարցակ։ Է՝ նեւեթ ինչ կարծը իբրև զքար, դոյացեալ յարձանային մասանց, և՝ ի փրրիկ ոչ աբծատեղոյ և ոսկւոյ, որ՝ ի հուր արկեալ փոխարկի յարձանՀ։ Կրկին է սորա տեսակ. մինն է կարմրախառն գեղին. զոր փոշիացուցեալ՝ ի վար արկանեն՝ ի պէտսպէս սպեղանիս, որպէս՝ ի զովացուցանել, և՝ ի ջրացուցանել զվէրս հնացեալս։ Զայս տեսակ քարմարցակի լատինք՝ լեթարգիրիուս սուբի կոչեն, զոր խոալք անուանեն՝ լեթարգիրիս տի օռս, և արաբք՝ մերթէք ասէհայ։ Եւ տարձիկք՝ ալեն միւրտսէնկի։ Իսկ հայք քարմարցակ ոսկւոյ։ Ի սմանէ և գեղարարք գիտեն գործել ազգ մի ազգս քացախոյ, որով լուացեալ զամենայն գՀեւայ վէրս՝ խնդրն ցանաբեցուցեալ բուժէ. մանաւանդ զվէրս քաղցկեղայինս, զորմէ լնագոյն տեսցես՝ ի բառն ալէթեօ սաթուռնս։ Իսկ միւսն է սպիտակ, կամ արծաթագոյն, որ սակաւ մի թեթեւ և քան զառաջինն, զոր լատինք կոչեն՝ լեթարգիրիուս արձէնեթի, և արաբք՝ մերթէք ֆիզիտասայլ ըստ բնութեան և ըստ ներգործութեան նման նմա։

Լեմաթուրա տի ֆեւռռօ. տես՝ ֆեւռռօ։

Լեմբհա. տես՝ Լինֆա։

Լեմբհաթիքուս. տես՝ լինֆաթիքօ։

Լեմոնէ. տես՝ մարլուս լեմոնիս։

Լենուս, կամ լենուսմ, լտ։ լէնեիօ, իտ։ քսիլս։ յն։ ազատ, կամ օտուն, ասՀ։ խաշտպ, արբ։ Է՝ անուն հաստարակ ամենատեսակ փայտից։

Լենուս ալօէս, կամ քսիլօալօէ, և կամ սակալքօհուս, լտ։ լէնեօ տի ալօէ, իտ։ էօտ ազատը, ասՀ։ էհուս, արբ։ և ըստ մեզ հալուէ։ Է՝ փայտ ոՀատնալից գիւրարկէզ. գառնահամ, մոյգ հարեալ՝ ի գոյն խարտեաշ, փայլուն, խայտառամանէ, բծալից, և անուշահոտ, զոր՝ ի գործ ածեն՝ ի ծխանելիս, և՝ ի գեղարայս, որ է զօրացուցիչ ստամոքսի, սրտի, և ջլաց, և կիսոյ ցաւոց գլխոյ։ Ծառն նորա ասՀ ըստ մերոյս ձիթենւոյ, կամ փոքր ինչ աւելի եւս, զոր հատեալ թողուն այնպէս ընդ երկար ժամանակս, մինչև ցփտիլ առ հասարակ։ բայց՝ ի ծառն անդ գտանին և ջեղք կամ երակք ինչ իւղային, որ ամենեին

անփուռ մնան, և նոքին իսկ են հարուէ, զոր ասա Ժողովեալ սփռեն յաշխարհ ամենայն։ Կեղև Նորա խիտ է և ստուար գրեթէ ըստ կեղևոյ մերումս ընկուզենւոյ։ Իսկ պտուղն նման է կեռասի։ Սա բուսանի յաշխարհն հնդկաց, նա յաւէտ ի լերինս մոզոլաց և Ճիաւայի։

Լինուր գուասիա, լս։ Է փայտ ինչ կարծր, սպիտակ հարեալ ի գոյն գեղեն, անհոտ, և ստուգի գառնաշահամ, միանգամայն և գեղ շահաւէտ ի գիպուածս տկարութեան ստամքսի, ջղային գժուարամարսութեան, միջահատական և պարբերական ախնդից, Ցնչարգելութեան, յոգուածացաւութեան։ այլև առաւելու զառնեալսն ստամքսին և ընդերացն՝ ոչք գանգատ գոսանին, արգելու զխմսուսն, և արծարծէ զանտրժանն կերակրոյ։ Որչափ թարմ և գառնագին է այս փայտ, այնչափ ազնիւ է և շահաւէտ։ Եւ զարմանս զայս տամ ըստ կերպի ինքիզիսնէի, կամ նման իբրև խաշու կամ եռացեալ։ Եթէ իբրև ինքիզիսնէ, պարտ է արկանել զնոյնը փոշի արմատոյն ըստ կշռոյ տրամոյ միոյ, ի լիտր մի ցուրտ ջրոյ զնին երկոտասան ժամուց՝ հետ զգուշութիւն յայլ անօթ ապակի, և տուր ընկալ հիւանդին երեք կամ չորս անգամ յաւուրն՝ զկշիռ երեք ունկիոյ։ Իսկ եղանակն, զոր պահեմ ի տալն զնաշուն կամ զեռացեալն, է այս։ Առ տրամ մի տաշած փայտին կոչեցեալոյ գուասսիս, և ի հատարակ ջրի եռիւա եռացմանէ իբր քառորդ մի ժամու. տայա զոսեա, և մնասցէ եօթն ունկի. յոր յաւէլ ունկի մի ծաղկի ջուր, որ լիսալացաց կոչի՝ ՀՈՐԱ ՓԻՆԻԼՅՈՒՆ պէ Ռեյասանէա։ Յետոյ առնուլ պարտ է երկուս սեաղհակս սրճոյ երկիցս յաւուրն։ Երբեմն եւս կարմրեն այլ կերպ ի նոյն արմատոյն։ Աբդ՝ հետ եօթն ունկի սփիռեթեօ տի վենս յանօթն ապակի կամ ի շիշ։ և ընդ այսմ ոչ ուրոյ խառնեսա հեն տրամ՝ փոշիացուցեալ կեղևն սոյն փայտի, կամ զնոյն փայտն, և թմոյ մնայ այնպէս իբր աւուրս ութ։ Ապա քամեսա զայն խիտ կտաւով յայլ անօթ ապակի. և ահա այս է գառնագին ոգի գուասսիս փայտին, զոր խաղալ կոչեն՝ թինեթուրա տի գուասսիս. չափն ի 2կ չէթէ մինչև ցՅ։ Զնոյն գառնութեան և զգոյժուանէութեան ունին սոքա կեղևն, և արմատն։ Ի փայտէ սասի՝ որպէս և ի կեղևոյ և յարմատոյ Նորա արտահանեն զզուան կամ զգոյացուկան մասն ինչ թանձրամած, և սեաւ, կոչեցեալ լիսալացաց էսեթրանթեօ տի գուասսիս. զոր յաճախ ի վար արկանեմք ի պէսպէս հատուցեալս և ի մանիսնս առ ի բժշկութեան վերոգրեալ ախտից։

և խօթանեց։ Ծառա այսր յոգնաշաչ փայտի՝ աձէ բան բարձրանալ մերումն ձիթենւոյ։ Ցերեքն նման են տերևոց այնմ բուսոյ, որ խառնէին կոչի՝ տիթամն պիան. քս։ Ծաղիկն լոյն, երկայնաձև, և հինգ թերթեան։ Պըտուղն գնեակաձերպ, և կորիզաւոր։ Իակ արմատն տուսար իբրև զբաղուկ մարդոյ, դեղնախառն սպիտակ, և դառնահամ, որպէս և կեղև նորա։ Այս բուսանի ի սուրենամ, և յարևելեան կողմն ամերիկոյ։ Գործածութիւն այսր փայտի մեռնում յերբոտիս զառաջինն ի սպանիացւոց, յորոց էանց առ անգղիացիս, և անտի յայլ տեղիս։

Լինում մոլուչէնեք, լս։ Փայտ ինչ ամերիկեան. յորմէ գործեն գեղ ազգու ընդդէմ խածուածոց կասաղի շանց, և թունաւոր զեռնոց, և քարօրեայ տենդից, միզարգելութեան, և յօգուտ ածացաւութեան։ Զայն ի մի ցորենոյ մինչև ցեն. այլև զՀմնումն առթեալ ի հարուածոց բուժէ։

Լինում նէբՀրիթիքում, կամ պալանուս միռեբսիքա, լս։ լէնեօ նէՀրիթիքօ, խս։ Փայտ ինչ սպանիոյ, կարմրերանգ, սպիտակակեղն, և դառնահամ. բայց գտանի և գեղնագոյն, որ լաւագոյն համարեալ է, և կարի օգտակար ընդդէմ ապականուն արեան. զի է մաքրիչ և քրտնարեր։ Կանխիկ ի գործ ածէին ասին ի գիպուածս ելրիկանիածէութեան, և միզարգելութեան. բայց այժմ անպիտան համարի։

Լինում սանթոնում. տես կունաեաքում։

Լինում ՐՀօախում, կամ լինում չիբրինում, լս։ լէնիօ սի ուօսս, խս։ Փայտ վարդահոտ, յաճախեալ ի կեսրոս, որոյ գոյն նման է սանտալոյ չիմանիսի. օգտաւէտաւ գոյն է ի գիպուածս սկսրութեան սրտի, և ուղղոյ. զնոյն գործունէութիւն ունի սորա նաև իւղն։

Լինում ՀիԷռեի, լս։ Փայտ հնդկական, կարմրերանգ, ամրողջ, կարծր, և ծանր, կեղևն սուաբաթ, կարծր, և գորշագոյն. զոր ՀմնՀալ մեղն անտի իւղ ինչ ածնիս, և ի գործ ածէն ի գեղ ախտից գաղղիկանի և եբեփանգանի, խոչեանգանոյ, յօգուտ ածացաւոյ, շնչարգելութեան, և փարհարութեան։ Ծառա սորա բուսանի և յամերիկայ. մեծ, և սաուաբ. իսկ տերևն նման է տերևոց ընկուզենոյ։

Լինում. տես լինս։

Լինքս, կամ լուբուս չէռվառիուս, լս։ չէռվիէռ, կամ լուբս չէռվիէռէ, և կամ լէնչիս, խս։ վարշագ, կամ վարշագ, ազ։ և լուս մեզ՝ քոթարնեք։ Ի տեսակ մի ժանու գաղանի

'ի չափ չան, կամ վայրի ասիածոյ, յամենեսեալ 'ի ռուսաստան, 'ի զվիզդերն, և յամերիկա։ Գլուխ նորա և ականջք են սեւ, փոքրիկ, և եռանկիւնաձև։ տեսիլ դիմացն նման կատուի։ աչքն հրափայլ և սրատես։ Հայեցուածն նուրբ և ազդու։ Ծնօտն երկայնաձև, ատամունքն սպրատուր, լեզուն անհարթ, և սրածայր ըստ կատուի։ ատեն սպիտակ, փափուկ, և խայտաբղէտ, և մեծագին։ տուտն կարճ։ սրունքն գեղմնաւոր։ Ձիրանք ոտից սպրատուր՝ զորէն արծուի։ Ճարպ այսր գազանի ունի ըզգործունեութիւն 'ի զօրացուցանել զլիզու, և 'ի փարատել զցաւս յօդուածոց։

Լինս, իս։ լինում, ցս։ լինօն, ցն։ գեղեցէ, ցմ։ գեղեցման, ցբ, չէրպ, կամ հիշմ, և կամ գեշ, կամ գեղեր, ցբ։ և ըստ մեզ՝ վուշ, կամ կաւ։ բոյս յամենեսեալ յեգիպտոս 'ի պարարտ, և 'ի խոնաւուտ տեղիս։ երկայն իբր երկու ռանաչափ, նուրբ, և մէջն գաւառակ։ Տերևքն երկայն, նուրբ, և սրածայր։ Ծաղկին փթթել 'ի գագաթան ը նմանուտ շաղոքրատի, և է կապտագոյն, և հինգ թերթեան։ պտուղն գնոտակաձև, սրածայր, և ստուար 'ի չափ ոլեռան, և 'ի մէջն պարունակէ զկարմիրանգ, և գծուտաձև հատս կամ սերմունս շողշողուն և հիւթալից 'ի խորշս խորշս թաղանթատեսակ։ յորոց ելուղանէն զհեղանիւթ մինչ ապիտակ իբրև զկաթն։ և 'ի վարարկանութենէ 'ի գեղ սերմնակաթուտ, հաղիվ և երկամեայ ժեռուտեն։ 'Ի սերմանց ասսի մնէն նաև զիւղ մինչ օգտակար կարեցեալ 'ի բարբեռ արարացոց՝ զլեթհտա, 'ի պարարսից ռուսոնի զեղէր, և ըստ մեզ՝ իւղ կաւատի։ որ է փարատիչ խեթից, և ցաւոց որովայնի, վաղեթարբ հազից, ախտի գաղղիականի, և սնունդեթեն մարմոյ։ Պաղմն 'ի սանուն նաև թանձրաթան 'ի հաստացանել զոնոսոյս կարծրատինգս։ 'Ի կեղևս այսր բուսոյ հանեն թեբս նման թեբ ևոյ կանեփոյ, զոր մանեալ գործեն կաւս 'ի պէտս ազգի ազգի զգեստուց։

Լինիֆա, իս։ լիմֆեա լս։ նեմֆեթէն, ցմ։ ռուեթուպէէլ ՁԷսէեթ, ցբ։ և ըստ մեզ՝ ասիչկ, կամ ջուր։ բայց 'ի մանանաբրի այսու անուանմբ իմանամք զՀիւթս կամ զդոլորշիս՝ որք գտանին 'ի ներքս նրբագոյն երակաց, յորս ոչ լինի շրջան, և մուտ արեան, և սոքա լնուն զտեղի աբեան սեփհական շրջանաս իւրեանց, բաժանեալ յարենէ։ և 'ի յորդ առատանալն արտահոսին 'ի մարմնոյ, և յայնժամ առ ձայնի քիրան։ բայց 'ի դիսրուածս յորս սոքա արգելական մնան 'ի ներքս, սակս փակեալ գոյց

Ծակոտկէն խցանացն, առթենն զայլ և այլ վիճանս, և զսիտս, մանաւանդ զախսն ջրգողութեան, ուր յայտնապէս տեսանեմք, եթէ վերոյիշեալ գոլորշիք, կամ հիւթք արգելեալ մնալով երկարատև՝ ասպականեալ գուռմարին ի մի վայր, մանաւանդ դէպ ի պորտն։ Եւ սակս այսորիկ լինի Ծարաւ սաստիկ ի ջրգողութեան. զի ի պակասիլ այսր ցողոյ՝ ցամաքի արիւնն, և մտաւոքն, և փոխան նորա ջուր խնդրեն, որով առաւել ևս զայրանայ ախտն՝ վասն անգաղար առաւելոյց հիւթոյն, յորմէ պատճառիւ. զոր յոլով անգամ Ծակեալ, արտահանեմք զբազմաքանակ ջուրս, մինչև ցյիսուն կամ ութսուն լիտր հեղուկս։

Անիֆաթիքս, իս։ լիմֆահաթիքուս, լտ։ թէռ. տամարլարը, տմ։ և ըստ մեզ՝ ապիկեան անօթ, կամ ապիկեան կան երակք։ Այսու անուամբ ի մասնաւորի յայտ առնեմք զջրային երակս, որոց միոյ մասին եկեալքն ապարտին ի վերայ մարթոց, և զգումարեալ ջուրս կամ զդոլորշիս արտահանեն ի մարմնոյ։ Այլ գիտելի է, եթէ վերոյիշեալ անօթքն կամ երակքն են այնքան մանրաթելք և նրբագոյնք, մինչև հազիւ մարթ է նշմարել զայնս խոշորացուցեալս. սմին իրի և օր քան զօր ընդ առեալ յայրունս հասակի, ցամաքեալ իցանին այդոքիկ անօթքուստի և թարշամեալ թառամին դէմք երեսաց. այլ ի մատաղատունկ հասակս տղայոց՝ գոլով այդոցիկ երակաց դեռ անարգել, և բաց և լի ջրով, պատճառաւ ի նոսին զփափկութեն, զգիրութեն, և զդեղափայլ դէմս երեսաց։

Լապտրա, լտ։ իւգ տրամ. տմ։ և ըստ մեզ՝ լիտր. որ է չափ նշանակիչ զՀարիւր տրամ քանակութեն որ և իցէ երաց. յորում պարունակի երկաստասն ունկի և կէս։ Դարձեալ, գիտել արժան է, եթէ սովորաբար է դեալ (℔) զայս նշանագիր իմանամք զչափ մի լիտր։

Լիքէնէ իզլանիքէս, իս։ հէբպա մուշի իզլանիչի, կամ լիքէն իզլանիքուս. լտ։ իզլանիտա եսսուշու, տմ։ է տեսակ ինչ մանուշ, որ յատաֆս ի վերս երևի ի իզլանիտա գաւառն ի վերոյ քարանց. գուշով է Թուխս և փայլուն, և հատով փոքր մի դառն. օգտաւէտագոյն է ի դիպուածս Թոքատուութեն կամ Ծիրական ախտի յորժամ ախտակիցն արիւնախառն Թքանէ. զի է Թուլացուցիչ բնութիւն։ Նոյնպէս և օգտաւէտ է ի դիպուածս վասնԹաբ չոր և երկարաւոր հազոյ, ցաւոց կրծոց և վերոյ Թոքոյ։ Այլև մնուցանէ և բարեկարգէ զդործողութեն մարսողութեան, և զառնելութեն ջրոյ, և միանգամայն փարատէ զվատութեն, զնուրբ տենդն, որ կոչի Ֆիէպրէտէ

լէնթա։ Զայս բոյս էս 'ի կկր առնուլ ըստ կերպի ինֆուզիօնէ, կամ խաշուի, կամ նաև իբրև փոշի։ Եթէ իբրև ինֆուզիօնէ, կամ խաշու օրէն է արկանել զնոշոր փոշի բուսոյս ըստ կշռոյ ունկուոյ միոյ՝ յերկու լիտր ջրոյ կամ կաթին. յետ երկոտասան ժամուց հնդ զդուշութ յայլ անօթ ապակի, և տուր ըմպել սխտակրին երեք կամ չորս անգամ յաւուրն՝ զկշռոյ չորից ունկուոյ։ Եւ 'ի խնդրել անդ՝ զի լիցի զօրեղագոյն, պիտի յաւելուլ զչափ լիքէնէ իզլանտիքօին։ Իսկ եղանակն, զոր պահեմ 'ի տալն զփոշին՝ է այս։ Ա՛ռ ունկի մի՝ փոշիացուցեալ 'ի բուսոյս, և նոյնքան՝ շաքար վանի։ Եւ զայս պարտ է առնուլ չորիցս անգամ յաւուրն, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի չորս ամիս։

Լիքօրօտիում քլավաթում, կամ մուսքուս թէռռէսթռիս, լտ։ լիքօրօտիս, կամ մուսքօ թէռռէսթռէ, իտ։ Գուռա այաղը, ան։ և ըստ մեզ թարգմանագրի՝ ոսկագայլոյ։ Բոյս յաճախեալ 'ի զվէցիա՝ յանտառս, և 'ի բարձրաբերձ լերինս. որոյ ցօղունն ճնապաղեալ սփռի զերեսաք երկրի, հանգերձ երկայն և պարարտ ճիւղովք։ Տերևք սորա փոքրիկ են և անհարթ, որք խիտ առ խիտ բուսանին 'ի վերայ ճիւղոց։ Իսկ արմատն երկայն, փայտային, և թեքալեց։ Այս բոյս լի է իւղով և գոյացական աղիս, և բնութ ձգիչ և սեղմիչ. օգտաւէտ է 'ի դիպուածս ցաւոց յօդուածոց, և միզարգելութեն, եթէ ջրով եռացուցեալ արբցի։ Իսկ եթէ տերևն փոշիացուցեալ արբցի խառն ընդ ջրոյ՝ լինի դեղ ընդդէմ փորհարուն, թանչից և սքօռպութօի։ Զափն 'ի կէս տրամէ մինչև ցմի։

Սէնիա, կամ քասսի սէնիա, լս : սէնէ, գղ : սինամէքի, տՀ : և ըստ մեզ՝ ՀՀաղ : Ի բոյս յաՀախեալ 'ի վերին եգիպտոս. որոյ ցօղունն բարձրանայ յերկրէ մինչև ցմի և կէս ոտն, և արձակէ ստեղունս նուրբս և երկայնաձիգս և դառնահամս, և տերևս փոքրիկս երկայնաձևս և կանաչս : Բանայ և ծաղկիս բոլորակաձևս և հինգթերթեանս : Բերէ և պտուղս ինչ ոգեղնաձև տափարակ և թաղանթայնս, յորում բաղկանան սերմունք բոլորշիք և թուխք : Տերև այսր բուսոյ ազնիւ համարի՝ եթէ իցէ թարմ, անանորժահոտ, 'ի վերին կողմն կանաչ, իսկ 'ի ներքոյ դեղին. յորմէ յաՀախս կազմին զգեղս մաքրողականս կամ լուծողականս. զի է լուծողական և թուլացուցիչ բնութիւն : Չափն 'ի չորս արամէ մինչև ցվեց, զոր օրէն և եռացուցանել վեց կամ եօթն ունկի ջրով. յաՀէլլով 'ի նոյն մի արամ անխօն. երկու կի՛ երիք արամ քաէմնա ան թառթառս. և երիք ունկի մանանայ. և առեալ լինի ըմպելիս այս 'ի պահ առաւստուն 'ի ծոմուստ: Երբեմն հնար է փոխան քաէմնաս ան թառթառսի դնել զմի և կէս արամ խաշնդեղ, որպէս և փոխան անիսօնի դնել զկինամոն : Ընդ այսոսիկ գիտել արժան է՝ զի յառնուլ քո 'ի կիր զտերևս զայս, պարտ է նախ մաքրել ըստ կանոնս և զշերտ որք դասնին 'ի նա. ապա թէ ոչ՝ կարէ պատճառել զփուքս և զիսկեթս որովայնի :

Սէստամուտ, լս : սէստամն կամ սիստամ, իտ : սէստամ, գղ : սուստամ, տՀ : սիմսիմ, արբ : բէՀէչ, կամ կիւՀիւթ, և կամ սուսէն, պր : և ըստ մեզ՝ կինՀիթն, կամ շուշան : Ի ունդ կամ սերմն ինչ մանր, բոլորշի, գեղնագոյն, քաղցրահամ և խեղուլից, որ լինի 'ի կերակուր թեղնոց, միանգամայն և մարդկան դեղ ցաւոց որովայնի, և կրծոց. զի է մեղմիչ բնութիւն : Չափն 'ի կէս արամէ մինչև ցմի՝ խառն ութ ունկի ջրով : Ջնոյն գործունէութիւն ունի սորա իւղն : Բոյս սորա հասարակօրէն բուսանի 'ի վերին եգիպտոս, և 'ի Հնդկաստան, որոյ ցողունն է ուղիղ, սուսաւ, երկայն իբր մի և կէս ոտնաչափ, կարծր, բաղմաճիւղ և հիւթալից : Տերև նորա է երկայ-

նուձև սրածայր, պարարտ, և կարմրախառն կանաչ. յորմէ կազմին դեղ կշռացաւուլթեն, ընչարգելուլթ, և նուազուլթեն ամենայն պարտուց կանանց։

Սեվուտ. տես կրասուտ։

Սեաուտ մաեուս, կամ սեմբեռվիվուտ, լտ։ սեմբեռվիվոս մաՀՀիուռ, իտ։ Ժուսպառպ տէ Թուա, գղղ։ սիպէլ, կամ հոուռլիք, անգղ։ սաբոր կիւզելի, տՀ։ Ի բոյս մշտադալար յաՀմսեաղ ի վերայ որմոց իբր մի և էջս ուՀնաչափ բարձրուլթիւ։ Տերև սորա է երկայն, լայն, պարարտ, սրածայր, մշտականաչ, հիւթալից, և տտպահամ։ Ծաղիկն ծիրանագոյն, և բազմաթերթ։ Պտուղն գնասկաձև, և նուրբ սերմամբ։ Խակ արմատն փոքր է և թելալից։ Սա կոչի և եօլիս պարպա. որոյ տերևն դեղ է լուսնոտաւն և ախտի ցնցականի՝ որ ի վերայ գայ մանկանց, զոր պարտ է լսել ի սանգի, և տալ լուսնոտաց մի փոքրիկ գդալ երեկոյս յաւուրն։ Նշնպէս դեղ է բոլոր բորբման, կիզոզուլթեն, յօդուածացաւուլթեան, և խալ խեցգեանուց, օծելով այնու զվնասածնեալ մասունս մարմնոյ։

Սեաուտ մինուս, կամ սեմբեռվիվուտ մինուս, լտ։ տատ կիմ քաեա գօռուղու, տՀ։ հայիլ ալէմ, արբ։ լիւքա կամ հէմիշն, պր։ Ի բոյս բուսեալ ի վերայ պարսպաց, որմոց, քարանց, և ի մէջ պարտիզաց. որոյ ցօղունն է փոքրիկ, տարածողական, պարարտ, թմբալից, և տտպահամ։ Տերև սորա է մանր, բոլորշի, թանձր, պարարտ հիւթալից, կապտագոյն, և տտպահամ. Ծաղիկն փոքրիկ, բազմաթերթ. պտուղն փոքրիկ և սերմնաւոր. իսկ սերմանն մանր է և թելալից։ Այս բոյս ունի մասնաւոր գործունէուլթի՝ փարատել զքաղցկեղ և զնոսել խեցգեանսի։

Հիւթ սորա խառնեալ ընդ հայկաւոյ լինի դեղ վերոյգ նոյնպէս շահաւէտ է երախայից և պարարտ անձանց, որոց սովորաբար յանուանեալ և յայլ անդամս ի վեր երևի պիսականանման պալար ինչ պատՀառեալ ի քրտանց։

Սեբբէնեթառիա վիռՀինիանու կամ արխեթօլքիա սերբէնեթառիա, լտ։ լա սեռբանեթէռ, գղղ։ վերՀինեվ մեկյքուլթ, անգղ։ Ի բոյս ինչ ամերիկեան յաղգէ սղնգան. որոյ ցօղունն է երկայն իբր բազկաչափ, ծնրաւոր, և Ճիւղալից։ Տերևն նման է տերևոյ բաղեղան, բայց կակուղ և հոտաւէտ քան զնա։ Ծաղիկն մանր և բոլորշի՝ ըստ նմանութեան ծաղկանց սղնգան. գոյն նորա երբեմն մեթին կանաչ է, և երբեմն դեղին որ ի վեր երևի տա կանթիւ տերևոյն։ Պտուղն մեծ է և տանձաձև, յորում է

սերմն նուրբ, և սեաւ։ Իսկ արմատն մանր, Թէթև, մեծնագոյն արտաքուստ, և բաժանի ի բազում Թելան-ման ոստս, ունելով զհոտս վարդի նման, և զհամ քաղցրոյ։ զոր ամբիկացիք Ժողովին, և չորացուցանեն ի հովանաւոր տեղւոջ, և առաքեն ի վաճառս։ որ է դեղ աղգոդական և կարի գործունեայ ի դիսպուռածս փտախտութեան, քաղցկեղի, Լերմնախտից, մանաւանդ Թիւթօ անուանեալ Ջերմախտի, և մի՛ջհատատան տենդից։ զի է խիթիչ, Թափանցիկ, զօրացուցիչ, և քրանաբեր բնութեամբ։ Զարմն ի էկս տրամէ մինչև ցերեքք, զոր օրէն է եռացուցանել մի լիտր ջրով, և տալ հիւանդաց ժամն ի ժամ մի սկաւակ սրձոյ, մինչև լցցի տասն ունկի յաւուրն։ Եւ ի մանաւորի ի յարգի ունկնք զսա ի դիսպուռածս ակարութեան ջղաց, և ուժիշեան անօթոց, Թաղկութեան, Թմբրուեն, և իջուածոց ի մանուանս մարմնոյ, մանաւանդ յորժամ խառնի ընդ երեք տրամ՝ քինաքինան, և ընդ էկս ունկի՝ քսնիքէքցիսնէ ալքէոմէզն։ Զայս արմատ ամբիկացիք վարին և ի դեղ հարուածոց Թունաւորս օձից։

Սէրբէնս, կամ անկուխ, և կամ քօլուպէռ, լս։ սերբէնեմ, կամ անկուէ, և կամ պիշիա, խս։ երբան, տՀ։ Հէիֆա, կամ Թասպան, կամ հայիէ, կամ հանէշ, արբ։ խալբ, կամ մնա, կամ շարմա, կամ շիպա, և կամ սէաւխանան, սր։ և ըստ մեզ՝ օՀ։ Ի սորուն ինչ խոտամանգ և նենդաւոր, որոց ոմանք են փոքր իրրու բազկաչափ, իսկ ոմանք յոյժ մեծ և գէնդակ, որք և յաշխարհն հնդկաց այնչափ ազին, մինչ զի լինին երբև զվիշապս սոսկասելիս։ Ոմանք են անԹիւնք, իսկ ոմանք չաղտԹիւնք։ Թէպէտ Թոյնք սոցա մահաբեր են, այլ միաբն շահաւէտք։ յորոց փոշեացուցեալ, կամ եռեալ ի ջուր և արբուցեալ, դեղ է միասակար հիւանդոց, տապականութեան արեան, անոյշ Թոքոց և կրծոց, և միզարգելուեանց են գրգռիչ, և մաքրիչ բնութեամբ։ Զարմն ի քսան ցորենոյ մինչև ցՅՕ յաւուրն։ Զնոյն գործունեութիւն ունին սոցա լեարդքն, և սիրտքն։ Իսկ Ճարպքն ունին զմտանաւոր գործունեութիւն ի մեզմել և ի փարատել զցաւս յօդուածոց, օձելով միայն զնչատացեալ մասունս մարմնոյ։

Սէրբիլլում, կամ Թէիմուս սերբիլլում, լս։ սէռբիլլօ, խս։ Թէն սէռբօլէ, գոր։ մասիրը օվ գայմ, կամ ուվայլա գայմ, անգլ։ գէբլիք օՀՈ, տՀ։ սահՀեռ, կամ նեղա, արբ։ ավիշ, կամ գեներիւն և կամ շիւՀիրբա, սր։ և ըստ մեզ՝ կաքաւախոտ։ Ի խոտ քաղցրահոտ։ որոյ ցՅ-ղունն է փոքրիկ, քառանկիւնի, կարծր, կարմիր, և

Թաւիշաւոր։ Տերևն փոքրիկ, և լայն՝ նման բան խիզ տեւ-
ևաց ծոթրենի։ Ծաղիկն փոքրիկ, և գոյն նորա սովորա-
բար սպիտակ է, բայց լինի և ծիրանագոյն։ բերէ և սերմն
բոլորշի։ Իսկ արմատն մանր է և թեղանց։ Բուսանի՝ ի
լերինս, ՝ի քարուտս, ՝ի յաւազուտս, և՝ ի յոգարակս
իբրև ձեռաչափ բարձրութիւն։ որոյ տերևն լինի գեղ ցա-
ւոց արգանդի, սատմոքսի, և գլխոյ, և նուազութեան ամ-
տական պարտուց կանանց։ զի է խթիչ և զօրացուցիչ
բնութիւն։ Օշնոյն գործունէութեան ունի սորա իւրն։

Սէքալէ չէռէալէ, կամ սէքալէ, լս։ սէկալա, իս։
սէկլ, գեղ։ ռայ, անգղ։ ջալաբար, տՀ։ ալէս, կմ զիս-
նէյպա, արբ։ գէնիբէրան, կամ տէվքէնտուա, պր։ և ը
մէղ՝ աշարայ, կամ հաՀար։ Է բոյս երկայն իբր ՝ի ջալ
մարդոյ. զորոյ ունգն կամ սերմն փոշիացուցեալ վարեն
՝ի պէտս զանազանատեսակ մեղմացուցիչ և կակղացու-
ցիչ թանձրութանցից. լինի սա և ՝ի կերակուր անասնոց,
և ՝ի ժամանակս սովու նաև մարդկան, որ է յոյժ ՀԻա-
սակաբ. զի բաղում անգամ պատՀառէ զՀմբրութիւն,
զպատոյտ գլխոյ, զսկարութիւն սատմոքսի և Ջրոյ, և երբ-
եմն էս ցնդումն միանանց, զքաղցկեղ, և զկանՀուսաս-
բայց եռացուցեալ կորուսանէ զՀնաստակոր զարկութիւն
իւր։ Իսկ թեւին՝ որ է կակղացուցիչ բնութիւն, ՝ի կիր ար-
կանի ՝ի գրեխս ՝ի գեղ թանչից, և կրծոց։

Սէքունտէ մուլիէռեաս, լս։ սէքօնտիես, իս։ մէշիմէթ,
կամ օղան տուսվաղը, և կամ էշ, տՀ։ խարաս, արբ։
Ա յսու անուամբ նշանակի ծիրն կամ տղան. որ է մանր
կեղէն մանրից դնատակաՀև և արիւնաշաղախ պարկի, յո-
րում պարունակի մարմին երախային՝ մինչ ծնանի։ Սա
ըստ ոմանց ունի զգործունէութիւն ՝ի սրբել զրիծս երե-
սաց, ՝ի լուծանել զայտուցս և զցաւս արգանդի, և ՝ի
փարատել զլուսնոտութիւն, զոր մարթի է ՝ի կիր առնուլ ե-
թէ՝ ՝ի նեղբուստ 40 ցորենաչափ ըմպելով, և եթէ արտա-
քուստ օծելով։

Սթաբէսէ։ այսու անուամբ խմանամք զմին ՝ի փոքրիկ
տակերաց ՝ի փորք ունկան։

Սթաբէհս ակռիա, կամ սէլքէհինիում սթաբէհս ակ-
ռիա, լս։ սթաբիս ակռա, իս։ սթաբիս էկռ, կամ էս-
պլօփու, գեղ։ սթէյվիա էքր, անգղ։ մէվզէկ, տՀ։ զի-
պիպ Ձէպէլ, արբ։ Է բոյս յաղագ լծաս անուանեալ
տնկոյ։ որոյ ցօղունն է երկայն իբր երկու ռանաչափ, ու-
ղիղ, սեաւ, և Ձիւղաղիկ։ Տերև նորա է լայն, ցաւատեալ,
եզերահերձ, թաւիշաւոր, և երկայնականի։ Ծաղիկն

Եւանէ առ կանթիւ տերէանցն, և ի Ծայրս Ճիւղոյց, և է կապտագոյն և խորտաբարտ։ Արտագրէ պտուղս կանաչագոյնս, յորս են սերմունք սեւաք, եռանկիւնաձեւք, և անչարթք, և մէջ նոցա գեղին և դառնահամ, միանգամայն և տոխպ. զոր փոշիացուցեալ ի վար արկանեն ի գեղ վատթարագոյն բորտուն է, և քոսոտուն. զի է ուժգին լուծողական բնութիւն։ Այլև ստամէկ զորդունս և զշնչիս որովայնի։ Զամին ի մի տրամէ մինչև ցերկու խառն մի բինեթա ջուր։ Դարձեալ, սաէպ լուսանան սովաւ զղջալարս բորտից։

Սեմանուում, լս։ սեմանեւ, խս։ գալայ, տձ։ լեմին, յն։ էթէն, գաղ։ և ըստ մեզ՝ անագ։ Ի հրահալելի ինչ սպիտակ, գոյացեալ ի խորս երկրի ի հանքս արծաթոց այլ և այլ ձեւով. որոյ ընտիր և մաքուրն գոսանի յանդգնա. զոր Ժողովեալ փոշիացուցանեն ի ձեռն նուրբ խտրոտոցի, և ի կերբ առնուն ի գեղորայս ի սատակել զշնչիս և զորդունս որովայնի։ Եւ ըստ ոմանց՝ ունի և զդործուն նէուեթի ի փարատել զսխտս լերգի և արգանդի։ Զամին ի տասն կշիռ ցորենոյ մինչև ցքսան խառն ունկի մի մեղրիւ։ Վարի և ի զանազան ախտս։

Սեմէատօչէլէ. այսու անուամբ իմանի՝ ազգ ինչ փոշտանկուեթի, կամ այսոցն պարկի ամորձեաց։

Սեմէնիքէ. է բառ Նորոց, և ստուգաբանի՝ ուժեղուն. որոյ ներհակին կոչի սաթէնիքէ, կամ սեմենիա, այսինքն սկարուեթի։

Սեմէոլէ. ըստ մեզ՝ ատուլ. կամ սեմէոլիլեթա. ըստ մեզ՝ ատլուեթի, ի յոյնն՝ լեմեռօս, սեմեռօսիա։ Ի ամրուն, կամ անպտղուն. որ առ թուրքս անուանի՝ գրար. կամ հասարսրզ. իակ առ արաբացիս՝ ասղր. սեւ զայսմանէ ասէ հա. երես 187։

Սեմէռնօիսէ։ Ի մին ի միանոց հագագին։

Սեմէքաուէ, խս։ սեմէօէքչաս առաստիքս, կամ լաւանն տուլա սեմէքաս, լս։ սեմէքաս առաստիք կամ լաւանս սեմէքաստ, գղղ։ ֆիրէնչ լեվէնսարը, անգղ։ գառապաշ օ. թեթ, տձ։ Ի բոյս բուսեալ ի գաղղիս, ի սպանիս և ի փարեթոկալ իբր մի և կէս ոտնաչափ բարձրութեամբ։ Ցերև սոքա սրածայր է և մեծին կանաչ։ Ծաղիկին հասկաձև, ծերանագոյն, հոտաւէտ, և դառնահամ. զոր եփեալ ի ջուր և արբուցեալ, գեղ է փսխման, և ցնցման սառամբ. սի։ Զամին ի կէս տրամէ մինչև ցմի և կէս։ Այլև օգտէ ընդդէմ ցաւոց գլխոյ և արգանդի. մեղմէ նաև զլուրեթի թունից։

Սթիթիքէշցա. տես տուռնիթիա տալի։

ՍթիլօՓատիՆՃէօ. անուանքս նշանակի՝ մին ի միա-նանց, որք նպաստեն ի կլանել։

Սթիպոտ. տես անեթմոնիում։

Սթիռաքս, լս։ սեթօռաչէ, իս։ պուհուրպիդէմ, կամ գառակիւնլիւք, և կամ գառա պուհուր, ասՀ։ և բան մեզ՝ ստորաքս, կամ ստորակս, և կամ տիւռակիթ։ Ի խէՀ՝ որոյ կրկին է տեսակ. մին սպիտակ, և կարմիր. մին սպիտակն՝ զոր ածեն յամերիկայ, Ջերմահամ է երբև զաչասան, որ կոչի յնտաբաց՝ սեթօռաչէ քաղամի-թա. յորմէ կազմեն դեղ անդամալուծութեան և ախտից Ջղաց առթելոց ի տկարութեէ, զի է խթիչ կամ դրդռիչ բնութեաբ։

Սթիռաքս լիգուիտուս, կամ լիգուիտամպատ սթի-ռաչէ՝ իլուա, լս։ սեթօռաչէ լիգուիտօ, իս։ գառակիւն-լիւք եաղը, ասՀ։ սիՀնի գլէնիէ, կամ մէա, արբ։ Ի գոյա-ցուն ինչ Հանեալ ի ստաշնանէ. յորմէ կազմեն դեղ ընդ-դէմ բորոտութեան, և քոսոտութեան։

Սթռամոնիում, կամ տաթռուռա սթռամոնիում, լս։ սթռամոնիա, իս։ բամ էբնիկիւս, գդդ։ ԹՀօրն էբբրլ, անգլ։ Ի բոյս ինչ ծանրահոտ, բուսեալ ի բազում տե-ղիս ամերիկոյ երբև երկու ոտնաչափ բարձրութեաբ։ Տերև նորա լայն է և անկիւնաձև, նման բան խմիք տերևոյ Հնիսաղոյց։ Ծաղկին սպիտակ և զանգակաձև. իսկ պը-տուղն բորբշի մեծութեաբ ի չափ ընկուզոյ. ուռնեալ ի վերայ փուչս մանուռս, սրածայրս, և Համս անախորժս. և ի միջի ունի քառակայ խորշս նուրբս, յորս բաղկանան սերմունքք փոքրիկք և երկայնաձևք։ Տերև այսր բուսոյ, որպէս և պտուղ նորա, թէպէտ են թռուռաւոր և թռչ-ղացուցիչ բնութեաբ, զնին դեղ ազգու ընդդէմ խեղգա-լութեան, ախոնգանոտուն, ցնցակոնաւոր սիսիկ և ան-դամալուծութեան առթելոց յուժեղուն։ Չափն ի չորբ-ղորդ մասնէ միոյ ցորենոյ մինչև ցվեց ցորեան։ Եւ եթէ ոք առաւել կերիցէ ի սմանէ արասքոյ քան զչափն պոյ-մանեալ, յայնժամ առթէ զմբրութեան, զպաղոյտ գլխոյ, զքնոտութեան, զցուրտ քրքան, զտրծուութեան, զնիթեն ոլորվայ-նի, զցնցուումն միանանց, և երբէմն և-ս զմահ։ Ալ դարմ-ման սորա դիւրին է. քանզի օրէն է խկոյն մատուցանել նմա յարբուութեն զնմանաթա, զքացախ, զկաթն, զՀաս-խառն մածուն ևն։

Սթռանկուրիա, կամ սօրբռէասիօնէ տի օռնիա, կամ տիֆիլիքօշնա տի օռնիէ, իս։ տեղուռիա, լս։ սիսիկ զ-

ռու, ասՀ։ խկիւլ իլ պէտի, որբ։ և ֆ մեզ՝ դժուարամիտ զուի, կամ միզապրաւութեան։ Ի սոյս ինչ միզելոյ չեմ առնիեմ. ասս և զոյսմանէ հա. ֆ. երես 130։

Սեթամաքնուս, կամ վէնեթանիքուլուս, լա։ սեթամաքօ, կամ վէնեթանիքօլօ, իտ։ մասաէ, կամ գրմենէ, կամ գրսպէ, որբ։ Հէվասէ, կամ գիսիա, կամ գէսեան, և կամ լիբա, պր։ մէյտէ, ասՀ։ և բան մեզ՝ սատմաքս։ Ինոնես այս բան անդամնեաց կոչի և խոխացոց. որով նշանակի անօթ ինչ պարկաձև, մաշկեղէն, ծոցաւոր, և ջրալից, զետեղեալ ընդ մէջ լերդի և փայտեղան ֆ սատմանով։ Որդ՝ անօթս այս ունի զերկեակ ձեղքուածս կամ ծակս, որք են նոքա իբր պաշտօնեայք. մինն հաստատեալ կայ ընդ սատրին ծագիւ որկորոյն, որ կոչի Էսօֆիակօ, և միւսն՝ ընդ ծագիւ փորոտեաց։ Բայց գիտել արժան է, եթէ կերակուրք ժամանեալք ի սատմաքսն ընդ Հանապարհ որկորոյն, կարին յամենալ անդէն երբեմն առաւել, և երբեմն նուազ. որովհետև ի ձեռն վերոյիշեալ ձեղքուածոցն երբեմն ընդլայնեալ տարածանի, և երբեմն անձկացեալ կծկի սատմաքն. ուստի անձինք որք վիճակեալք են քաջառողջ կացմուածոց, առաւել զօրաւոր է ի նոսա գոյժիքն երկրորդ ձեղքուածոց. այսինքն այնմ՝ որ հաստատեալ կայ ընդ ծագիւ փորոտեաց, և ի ձեռն այսր զօրութեան բուռն կծկեալ զատամաքսն, ոչ թեպէտ տան կերակրոցն խՀողելոց ի սատմաքսն իսկ և իսկ թափիլ յաղիսն, մինչև բարիոք եփեալ փոխարկիլ նոցա ի հեղանութիւն։ Այլ պատշաՀագոյն Համարիմք յաւելուլ և ասել, եթէ յընդլայնիլ անդ սատմաքսն ընկալեալ կերակրովք, մնրմի է տանիլ մինչև ցչորս օրայ ծանրութեան կերակրոյ և ըմպելոյ։

Սիալսիօկա։ Ի անուն ընդհանուր՝ որով խմանամբ զդեղերաս, որք կարի առատացուցանեն զլորձուն, զտուզնս կամ զլեռուքս բերանոյ, որպիսի են սեղիին, էօտիւլ քահարն են։

Սիեռօ տի լանթեմէ, իտ։ սէռուտ լաքթիս, լա։ բրնթէ լէ, գղղ։ սիրուենկա, ասՀ։ Ի անուն ընդհանուր՝ որով խմանի շնՀային և զատոյն մասն կանթին՝ ելուցեալ տորտով, կամ հիւանդին լեմնին, որ բնութիՀ թուքացուցանէ և զոմացուցանէ զատպ արեան և սրտի, անօրէն զՀանճրամանութեան տարուցնից, և մանրբէ զարիւն ի տասպային աղի հիւանդոց, և միանգամայն ապաքինէ զՀրգողութիւն, ընդբորտութեան, զցաւս յօդուածոց, զտուենութեան, զդալուկն, զցաւս աչաց, և զաքօռալութիւն անուանեալ ախան-

մանաւանդ յորժամ խառնի ընդ խաշնդեղն։ Զայն 'ի մի լտերէ մինչև ցերկու և կէս յաւուրն։ Զայս եթէ կա. միս առնել, առ մի լիտր զկաթն կովու, և հեղ զայն յա. սպիկած պղտոյն, մերձեցո 'ի հուր ածխոյ։ և յորժամ սկիզբն առնէ եփիլ, արկ 'ի նա երկու կամ երեք տրամ՝ զզաւալ և ապիւս տորան՝ կոչեցեալ յիտալացւոց՝ քռէ. մոս տի Թառմառս։ ընդ նմին և երեք կամ չորս գրգալ ջուր հատարակ։ և մանդամայն մեղմ և հանգարտ խառ. նեա զայն փայտեայ գրգռալիւ։ և վերստին եռացս զայն մինչև ելցէ Թանձրատեսիլ նիւթ յերեսս կաթին, և ինքն փոխարկեցցի 'ի չիճուկ։ Եւ յետ քամելոյ զայն ընդ խիտ կտաւ, առ զսպասակուցն ձուոյ, փրփրեցս զայն փոքր ինչ շիճկաւ յայլ անօթ։ և հեղ զայն 'ի վերայ չիճկին. դիր զամենեսին միւսանգամ յեփ։ և յետ եռալոյ նորա քամեա վերստին ընդ Թուղթ գորշ։ և ահա այն է չի. ճուկն կաթին զոր ասեցարես։ Վարի և 'ի գեղ որքիւնոյ, և ախտից Թոքոց, նաև 'ի բանալ զնգանս ուշիչեան ա. նօթոց։ 'Ի սորին կարգս գասի և սիէռօ տի լաթէթ քօն պլուս մէն՝ այն է չիճուկն կաթին խառն ընդ պաղելոն։ և ըստ գեղ, փրթի լէ ավէք լ՝ ալէօն։ որ լինի գեղ յարմար 'ի հոսմունս արեան տեռատեսականի։

Սիէռօ տի լաթէթ վինօղօ, իտ։ սէռուս լաքթիս վի. նօղուս, լտ։ բրթի լէ ավէք լը վէն, գղղ։ ուվէյ օվ միլք ուվիսոյ վայն, անգղ։ շատասպլը սերուէթկա, ատ։ Ի տե. սակ ինչ շՀկի կաթին, որ կազմի ըստ նախաանգեալ կերպի խառնելոյ ընդ ոսպիսակ գինւոյ փոխան տորոյ, զոր ասեալ 'ի կիր արկանեմք 'ի բժշկութեան ջրական կամ հրատապ տենդից։ զի է Թեթև խիթիչ և մնուցիչ բնու. Թեան։ Եւ առեալ լինի չիճուկս այս փոխանակ հատարակ ըմպելեանց՝ մինչև լցցի լիտր մի յաւուրն։ Կայ և այլ տե. սակ չՀկի կաթին, զոր յորինեն նոյն կերպիւս։ Ը որում խառանեն և մի և կէս ունկի լուսեալ մանանեայ, զոր 'ի վար արկանեն 'ի բժշկութեան նուրբ ջրական տենդի, հնա. գոյն յօդուածացաւութեան, անդամալուծութեան, ջրգո. ղութեաց, և ոսկնաւութեան։ Զայն մի գրգալ սրձոյ չորս կամ հինգ անգամ յաւուրն, յաւելով 'ի նոյն փոքր ինչ շաքար։

Սիլիգուա մօրչ, կամ չէռաթծնիա սիլիգուա, կամ քառռուպա, իտ։ չէռաթծնիա սիլիգուա, լտ։ քառուժ կամ քառուպ, գղղ։ քէրօպ Թրի, անգղ։ գէչն պուլ. նուզու, ատ։ խառուպ, արբ։ Թէռմիշ, կամ Թէմի, պր։ և ըստ մեզ ստուգաբանի՝ եղջիւրամիրգ։ Պտուղ

ինչ երկայն իբրու թզուչափ, տատիրակ, և սեակեղև, և 'ի մէջի պարունակէ զդորդագոյն գոյացութեն ինչ 'ի խորչս խորչս մաշկասեակ. յիւրաքանչիւր խորչս ունի և կորիզս կարծրս, տատիրակաձևս, և կարմրագոյնս, և այն գոյացութեն է կարծր և հանդէ յոյժ յորժամ կատարեալ հասանիցեն. միանգամայն և պատուական գեղ հազից, ընչարգելուն՝ առեալոց 'ի տարս հիւթոց, քնամութեն, և տկարութեն ստամքոյ. զի է կակղացուցիչ և քաղցրացուցիչ բնութեն: Զայնմ մի ունկի, զոր պարտ է եռացուցանել մի լիտր ջրով:

Սիսառուպա կամ գուսապա սիսառուպա, լտ: իսա: սիսառուպ, գղղ: ալեթեթը տեմսն, անգղ: Ի բաղմաթել և անհոտ կեղև ինչ թեթև, երկայն, լայն, մթին գեղին, և գառնահամ, զոր կորզեն յարմատոյ իրիք ծառոյ կոչեցելոյ լատինական բարբառով գուսապա սիսառուպա, որ սովորաբար բուսանի 'ի հնդեկիս և յամերիկայ. լինի 'ի սեպս ձորացեալ վայրոց: Զայս կեղև արմատոյ լոսեալ 'ի փոշի մանրամանդ, կամ եփեալ 'ի ջուր՝ և արբուցեալ, դեղ է փորհարութեն և հոսման արեան պատճառելոց 'ի յուժգնութեն, զի է սեղմիչ և թուլացուցիչ բնութեն: Զայնմ յերկու տրամի մինչև ցչորս յաւուրն՝ խառն մի և կէս լիտր ջրով:

Սիմբիթիում կամ քօնսօլիտա մանօր, լտ: քօնսօլիտա մաՀՀիօռէ կամ սինֆիթեթ, իտ: կուանտ քօնսուտ, գղղ: պօմիրն քրմիրէյ, անգղ: գառա քաՀէս, տՀ: Ի բոյս ինչ խոՀանամ. որ սովորաբար բուսանի 'ի կողմանս փայրերու և խոտալոյ իբր երիք ոտնաչափ բարձրութեն, և մատնաչափ սուռարութեն: Ցերեկ նորա է երկայն, լայն, սրաձայր, թաւիշաւոր, և անհարթ: Ծաղկին բաՀակաձև, կամ լաւ ևս ձագառաձև, սպիտակ հարեալ 'ի գոյն կարմիր: Սերմն սեաւ և փայլուն 'ի ձև գլեայ խՀի: Իսկ սաղմանն երկայն, ստուար, գերբարեկ, ասաստաքուս սեաւ, իսկ 'ի ներքուստ սպիտակ, և խՀայնն. յորմէ կազմին գեղ փորհարութեն, հոսման թանչից, երկիանաՀՀեստութեն, և թթման արեան. զի է կակղացուցիչ և ըմբռնիչ բնութեն: Զայնմ 'ի մեց տրամի մինչև ցուԹ յաւուրն խառն ընդ մի և կէս լիտր ջրոյ:

Սիմիա, կամ սիմուս, լտ: շիմիա, կամ սէՀեթուչ չիա, և կամ շիմիմենէ, իտ: մայմուն, տՀ: գըրթ, էռա, կամ սատէն, և կամ ռուսպա, արբ: բուշնեա, պր: և ըստ մեՀ՝ կապիկ. թէպէտև կենդանի փոքր է իբրև զաղուէս, այլ առաւել Ճարպաբ և ուշիմ քան զնա, և քան զամա-

նայն անբան կենդանիս. մինչև մարթ է սահմանել զնա՝ կենդանի մարգարէով։ Ի լեղիս կամ ի փուշս ոմանց կասկաց գոյանայ քար ինչ փոքրիկ, գնաստաձև, և դիւրաբեկ. զոր իբր գեղեմսի ի կիր առնուն ընդդէմ թունեղից, ջերմատոչոր սխտից, և ժանտախտից. այլ գործածումն սորա անծանօթ է եւրոպայի բժշկաց։ Գոմանին սոքա ի ջերմ գաւառս հարաւային ասեր, և յափրիկէ. կարեն կեալ ի ցրտային երկիրս, այլ ոչ ծնանին։ Զմիս սոցա՝ որք լի են իւղով և ցնդական աղիւ, ի վար արկանեն ի գեղ փորհարութեան։ Իսկ սիրան՝ օգտէ յիշողութեան և զգաստութեան մտաց։

Սինաբիս նիկռա, լտ։ սէնաբէ, իտ։ մուլթառա, գդ։ քրմմրն մրմթարա, անգղ։ հառուսլ, ամ։ սիւՓիէի կամ հապալ ռօշալ, արբ։ խարէնտան, կամ չիր չիր, պր։ և ֆ մեզ՝ մանանեխ։ Ի բոյս՝ բուսեալ յայգաբակս և ի բուրաստանս իբր երեք կամ չորս ոտնաչափ բարձրութիւն։ Ցերև նորա նման է տերևաց շողգամի, բայց փոքր և անհարթ քան զնա։ Ծաղիկն փոքրիկ, քառաեկեմերեան, և դեղին. բերէ և սերմն նման կոտց թզոյ, այլ գոյն նորա երբեմն սեաւ է, և երբեմն սպիտակ. իսկ համ նորա և հոտ ի հասանելն այնչափ բարկ է և աղգուս, մինչ զի ըստեալ կամ ծաւքեալ թորեցուցանեն յայգոյ զարտասուս։ և պարտ է հաւաքել զսա ի նուազման լուսնոյն, զի յայնժամ լինի առաւել սատակագոյն, և պահի ևս ընդ երկար։ Ի սմանէ յօրինեմք գեղ աղգու ընդդէմ անգամալուծումն է, ջղային գժուարամարսութեան, շնչարգելութեան, ջրգողութեան, և միզարգելութեան, սքօռպուտեան, և քօմաթօսք անուանեալ ախտի. զի է թուլացուցիչ և միաբեր բնութիւն։ Ամլև բանայ զնցանս աւիշեան սնութեամբ։ Զաւին ի յերկու տրամն մինչև ցչորս։ Ամյա սերմն ի կիր արկանի ևս ի բաղադրութիւն սինաբիղմոն։

Սինկիոցցա. տես սինկուլթուս։

Սինկուլթուս, լտ։ սինկիոցցա, իտ։ ընդգրագ, ամ։ հօղզեա, կամ ֆիլավ, կամ մէաքաչ, արբ։ խաքէռէկ, կամ թէռատէրկ, կամ զէրու, կամ աշքէ, և կամ հէքկրչաք, պր։ և ըստ մեզ՝ հեծկլռանք. տես զայսմանէ հատ։ երես. 241։

Սինքօրէ. տես սվէնիմէնթում։

Սինօվիա. ըստ անդամաղնեաց նշանակէ՝ հիւթ ինչ խժային, որ գոյանի յամենայն շարժական յօդս, կամ ի յօդուածս մարմնոյն։

Սիռուբուս, լտ։ շիռօբբօ, կամ շիռօբբօլա, և կամ

հիրբբս, կա։ շբռօպ, ասՀ։ և ըստ մեզ՝ շարապէ։ Է անուն անուշակ և ախորժելի հոսանուտ հիւլեցոյ կազմելոց յանուշարար նիւթոց, որպէս ի շաքարէ և ի մեղրէ, եռացուցանելով զնոսա ընդ բուսոց, ընդ պտղոց և ընդ սերմանց, և ընդ այլոց նմանեւոց, զոր վարեն ի պէտս պէսպէս դեղոցրեից բարեխառնութեան և ախորժելի քմոց։

ՍիքօմՀռուս, կամ Ֆիքուս էՀիսիթիքա, լա։ սիքօմՀռօ, կամ սէքքօմՀռօ, իտ։ ֆիրաօն ինՀիրի, ասՀ։ կիւմՀեզ, կամ ՀիւմՀեզ, արբ։ հիՀնառ, պլ։ և ըստ մեզ՝ մուլաթիզնի, կամ Ժանտաթիզնի։ Է ծառ մեծ և ոստալից, որոյ բուն է կարծր, ուռՀեղ, սեաւ և տեւական. զորոյ հերձեալ զվայան, արձակէ հիւլեթ ինչ սպիտակ, կաթնեղանգ, յորմէ կազմեն դեղ հարուածոյ օձից, կարծրատպենգ ուռուցից, և վերաց հնացելոց։ զոր մնրմ է ի վար արկանել արտաքուստ և ի ներքուստ։ Ցերեան նման է տերեւոյ թթոյ, բայց անհարթ քան զայն։ Բերէ պրտուղ երիցս ի տարւոյն, և է բոլորշի, և քաղաքահամ նման թզոյ. այլ ոչ սերմնալից իբրև զնա։ մէջն խոռոչաւոր, յորս բաղկանան թեւք նուրբք։ դոյացուցեալն այսր պտղոյ մեզմապէս լուծիչ է բնութ և զովացուցիչ, որով օգտի կրծոց, և ստամոքսի։ Բուսանի ի կողմանս եդիպտոսի։

Սէֆիկնաէ։ տես մոռսզ վէնէռէօ։ Դարձեալ, անուանմբս այս խմանի ասան էլեփանդական, կամ ուրիուԹեն, զոր թուրքք կոչեն՝ Ճուտամ հիլեթի, և արաբացիք՝ Ճիտամ, կամ Ճուզամ. իսկ պարսք՝ լերրի։

Սմառխա, լա։ Է ձէնիկ ինչ Ծովայնն, զորմէ ասեն լինել ազգ ինչ ռիմիպոյի։ և ասեն թէ միս նորա գեղ է հարուածոց կարծի, և խածուածոց կատաղի շանց, և թէ առաստացուցանէ զկաթն կանանց։

Սմիլաքս սառասխառիլլա, կամ ռասիլքս սառասխառիլլէ, լա։ սասասխառիլլա, իտ։ սասբրխառէլլ, գղղ։ սարսէֆերիլլէ, անգղ։ սաբառնա, ասՀ։ էշպիհ, արբ։ Է հռչակաւոր սրմնտ ինչ ոստալից կամ վարսաւոր, սպիտակ և սլիւրալիր՝ ի ներքուստ. իսկ արտաքուստ մեծն կարմիր կամ սեաւ, և կնՀռալից. երկայնութեամբ նորա ի հինգ ոտնաչափ մինչև ցեօթն, բայց համեմատութեամբ երկայնութեանն կարի նուրբ է. հանով դառն է՝ միանգամայն և սոսնձային. յորմէ կազմեմք դեղ ազդողական ընդդէմ գազրկական և էլեփանդական ախտից, ցաւոց յօդուածոց, ոսկառուութեան, հոսման վաղաչ հիւլեցոյ, բորոտու-

թեթ, և ընդհանրապէս ընդդէմ ամենայն հնադոյն ախ-
տից և վիրաց պատճառելոց յապականութեանէ արեան. զի
է թեթևապէս թուլացուցիչ, քրտնաբեր և մաքրիչ
բնութեան։ Զամին ի յերկու տրամէ մինչև 912, զոր պարտ
է եռացուցանել ի մէջ տպրկեալ պուտան մի և կէս լիտր
ջրով, և առեալ լինի ըմպելիս այս ի միջոցի 24 ժա-
մուց։ Բոյս նորա սովորաբար բուսանի յամերիկայ և
յարևմտեան հնդիկս. լինի ի ջրաբեր և ի խոնաւուս
տեղիս։ Ցօղուն երկայն, փայտային, կանաչ, փշալից,
գիւրաթեք, ճիւղալից, և տարածողական։ Տերևն եր-
բեմն ըստ երկայնութեան հատանեն ցասան և ջրս մատ-
նաւորս, և է որածայր և ջղալից։ Ծաղիկն սպիտակ,
և աստղաձև։ Իսկ պտուղն գնտակաձև ի չափ կեռաս-
սի. մէջն թամբալից, և փոքր մի տապահամ. ունի և
կորիզս կարծրս և քրքմագոյնս։

Սուքբէնոնէ տի օռենա. տես սթռանկուռնա։

Սուքբհուռ, կամ սուչիուռ, լտ։ սօլիօ, կամ ծօլ-
ֆօ, իտ։ գիւգիւրթ, կամ գիպրիթ, տճ, և սրբ։ գէն-
տէշ, կամ գիւկիրթ, սր։ և ֆ մէջ՝ ծծումբ։ Ի հանք
ինչ սրջեսպուտ, պարարտ, և ճիւթային. որ ի հուր
մերձեցեալ՝ վաղվաղակի լուցեալ բորբոքի, և հանէ զրոց
զաղրատեսիլ, և զշոտ ազգս և զզուելի, զոր վարեն
ի նիւթ վառօղի։ Ընտիրն այսր ծծմբոյ է դեղնագոյն,
կարծր, թեթև, փայլուն, և գիւրափխրելի, յորմէ
կազմեմք դեղ ազդողական ընդդէմ բորոտութեան, օրբիս-
նի, գոնջութեան, և այլ ախտից մորթոյ։ Այլև օգտէ ի
գիպուածս խոնաւ ընչաքգելութեան, այտուցից թոքոց,
և խցանաց աւիշկեան անօթոց. զի է մեղմապէս թու-
լացուցիչ բնութեան։ Զամին ի 12 ցորենոյ մինչև 918,
կամ 920 յաւուրն։ Այս հանք կամ գոյացութեան գաստի
ամենայն ուրեք, ճապաղեալ և սփռեալ ի ներքոյս
երկրի, որպէս վկայեն ստորերկրեայ հրայրեացք. կոչի
և արիւանօթիւմ։

Սուլֆիուռէ տի քալչէ լիքուիաս։ Ի հեղանիւթ ինչ
բաղադրական, կազմեալ յերկու տրամ ծծմբոյ փոշիա-
ցելոյ, և ի 32 տրամ ջրոյ եռացելոյ. որ է դեղ ի գի-
ալուածս խրդաառատ հոսանն լորձանց, և թոքանց, զոր
օրինակ առսէնիքօի, սուպլիմաթօի, սալ տի սրոնէն-
թօի, և անթիմոնի։ Զամին յուսթ տրամէ մինչև 910
յաւուրն՝ խառն ընդ փոքր ինչ ջրոյ։

Սուչինուռ. տես քարսպէ։

Սուպէռ, կամ բէհլաւա, լտ։ սօվէռօ, կամ սուկէ-

ռօ, իսւ։ լեկժ, կամ շէնկեկժ, դղղ։ քօքք թրի, անգղ։ մանթեար ապաձը, տձ։ Ռէպտ, սրբ։ Ռիվէ, կամ շամա-ռու, և կամ սելմէ, սպ։ և ըստ մեզ՝ մեկենի, կիմ սուենկ։ Ի Ծաա Եւբոպկոյ՝ բարձր և ստուար ըստ նմանութեան մե-ղոց կաղնեաց։ Կէզկ նորա է Թանձր յոյժ, կակուղ, անկալեր, Թեւեթև և գեղին հարեալ ՝ի գոյն մոխրոյ. յոր-մէ յօրինեն գեղ հոսման արեան, փարհարուն և ցաւոց փրոսեաց առթելոց ՝ի Թանչից։ Զնոյն գործուանելութի ունի նաև պտուղ սորա։

Սուս, կամ բօռքուս, և կամ վէռուէս, լտ։ բօռքօ, կամ չիաքքօ, իսւ։ սումուզ, տձ։ Իփիր կամ խրթեաւ, կամ խնդեր և կամ հեղեր, սրբ։ գէաղ, կամ խուք, կամ կիւբաս, կամ սաթ և կամ վուռաս, սպ։ և ըստ մեզ խոզ։ Ի կենդանի անձև, տգեղ, տղմասէր, որկո-բաձէտ և ապուշ. որոյ սուեն կարծի է և տգեղ. յայն տակս ոչ լինի հանդերձ մարդոյ, և ոչ յայլ կարևոր իրս է պիտանի։ Մին նորա պարարտ է յոյժ և համեղ, այլ ծանր և գժուարամարսելի։ Սիրէ յոյժ և զորդունս երկ-րի, և զարմասս ինչ բուսոց, և տակս այնորիկ միշտ պե-ղէ զերկիր և զտիղմն կնՃեաւն։ Ճարպ սորա ունի զմաս նուազոր գործուանելութի ՝ի կակղացուցանել զուռոյցս, ՝ի մեղմել զցաւս ջղաց, ոսկեաց և երակաց։ Լեղի սորա լինի գեղ ընդդէմ ցաւոց ականջաց և հերաթափութեան։ Իակ քաղքրն նոյնպէս լինի գեղ փողացաւուն, բորոտու-թեան և հոսման արեան։ Իգ. սորա ծնանի երկիցս ՝ի տար-ւոջ, և յիւրաքանչիւր նուազի իբր ուռթ, կամ տասն, և երբեմն աւելի և խոչքորակս։

Սուքօ, կամ սուքքօ, և կամ սուկօ, իսւ։ սուքքուս, լտ։ և ըստ մեզ՝ հիւթ, կամ մղեալ գոյացութի որ և իցէ իրաց։

Սուքօ քիաուիքիքաՃօ տէլլա սէքօնտա սքօռցա տի սատմղուքքօ, իսւ։ այսու անուամբ խնանի Ճնիեալ և զուսալ հիւթին ներքին կեղեոյ սատմղուքքի, յորմէ կապմեն գեղ ջուգողուն, որ արասհանէ զինասակաւոր շէՃուկս և հիւթս մարմնոյ, և քանայ զկցանս ընդերաց. զի է լուծողական, և կարի մեղաբեր բնութի։ Զաքին մի գրգալ սեղանոյ ջրս անգամ յաւուրն, յաւելցել ՝ի նոյն երկու գրգալ գինի սպիտակ։

ՍվէնիմէնԹօ. տես սվէնիմէնԹում։

ՍվէնիմէնԹում, կամ սէլիգուումում, և կամ անիմ տէիիչէռէ, լտ։ Թռամոռեիռէ, կամ սվէնիմէնԹօ, կիմ զիիենիմէնԹօ, և կամ սինքօքէ, իսւ։ սպանկնքք, տձ։ զը-

մի, որբ։ և ը մեզ՝ նուաղումն սրսի, կամ թաղկացումն, տես և զայսմանէ հմ. ա, երես 225։

Սբամմենեում, կամ քօնվօլվուլուս սբամմենիա, լա։ սբամմենեա, իտ։ սբամմենէ, գղղ։ սբէմմենի, անգղ։ մանֆուտիէ, տՃ։ սաբմունի, որբ։ սաղմենի, պր։ և ըստ մեզ՝ սակամունի, կամ սակամնի։ Ի հիւթ կիՄ լաւ ևս գոյացութեն ինչ խաՃային՝ թեթեև և փոքր մի մաՃուցեալ՝ ի գոյն մեթեն մոխրոյ։ զոր արատգրեն յարմտաղ օՃապաղտոյս և Ծանրահոտ բուսոյն յորՄորՄելոյ լաստենական բաղբաառով քօնվօլվուլուս սիռեաքուս, որ սովորաբար բուսանի ի կողմանս սիւրիոյ, բերիոյ և զմիւռնոյ՝ իբր երեք կանգնաչափ բարձրութեամբ։ Ասյս գոյացութեն ընարը համարի՝ եթէ իցէ գորշագոյն, մաքուր, ռեռանալից, թեթեև դիւրաբեկելի՝ անախորժահոտ՝ դառնահամ միանգամայն և տոհոպ, զոր նախնիք տանէ՝ ի կիր արկանելն՝ ի լուՃոզական գեղորայս։ զի է հզօրագոյն լուՃիչ, փոխեցուցիչ և Ծուլացուցիչ բնութ։ իսկ առ արբելս ոչ համարի այնքան՝ ի յարգի, որովհետև բաղում անգամ ևս առեթէ զանհնարին փուքս և զեսեթս որոմայնի և տրեաց. թեպէտ անցուցեալ զայն՝ ի շոգի ԾԾմբոյ, կորուսանի զնիւստակար որակութեան նոր։ զոր նուաղալիք յարՃամ տիակուխիս սօլՃՕուաՃԿ անուանեն։ Զամին՝ ի 4 ցորնեոյ մինչև 96։

Սբաակէա, լա։ սբասպիա, իտ։ բաօրա, ֆ։ կէՃիկ, կամ ույուզ, տՃ։ հէք.բէ, որբ։ և ըստ մեզ՝ բորոտութեան, կամ քոստութեան։

Սբաակիօզա, լա։ սբասպիօզա, իտ։ սբասպիէօզ, գղղ։ սբէնիշ սքէսպիրս, անգղ։ գուտ օՃու, կամ կէՃիկ օՃու, տՃ։ և ըստ մեզ սուուգաբանի՝ պիսակասի։ Ի խոտ, որ յարմտաղ արՃակէ զաերևս ելոյնս, թաւիշաւորս և երկայնականեամ, և՝ ի միջոց տերևոց ելանէ ցօղուն ինչ երկայն իբր երեք սանտաչափ, թաւիշաւոր, մէկն ունայն և բոլորշի, որ՝ ի գագաթան բանոյ Ծաղկի փունջաւոր՝ բոլորակ և ծիրանագոյն։ ապա արատգրէ պատեանս գնտակաՃեւս և սերմնաւորս։ Ունի արմատս երկայն և ուղիղ։ Բուսանի՝ ի պարտէզս, ի մարգագետինս և յայգարակս։ որոյ եթէ տերևն և եթէ Ծաղիկն են գեղ բորոտութեան, պիսակաց, ցաւոց կրՃոց և հաղի։

Սբաատպէուս, լա։ սբասաՃՃՃՃիօ, իտ։ օսուուդան պէօՃէի, կամ պՃք պէօՃէի, տՃ։ խօնֆիա, կամ ֆիասիա, և կամ ՃէլաստՃ, որբ։ ՃիւլանէՃ, պր։ և ը մեզ՝

բզէզ։ Է. Ճանճ ինչ սուսաբ, յաղգէ քառաթեւ միջատից. որոյ մարմինն և գլուխն խակ պատեալ է կաթծր տեսա և փայլուն մարմամբ ըստ նմանութեան խեցեմորթից ծովու, որոց նմանի և ձեւով մարմնոյն։ Ուռնի և եղջերուկս քիչերուշ. խակ թեւքն ոչ երևին, բայց եթէ 'ի թրաչքն. քանզի ծածկեալ կան մին 'ի ներքոյ միւսոյն։ Սա արկանէ զձուս իւր 'ի մէջ քակտրի եղանց և ձիոց, զի ջերմութեանցն կենդանացին։ Եգիպտացիք 'ի գործ ածեն սասի 'ի գեղ տկարութեան յօդուածոց, և մանրաթելից, ոչք գտանին 'ի միսնուսա և յայլ մասունս կենդանւոյն և վատառողջ և նիհար անձանց։ Զաքն 'ի 10 ցորենոյ մինչև ց30։ Զայս տեսակ բզէզն գտանի և ինքնալոյս, որ ղալոյս ցայտէ 'ի գիշերի. և սեռ ինչ նորա որ սովորաբար գտանի յամերիկայ՝ այնչափ ճոխ լոյս արձակէ 'ի գիշերի, մինչև միոյն ևեթ լուսաւորել զսենեակն ողջոյն։

Ա.քէռանեցիս. տես չինանէք։

Ա.քռուբուլուս, լտ։ սքռուբօլօ, իտ։ այսու անուամբ խմանամք զքանակութիւն ծանրութեան քսան հատի մեծ ցորենոյ. ուստի յերէքք սքռուբօլն պարունակի մի տրամ ամբողջ։ Գիտել արժան է, եթէ սովորաբար եղեալ (⊙) զայս նշան՝ նմանամք զչափ քսան ցորենոյ, զոր 'ի վար արկանեմք 'ի կշեռ գերդաստից։

Ա.քռուբօլօ. տես սքռուբուլուս։

Ա.քռօշուլարիա, լտ։ սքռօֆիօլարիա, կամ էռպա սաս մոսիսէ, և կամ կալէօրսիս, իտ։ էռպ օղէքռուէլ, գոլ։ կրէյթ ֆիկ վօռԹ, կամ քրանէլ վօռԹ, անգլ։ սրաձաս օձու, տձ։ և ըստ մեղ թարգմանագրվ՝ խոզախ տեսն բոյս. բուսեալ 'ի հովանաւոր տեղիս և 'ի գերեզմանատունս, իբր երկու ոտնաչափ բարձրութիւն. ցօղուն սորա է ուղիղ, ամբողջ. մէջն դատարկ, քառանկիւնաձև և ծիրանագոյն։ Ցեղեն երկայնաձիգ, լայն, սրաձայր և եղերաֆերձ ըստ նմանութեան տերևոյ եղնձի, բայց խմագոյն քան զայն։ Ծաղկին ծիրանագոյն և անօրինաձև։ Պտուղն գնաստկաձև, սրաձայր և խոռոչաւոր, յորս են և սերմունք։ Խակ արմատն սատաՀ՝ անհարթ և ծիրանաւոր։ Արմատ սորա և տերևք եփեալ 'ի ջուր և արբուցեալ, գեղ է խոզոց, խուլից պարանոցի, բորոտութեան և այլ ախտից մարթոյ։ Զաքն 'ի 1 տրամէ մինչև ցկ յաւուրն։

Ա.քռօֆիօլա, կամ սքռօֆիուլա, իտ։ սՀռուսմա, լտ։ սուաձա, տձ։ և ըստ մեղ խոզք, կամ խոզ պարանոցն։

Սբօլամէնթօ. տես լէուքօռուհէա վէնէռէա։

Սբանչելաթուռա, կամ սպօռթօ, իս։ չօմուվ կէշիրմէսի, տմ։ և ըստ մեղ՝ վիժումն զաւակի. տես հա. ա. երես 189։

Սբօռբիուս մարիթիմուս, կամ սբօռբիօ բիշիս, ըս։ սբօռբիօնէ մարիմս, իս։ սբօռպիա պալբրը, տմ։ և ըստ մեղ՝ փոր կամ կարիճ ծովային։ Ի ձուվն ինչ երկայն, և բոլորակաձև, որոյ գլուխն է մեծ, ստուար, բազմանկիւնի և կարծրանիւթ, ունելով ի վերայ ժանտափուշս մանուշա և սպրասուբս, որով հարկանէ և թունաւորէ զմերձեցեալսն յինքն, որ է զէնք նորա ի պաշտպանութիւն կենաց իւրոց. բայց ձկնորքք ուտին և զդեղեցիկ նորա, որ է թիւրակէս, զոր եթէ փուքթով դիցեն ի վերայ հարուածոց՝ բժշկին ի գժնդակ ցաւոց անտի։ Ստամանք նորա փոքրիկ են, այլ սուր. յօքն եղջերաձև, որկրն մեծ, թեպ մորթոյն կարմիր է և փոքրիկ, որովհետև սպիտակ։ Իսկ միսն կարծր է և ճաճառուտ, այլ համեղ և ախորժական ճաշակելեաց։ Սորա լեարդն ունի զգործունեութիւն ի սրբել և ի փարատել զբորոտութիւն, և զկոծիծս մարմնոյ, նաև գրգռել զդաշտանս կանանց։

Սբօռբիօ, կամ սբօռբիուս, ըս։ սբօռբիօնէ, իս։ սբ գռէպ, տմ։ շնպտիա, կամ շէվշէպ և կամ ածիւզ, արբ։ գէլէեիւմ, ալր։ և ըստ մեղ՝ կարիճ։ Ի կենդանի ինչ հողային և զազրատեսիլ ի չափ թրթռոյ, այլ ի ձև խեցգետնոյ. զի ունի զուութ թաթուքս կամ ճանկս, որոց երկուքն են մեծ, իսկ այլքն փոքր. գլուխ նորա լայն է. աչքն մանր յոյժ. գոյն նոցա այլ և այլ է, այսինքն սպիտակ, դեղին և սեաւ. իսկ ստուն է երկայն, բոլորշի և կարծր. յորոյ վերայ կարգաւ շարայարեալ կան յօդք գնետակաձև. և ի ծայր նորին ստան՝ ունի խայթոյց սուր, կարծրատիպ և խոլովակաւոր, որով հարկանէ և թիւնաւորէ զմերձեցեալսն յինքն, մինչև այսուցանել և ցաւովք տագնապել զմարդ. և եթէ ոչ ստաժամայն սբիւթօ ոչ տալ ամենեքաքօիս օծցել, կամ ծծմբով այրեսցի վիրաւորեալ մասն մարմնոյն, անվրէպ պատճառէ զմեռրուն, զպատոյտ գլխոյ, զկեծկլատանք, զիսխուանն և երբեմն և զմահ։ Սա գասանի ամենայն ուրեք, նա յաւէտ յերկիրս վիճակեալս ջերմագոյց. զոր եգիպտացիք ըմբռնեալ ի բաց հատանեն ի նմանէ զայն թիւնաւոր ստան, և զմարմն նորա ճանկօքն հանդերձ չորացուցեալ փոշիացուցանեն և ի կիր արկանեն իբր դեղ միջարգելուն, և միասակար հիւանդոց։ Չափն ի 10 ցորեն-

նոյ մինչև 930 յաւուրսն։ Գոնանի յամբիկայ կարիճ ապաղան ի մերոց կարձաց, զի մեծամեծք են և անհնարին թշնամի օձից, մողեսից և սարդից։

ՍքօռպուԹօ, իտ։ սքօռպիա հիլլեԹի, տՃ։ հաՓուռ, սրբ։ տես հտ. ԽՀ. երես 321։

Սքօռտուռմ, կամ ԹէուքԹուռմ սքօռտիում, լտ։ սքօռտիօ, իտ։ Ժէռմանտուռէ ագուռաԹիք, դղլ։ ուլՀԹը ՃէքմէՀՆաքը, անգ։ սակոռԹիոն, յն։ եաստն սարմուռաղը, տՃ։ և ըստ մեզ՝ խոտոր վայրի. այսպէս անուռնեալ սակս ունելոյ սոքա զՀոտ խոտորոյ։ Ի տեսակ ԹաւէՀաւոր խոտոյ, որոյ ցօղունն է փոքրիկ, օձասպոյտ և ՃիւղալՀց։ Ցերեկ նորա երկայն են և փափուկ, որք երկու երկու բուսանին ի վերայ ՃիւղՀց. որք և ունին ըզդոյնս սպիտակս և զկոզմունս սղոցաձև։ Ծաղիկն փոքրիկ, որկոռաձև, հերձոտ և կարմիր. բերէ և քառեակ սերմունս մսնուռնս և բոլորակաձև։ Իսկ արմատն օձասպոյտ է և ԹերալՀց։ Բուսանի ամենայն ուրեք՝ ի խոտաւէտս և ի ջուրբի դաշտավայրս, և սկսանի ծաղկիլ յամսեանն յունիսի։ Զարերև սորա եփեալ՝ի ջուր և արբուցեալ, դեղ է փորհարուԹեան և հոմսան արեան. զի է սեղմիչ և խԹիչ բնուԹեաՆ. ստամակ նաև զորդունս և զՃՀս որովայնի։ չափն ի մի սրամէ մինչև ցերկու, իսաև ընդ ութ ունկի ջրոյ։ Ասէին ըստ ոմանց՝ մեղմէ զչարուԹեան Թունից. ըստ օրում՝ ի կիր արկանի ի բաղադրուԹեն տիսաքօռաիօի, որ այն ինքն է սարմուսաք մանունի։

Սքօռէնցա. տես տիարրէա։

Սքօռցա. տես քօռԹէքս։

Սքօռցա վէնԹէռանա. տես քօռԹէքս վէնԹէռանուս։

Սքօռցա նէռա ա՝ խաքանէա, իտ։ սքօռէնա, տՃ։ Ի կեղև ինչ ստուար իբր մասնաչափ, սեռս արտաքուստ և սպիտակ ի ներքուստ. համով քաղցր է. զոր կորզեն յարմատոյ իրիք բուսոյ սպանիոյ։ զոր բնակիչք երկրին չորացուցեալ՝ի հովանաւորս տեղիս՝ առաքեն ի վաՃառս, որ է դեղ ազգու ընդդէմ հալից և կիրկերման որկորոյ, զի է մեռուցիչ և քրտնաբեր բնուԹեաՆ։ Չափն կէս տրամ խառն տան ունկի ջրով։ Եւ ըստ ոմանց նախնի հեղինակաց՝ ունի և զարմանաքանչ ներգործուԹիւն ի դիմակալել ՃանաՀ սխալից, Թունից և հարուածոց օձից և կարՃաց։

Սօբբռէսսիօնէ ա՝ օռինա, կամ խաքուռիա, իտ։ սիսիկ

զուռ, տՃ։ իւսրիւ, սրբ։ շաՀէքիրիՃտէն, պր։ և բան մեզ՝ միզարգելութիւն։ տես զայսմանէ հա։ ՁԼ։ երես 130։

Սօլանում՝ նիկառում, լտ։ սօլանռօ, իտ։ մՃռէլը գղ։ նայդ՝ Հէյտ, անգղ։ գէօբէք իւզիմիւ, կամ թիլքի իւզիմիւ, տՃ։ էնէպ իլ սալէպ, կամ ֆիէնա, կամ սէրման, և կամ ռէսպուաք, սրբ։ պարբՃ, կամ սէքենկիւռ, և կամ էքենկիւռ, պր։ և բան մեզ՝ Հիմաղոր։ Ի բոյս Հասարակ՝ որ ամենայն ուրեք ի ցանկապատ տեղիս ինքնին բուսանի՝ իբրև մի և կէս սանաչափ բարձրութիւն։ Տերև նորա է երկայն, լայն, սրածայր, փափուկ, կանաչահիւմ և տաղտկահամ։ Ծաղիկն վարդաձև, հեքձոտ, հինգթերթեան և սպիտակ։ Պտուղն ստուար ի չափ գիՀոյ և կանաչադոյն։ այլ ի Հասանելն փոխի ի սեաւ, և ի մէջն պարունակէ զԹանձրամած հիւթ և մանրիկ սերմունս տափարակս և դեղնագոյնս։ իսկ արմատն է երկայն, նուրբ, թելաձև և սպիտակ։ Այս բոյս բնութիւն է զովացուցիչ և փոքր մի մեզբերեցուցիչ։ որ ստէպ ի վար արկանի ի դեղորայս առ ի թանձրացուցանել զՀիւթս մարմնոյ և ի զովացուցանել զարբ. բոքումն քաղցկեղի և հրատապ պալարի։ այլև մեզմէ զմարմնաՁուն որքիւնոյ։

Սօլանս մեքսիքանս։ տես եալաբբա։

Սօլոլեթիմ։ է անուն ընդՀանուր, որով նշանակին գեղորայք, որք բնութիւն մեղմասէս գրգռեն, և լուծանեն զՀիւթս փորոտեաց և որովայնի։ որպիսի են վիսէլ, այսինքն մանուշակ, ՀՁոր, մեզր, կեռաս, կաՁն, խաչումիսն, ևն։

Սօլիֆուռօ տի ամմենիաքա, կամ ընդուռօռ ֆիումանեթէ տի պօիէլ, իտ։ սուլՀՀուռէթում՝ ամմենիէ, լտ։ սիւլֆիւռ տ՝ ամմենիաք, գղ։ սըլՀիրրէյեթ օվ էմմենիէք, անգղ։ Ի Հեղանիւթ ինչ սատակՀոտ՝ դեղին Հարեալ ի գոյն կարմիր, կազմեալ ի կրոյ, ի ՁԺմբոյ և ի օսմիուռիաթօ տի ամմենիաքաէ, որ է դեղ աղգու ընդդէմ ամմենայն ախտից առՀեղոյ ի յուժգնութիւթէ. զի է թուլացուցիչ բնութիւթ։ ՁարԼն ի և չՀէ մինչև ցուեթ խառն ընդ երկու կամ չորս ունկի ջրոյ։

Սօլիֆուռօ տ՝ անթիմոնիօ կամ տի մէռքուռիօ, կամ էթիօքէ տի անթիմոնիօ, իտ։ սուլՀՀուռէթում՝ սթիպէի էթ մէռքուռիի։ լտ։ Ի փոշի ինչ սեաւ և փայլուն, յօրինեալ ի ՁԺմբախառն անթիմոնիօէ և ի մանկէ։ օգտաւէտ ի դիպուածս խողից կամ խուլից պաթանոցի, ախտի գաղղնականի, բորոտաւէ և այլ ախտից մարմնոյ։

զն է թուլացուցիչ և քրմնաբեր բնութիւն։ Եւ ի գործածութեան պարտ է պահել զչափ քանակութեան, որով սովոր է մեք ի կիր արկանել զվոյն կոչեցեալ յիսաալցուց՝ է. թիօքէ մինէռալէ։

Սօլիքուռօ տի բօթասսա, կամ ֆիէկաթօ տի սօլֆիօ ալքալինօ, իսս։ սուլբհուռէթիում բօթասսէ, լս։ Ի նիւթ ինչ մեղմն կարմիր, կարծր, անհոտ և դառնահամ, միանգամայն և դեղոյավ ընդդէմ հանքային թունից. որպիսի են սուպլիմանթօ քօռռօզիվօ, մինդերոն, անթիմոնիօն, ևն։ Աչքն օգտէ բորոտութեան, քոսոտութեան, որքիւնի և այլ ախտից մարթոց, զի է գեղեցիկ և ՀՀէհալած բնութիւն։ Չափն ի 10 ցորենոյ մինչև 30 յաւուրն՝ խառն ընդ շաքարի, կամ ընդ կօտնա արապիքայի, բաղադրելոյ հասարակ ջրով։

Սօլֆիուռօ տի մէռքուրիօ նէրօ. տէս էթիօքէ մինէռալէ։ Կոչի ի լատինացուց՝ սուլբհուռուում հիտռառգիրում նիկռում։ Ի գաղղիացուց՝ սիւլֆիւռ տը մէռքիւռնօառ։ և յանդղլացուց՝ սլէք սիւլբհիւռէյթ օվ գուիք սիլվըր։

Սօլֆիուռօ տի մէռքուրիօ ռօսսօ. տէս չիննապարիս։

Սօլֆիուռօ տի սմանիօ, իսս։ սուլբհուռէթիում սմանէնի, լս։ սիւլֆիւռ տ՝ էթէն, գղղ։ սրլֆիրիյեն օվ թին, անգղ։ գիւգիւրթլիւ գաղայ, տՀ։ Ի փոշի ինչ սեաւ, փայլուն, անհոտ և անհամ, կաղմեալ ի յանագէ և ի մաքուր ծծմրոյ. որ է գեղ ՀՀէհալած։ Չափն ի կէս տրամի մինչև ցմի յաւուրն՝ խառն ընդ շաքարի, կամ ընդ ամիկէսիսի, և կամ ընդ լոսեալ անիսոնի։

Սօլֆիօ սուպլիմանթօ կամ բուռօ, կամ ֆիօռ տի սօլֆիօ, իսս։ սուլբհուռ սուպլիմանթում, լս։ սիւլֆիւ սիւպլիմ, գղղ։ սիւպլիմրտ սրլֆիրը, անգղ։ գիւգիւրթի չէչէի, տՀ։ Ի զանազ, կամ լաւ և վերացական մասն ծծմրոյ. որ լինի փոշի նրբագոյն, գեղեն, անհոտ և անհամ, միանգամայն և գեղ թանչից անհնարին հիւծուն, հնագոյն հարբեալոյ, ցաւոց յօդուածոց, բորոտութեան և այլ ախտից մարթոց. նաև սատակէ զորգունս և զՀՀոս որովայնի, զի է մեղմապէս լուծիչ և մաքրիչ բնութիւն։ Ուրնի և ամենաւոր իմն գործունէութեամբ ի բանալ զկոպանս ուիշկեան անօթոց։ Չափն ի 6 ցորենոյ մինչև 960 յաւուրն՝ խառն շաքարաւ, կամ մեղրիւ։

Սօլֆիօ ռոռանթօ տ՝ անթիմոնիօ, կամ թէռմօսիսռօ տ՝ անթիմոնիօ սօլֆիռանթօ ռանչիանթօ, իսս։ թէռմօսիսռում սմիթիի սուլբհուռանթում չիմռէռում, լս։ Ի փո-

շի ինչ նարնջագոյն, անհոտ և անհամ, որոյ զօրութիւն և ներգործութիւն նոյն է ընդ քէսամէզ մինէռալէի, բայց փոքր ինչ մեղմ է և քան զայն։

Սօսա. իտ։ սալսօլա սաթիվա, լտ։ սուա քիւլթիվէ, գղղ։ զմօլ կէնս ուզրթ, անգղ։ գալի, արբ։ չորաք, ազ։ Ի սուսնի ինչ ձիւղալից, որ սովորաբար բուսանի 'ի ծովափնեայս, և յաւազուտս իբր երկու ոտնաչափ բարձրութիւն։ Տերև նորա է մանր, բոլորշի, երկայնաձև, հիւթալից և սղեհամ։ Ծաղիկն մանր է և կարմիր հարեալ 'ի գոյն գեղին։ Իսկ արմատն կարծր և գորշագոյն։ Ա.յս սուսնկ նպաստ 'ի կազմութիւն օձառի և ասպակոյ։ 'Ի տերևոյ այսր սնկոյ արտահանեն նաև զաղ ինչ ազգաբ կոչեցեալ 'ի լատինացւոց՝ սալ ալքալինուս սատէ, տես անդ։

Սօրպուս, կամ բիռուս սօռպուս, լտ։ սօռպսօ, իտ։ սօռպիէ, կամ քօռմիէ, գղղ։ սէրվայս թրի, անգղ։ իւվէզ, ազ։ և ըստ մեզ՝ սին։ Ի պտուղ ինչ դնտակաձև և հիւթալից՝ նման ըստ իսկ ղրերոյ. համեղ յորժամ կատարեալ հասուցանայ, միանգամայն և դեղ փորհաբութիւն, զի է սեղմիչ և զովացուցիչ բնութիւն, և 'ի մասնաւորի հոսման թանչից, կամ արեան։

Սիէնոթաէ. այսու անուամբ ըստ անգամանցնոց նշանակի՝ ոսկր ինչ զետեղեալ 'ի ներքուստ յաւաչակողման վերին ծնօտից։

Սիէնօ ֆարինէէօ. անուամբս այս իմանի՝ մին 'ի մկանանց, որք նպաստեն 'ի կլանել զկերակուրս։

Վ.

Վաեուօլէ, կամ վաեօլօ, և կամ բուսթուլէ, իտ։ բուսթուլէ, լտ։ չիչէք հաստալաբք, ազ։ միւՃէատեր, կամ նէպՃ, և կամ Ճէարի, արբ։ շիրէք, պր։ և ըստ մեզ՝ ալսակ, կամ ծաղիկ։ Ի ախտ ինչ որ ածէ 'ի վերայ մարմնոյ շարաւալից պալարս հանդերձ անընդհատ անդիս։

Վալէռիանա, լտ։ վալէռիանա սիլվէսթրէ, կամ կաթթառիա, իտ։ վալէռիան, գղղ։ ուվայլա վէլէրիէնէ, անգղ։ գէտ օֆու, ազ։ թռի, կամ պիւհմի, և կամ խաշիլ կօթթա, արբ։ թէրեի, կամ գիւրպէ, և կամ մեն-

թէնկիւվէ, պր։ և ըստ մեզ՝ կաղամինթ, կամ կատուա-
խոտ։ Ի բոյս հռչակաւոր, բուսեալ 'ի խոնաւուտս, և 'ի
լերինս իբր մարդաչափ բարձրութիւն. ցօղուն սորա է մաս-
լիր, դարձնագոյն, և փոքր մի թաւիշաւոր։ Տերևքն երկու
երկու եւանեն 'ի վերայ ճիւղոց՝ հանդէպ միմեանց,
որոց ոմանք են եղերահերձ, և ոմանք անհերձ։ Ծաղիկքն
բոլորակ 'ի ձև անուոյ, սպիտակ հարեալ 'ի գոյն կարմիր,
և անուշահոտ, որք փունջս փունջս փթթին 'ի վերայ ճիւ-
ղոց սերմնափակօքն հանդերձ։ Խակ արմատն ստուար իբր
բթաչափ, գլանաձև, կնճռալից, ներքաթել, գորշագոյն,
հիւթալից, սաստկահոտ, գառնահամ, միանգամայն և
համեմային։ Սա ունի համակրութիւն ընդ կատուի, վասն
որոյ ստէպ թաւալի 'ի վերայ սորա. յորմէ և զանուանն է-
առ։ Գերահռչակ է 'ի մասին օգտաւէտութեան 'ի դի-
պուածս ախտից ջղաց, անդամալուծուն, կաթուածոց,
լուսնոտութեան, միջահատական ցաւոց կիսոյ գլխոյն, և
արդանդի, ախոնդանոտութեան, ախտի ցնցականի, և ընդ-
հանրապէս ընդդէմ ամենայն ախտից առութելոց 'ի տկա-
րութեան ջղաց. զի է խթիչ, զօրացուցիչ՝ և փոքր ինչ թմրե-
ցուցիչ բնութեամբ։ Ա յլև ստատակէ զորդունս և զձձիս որո-
վայնի, և փարատէ զախտս կոչեցեալ էմոֆթիզի։ Ճափն
'ի չորս տրամի մինչև ցմի և կէս ունկի, զոր օրէն է եռաց-
ուցանել մի լիտր ջրով. կամ դնել թրմոց 'ի ջուր ջերմ
ժամն երիս կամ չորս, յաւելլով երբեմն 'ի նոյն երեք
տրամ քինաքինա, կամ երկու տրամ սերբենթառիա վիու-
ճինիանա, կամ փոքր մի քամոմիլլա. զոր պարտ է տալ
հիւանդաց 'ի միջոցի 24 ժամուց։

Վալվուլա. այսու անուամբ ըստ անդամաղննաց նշա-
նակի՝ գռնակ, որ է մաշկ ինչ այնպէս զետեղեալ 'ի խողո-
վակս մարմնոյ, որ դիւրաւ բացեալ շնորհէ անցս հեղա-
նիւթոց, որք անցանեն ընդ այն. բայց ոչ տայ նոցա անցս
'ի դառնալ յետս։

Վակա. թափառ ջիլք. ըստ անդամաղննաց են վեցե-
րորդ ամոլք ջղաց, որք ելեալ ընդ ողնայարն՝ ճապաղին
և թափառին ընդ բովանդակ մարմինն։

Վաճինա ուրեթրինա. փող կամ անցք արդանդի. ըստ
անդամաղննաց է անձկագոյն մասն արդանդի։

Վանէլլուս, լա։ բավանէլլա, իս։ Ի տեսակ մի գե-
ղեցկատեսիլ և սրաթռիչ թռչնոյ 'ի չափ աղաւնոյ, որոյ
գոյն է խայտաբղէտ. այսինքն սպիտակ, սեաւ, կանաչ,
կարմիր, և կապոյտ. 'ի գլուխն ունի թագաձև կատարս.
կերակրի ճճեաք և ճանճիւք, որք գտանին յեղերս գե-

տոց, և լնայ։ Միս նորա պարարտ է և համեղ, միանգամայն և օգտակար դեղ նուազելոց, զի է զօրացուցիչ սրտի և ուղղոյ։

Վանիլլա առօմատիքա, լս։ վանիլլա, խս։ վանիլլ առօմատիք, գղղ։ Վէնիլլէ, անգղ։ Ի պտուղ ինչ ամբիկոյ, որ ի սուղ ժամանակի ծառանալոյս ընդ զանազան տեղիս եւրոպոյ և ասիոյ, որոյ երկայնութիւնն է իբր կէս ոտնաչափ, իսկ ստուարութիւնն դիպուչափ խորշխորչանի, թուխ, փափուկ, պարարտ, խոյանին և դիւրաբեկ։ Ներ քին գոյացութիւն նորա է թուխ հարեալ ի գոյն կարմիր, քիթուշ, բաղասանահոտ, և գոյնն ինչ կծուահամ։ Յորում լի են հատք մանրիկք սեաք և շողշողունք։ Այս պտուղ, կամ լաւ եւս ասել պտուղն՝ ի սկզբանն է կանաչագոյն, ապա գեղեցգոյն, հուսկ յետոյ ի գոյն թուխ փոխի, զոր սնանին քաղել յամենանն սեպտեմբերի, և չորացուցեալ օծանին խոլով դոգայի, կամ նշոյ, զի փափկասցի, և պահպանեսցի ի նեխութիւն, զոր վարեն ի սալ գՀոտ և զղջութեան ցիօբքօլաթամ։ Վարի եւս ի գեղոցայս ի զօրացուցանել զՋիկս և զմկանունս մարմնոյ։ և ի մանուսորի ընդդէմ սխանդանտաութեան, և ցաւոց գլխոյ առՄելոց ի սկսորութիւն, զի և խթիչ կամ գրգռիչ բնութիւն։ Զամին ի սասն ցորենոյ մինչև ցՅօ խառն սասն ունկի եռացուցեալ ջրով։ Բոյս սորա է տեսակ մի վօրսպիլիա կոչեցեալ անկոյ. զոր սպանիացիք՝ քամբէքէ անուանեն։ Իսկ հնդկացիք՝ Թիլքաօքիլ։ Լինի սա յամենս ի մէքսիքօն, որ զՀրէն բաղդան պատատի զծառովք իբր 14 կամ 15 ոտնաչափ բարձրութիւն։ Յոլովն սորա է նուրբ բաղբրշի, կանաչակերև, դիւրաթեք, կարծր, և ջայլին. ունելով ըստ շաբարաբեր եղեգանց Ծուռնս իբր 6 կամ 7 բոյթ տարակայ ի միմեանց։ Ունի տերևս նման տերևոց Ջրախոտի, կամ լաւ եւս դաբենեաց. բայց երկայն և սպարտա քան զնոսա. գոյն նոցա ի վերին երեսս պայծառ կանաչ և փայլուն. իսկ ի ներքոյ գոյնն ինչ գեղեցգոյն։ Բանայ և ծաղիկ մինչեւ ընդ։

Վասի, կամ լաւ եւս՝ վազի վէնիֆաթիլլի. այսպէս կոչեն անդամանդինք զուիշկեան անօթս կամ խոցվակս, ընդ որս հոսէ կամ յոցս պարուսնակի հեղանութիւն ինչ ի մարմնոյս կենդանւոյն. յորմէ և արաբացիք՝ Էվիֆէի վէնիֆայիէ կոչեն։

Վարիքօչէլլ. այնու անուամբ ըստ բժշկաց իմանի՝ այսուհետև պարկի ամրաձեաց, գոյացեալ ի ընդնմանէ երակաց նոցին։

Վաքքա, լս, և իս։ Ինէք, ամ։ պատա, որբ։ և բան մեզ՝ կոլ։ Ի էգ անասուն ծանօթ ամենեցուն. որոյ սանինքն օգտակար է կրծոց. որպէս և կամնն նորա։ Ճարպ սորա և ուղեղ զօրատու են ջղաց։ Իսկ մէջն մեզմէ զգաւս յօգուածոց, և փարատէ ջերմութիւն։

Վէթռուօլս. սեւս բառիւթռաւիս։

Վէթռուօլս պէր, կամ վիթռուօլս տի ռամէ, և կիմ օսմիսոչիմթօ տի ռամէ, իս։ օսմիսուչչիս քուբռի, լս։ օսմիսիչիմթ տը քիւիվռ, գղղ։ օսմիսչիչիյթ օվ քօրբրը, անգղ։ Ի աղ ինչ երինագոյն բիւրեղաձև, դառնահամ, միանգամայն և սեղմիչ. օգտաւէտ է ի դիպուածս թոքային բարակացաւութիւն, լուսնոտութիւն, պաբբերական տենդից։ Արինակի է զօրութիւն սորա. զի եթէ առցէ զբ ի սմանէ զչորրորդ մասն միոյ ցորենոյ մինչև ցմի կշիռ ցորեան, լինի թուլացուցիչ և սկսրացուցիչ բնութիւն։ Իսկ եթէ առցէ առաւել քան զչափն պայմանեալ, յայնժամ իսկ և իսկ փաղաղեալ սեղմի զորկորն, և ըստ սրան. առնէ զխմսուանն, պրորբոքութիւն սատմքսի և փարատաց, ընդ նմին և դբացկեր. հուսկ յետոյ մահու սպանանէ։ Ա՛յլ դարման սորա չէ ինչ տարբեր ի դարմանոց վիթռուօլս տի ֆիէռռօլ, մանաւանդ եբէքաքռաւնան, և իւղն բիչինօլ։

Վէթռուօլս տի ծինքս, կամ օսմիսոչիմթօ տի ծինքս, իս։ օսմիսուչչիս ծինչի, լս։ Ի աղ ինչ բաղադրական, կազմեալ ի ծինքսէ, և ի օսմիսոչիմիկքսէ։ Կախնիք ի գոմն ածէին սասի ի պէտսէս դեղոցս, նաև ի ժայթքել տալ ղթիւնն արքեալ. իսկ այժմ սակաւք ի վար արկանին յարմանաս. զի փոխան սորա տան զարմանն անուանեալ եբէքաքռանան։ Ա՛յլ մեք սովաս ասպարինեմք զսխաս ասլոց։ Զայս եթէ կամիս առնել, արկ զնուբք փոչն ասլու ըստ կշռոյ երկոց կամ չորից ցորենոյ ի վեց ունկի սանկուքքի կամ վարդի ջրոյ. և երիցս անգամ յաւուրն լուանալ տալով զյաւազնեալ ասլ, ի սկզբանն զսլ. և հետ զՀետ միշտ առաւել ցուբտ։ Ցեռ զայսմանէ և զբառն վիթռուօլուամ։

Վէթռուօլս տի ֆիէռռօ, կիմ օսմիսոչիմթօ տի ֆիէռռօ, իս։ օսմիսուչչիս ֆիէռռի, լս։ Ի բաղադրական աղ ինչ կանաչագոյն, բիւրեղանման, թանձանցեկի, տապահամ՝ միանգամայն և դառն. օգտաւէտ է ի դիպուածս փորհարաւութիւն, թանձից, ի հոմանուս սերման կիմ սաղմի, որք պատճառին ի թուլութիւնէ գործարանաց. չարին ի էէս ցորենոյ մինչև ցն, խառն մի լեռ ջրոյ։ Ա՛յլ եթէ

առցէ զք ՝ի մանուկ առաւել քան զչափն սահմանեալ, առ-
թէ զվախճանումն, զցաւս սրտի և սատանաքսի, և զբորբոքումն
սատանաքսի և փորոտեանց։ Ալ էղեղաւի սորա են սո-
լուցիանէ տի օսանիքառաջնաթեի ալքալենի տի բօթասաա
կամ տի սատա. Նուրբ մաան մանրոց. և օսոիքառուսանա-
թեա տի բօթասաա կամ տի քալչի, և թեթեա լուծողա-
կանքն։ Սա կոչի և վիթռիսօր վիշռաւ. տէս զայս ՝ի բառն
վիթռիսուսլուտ։

Վէնա, կամ վէնէ, իտ։ տատար, տմ։ ընք, կամ չաքն,
կամ ախտէ, և կամ վէթին, արբ։ հուէկ, կամ սերարոց,
պր։ Ֆիէվա, յն։ և ըստ մեզ՝ երակ։ Է անօթ արեան, ել-
որ շրջաբերի արիւն կենդանւոյն, և են բազմաթիւ, որք
սկսանին ՝ի ծայրէ ներքին, և հասանեն ՝ի սիրան։

Վէշլեաա կամ վէսիքա, լտ։ գալաբուշտ, տմ։ մեսանէ,
արբ։ ըստ մեզ՝ փամփուշտ, կամ առաւուշտ։ Ըստ ան-
ցամանցնեաց է անօթ մաշկեղէն ընդունարան շնչկեան
հիւթոց կամ միզի, զոր ընդ միզանցս ընկալեալ յերիկա-
մանց պահէ առ ժամանակ մի, զի մի ակամայ տարաժա-
մու հոսեսցի։

Վէշլեաթօռիս. տէս Էմբիասթռս վէշլեանթէ։

Վէշլեբուլառէ սեմիտալէս. տէս օս։

Վէռտէ ռամէ. տէս սէրուկ։

Վէսթիպուլում, լտ։ վէսթիպուլ, իտ։ և ըստ մեզ՝
գաւիթ։ ըստ անդամանցնեաց՝ է առաջին մասն երկրորդ
խոռոչի ունկան, որ և կոչի լաստիհնթօ։

Վէրաթռում ալպում, լտ։ եղլէպօռ պիանքօ, իտ։
եղլէպօռ պլան, գղղ։ ուսլոթ հեղլեպոր, անգղ։ ոգ չէօր-
լէմէ, կամ գառ. չիչէի, տմ։ և ըստ մեզ՝ ոսկիտակ եղբո-
րաս, կամ ոսկիտակ կոմ վրայի։ Ի բոյս բուսեալ յիատ-
լիա, ՝ի գերմանիա, և յամերիկայ իբր երեք ոտնաչափ
բարձրութեամբ. որոյ տերևն է մեծ, ջղալից, գծեալ,
գանգուր, փափուկ, և թաւիշաւոր։ Ծաղիկ նորա ոսկի-
տակ է և բազմաթերթ. պտուղն շերտաւոր, յորում
բաղկանան սերմունք ոսկիտակ, երկայնաձև, և նրբակե-
ղև։ Իսկ արմատն ստուար, թեղալից, հիւթաւոր, սեաւ,
հոտաւէտ, և տոպախառն դառն, միանգամայն և դեղ
սխոնգանոտութեան և մոլեգնութեան։ զի է թուացուցիչ,
և ուժգին լուծողական եթէ ՝ի ստորստ, և եթէ ՝ի վե-
րուստ։ Յայն սակս կարգի ՝ի դասս թիւնաւոր քաւսց։
Զարմն յերկու ցորենոյ մինչև ց20 խառն ընդ մի լիտր ջրոյ։
Ալև օգտաւէտ է բորոտութեան և գանջուռն, լուանալով
զվերաւորեալ մասունս մարմնոյ։

Վէրթիկο, լս։ վէռթիՀինէ, իս։ պաշ տէօնմէսի, տՀ։ հեգէՀան, կամ տօիա, արբ։ և բստ մեՀ՝ պտոյտ գլխոյ։

Վէրմի վէշիքօլառի. է տեսակ ինչ ՀՀաւոյ, որ սովորաբար դոյանայ ի փոր կենդանւոյն։

Վէրմիքօլարէ։ այսու անուամբ ըստ բժշկաց նշանակի զեռնական կամ սողնական զարկ ինչ բանկի, որ է նշան մահահրաւէր. տես և ի բառն բուլուս։

Վէրպաքրում թՀաքաս, լս։ վէռպաքօ, իս։ պտոյլեօն պլան, գղղ։ կրէթ պրօտ լիվրա մըլէչին, անգղ։ ֆիլմօս, յն։ սքզը գուչրուղու, տՀ։ պտուսիր, կամ պտուռ, կամ ատանիւթ տիւպպը, կամ միգնէ սէթիւլ էնտէր, արբ։ պտսրն, պր։ և ըստ մեՀ՝ փղոմս։ Ի խոտ՝ բուսեալ յեղերս ՃանապարՀաց, յաղաբակս, և յաւազուտս իբր չորս ոտնաչափ բարձրութիւն. որոյ ցօղունն է կարծրածիր, ՃիՀաղնից, և թաւիշաւոր։ Ցերև նորա է մեծ, երկայն, լայն, փափուկ, սպիտակ, և թաւիշաւոր։ Ծաղիկն դեղնագոյն, թեթեւահոտ, և փոքր մի քաղցրահամ. պտուղն ձուաձև սրածայր, և աղուամազուտ. մէջն շերտաւոր, յորում բաղկանան սերմունք նուրբք, է սեաք. իսկ արմատն երկայն, ստուար յոյժ, փայտային, և սպիտակ։ Այս խոտ լի է գոյացական իւղով, այլ նուազ աղիս. որոյ տերևն և ծաղկին եփեալ ի ջուր և արբուցեալ, լինին դեղ փորհարութեան, հոտման որովայնի, և թանչից. ղն է սեղմիչ և մեղմիչ բնութեան։ Զարմն յերբէք տրամէ մինչև ցչորս խաուն ընդ մի լիտր ջրոյ։

Վէրպէնա օֆիֆիչինալիս, լս։ վէռուվէնա, կամ վէռուվէնա, կամ էռպա քռօչէ, և կամ էռպա կռանմնա, իս։ վէռվէն կամ վէրպէն, գղղ։ վերվէչն, կամ քրմմին ուռայլա վերվէչն, անգղ։ և ըստ մեՀ՝ աղաւնիՀ։ Է սղգ ինչ խոտոց, որ սովորաբար բուսանի ի ցանկապատս տեղս, և ի շրջակայս ոստոց և ՃանապարՀաց իբր մի կէս ոտնաչափ բարձրութիւն. որոյ ցօղունն է անկիւնաւոր, կարծր, թաւիշաւոր, կարմրերանգ, և գառնահամ։ Ցերև նորա է երկայն, եղեբահերձ, կնՃաղնից, և գառնահամ։ Ծաղկին փոքրիկ, որկորաձև, պարարտ, և գոյն նորա երբեմն սպիտակ է, և երբեմն կապոյտ. բերկ և պատեան ինչ արկ զաձև, յորում են քառեակ սերմունք նուրբք և երկայնաձև. իսկ արմատն երկայն, ստուար, թեղաչից, և գառնահամ։ Սովորաբար սկսանի ծաղկիլ յամսեանն յունիսի. որոյ տերևն եփեալ ի ջուր և արբուցեալ, դեղ է խյանաց ընդեբաց, դաչկան, միզարգելութեան, և դժխայաւութեան։

Վէրծնիքա օֆիցիֆնուալս, լս։ Վէռօնիքա կիմ թէկ էռ-
ռօքէօ, և կամ թէկ զվիցցէռօ, խս։ Է խոտ ինչ, որպ
ծիրգն են նուրբ, երկայն, բոլորակ, ծնրաւոր, օձապատայ,
և թաւիշաւոր։ Ցերև նորա նման է տերևոց լաբենոյ.
և է թաւիշաւոր, և եղերահերձ։ Կամ նորա գաւն է
միանդամայն և տոպ. զոր եւրոպացիք ջորացուցեալ՝ է
կիր արկանեն ըստ օրինակի չայի առ՝ ի անօսրել զվանձ-
բամանծուքն տողունից, ՝ի փարատել զվէրս կրծոց, թո-
քոց, և՝ ի մեզմել զաղբուքն թոունից։

Վիքէռա, լս, և խս։ Էնկէրիք, ամ՝։ Է՝քաս, կամ է-
քէա, սրբ։ և ըստ մեզ՝ իժ։ Է օձ ինչ կենդանանին, եր-
կայն իբրև կանգնաչափ, և ատուար երկու բթաչափ.
գլուխ նորա նեղ է և երկայն. աչքն փոքրիկ. լեզուն
երկայն, երկնդն, և գորշագոյն. ունի տատմանես կոծր,
ոտանք փոքրիկ և ոտանք երկայն, կոր, գոգաւոր, և սրա-
ծայր, որով խայթէ, և թունաւորէ զմերձեցեալսն
յինքն։ Մարթ նորա է աղօտաչէկ, յոկեալ, փայլուն,
և խժայնն, ունելով՝ ի վերայ թեփս կարծրս և բծա-
ւորս։ Իսկ միսն պարարտ է և շահաւէտ, մանա-
